

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	5
Բաժին I. Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծումն ու կայացումը, դրանց գործունեության բուն նպատակները: Աշուն, 1919թ. – մայիս, 1920թ.	9
Բաժին II. Հայ բոլշևիկների կողմից բարձրացրած զինված հակակառավարական ապստամբությունը: Մայիս, 1920թ.	97
Բաժին III. Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության ձեռնարկած քայլերը՝ երկրի ներքին կյանքի հնարավոր բարելավման և արտաքին աշխարհի հետ նորմալ հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Ռուսաստանից Հայաստանին եկող ուղղակի վտանգը և հայ բոլշևիկների հակապետական դիրքորոշումը հնարավոր բոլոր առյաններում և անցքերում: Մայիս–սեպտեմբեր, 1920թ.	227
Բաժին IV. Հայ-թուրքական պատերազմ. Հայաստանի առաջին Հանրապետության կործանումը և այդ գործում հայ բոլշևիկների իրականացրած քայլերը. Սեպտեմբեր, 1920թ. – մայիս, 1921թ.	317
ՎԵՐՋԱԲԱՆ	421

Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ի Փ Ո Խ Ա Բ Ե Ն

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ այսօրվա մեր հայկական պետությունն ու պետականությունը ապրում են, մեղմ ասած, իրենց ամենևին ոչ լավագույն ժամանակները: Հայաստանի Հանրապետությունում մսխվում-սպառվում են պետական ինքնիշխանության գոյության ապահովման համար հիմք հանդիսացող քաղաքական, տնտեսական, հասարակական, հոգևոր, բարոյական, դեմոգրաֆիկ և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր ռեսուրսները: Երկիրն ու պետությունը, ըստ էության, գրկվում են իրենց հետագա գոյության հեռանկարից: Անկախության Հռչակագրի ընդունումից ընդամենը քառորդ դար անց երկրի գլխին կրկին կախվել է պետականության կորստի վտանգը՝ հայերիս համար քաջածանոթ բոլոր հետևանքներով: Ընդ որում, մեր հանդեպ հենց այսօր էլ հերթական անգամ պատրաստվում է գործել *«պատմությունը կրկնվում է»* չարագուշակ բանաձևը՝ իր ամբողջ անբարենպաստ բովանդակությամբ:

...1991-ի սեպտեմբերի 21-ին կայացած անկախության հանրաքվեից ու նախագահական ընտրություններից հետո զրուցում էինք սփյուռքի ազդեցիկ թերթերից մեկի խմբագրի հետ: Մեր զրուցակիցը, անդրադառնալով հայաստանյան այրօրվա իշխանությանը, մի բավականին ոչ լավատեսական գնահատում-կանխատեսում արեց. *«Այսրեղ ոչ մի նոր բան չկա: Նույն բոլշևիզմն է: Ներբոլշևիզմ՝ հիմնված հակակոմունիզմի վրա: Մրանք միայն վայելելու են: Իսկ պետության ու պերականության պահպանման ամբողջ հոգան ու ծանրությունը թողնելու են ժողովրդի վրա: Դե մեր ժողովուրդն էլ...»*: Հայաստանյան կառավարիչների ու հասարակության քառորդդարյա գործունեության նախնական արդյունքն այսօր, համենայնդեպս, այն է, որ բացարձակ անմրցունակ տնտեսությամբ, բնակչության կեսից գրկված երկիրն արդեն գրկված է, ըստ էության, նաև իրական միջազգային իրավասություններից և, ինչպես և մեկ դար առաջ, հայտնվել է Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան եռանկյունու կոշտ շրջանակների մեջ՝ իր այսօրն ու վաղը որոշելու և տնօրինելու հարցը հանձնած Ռուսաստանի կառավարիչների քնահաճույքին ու կայսերական ողորմությանը:

Եթե մի կողմ թողնենք և առհասարակ չանդրադառնանք այդ հարցի վերաբերյալ տարբեր կողմերից հնչող դեմագոգիային, զանազան ու տարբերույթ քաղաքական սպեկուլյացիաներին և ակնհայտորեն շահագրգռված դրանց հեղինակներին, ապա մի բանն հաստատ անհերքելի է. այս վիճակին հասնելու հիմնական, եթե ոչ վճռորոշ պատճառներից մեկը իրոք որ թե՛ Հայաստանի կառավարիչների, թե՛ նրա բնակչության զգալի մասի մոտ խորհրդային-բոլշևիկյան մտածելակերպից ու պատկերացումներից ազատված-ձերբազատված չլինելն է:

Քաղաքական և հոգևոր այդ փխտահարումից ազատվելու ամենակարճ, ամենահեշտ և ամենաարդյունավետ ճանապարհը կլիներ, ինչ խոսք, խորհրդային ՊԱԿ-ի հայաստանյան արխիվների գաղտնագրծու-

մը: Սակայն դա չարվեց: Առաջին նախագահը մերժեց այդ առաջարկը, պատճառաբանելով, թե «արխիվները բացելու դեպքում կակամի վիուկն-րի որս»: Վիուկների որսը ջանադրաբար կանխվեց, փոխարենը ստացանք վիուկների խրախճանք: Չիրականացվեց նաև բացահայտորեն անօրինական եղանակով դիզած հարստության պետականացումը, կամ ինչպես առաջին վարչապետի շուրթերով այդօրվա իշխանությունները ձևակերպեցին՝ «կոլակաթափությունը»: Փոխարենը թալանը ստացավ ավելի լկտի և անթաքույց ձևեր, իսկ երկիրն էլ ենթարկվեց զանգվածային հայաթափության: Դժվարանում են ասել միտումնավոր է ասված եղել, թե՛ իրոք անկեղծ, բայց մի անգամ, երբ այդ լյուստրացիա կոչվածի մասին զրուցում էինք գործից տեղյակ անձի հետ, նա ծիծաղելով պատասխանեց, թե Հայաստանում այդ քայլը իրականացնելու դեպքում ավելի հեշտ կլինե՞ր հրապարակել ոչ թե ՊԱԿ-ի հետ համագործակցողների ցուցակը, այլ նրանց անունները, ովքեր նման կապի մեջ չեն եղել: Ինչևիցե, անհերքելի ճշմարտությունն այն է, որ հետխորհրդային այն երկրները, որոնց ղեկավարությունը կամք ցուցաբերեց և իրականացրեց լյուստրացիան, թե՛ ներքին կյանքում, թե՛ միջազգային ասպարեզում, անհամեմատ շատ ավելի առաջ են, քան նրանք, որոնցում դա տեղի չունեցավ:

Հայաստանում, նախագահների մակարդակով, առաջին նախագահի վերաբերյալ մամուլում հրապարակվեց այն փաստաթղթի պատճենը, որում նա հրամանագրվում էր որպես ԽՍՀՄ ՊԱԿ-ի պահեստազորի սպա:¹ Խորհրդային կարգերի օրոք դրանում որևէ զարմանալի բան չկար: Հայտնի փաստ էր, որ ԵՊՀ օտար լեզուների և արևելագիտության ֆակուլտետների ուսանողները ռազմագիտության ամբիոնում ուսանում էին ռազմական թարգմանության ցիկլում և ավարտելուց հետո հանդիսանում էին ՊԱԿ-ի պահեստազորի սպա՝ օգտագործվելով դրա կողմից «ըստ նշանակության»: Բայց արդյո՞ք կայսերական պատժիչ այդ համակարգի միավոր հանդիսացող անձը պետք է իրավունք ունենար ղեկավարելու այդ նույն կայսերական համակարգի լծից դուրս եկած նորանկախ երկիրը: Հաջորդ երկու նախագահների մասին մամուլում եղան մի շարք կիսասկանարկող, կիսացուցանող հրապարակումներ,² որոնք ՊԱԿ-ի հետ նրանց կապը հաստատելու համար հիմք ընդունելը համարում ենք ոչ կոռեկտ: Բայց մյուս կողմից. ո՞ւմ համար է գաղտնիք, և մի՞թե դրա համար ինչ-ինչ փաստաթղթային ապացույցներ են պետք, որ ԽՍՀՄ-ում ցանկացած կուսակցական և կոմերիտական փոքրիշատե նշանակալի ղեկավար ուղղակիորեն՝ ի պաշտոնե կապված է եղել կուսակցության «մարտական ջոկատի», այն է՝ ՊԱԿ-ի հետ, այն էլ Ադրբ. ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում: Եվ նրանց կառավարման տարիները ավելի քան պերճախոս ձևով ցույց տվեցին, որ կկորկոկյան կուսպրոցն անցած այդ ընկերները ցանկացած հարցում՝ թե՛ ներպետական խնդիրներում, թե՛ հատկապես

¹ Էդվարդ Հովհաննիսյան, Ազատամարտ, թիվ 28, Յուլիս, 1992թ.

² Երջանիկ Աբգարյան, Հայկական ժամանակ, Մարտ 14, 2009թ.

արտաքին քաղաքականության բնագավառում, իրենց աշխարհընկալմամբ ու պատկերացումներով ռուսաստանյան-ծայրամասային ենթակայության բոլշևիկյան մտածելակերպի ու մոտեցումների շրջանակներից ու դավանանքից այն կողմ և ոչ մի բանի ընդունակ չեն: Եվ հենց դրա առավել աղետաբեր հետևանքներից մեկն էլ այն է, որ նոր, արդեն անկախության օրոք հասունացած սերնդի մի զգալի հատված այսօր նույնպես բռնել է կոմսոմոլացման-բոլշևիկացման ուղին: Պարզապես գլխավերևում Լենինի պատկերի փոխարեն կախելով Գարեգին Նժդեհի պատկերը:

Այնպես որ, Հայաստանը անկախ հռչակելով՝ բոլշևիկյան կառավարման էությունն ու բնույթը ամենևին էլ չվերացվեց, այլ ընդամենը փոխակերպվեց՝ առաջին քարտուղարին վերանվանելով երկրի նախագահ, և անցած տարիների «էվոլյուցիայի» արդյունքում այսօր կրկին եկանք մի վիճակի, երբ երկրի նախագահը կրկին վերածվեց առաջին քարտուղարի: Եվ երկրի ներքաղաքական դաշտում պայքարն արդեն ընթանում է ոչ թե երկրի նախագահ ընտրվելու, այլ, ըստ էության, առաջին քարտուղար նշանակվելու համար:

Հետադարձ հայացք գցելով խորհրդային կայսրության փլուզումից հետո Հայաստանում և Արցախում ծավալված դեպքերին, միարժեքորեն կարելի է արձանագրել, որ այդ ժամանակահատվածում իրական ազգային ուժերն ունեցան դրսի որևիցե ուժի թելադրանքից ու ցանկությունից ազատ ընդամենը մեկ քաղաքական հաջողություն. դա Արցախի առաջին ղեկավարի պաշտոնում Արթուր Մկրտչյանի ընտրվելն էր: Բայց նա, ինչպես նման դեպքերում սովորաբար լինում է, շատ շտապ և արագ ասպարեզից հանվեց, և Հայաստանն ու Արցախը ներսից հայտնվեցին, փաստորեն, բոլշևիկյան ավանդույթը միասին տանող և խիստ անմաքուր կապերով միմյանց շրթայված երեք նախագահների յուրատեսակ «բերմուղյան եռանկյունու» մեջ, և հենց այդ պատճառով էլ, դրսից, ինչպես արդեն վերը նշվեց՝ Ռուսաստանի թամադույթամբ ստեղծած մեկ այլ թակարդ-եռանկյունում:

Եվ այս ամենի ականատեսը լինելով՝ մենք որոշեցինք թարմացնել նախ մեր և հետո էլ՝ այլոց հիշողությունը, մեկ անգամ ևս վեր հանելով հայ բոլշևիկների անուրանալի ներդրումն ու վաստակած դերակատարումը մեր նախորդ պետականության՝ Հայաստանի առաջին Հանրապետության կործանման գործում: Զուգահեռներն ու նմանակումները մեր օրերի հետ թողնում ենք ընթերցողի եզրակացությանը:

Ստորև ներկայացվում են Հայաստանում գտնվող մի շարք արխիվային փաստաթղթեր, որոնք առնչվում են Խորհրդային Ռուսաստանի կողմից, հայ բոլշևիկների գործուն աջակցությամբ, Հայաստանի առաջին Հանրապետության ոչնչացմանը միտված որոշակի քայլերին: Սույն նյութերի հրապարակման փաստն ամենևին չի նշանակում, որ հեղինակը, լինելով ոչ պրոֆեսիոնալ պատմաբան, որևիցե մտադրություն կամ հավակնություն ունի ներթափանցելու և մի ինչ-որ տարածք զբաղեցնելու պատմական գիտության դաշտում: Պարզապես, որպես Հայաստանի Հանրապետություն

կոչվող պետության քաղաքացի ինձ հետաքրքրել և հուզել են մեր նախորդ պետականության կորստյան հետ առնչվող հարցերը: Մենք հայցում ենք այն ընթերցողների ներողամտությունը, ովքեր կհամարեն, որ շարադրանքում անհարկի տեղ են գտել քաջածանոթ կամ հանրահայտ փաստեր: Նախ, առանց դրանց կխախտվեր նյութի շարադրանքի ժամանակագրական և պատճառահետևանքային տրամաբանական ամբողջականությունը, իսկ մյուս կողմից, սերունդ է փոխվել և շատ բան, ինչը որ քաջածանոթ ու հանրահայտ էր նախորդի համար, շատ հաճախ այդպիսին չի կարող համարվել այսօրվա սերնդի համար: Առավել ևս, շեշտենք մեկ անգամ էլ, որ տվյալ աշխատությունը բացարձակապես չի հավակնում գիտական հետազոտության դասիներին:

Երկու խոսք նյութի շարադրանքի վերաբերյալ:

Ամբողջ նյութը բաղկացած է չորս բաժնից:

Բաժն I-ում ընդգրկված են նյութեր, որոնք առնչվում են 1919թ. աշնանից մինչև 1920թ. մայիսն ընկած ժամանակահատվածին և վերաբերում են Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու կայացման գործընթացներին, դրանց գործունեության բուն նպատակներին:

Բաժն II-ում ընդգրկված են 1920թ. մայիսին հայ բոլշևիկների կողմից բարձրացրած զինված հակակառավարական ապստամբությանը վերաբերող փաստաթղթեր:

Բաժն III-ի փաստաթղթերն ընդգրկում են 1920թ. մայիսից մինչև սեպտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածը և արտացոլում են մի կողմից Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության ձեռնարկած քայլերը՝ երկրի ներքին կյանքի հնարավոր բարելավման և արտաքին աշխարհի հետ նորմալ հարաբերությունների հաստատման ուղղությամբ, մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանից Հայաստանին եկող ուղղակի վտանգը, և հայ բոլշևիկների հակապետական դիրքորոշումը հնարավոր բոլոր առյաններում և անցքերում:

Բաժն IV-ի փաստաթղթերը վերաբերում են հայ-թուրքական պատերազմի ժամանակահատվածին, Հայաստանի առաջին Հանրապետության կործանմանը և այդ դեպքերի ժամանակ հայ բոլշևիկների իրականացրած քայլերին:

Նյութերը, որոնք նշված ժամանակահատվածներից դուրս են, կամ էլ ուղղակիորեն չեն առնչվում հայ բոլշևիկների գործունեությանը, ցույց են տալիս, թե ինչպիսի քաղաքական ու տնտեսական ֆոնի վրա են ծավալվել իրադարձությունները և բովանդակային առումով պարզապես լրացնում ու ամբողջականացնում են հիմնական փաստաթղթային բազան:

Հրապարակված փաստաթղթերում, ինչպես որ դա պահանջվում է արխիվային նյութերի պարագայում, պահպանված է փաստաթղթի բնագրում առկա ուղղագրությունը:

ԲԱԺԻՆ I

Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծումն ու կայացումը, դրանց գործունեության բուն նպատակները

Աշուն, 1919թ. – մայիս, 1920թ.

ՈՐՈ՛ՆՔ ԷՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ռուսաստանցի պատմաբան Վալենտին Դյակինի գրքերից մեկում բերված են 1906-1911թթ. ցարական Ռուսաստանի վարչապետ և ներքին գործերի մինիստր Պյոտր Ստոլիպինի կողմից հայերին բնութագրող հետևյալ տողերը. «Այդ սեմիպրական ցեղը մշտապես իր մեջ քաղաքական անարխիստիկ սաղմեր է կրել: Կործանելով սեմիական պետականությունը՝ այդ ցեղերը, ցրված լինելով աշխարհի երեսին, ճակատագրորեն հիվանդածին մանրէի դեր են խաղում իրենց սպասարան տրված ամեն մի առողջ ցեղի մարմնի վրա»:³

Ասվածի համատեքստում հայերի սեմիտական ցեղախմբին պատկանելի-չպատկանելու հարցը, բնականաբար, հետաքրքրություն չի ներկայացնում և բացարձակապես էական չէ: Էականն ու հետաքրքրականը տվյալ պարագայում այն է, թե ինչ իրադարձությունների հիման վրա էր հայտնի «փողկապների» հեղինակի մոտ ձևավորվել ու հիմնավորվել հայերի վերաբերյալ նման կարծիքը: Ճիշտն ասած, առանց հեղինակի պարզաբանման դժվար է պատասխանել: Սակայն անհերքելի փաստ է, և այդ կարծիքը հայտնողն էլ քաջատեղյակ է եղել, որ հայերի մի շոշափելի զանգված մեծ ոգևորությամբ ու համոզվածությամբ զինվորագրված է եղել բոլշևիկյան կուսակցությանը՝ դրա հիմնադրման առաջին իսկ օրերից և հավատարմորեն մարտնչել է դրա շարքերում՝ հանուն այդ կուսակցության նպատակների իրականացման: Այն կուսակցության, որն իր «ծրագրամինիստումը» իրականացրեց 1917-ի աշնանը, այսպես կոչված, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության միջոցով, ինչին էլ հաջորդեցին իրական քաղաքական անարխիստի ժամանակները, երբ, այդ օրերից մնացած թևավոր խոսքի համաձայն՝ «սոխի գրուին ու մարդու գլուխը մեկ էր»: Եվ այդ ամենի մեջ, համառուսաստանյան մասշտաբով հայազգի բոլշևիկները, ինչ խոսք, անկասկած ունեցան իրենց ծանրակշիռ ներդրումը:

Բայց, «նեղ ազգային» մասշտաբով, հայ բոլշևիկները բացարձակապես անհաղորդ եղան և որևիցե մասնակցություն չբերեցին այդ նույն ժամանակաշրջանում ծավալված հայ ազգային-ազատագրական պայքարին՝ անկախ նրանից, թե այդ պայքարի ընտրված ձևը

³ В.С. Дякин, Национальный вопрос во внутренней политике царизма (XIX - начало XX в.в.), Санкт-Петербург, изд-во “ЛИСС”, 1998, с. 745

որքանով էր ճիշտ կամ սխալ: Նույնիսկ հենց ցարական Ռուսաստանում նրանց գործունեությունը ծավալվել ու ընթացել է հիմնականում Ռուսահայաստանից դուրս: Մասնավորապես Կովկասում՝ գլխավորապես Թիֆլիսում և Բաքվում:

Նախահոկոտեմբերյան Ռուսաստանի բնակչության 57% կազմում էին այլազգիները և միայն 43%՝ վելիկոռուսները: Հասկանալի է, որ նման հարաբերակցության պարագայում, ռուսաստանյան ցանկացած քաղաքական կուսակցություն, բոլշևիկյանը նույնպես, անհրաժեշտաբար պետք է իր ծրագրային դրույթներում առաջնայիններից մեկը համարեր ազգային հարցի վերաբերյալ իր հայեցակարգի ձևակերպումը:

Մեզ, բնականաբար, հետաքրքրում և հուզում է այդ հայեցակարգի հենց հայկական բաղադրիչը: 1917-ի հոկտեմբերի նախօրյակին այդ հարցի վերաբերյալ բոլշևիկյան կուսակցության դիրքորոշումը, ճիշտ է՝ հայտարարությունների մակարդակով, եղել է հետևյալը. բոլշևիկների կողմից իշխանությունը վերցնելու դեպքում ամբողջ Հայաստանի, այն է՝ Թուրքահայաստանի-Արևմտյան Հայաստանի և Ռուսահայաստանի-Արևելյան Հայաստանի ամբողջ միասնական տարածքում պետք է ստեղծվի մեկ անկախ հայկական պետություն:⁴

Բոլշևիկների կողմից իշխանությունը վերցնելուց հետո առաջին պաշտոնական անդրադարձը Հայաստանին վերաբերող հարցին (20.XI.1917թ.), հետևյալն էր. «*Հենց որ դադարեն ռազմական գործողությունները, հայերին կտրվի իրենց քաղաքական բախարը ազատորեն փնտրիներու իրավունք*»:⁵ Բաց թողնելով միջանկյալ իրադարձությունները, միանգամից ասենք, որ բոլշևիկյան ղեկավարության կողմից հնչեցրած մի շարք բովանդակությամբ հայանպաստ երևացող, սակայն ռազմաքաղաքական առումով ոչնչով չհամարգրված ղեկլարացիաներն ու հայտարարություններն ի վերջո ծնունդ տվեցին հայությանը վերաբերող «զագաթնակետային» մի փաստաթղթի: Իսուպը 1917-ի դեկտեմբերի 29-ին ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի կողմից ընդունած «Թուրքահայաստանի մասին» ղեկրետ կոչվող փաստաթղթի մասին է, որը հաստատագրված էր Վ.Ույանով-Լենինի (Ժողկոմխորհի նախագահ) և Ի.Ջուղաշվիլի-Ստալինի (Ազգությունների գծով Ժողկոմատի ղեկավար) ստորագրություններով:

Բայց նախկին հայտարարություններում «ամբողջ Հայաստանի» համար նախատեսված անկախությունն այդ փաստաթղթում փոխակերպվեց, նեղացվեց ու խցկվեց ընդամենը Արևմտյան Հայաստանի – Թուրքահայաստանի շրջանակի մեջ: Այդ փաստաթղթի նախագծի պատրաստմանը մասնակցել են հայության տարբեր խավերի ներկայացուցիչներ, իսկ վերջնական՝ խմբագրման ու ներկայացման փուլում փաստաթղթի կնքահայ-

⁴ Լ.Ա. Խորշոռյան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977թ., էջ 13

⁵ Լ.Ա. Խորշոռյան, նույն աշխատությունը, էջ 16

րերն էին կոմկուսի կողմից Վառլամ Ավանեսովն ու Վահան Տերյանը, ձախ էստոններից՝ Պոռոշ Պոռոշյանը, Դաշնակցության կողմից՝ Ստեփան Զորյանը՝ Ռոստոմը:

Իրավիճակային տեսակետից հասկանալի է, որ չնայած լայն ներկայացուցչականության ապահովմանը, այդ պահին հենց հայ բոլշևիկներն են եղել ամեն առումներով «երաժշտություն պատվիրողները»: Եվ հենց նրանց մոտեցումն է եղել այնպիսին, որ հայկական շրջանակների կողմից մշակվեց և բոլշևիկյան կառավարությանը առաջարկվեց մի նախագիծ, ըստ որի Արևմտյան Հայաստանը պետք է դառնար անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանը պետք է մնար Խորհրդային Ռուսաստանի կազմում՝ ունենալով որոշակի ինքնավարություն:⁶ Կուսակցական «բնակարանների» ապահովության ու հարմարավետության տեսակետից այդ ամենը միանգամայն հասկանալի է: Հայկական ոչ կոմունիստական ուղղվածությամբ հիմնական քաղաքական ուժի՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության համար ավելի հարազատ էր Արևմտյան Հայաստանը: Ճիշտ թե սխալ, արդյունավետ թե անարդյունք, այնտեղ էր նա մոտ 2 տասնամյակ ծավալել իր հիմնական գործունեությունը, այնտեղ էր մասնակից եղել երիտթուրքական հեղափոխությանը, մի ինչ-որ ժամանակահատվածում էլ այնտեղ անգամ իշխանության մաս էր կազմել: Իսկ Արևելյան Հայաստանը հիմա, 1917-ի վերջին, էլի Ռուսաստանի մի մասն է, և ինչ հավակնություններ կարող էր ունենալ դրա հանդեպ Դաշնակցությունը, երբ իշխանությունն այդ նույն Ռուսաստանում գտնվում էր հեղաշրջումն իրականացրած բոլշևիկների ձեռքում:

Իսկ հայ բոլշևիկների համար ավելի հարազատ էր Ռուսահայաստանը: Ու թեև այնտեղ մինչ հեղափոխությունը բոլշևիկների ներկայությունն ու ազդեցությունը գործնականորեն եղել են գրոյական, միևնույն է, դա Ռուսաստանի մի մասն է եղել, այդպիսին էլ հանդիսանում էր այն օրերին՝ հեղափոխությունից հետո: Իսկ *էրզրի* հարցերին, ինչպես նշվեց, հայ բոլշևիկները երբևիցե խորամուխ չէին էլ եղել, ուստիև Թուրքահայաստանը այն պահին նրանց ոչնչով չէր էլ հրապուրում՝ ավելորդ բռն ու գլխացավանք: Այնպես որ, ամեն մի կողմը ձգտեց իր համար իրոք առավել հարմար տարբերակին տեր կանգնել, հետևաբար դեկրետն այդ տեսքով ու բովանդակությամբ ընդունելի եղավ հայկական երկու հիմնական քաղաքական կողմերի համար էլ:

Այսինքն, երկու կայսրություն կործանած հեղափոխություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերած հայկական երկու քաղաքական խմբավորումների կողմից էլ այդ պահին ըստ էության բացակայում էր ազգային-պետական մոտեցումը հարցի նկատմամբ: Փոխարենը վկա

⁶ Լ.Ա. Խորշուրյան, նույն աշխատությունը, էջ 30

ենք, թե դրան ինչպես է փոխարինում «թաղային հեղինակության» կատեգորիային հարիր մտածելակերպն ու մոտեցումը:

Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարության կողմից ընդունած այդ որոշման իրագործումը հանձնարարվում է 1917-ի դեկտեմբերի 16-ին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար նշանակված հայտնի բոլշևիկ Ստեփան Շահումյանին:

Հասկանալի է, որ այդ պարագայում պարտադիր պետք է ստեղծվեր նաև Արևմտյան Հայաստանում գործող կոմունիստական կուսակցություն: Եվ 1917-ի վերջերին - 1918-ի սկզբներին, ռուսաստանյան կոմկուսի ուղղակի հրահանգով ու աջակցությամբ, այդ կուսակցությունը ստեղծվեց: Այն կոչվեց Հայաստանի կոմունիստական կուսակցություն, համարված էր հիմնականում արևմտահայերով, և Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետականություն ստեղծելու հարցում փաստորեն հանդես էր գալիս որպես Դաշնակցության քաղաքական մրցակից:⁷ Կազմակերպությանն առավել սոլիդություն տալու համար ղեկավար կազմի մեջ ընդգրկվեցին նաև Վառլամ Ավանեսովը, Վահան Տերյանը, Հայկ Բժշկյանցը և այլ հայտնի դեմքեր:

Բայց շատ արագ դեպքերի ընթացքը զանազան ժողովներից, որոշումներից, դեկրետներից ու մանիֆեստներից տեղափոխվեց հողդեհն իրականության, և պետք է ասել՝ չափազանց դաժան իրականության ոլորտ: Ստեփան Շահումյանն այդպես էլ չհասցրեց խորհրդայնացնել Կովկասը, այդ թվում նաև Ռուսահայաստանը: Երկրամասում պարզապես բացակայում էին նման քայլի իրագործման համար անհրաժեշտ գոնե նվազագույն ռեսուրսները: Անդրկովկասը հայտարարեց Ռուսաստանում խորհրդային իշխանությունը չճանաչելու և դրա կազմից դուրս գալու մասին: Կովկասյան ռազմաճակատը կազմալուծվեց ու քանդվեց, և հայերը հայտնվեցին դեմ առ դեմ ցեղասպանությունն իր ուզած ավարտին չհասցրած Թուրքիայի հետ: Վրա հասավ Բրեստ-Լիտովսկը, որտեղ, ի թիվս մի շարք այլ գիջումների, բոլշևիկյան վերնախավի կողմից սեփական իշխանությունը պահպանելու համար թուրք-գերմանական բլոկին հսկայական գիջումներ արվեցին նաև հենց հայերի հաշվին: Գնդակահարվեց Շահումյանը, և դրա հետևանքով տապալվեց նաև բոլշևիկ-դաշնակցություն համագործակցությունը, որը լավ, թե վատ, համենայնդեպս ի վնաս հայ ժողովրդի չէր: Քանզի, քանի դեռ առկա էր Շահումյան-դաշնակցություն երկխոսությունը, Խորհրդային Ռուսաստանը թեկուզ ձևականորեն, առիթ չուներ նորանկախ Հայաստանի հանդեպ ընդգծված թշնամական քաղաքականություն վարելու: Բայց, հատկապես Բաքվի

⁷ Գ. Ամիրխանյան, Մայիսյան ամստամբությունը Հայաստանում (1920թ.), Մոսկվա, 1926թ., էջ 21; Բ. Борьян, Армения, Международная дипломатия и СССР. В 2-х частях. М.-Л. Гонимиздат. 1928-1929г., ч.2, с. 94

կոմունայի անկումից հետո, իրավիճակը կտրականապես փոխվեց. Ռաշ- նակցությունը Խորհրդային Ռուսաստանում հայտարարվեց օրենքից դուրս՝ նորանկախ հայկական պետականության համար այդտեղից բխող բոլոր հետևանքներով: Իսկ ինքը՝ բոլշևիկյան Ռուսաստանը, հայտնվեց Սպիտակ Շարժման և երեկվա՝ թե թշնամիների, թե բարեկամների բանակների օղակում: Մի վիճակ, որն ամենից պատկերավոր հենց ռուսն է բնութագրում. «*He do журы – быть бы живу*»:

1918-ի մայիսին իր անկախության մասին հայտարարած Հայաստանն էլ այդ դժնդակ օրերին ինչքան որ կարողանում, մի կերպ իր գլուխը պահում էր: Կովկասում Ռուսաստանի փոխարեն այժմ ներկա էին ԱՄՆ- ն ու Եվրոպան, որոնց կողմից Հայաստանի նկատմամբ դրսևորվում էր, կարելի է ասել, չափավոր դաշնակցի մոտեցում: Այդօրվա բառացիորեն թշվառ Հայաստանն իրենից բացարձակապես չկախված իրադարձու- թյունների բերումով, տարրական գոյատևելու առումով խիստ կախված էր Անտանտից: Նույն այդ պարագաների բերումով, Հայաստանը ներկայացուցչություններ էր հիմնել Կոլչակի, Դենիկինի, հետո նաև՝ Վրանգելի մոտ, և առկա էին այդ ուժերի հետ նաև որոշակի քաղաքա- կան ու ռազմատնտեսական հարաբերություններ: Բայց, միաժամանակ, Հայաստանը, իր պառլամենտի մակարդակով, որոշում էր կայացրել, որ պահպանելու է բացարձակ չեզոքություն, ասենք, օրինակ, Դենիկին- բոլշևիկներ հակամարտության դեպքում:⁸

Վերջապես ավարտվեց առաջին աշխարհամարտը: Պատերազմի արդյունքներն ամրագրող նախնական փաստաթղթերի համաձայն՝ թուրքական զորքերը 1918-ին ոչ միայն դուրս բերվեցին Հայաստանի սահմաններից, այլ 1919-ին Հայաստանի Հանրապետությանն իրավունք ու հնարավորություն տրվեց իր ռազմական ու վարչական հսկողությունը հաստատել նաև Կարսի նահանգի տարածքի նկատմամբ: Փորձեր էին արվում նաև կարգուկանոն հաստատել պետության ներքին կյանքում:

1919-ը բեկումնային եղավ նաև բոլշևիկյան Ռուսաստանի համար: Կովկասյան ուղղությամբ իրավիճակը սկսեց բավականին արագ փո- փոխվել սկսած 1919-ի երկրորդ կեսից, երբ խորհրդային ուժերը սկզբից կարողացան ետ մղել Դենիկինի հարձակումը Մոսկվայի ուղղությամբ, իսկ հոկտեմբեր-նոյեմբերից սկսած արդեն իրենց ձեռքը վերցրեցին ռազմաստրատեգիական նախաձեռնությունը՝ գործողությունների հարա- վային թատերաբեմում: Օրակարգի առաջնահերթը հարցն էր արդեն կովկասյան տարածաշրջանի երկրների, այդ թվում նաև Հայաստանի խորհրդայնացումը: Խորհրդայնացման ցուցանակի տակ իրականացվող բացահայտ ռազմական այդ անեքսիան՝ բռնակցումը, իրագործվում էր

⁸ Ю.Г. Барсегов, Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. В 3-х томах. Т.2, ч.1, Москва, 2003, с. 43-44

հետևյալ սխեմայով. երկրի ներսում մի ինչ-որ խումբ կազմակերպում է խռովություն, ի հայտ է գալիս հեղափոխական կոմիտե (հեղկոմ) անվանումով մի մարմին, որն իրեն հայտարարում է որպես տվյալ երկրի նոր իշխանություն և օգնություն է խնդրում Խորհրդային Ռուսաստանից: Օգնությունը, բնականաբար, չի մերժվում և չի ուշանում: Մնացյալն արդեն հայտնի է... Կեցցե՛ Խորհրդային ը (ծնաթերթի վրա լրացնել համապատասխան երկրի անունը): Բայց այդ բաղձալի պահին հասնելու համար երկրի ներսում անհրաժեշտ էր ունենալ այդ ապստամբող խումբը: Այսինքն այն, ինչն էլ հայտնի է որպես «հինգերորդ շարասյուն»:

Միանգամայն հասկանալի է, որ Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարությունը, իր առջև նպատակ դնելով խորհրդայնացման միջոցով վերանվաճել Կովկասը, օրվա քաղաքական իրավիճակի թելադրանքով պետք է սկսեր գործնական քայլեր ձեռնարկել տեղի՝ այդ թվում և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման և նրանց գործունեության աշխուժացման և այդ եղանակով՝ խորհրդայնացման համար անհրաժեշտ պահի հասունացման ուղղությամբ:

Ինչպիսի՞ն էր այդ առումով իրավիճակն այդ օրերին Հայաստանի առաջին Հանրապետությունում: Որպես քաղաքական ուժի՝ բոլշևիկների ազդեցության ու ժողովրդի մոտ ունեցած հեղինակության վերաբերյալ ամենասպառիչ գնահատականը ժամանակին տվել է, թերևս, Կովկասի խորհրդայնացումը իրականացնողներից մեկը՝ բոլշևիկ Սերգեյ Կիրովը. «...У власти армянские кадеты и дашнаки. Умеренные эсеры и меньшевики считаются самыми левыми, большевиков и духа нет»:⁹ Ընդ որում անդրկովկասյան 3 պետություններից Հայաստանը միակն էր, որտեղ օրենքով, ասենք այսպես. արգելված չէր բոլշևիկների ներկայությունն ու գոյությունը:¹⁰

Հայաստանում հայ կադրային բոլշևիկներ հայտնվեցին 1918-ի վերջերին, երբ հարևան Վրաստանում և Ադրբեջանում, կոմունիստների հանդեպ տարվող հալածանքներից փրկվելու համար, նրանք հիշեցին իրենց հայրենիքը և տեղափոխվեցին Հայաստան:¹¹ Նրանցից շատերին նույնիսկ հնարավորություն տրվեց աշխատանքի անցնել պետական հաստատություններում: Նրանց առջև դրված միակ սահմանափակումն այն էր, որ նրանք չպետք է զբաղվեին քաղաքական գործունեությամբ: Այն է՝ հակապետական գործունեությամբ ընդդեմ Հայաստանի Հանրապետության: Եվ, քանի դեռ քաղաքացիական կոիվները Ռուսաստանում ընթանում էին ոչ հօգուտ բոլշևիկների, Հայաստանում բոլշևիկներն այդ պայմանը, ընդհանուր առմամբ, ոնց որ թե չէին խախտում:

⁹ ՀԱԱ. ֆ.-Պ. 1022, գ.3, գ. 268, թ.1

¹⁰ Ս. Վրացման, Հայաստանը բոլշևիկյան մտրճի և թրքական սալի միջև, Պեյրուս, 1953թ., էջ 46

¹¹ ՀԱԱ. ֆ.-Պ. 201, գ.1, գ.62, թ.թ.

Մինչև 1919-ի կեսերը Հայաստանում, ըստ էության, գոյություն չի ունեցել տեղի բուլժևիկների գործունեությունը համակարգող և ուղղորդող մեկ ընդհանուր ղեկավար կուսակցական մարմին: Առավել ևս, որ Վրաստանից ու Ադրբեջանից մազապուրժ եղած հայ բուլժևիկներին թե՛ նյութապես, թե՛ գաղափարապես սնուցող Խորհրդային Ռուսաստանի հետ կապող պորտալարը, այնտեղ ընթացող թեժ քաղաքացիական կոիվների ժամանակահատվածում, կարծես թե գրեթե չորացել էր:

Ո՞րն էր հայ բուլժևիկների տեղն ու դերը հայ իրականության մեջ այդ նոր իրավիճակում, երբ հայության հանդեպ հնչեցրած և ստորագրած բոլոր լավագույն ցանկությունները, այդ թվում և «Թուրքահայաստանի մասին» դեկրետը հայտնվել էին Լեթայի ամենակոլ ջրերում, բայց լավ թե վատ, պատմական Հայաստանի ընդամենը մի փոքր մասի վրա ստեղծվել էր անկախ հայկական պետություն: Այդ հարցին ավելի քան սպառիչ պատասխան է տալիս Անաստաս Միկոյանի կողմից 1919-ի դեկտեմբերին ներկայացված տեսակետների համակարգը, որը կարելի է համարել հայ բուլժևիկների քաղաքական մանիֆեստ՝ սեփական ազգի և ազգային պետականության վերաբերյալ:¹²

Կարմիր Բանակի՝ Կովկասի սահմաններին մոտենալու պահից, բուլժևիկները Հայաստանում սկսում են ծավալել անլեգալ ընդհատակյա գործունեություն: 1919-ի սեպտեմբերին Ռուսաստանի Կոմունիստական (բուլժևիկների) Կուսակցության (ՌԿ(բ)Կ) Կովկասյան Երկրամասային Կոմիտեի (ԿԵԿ) նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների անլեգալ խորհրդակցություն, որի նախապատրաստման և անցկացման համար դեռևս ամռանը ԿԵԿ-ն Հայաստան էր ուղարկել մի քանի «փորձված ընկերների»: Խորհրդակցության վերջում ընտրվում է ՌԿ(բ)Կ Հայաստանի Կոմիտեի՝ Արմենկոմի առաջին կազմը: 1920-ի հունվարին զումարվեց առաջին՝ նույնպես անլեգալ կուսակցական կոնֆերանսը: Հայաստանում իրենց բուլժևիկ համարող բոլոր անձինք (ըստ նույն բուլժևիկյան աղբյուրների այդ թիվը չի գերազանցել 400-600-ը¹³) այդ կոնֆերանսին ներկայացված էին 22 պատվիրակներով: Կազմակերպական առումով որոշում ընդունվեց, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունը հանդիսանում է Խորհրդային Ռուսաստանի իշխող կուսակցության՝ ՌԿ(բ)Կ-ի անբաժանելի մասը և օգտվելու է այդ կուսակցության մարզային կոմիտեի իրավունքներից: Հունվարյան այդ կոնֆերանսում ընտրվեց Արմենկոմի նոր կազմ: Բայց կոնֆերանսի ամենակարևոր որոշումն այն էր, որ կուսակցությունը պետք է զինված ապստամբության միջոցով

¹² Ю.Г. Барсегов, նշված աշխատությունը, էջ 36; (տե՛ս նաև սույն աշխատության Doc. I-26 փաստաթուղթը)

¹³ Շ. Ամիրխանյան, նշված աշխատությունը, էջ 85; Б. Борьян, նշված աշխատությունը, էջ 95; Ս. Վրագյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 409

Հայաստանում իրականացնի իշխանավիճակություն, և Ռուսաստանի օրինակով երկրում հաստատի Խորհրդային կարգեր: Իսկ թե Խորհրդայնացումից հետո այդ երկիրն ինչ կարգավիճակ կունենար, ինքնին հասկանալի է: Ինչ կարգավիճակ կարող է ունենալ մի երկիր, որի իշխող կուսակցությունը հանդիսանում է մեկ այլ երկրի իշխող կուսակցության անբաժանելի մաս և օժտված է դրա մարզային կառույցի իրավունքներով:

Չմոռանանք նշել, որ կազմակերպական այդ եռուն շրջանում աչքաթող չարվեց նաև Արևմտահայաստանի տարածքում գործելու համար ստեղծված Հայաստանի կոմունիստական կուսակցությունը: 1919-1920-ին Արևմտյան Հայաստանում անկախ ազգային պետականության ստեղծման մասին խոսող կոմունիստական կազմակերպությունը «իսկական» հայ բուլշևիկների համար դառնում էր արդեն ոչ թե անախրոնիզմ, ավելորդություն, այլ նույնիսկ խիստ խանգարիչ ու վնասաբեր մի հանգամանք: Առավել ևս, որ նրա կողմից շոշափվում էր կազմակերպչորեն որպես առանձին միավոր ուղղակի ենթակայությանը Կոմինտերնի կազմում ընդգրկվելու հարցը: Այդ կուսակցությունը գլխավոր ջախջախվեց ու լիկվիդացվեց 1919-ի աշնանը Աստրախանում կայացած հայ կոմունիստների մի Խորհրդակցության ժամանակ՝ բոցաշունչ բոլշևիկներ Անաստաս Միկոյանի և Իսահակ Դովլաթյանի կողմից:

Այսինքն կազմակերպական-կուսակցաշինական, այն է՝ Հայաստանում «հինգերորդ շարայան» կայացման առումով, իրավիճակը գնալով դառնում էր ավելի ու ավելի պարզորոշ ու հստակ: Հայ կոմունիստներից արագորեն կազմակերպվում ու ձևավորվում էր մի շերտ, որը պետք է գտնվեր ռուսաստանյան բոլշևիկների ուղղակի ենթակայության տակ և հանդիսանար մի գործիք, որի միջոցով իրենց երկիրը պետք է նետվեր բոլշևիկյան տարածաշրջանային ծրագրերի իրականացման հոսանքի մեջ. թեկուզև դրա արդյունքում խարխվելու ու վերանար սեփական անկախ պետականությունը:

Ի վերջո, մի բան է սեփական պետության մեջ պայքարել սեփական իշխանության դեմ և հասնել դրա տապալմանը՝ անգամ զինված դիմակայության միջոցով. սա, թեև ցանկալի չէ, բայց համենայնդեպ ստեղավորվում է ինչ-ինչ շրջանակների մեջ, բայց միանգամայն այլ բան է՝ կործանել սեփական պետականությունը հանուն օտար շահերի՝ փոխարենը ստանալով դրա ավերակների վրա տիրելու գավառական մի սատրապի իրավասություն: Դա արդեն ուղղակի պետական դավաճանություն է:

ПРЕДСТАВИТЕЛЬ
ВОЕННОГО ВЪДОМСТВА
АРМЕНИИ
ПРИДИПЛОМАТИЧЕСКОЙ
МИССИИ ВЪ ГРУЗИИ

Секретно
Г. Министру
Внутрѣнныхъ, Дель

24 июля 1919г
№ 101
Гор. Тифлисъ

Имѣю честь увѣдомить Васъ на продлить завѣсыщихся раскоряженій, что въ самомъ непродолжительномъ времени въ предѣлы Арменіи придутъ указанныя в представляемомъ присемь списокѣ лица, выеланныя этапнымъ нарядкомъ изъ Тифлиса. Списокъ этотъ мною полученъ негласнымъ путемъ изъ Особаго Отряда, являющагося въ настоящее время политической полиціей Грузіи, вродѣ Корпуса жандармовъ, во время хлопотъ при освобожденіи бывшаго Адъютанта Военнаго Министра Поручика Овакимовича Михаила, по недоразуменію попавшаго въупомянутой списокъ подъ № 13.

ПРИЛОЖЕНИЕ: списокъ
Генераль-Маіоръ Кишмишев
И. д. Офицера для порученій,
Поручикъ *ицпршарпцѣрпнѣ*

ицпршарпцѣрпнѣ

Унѣшарп, рѣорпнѣшлѣ

СПИСОКЪ

Освобожденныхъ изъ тюрьмы болшевииковъ.

1. Венцывскій Игнатій Здня
2. Романенко Наталія
3. Кохянь Асатуръ
4. Арутюнянь Арамъ
5. Микиртумянь Енокъ
6. Ерканянь Ваганъ
7. Акоповъ Арутюнь
8. Петросянь Мартиросъ
9. Мирзоянь Леонъ 3 дня
10. Мелконянь Микиртичь
11. Берберовъ Ананій 3 дня
12. Агаянь Мумекъ
13. Авакимовъ Михаил

Все вышеозначенныя лица за исключениемъ Романенко изъявили желаніе ѣхать въ Арменію, а Романенко въ Баку.

Doc.1-3

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԶԵԿՈՒԹՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Գերմանիայից և Ավստրիայից վերադարձող հայ ռազմագերիներին
ռուսական տարբեր հոսանքների զինված միավորումների կողմից
Հայաստան հասնելուն խոչընդոտելու և ստիպողաբար իրենց մոտ
ծառայության գորակոչելու մասին
(23 ապրիլի, 1919թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. Մ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՍՍԻԱ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԹԻՖԼԻՍ

23 Ապրիլի 1919թ.

Նո. 820

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ Պ.

ՆԱԽԱՐԱՐԻՆ

8-րդ գնդի գնդապետ Արղության Յերկայնաբազուկը, մոտ որերս
ժամանելով Նովորեսսիյսկից հաղորդեց ինձ հետեվյալը.

Գերմանիայից յեվ Ավստրիայից վերադարձող հայ գերիներին
Նովորեսսիյսկից թույլ չեն տալիս գալ Անդրկովկաս, այլ ստիպում են
մնալ յեվ մտնել կամավորական բանակի մեջ, վորի շարքերում,
Արղությանի ասելով ծառայում են մոտ 12000 հայ գերի զինվորներ:

Վոմանց հաջողվում է փախչել Նովորոսսիյսկից, բայց գալով Սոչի,
վորտեղ գայալմյան ունի «կանաչ բանակ» անունով մի ավազակախումբ,
վերջինիս կողմից, ենթարկվում են անողոք հալածանքի յեվ թալանի,
վորից ազատ են մնում միայն նրանք, ովքեր համաձայնվում են մտնել
այդ բանակը:

Հայ գերի զինվորները, ցանկանալով ազատ լինել այդ թալանից,
մտնում են ավազակների շարքերը: Այդպիսիների թիվը հասնում է 1½
հազարի:

Հայտնելով Ձեզ այս մասին թե հիշյալ գնդապետը յեվ թե յես
անհրաժեշտ ենք գտնում հրավիրել Ձեր ուշադրությունը այդ
յերեվույթների վրա յեվ խնդրել Ձեր կարգադրությունը հիշյալ
արգելքների վերացման համար:

Հետեվանքին խնդրում ենք ինձ իրազեկ անել

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՉ՝ (ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՇ. Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանված Ե յերեք պատճեն յեվ Մինիստրի համապատասխան
կարգադրության հետ ուղարկված են Բաթում Պ. Յեդեգարյանին, Ա.
Կատերինատար Պ. Սաղաթեյանին յեվ Ռոստով Պ. Չալխուշյանին
(ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)
24 մայիսի 1919թ.

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց.2, գ.44, թ.4; անքննագիր

Doc. I-4

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարի կողմից
այս զինվորականներին կամավորական բանակի շարքերը թողնելու և
Հայաստան մեկնելու թույլտվության ու կամավորական բանակից զենք,
զինամթերք և հեծելազորի համար ձիեր ձեռք բերելու հնարավորության
մասին

(20 նոյեմբերի, 1919թ.)

В. М.

ПРЕДСТАВИТЕЛЬ ВОЕННОГО
ВЕДОМСТВА АРМЕНИИ

при

Дипломатической Миссии

в Грузии

20 Ноября 1919г.

№ 300

г. Тифлис.

Секретно.

ВОЕННОМУ МИНИСТРУ
АРМЕНИИ

/Копия Министру

Иностранных дел/

РАПОРТ.

Главкомандующий вооруженными силами Юга Россия разрешил
военнослужащим армянам покинуть ряды добровольческой армии и
отправить на родину для дальнейшего несения службы. Из разговоров
с прибывающими оттуда единичными офицерами выяснилось, что
число солдат, желающих поступить на службу в войска Армении,
достигает несколько тысяч человек, но, за отсутствием организации на
месте по отправке их в Армению и каких бы то не было средств, они
лишены возможности осуществить свое желание и право.

Независимо сего, наш Дипломатический Представитель в Грузии г.
ЕВАНГУЛОВ, основываясь на письмо нашего Представителя при
Кубанском Правительстве, г. Сагателяна, сообщил мне, что генерал
Деникин согласен снарядить их оружием и снабдить потребным
количеством трехлинейных патронов, причем есть основание думать, что
Правительство Грузии не встретит препятствий к пропуску их через свою
территорию: Людей под видом беженцев и груза - в качестве транзитного.

Не подлежит никакому сомнению, что увеличение нашей Армии
сразу на несколько тысяч опытных, дисциплинированных бойцов с
оружием в руках и с надлежащим запасом патронов - в настоящее

тревожное и критическое время является крайне желательным и к тому же весьма легко осуществимым.

Таким образом, назревает настоятельная необходимость командирования в пределы Добрармии, надежного, сведующего и тактического офицера в высших чинах, не ниже Полковника или Генерала, для урегулирования этого вопроса и организации совместно с нашим Представителем Г. Сагателяном отправки офицеров, солдат и оружия через Новороссийск и Потю, или Батум, что будет удобнее, в Армению.

/План перевозки при сем представляется/.

Попутно этот офицер может информировать представителей Добрармии и местную прессу о существующем положении вещей и в свою очередь привезти оттуда весьма ценная сведения, в которых, в виду слабого информации мы весьма нуждаемся.

Независимо сего, названный офицер сможет заручиться принципиальным согласием Генерала Деникина на вывоз /?/?/ Дона потребного для нас количества лошадей, т.к. наша страна совершенно обезлошадилась, а все местные доставщики- ингуши и Кабардинцы, предлагающие нам лошадей, не могут добиться разрешения Правительства Грузии на прогон /?/ их через границу Грузии.

После переговоров с Генералом Деникином и разрешения последнего можно будет закупить у армян - коноводчиков например Черновых, лошадей, которых морем нетрудно переправить до Потю. Оттуда, на основании недавно заключенного с Грузией транзитного договора очень легко и свободно доставить в пределы Армении, причем, если удастся можно приобрести не только для Военного Ведомства, но и для населения, можно продать всех кобыл.

Лошадей примет Комиссия на месте из специалиста, как это уже имело место в Тифлисе при покупке у англичан 400 мулов в два приема, а отправлять их можно вместе с войсковыми эшелонами, причем для наблюдения, корма и уборки их во время пути следования, необходимо, использовать тех же солдат, служивших раньше в конных частях.

Совмещением этих двух операций значительно удешевится транспортирование лошадей и кроме того, явится гарантия, что животные дорогой будут находиться в надежных руках ответственных лиц.

/Инструкция по приему и перевозке лошадей представляется/.

Принимая во внимание, что согласно сношения Начальника Военного Штаба от 4-го сего Ноября за № 842/с, в настоящее время в Армении не имеется надлежащей валюты для уплаты на лошадей, возникает вопрос об обмене чеков Правительства Армении на “Донские деньги”, каковую миссию также можно будет поручить названному офицеру, причем имею честь доложить, что по сему предмету я уже имел беседу с Главным Представителем Главнокомандующего вооруженными силами Юга

России при Союзном Командовании в Закавказье, который в этом отношении выразил готовность пойти нам на встречу.

Еще лучшим средством для выполнения всей этой операции является товарообмен, именно вывоз из пределов Армении транзитом через Грузию спирта, либо шерсти, или хлопка, по реализации коего, можно не только приобрести лошадей, но и осуществить предпринимаемый план перевозки. По исчислению такого сведующего и известного в промышленном и финансовом мире лица, как г. Маилов, за 200.000 градусов спирта можно выручить до 15 мил. рублей. Если нам удастся закупить до 1 т. голов лошадей, что обойдется с перевозкой и доставкой в Эривань до 10 мил. рублей, то останется еще до 5-ти мил. рублей на издержки по перевозке военнослужащих, и оружия – 2 мил. 400 т. рублей, и стало быть, экспортируя свой спирт, мы получим за него лошадей, перевезем наших солдат и еще выручим свыш. 2 мил. 600 т. руб., которым можно дать любое назначение.

В заключение доложу, что отправление в Добрармию офицера с указанием выше полномочными может состояться, по моему мнению, лишь в случае отсылки, согласно нашего обязательства, 6 мил. Лебелевских патронов в Батум в веденье Представителя Добрармии, Генерала Порхонского, причем должен поставить Вас в известность, что заместитель Полковника Гаскеля Полковник РЕ на мою вторичную, настоятельную, убедительную просьбу в провозе этого груза в пределах территории Грузии под Американским флагом ответил уклончиво, обещав подумать.

По всей вероятности, он откажет нам, как раньше заявил и теперь повторяет, не желая портить отношений с грузинами, с которыми основание думать, что в случае безуспешности содействия американцев можно будет добиться разрешения, минуя их, самого Грузинск. п-ства.

К началу переговоров надлежащих будет приступленно по утверждению сего проекта и по переводе денег или разрешения по экспорт спирт.

К сему имею честь присовокупить, что во всем выше изложенном вполне и во всех отношениях солидарен Г. Евангулов.

Приложение: План перевозки, инструкции: копия не имелось

Г. Сагателяна и сношение за № 1074 в рапорт
Воен.-Министр.

Генерал Майор Кишмишев.

Офицер для поручений, поручик (Подпись)

ՀԱՍ, Ֆ-Պ. 200, ց.2, գ.44, թ.10-12; ւնթիւսիդիթ

Doc.1-5

ՎԿԱՅԱԿԱՆ

Հայաստանի Հանրապետության որոշմամբ՝ Գրիգորի Ազամունիս
ադմիրալ Կոլչակի մոտ հատուկ հանձնարարությանը ուղարկելու
վերաբերյալ
(1 հունիսի, 1919թ.)

1 июня 1919г.

№ 2499. 78

Оканчевший Курс юридических наук Григорий Сергеевич Азамоев согласно постановлению Правительства Республики Армении посылается с особым поручением, которое он имеет сообщить лично Верховному Правителю Российского государства Адмиралу Колчаку и особому совещанию при нем.

Министр представитель՝
Министр иностранных дел՝

ՀԱՍ, Ֆ-Պ. 200, ց.2, գ.44, թ.5; ձեռագիր

Doc.I-6
ՕՐԵՆՔ

Սիբիրի կառավարության կից դիանագիտական ներկայացուցչություն
սահմանելու եւ այդ նպատակով 59000ր. վարկ բանալու մասին
(30 հունիսի, 1919թ.)

Պատճեն

ՕՐԵՆՔ

Սիբիրի կառավարության կից դիանագիտական ներկայացուցչություն
սահմանելու եւ այդ նպատակով 152000ր. վարկ բանալու մասին:

« ա. սահմանել Սիբիրի կառավարության կից Հայաստանի
Հանրապետության դիանագիտական ներկայացուցչություն եւ
նշանակել դիանագիտական ներկայացուցիչ Գ. Զամոյեանին եւ

բ. բանալ արտաքին գործերի Մինիստրությանը վերոյիշեալ
դիանագիտական ներկայացուցչական 4 ամսայ ծախսերի համար
հարիւր յիսուն երկու հազար 152000 թուրքլու վարկ»:

Մինիստրների Խորհրդի Գործերի Կառավարիչ՝ Գ. Խօջամիրեան

Սոյն օրէնքը հաստատուած է Մինիստրների Խորհրդի 1919 թի
յունիսի 30ի նիստում, համաձայն Հայաստանի Խորհրդի 1919 թի
յունիսի 5ին ընդունած օրէնքի:

Մինիստրների Խորհրդի Գործերի Կառավարիչ՝ Գ. Խօջամիրեան.

Իսկականի հետ ճիշտ է

Քարտուղար՝ /սփորագրություն/

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց.2, գ.57, թ.1; անքննագիր

Doc.1-7

ԲՅՈՒԼԵՏԵՆ №3

Ռուսաստանի Հարավի զինված ուժերի ներկայացուցիչների և
Բուսիլայի սենատորի Հայաստանի պրեմյեր մինիստրի հետ
հանդիպումների վերաբերյալ
(14 մարտի 1920թ.)

Стр. 8-10

Копия.

Секретно.

БЮЛЛЕТЕНЬ №3.

СОБЫТИЯ ПОСЛЕДНЕЙ НЕДЕЛИ (14-го Марта (1920)).

1. Приезд делегации Верховного круга.

7-го марта в Эривань приехала делегация Верховного круга. 8-го марта состоялось совещание делегации с правительством Армении. В совещании принимали участие со стороны делегации г.г. Ковалев (представитель Дона), Зазуля (представитель Кубани) и Бигаев (представитель Терека).

Вопросы, интересовавшие делегацию, были следующие:

- I) В какой форме Армения может принять участие в борьбе с большевиками.
- II) Возможность формирования добровольческих частей в Армении и каково может быть отношения к этому Армянского Правительства, а также возможность участия в этом самого правительства.
- III) В случае отступления добровольческих частей, могут ли они найти приют в Армении.
- IV) Каково положение русских в Армении.
- V) Каковы политические течения в Азербайджане.
- VI) Какую помощь может оказать Правительство Юга России Армении в экономическом, военном и политическом отношениях.

Правительство в лице премьера Министра Хатисова дало следующие ответы на поставленные вопросы:

- I) Правительство полагает, что участие Армении в борьбе с большевиками могло бы выразиться в четырех формах:
 - а) активная борьба против большевиков на общерусском фронте;
 - б) борьба против турок, как союзников большевиков;
 - в) борьба с большевизмом внутри страны;
 - г) обмен военным снаряжением;
- а) Правительство Армении не имеет возможности посылать своих сил для активной борьбы с большевиками. Армения окружена сплошным кольцом врагов, турко-азербайджанцев, против которых направлены все ее силы .

б) Правительство считает турко-большевистский фронт общим фронтом, как для Армении, так и для Юга России, ибо если большевики соединятся с турками через Армению, то этим создастся угроза тылу юга России со стороны Дагестана. Борясь с турками, Армения борется и за общее дело. Помощь Армении может выразиться лишь в этой форме.

в) Внутри Армении правительство ведет и будет вести борьбу с большевизмом и его представителями. Не так давно были, по постановлению Правительства арестованы и высланы из пределов Армении многие большевики. Парламент, имевший ввиду запросы фракции эс-эров, суждение по этому вопросу, одобрил меры, принятые Правительством против большевиков;

г) Правительство Армении готово обменяться взаимно снаряжением.

II) По второму вопросу,- о возможности формирования добровольческих частей в Армении и пр., Правительство полагает, что в Армении нет такого контингента, из которого можно бы было формировать добровольческие части. Единственный элемент- это молокане, которые сами заражены большевизмом. Официальное объявление о формировании добровольческих частей и бесполезно и вредно, и не отвечает политическим интересам Армении. Но правительство ничего не будет иметь против, если найдутся лица, которые в качестве частных лиц пожелают уехать в Добровольческую Армию; таким лицам будет оказано всяческое содействие.

III) В случае отступления добровольческих частей, они найдут в Армении полнейший приют. Ввиду продовольственного кризиса в Армении, необходимо, чтобы прибывшие части имели собственное продовольствие; в крайнем случае, конечно, можно поделиться с ними последним крохом хлеба.

IV) Положение русских в Армении хорошее, даже привилегированное- они не несут воинской повинности, у них не бывает постоев; никого из русских из Армении не выслали, наоборот высланные из пределов других республик, находили в Армении приют и службу. В армии много русских офицеров, чиновников, ликвидируемые, вследствие национализации, получают ликвидационные и даровой проезд и провоз имущества.

V) Юг России может оказать Армении помощь в трех отношениях: а) экономическом, б) военном и в) политическом. Помощь необходимо во всех трех видах.

а) экономическая помощь может выразиться в посылке Армении хлеба, жиров, посевного материала и пр. Армения в обмен может дать вино, спирт, хлопок, соль и пр.

б) военная помощь может выразиться в обмене военным снаряжением.

в) политическая помощь выражается в юридическом признании об'единенной Армении.

В заключении Министр Председатель выразил желание, чтобы делегация предприняла шаги к тому, чтобы между Арменией и Югом России была установлена почтово-телеграфная связь, отсутствие каковой чрезвычайно тяжело отзывается на Армению.

2. Приезд Итальянской делегации.

В то же время в Эривань приехали Итальянская делегация во главе с сенатором Конти. Цель делегации - чисто торговая. Конти заявил, что Армения представляется в глазах Италии единственной республикой, с которой, как жизнеспособной политической единицей, можно завязать крепкие торгово-промышленные связи.

С самого же первого дня приезда делегации стала на практическую почву. Она заключила договор о продаже правительству 6 автомобилей, выработала предварительные условия по доставке в Армению разных станков, вагонов, паравозов и пр. Железнодорожного имущества. Товары будут привозимы не только в обмен на товары же (хлопок и пр.) будет открыт в Италии кредит на 50 миллионов итальянских лир.

По от'езде Конти приехал инженер Пицорно для выяснения в деталях количество, качество и иных свойств железнодорожного имущества, которым в первую голову Италия может снабдить Армению.

О сенаторе Конти необходимо сказать, что он человек очень состоятельный, владелец многих фабрик и заводов и директор до 10 крупных банков, человек дела и практики.

3. Батум.

По вопросу о Батуме были получены следующие сообщения: 1) Уордроп телеграфировал в Эривань, что Верховный совет решил, что в настоящее время нужно вернуть в Батум союзный гарнизон, состоящий из английских, французских и итальянских войск. 2) Пуадebar сообщил, что Верховный Совет постановил занять Батум союзными войсками в составе по одному батальону английскому, французскому и итальянскому и что время прибытия войск пока неизвестно. Пуадebar добавляет, что это решение есть результат тех обращений, которые получены французской миссией и что Шардини сыграл в Париже большую роль при разрешении этого вопроса. 14-го марта была получена от военного представителя Италии полковника Габба телеграмма следующего содержания: "Имею честь сообщить, что Лондонская конференция постановила создать порто-франко Батума с маленькой территориальной зоной, которая будет под покровительством Лиги Народов и гарантией Франции, Италии и Англии, которые пошлют каждая по батальону пехоты."

Арх фонд № 66, дело № 844- 1918 (?)года.

ПРИМЕЧАНИЕ: Настоящие копии сняты с материалов ЕГАФ, хранящихся в центральном архиве ССР Армении (фонд № 66, дело № 844- 1918 года Дашнакского Правительства, Министерства Иностранных Дел”

Գաղտնի յեվ այլ գրութիւններ “) и выдаются Армистпарту.

ЗАВГОСЦЕНТРАРХИВОМ /подпись/ / Х. САМУЭЛЬЯН/
АРХИВАРУС /подпись/ /М. МЕЛИК/
ДЕЛОВОД /подпись/ /А. МУРАДЯН/

№ 22
“27” января 1930 года.
г. Эривань

ՀԱՍ, Ֆ-Պ. 200, ց.2, գ.46, թ.1-5; սերննազիր

Doc.1-8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի որոշ պետական հաստատությունների կողմից
զինապարտության մասին երկրի գործող օրենքը խախտելու և
գորակոչից խուսափողներին աշխատանքի ընդունելու մասին
(31 մարտի, 1920թ.)

Р.А.

Министръ Внутреннихъ Дѣлъ
Главному Управленію по
дѣламъ воинской повинности.
№ 1451
31 Марта 1920 года.
Гор. Эривань.

В. Нужное.
Въ Министерство Внутреннихъ

Несмотря на изданный и находящийся въ силѣ временный Законъ по борьбѣ съ дезертипствомъ, опубликованный 5 Юня 1919г, во многихъ учрежденіяхъ нѣкоторыхъ Министерствъ, вопреки пункта 1-го означеннаго Закона, на службѣ состоятъ лица призывнаго возраста отъ 20 до 32 лѣтъ включительно, принятыя на таковую безъ установленныхъ удостовѣреній отъ подлежащихъ Уѣздныхъ Воинскихъ Присутствій, или хотя и съ таковыми, но выданными послѣдними до перваго Января прошлаго 1919г, т.е. съ удостовѣреніями, не имѣющими, на основаніи 5 Закона о призывѣ въ ряды войскъ 9 Сентября прошлаго года, никакого значенія. Во избѣжаніе наложенія мною взысканій на Начальниковъ принявшихъ таковыхъ лицъ на службу, прошу Министерство Внѣ Дѣлъ безотлагательно произвести строжайшую провѣрку документовъ всѣхъ служащихъ во всѣхъ подвѣдомственныхъ ему учрежденіяхъ, по коимъ они были приняты на службу. Независимо сего на основаніи моихъ приказовъ отъ 30 Сентября 1919г. и 23 Марта с.г. прошу обязать всѣхъ служащихъ во всѣхъ подвѣдомственныхъ Вамъ учрежденіяхъ, возрастъ отъ 16 до 43 лѣтъ включительно имѣть при себѣ удостовѣренія подлежащихъ Уѣздныхъ Воинскихъ Присутствій съ указаніемъ въ нихъ возраста и отношеній ихъ къ отбыванію воинской повинности, выданныя послѣдними съ 1-го Января прошлаго 1919 года и позже, дабы не быть задержанными при облавахъ. О послѣдующемъ

прошу срочно мнѣ сообщить по Главному Управленію по дѣламъ
воинской повинности.

Подписаль: Товминвнутр. дѣль Манасянъ.

Вѣрно: Дѣлопроизводитель *подпись*

СШ, Ф-П. 201, г. 1, к. 29, л. 13; илрѣишдир

Doc.I-9

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻՆ,
ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՄԻԼԻՑԱՊԵՏԵՐԻՆ ԵՎ ՂԱՐՄԻ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

գորամասերից փախած զինվորներին ձերբակալելու և նրանց կողմից տարած զենքն ու հանդերձանքը ետ բերելու անհրաժեշտության մասին
(ապրիլ, 1920թ.)

Ն. Գ. Մ.

...վարչ եւ Միլից.

ՏԵՍՈՒՉ

ՆՕ 4013

... Ապրիլի 1920թ.

Երեւան.

Շտապ. Գաղտնի

Շրջաբերական.

Բոլոր գաւառական կոմիսարներին քաղաքային Երկաթուղագծային Միլիցիապետներին եւ Ղարսի նահանգապետին

Վերջին ժամանակներս Վարչական ներկայացուցիչներից ոմանք անհետեանք վերադարձնում են զինւորական մասերից ստացած այն գրութիւններ որոնցով խնդրում է միջոցներ ձեռքտառնել ձերբակալելու զինւորամասերից փախած զինւորներին նոյնպէս եւ գտնել նրանց հետ տարած զինւորական համազգեստը զէնքերը եւ այլն. բացի այդ դասալիք զինւորները փախցրած իրերը ազատ կերպով ծախում են որպիսի երեւոյթը չափազանց լայն ծաւալ է ստացել ոչ մի միջոց ձեռք չի առնում կանխելու այդ չարիքը ի բնէ:

Յայտնելով Վարչական ներկայացուցիչթեան լուրը ուշադրութիւն նման ցաւալի իրականութեան վրայ Ներքին Գործոց Մինիստրի կարգադրութեամբ առաջարկում եմ վերացնել նման երեւոյթները ճշտօրէն կատարել զինւորական մասերից ստաձած պահանջները եւ դասալիքներին իրենց մասերը ներկայացնելիս աշխատել գտնել եւ ինչ կերպ էլ լինի նրանց փախցրած հագուստը ոտնամանը զէնքը եւ այլն եւ հարկատր դէպքում պատասխանատութեան ենթարկել նրանց ազգականներին ու ունեցած համաձայն մի շարք այդ առթիւ օրէնքների:

ՏԵՍՈՒՉ /Ստորագրություն/

Գործավար /Ստորագրություն/

ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց.1, գ.26, թ.150; մեքենագիր

Doc.I-10
ԳՐՈՒԹՅՈՒՆ
Բոլշևիկ Հովհաննես Սարուխանյանին աշխատանքի
նշանակելու վերաբերյալ
(2 օգոստոսի, 1919թ.)

Հ.Կ.Ն. Մին Մ
(ոչ ուշ, քան 1920թ. մայիսի սկիզբ)

Առաքել Ավագյանը յերբեմն փոխարինում եր Դանելյան Գյորգին:
20 ԹՎԻ ՅԵՐԵՎԱՆԻ ՅԵՐԿԱԹԳԾԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԲՋԻՋԻ

ԿԱԶՄԸ.

1. Արհամյան Վարդան.
2. Աբաջյան Կորին.
3. Բելուջեվ Խրիստաֆոր.
4. Գեվորգյան Վարդան. (Գնդակահարված).
5. Գեվորգ.
6. Գյուրջյան Խարայել:
7. Դորա.
8. Կորխմազյան Մամիկոն.
9. Հարությունյան.
10. Մանուչարյան Արամ.
11. Մարգո.
12. Սայգանով Գյորգի.
13. Ստեփանյան Ստեյոպա.

(բջիջը ուներ մոտ 20 անդամ մնացածը հայտնի չեն) :

20.թ. ՓՈՍՏ ՀԵՌԱԳՐԱՏԱՆ ԲՋԻՋԸ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ.

1. Գասպարյան Լեվոն.
2. Լեվոն Հովհանիսյան.
3. Մելիք Խաչատրյան Հայկ.
4. Սարոյան.
5. Սիմոնյան Յաշա.
6. Ոհանջանյան Մամիկոն (մահացավ բանտում ավանտյուրայի ժամանակ):

Ղուկաս Ղուկասյան Արմենկոմի անդամ եր, Յերեվանի կոմիտեյի
անդամ չի յեղել:

Աստվածատրյան սամսոն կոմիտեյի անդամ չի յեղել.

Շախկելոյան Վահան մայիսի մեկից հետո աշխատել ե ակտիվ
ժամանակավոր Արմենկոմի ղեկավարությամբ:

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, գ. 3, գ. 257, թ. 14-2; մեքենագիր

Doc.I-36

ՑՈՒՑԱԿ

Ալեքսանդրապոլի բուլճարական կոմիտեի ընդհատակյա կազմի
(մայիս, 1920թ.)

ԱԼԵՔՊՈԼԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ ՄԱՅԻՍԻ

ՈՐԵՐԻՆ

1. Խանոյան Սերգո
2. Գոգունց Արշակ
3. Գրիգորյան Սաշա
4. Նուրիջանյան Ավիս
5. Ուլիբեկյան Լեվոն
6. Տեր-Սահակյան Աշոտ
7. Ղարիբջանյան Բագրատ

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.10(2); անքննագիր

Doc.I-37

ՎԱՐՄԻՐ ԳՎԱՐԴԻԱՎԱՆ, 1918թ. ՀԿ(Բ)Կ ԱՆԴԱՄ ԵՖԻՄ ՎՈՅԿԻՆԻ
ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅՎՈՄԿՈՒՄԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
Վարսի մարզում 1918-1920 թթ. ծավալված դեպրեի վերաբերյալ
(նշ շուտ, քան 1926թ.)

Красногвардейца члена ВКП (б)
С 1/го апреля 1918 года Ефима
Васильевича Войкина.

Заявление.

Настоящим считаю своим долгом, сообщить следующие события происходившие во времена дашнакского владычества, а также мое участие в этих событиях в Карсской области.

Сам я происхожу из беднейших крестьян села Голицыно в 15 верстах от Лениакана Карсской области, родился в самой наибеднейшей крестьянской семье и с малолетства занимался батрачеством, а затем переехал в гор. Карс где проживал у брата работая сперва в качестве рабочего на железной дороге, в кузнице у кулака молоканина, а затем писарем в Канцелярии Губернатора, одновременно я учился, и за несколько месяцев до призыва на военную службу я экстерном сдал экзамен на звание Народного учителя, а в 1915 году в июне был призван на военную службу и отправлен в гор. Старицу Тверской Губернии.

В начале 1917 году мне удалось перевестись в Карс в Карсскую Крепостную телеграфную роту.

В 1917 году в марте месс. во время восстания частей и ареста Коменданта Крепости, Губернатора и других приверженцев царизма, я активно с воинской частью принимал участие.

В середине 1917 года я избираюсь членом Русского Областного Совета кооптируюсь в состав Крепостного Исполкома, а через некоторое время по инициативе этого же Совета я был отозван как беспокойный элемент.

В 1918 году в начале, я вместе с уезжающими солдатами выехал в Россию и по дороге остановился в гор. Георгиевске Терской области, где находились мои родственники.

В г: Георгиевске я сейчас же вступаю в отряд Красной Гвардии и до отступления от белых принимаю активное участие в Штабе Красной Гвардии, /вступив с апреля этого же года в коммунистическую партию/ в боях как против казачьих банд так и против белых при отступлении.

После занятия белыми Терека излечившись от сыпного тифа, я под псевдонимом чиновника бежал через Новороссийск в Тифлис. Таким образом в Тифлис я прибыл в середине Марта 1919 года.

Получив помощь от партийной организации в Тифлисе я вынужден был для подыскания работы выехать в Карс.

БОРЬБА С РУССКИМ НАЦИОНАЛЬНЫМ СОВЕТОМ /МОНАРХИЧЕСКИМ/.

1919/1920 г.г.

Прибыв в мае мес. 1919 г. в г. Карс я первые 3 месяца работал табельщиком в Инженерном Управлении, а затем через Инспектора школ получил назначение Смотрителя Владикарского сельского училища. Перед началом учебного года на ряде съездов учителей русских школ я близко познакомился с группой русских молодых учителей которые были на Сев-Кавказе и после занятия Деникиным выехали, я тесно сошелся с учителями Косинским, Богдановым, Родионовым, Сысоевым и др. От т. Родионова я узнал, что он член Владикавказской организации ВКП/б/, а другие Богданов, Сысоев, Косинский были настоящими большевиками но не оформленные принятием в партию. С т. Родионовым мы решили работать и в первую очередь под видом съезда русских учителей и разъездов по селам агитировать за Советскую власть. Родионов в Седиме я во Владикарсе и через некоторое время мы создали вокруг себя большой актив из сельских учителей и крестьян бедняков. Перед собою мы поставили задачей в первую очередь прогнать из Русского Национального Совета Ставленника Деникина. Полковника Янченко/- председателя и других офицеров и чиновников. Тут мы встретили в первую очередь серьезное препятствие с одной стороны от Полпреда в Эриване деникинское Зинкевича, а также со стороны кулачества. Не останавливаясь не перед чем мы отпечатываем воззвание по русским селам с призывом свергнуть Деникинский Совет который в то время занялся во первых собором пожертвований для Добровольческой Армии и во вторых посылкой к Деникину делегаций за хлебом.

Авторитет учителей-революционеров победил и к концу 1919 и началу 1920 г.г. несмотря как видно из прилагаемой копии телеграмму Зинкевича о пожертвовании им 10.000 руб. на устройство молитвенного дома в Карсе для молокан, а также личный его приезд и объезд русских сел ни к чему не привели. Русский Монархический совет пал, был чрезвычайным съездом переизбран и в новый состав вошли: Я, Богданов, Родионов, Косинский приезжий из Тифлиса левый эссер Самсонов и другие.

РЕПРЕССИИ ПРАВИТЕЛЬСТВА К НОВОМУ СОСТАВУ СОВЕТА И СТРЕМЛЕНИЕ ПОСЛЕДНЕГО К ОБЪЕДИНЕНИЮ ВСЕГО ТРУДОВОГО НАСЕЛЕНИЯ, УВЯЗКА ЖИВОЙ СВЯЗИ С ЗАРОЖДАЮЩЕЙСЯ В г. КАРСЕ КОММУНИСТИЧЕСКОЙ ОРГАНИЗАЦИИ АРМЕНИИ. ПОДГОТОВКА К МАЙСКОМУ ВОССТАНИЮ.

Освобожденными работниками в новом составе Совета были Председатель Самсонов, Секретарь РОДИОНОВ и т. Председателя БОГДАНОВ они все переехали в Карс, я, Косинский и другие были по делам и вели агитационно пропагандистскую работу. С т. Родионовым мы условились,

что он возмет на себя инициативу- изыскание возможности увязаться с нелегальной партийной организацией. Правда сперва они нас встретили, весьма подозрительно и недоверчиво. Но после нашей подготовки Майского Праздника как в городе так и по селам, я в первых числах мая был вызван в Карс на секретное совещание с секретарем или представителем нелегальной организации, и уже как выяснилось недавно на это совещание приходил т. Назаров ныне Секретарь Укома Ахалкалаки. Повторяю, что разговор касался продвижения Советских войск в Закавказье о необходимости подготовки к восстанию, но практического ничего не было предложено. Да и действительно совещание было таковым, что всего нельзя было говорить. На другой же день я вновь был вызван в Карс, где т. Родионов предложил мне повести решительную работу по организации вооруженных отрядов. Затем я через день получал все новые указания и предложение не выезжать из села и ждать распоряжение.

Уже к 10/ му мая я сообщил, что у меня организовано три отряда из преданных нам людей вполне сочувствующих Советской власти и готовых пойти в бой. Эти отряды организованы из крестьян 3/х деревень Михайловки, Александровки и Владикарса Всего насчитывалось 100 чел. Одним отрядом командовать должен был тов. Перевышко учитель села Михайловки/ ныне работающий в Военпродмаге в г. Ленинакане работал в ЧК/ и другим я.

Карский Губернатор Корганов и реакционная часть кулачества убедившись в том, что мы никак особых мер не принимаем в защите русского населения, а занимаемся “темными делами” через Губернатора обратилась к Дашнакскому Правительству с просьбой о высылке нас т.е: весь состав Русского населения, и тут надо отдать справедливость. Зак. Рус. Нац. Совету, а затем также нашему чрезвычайному съезду который добился отмены распоряжения Министра Внутдел о нашей высылке. Тем не менее за каждым из нас был установлен стражайший надзор, а так как обо мне прошел слух как о комиссаре работавшим на Севкавказе особая слежка была и спасала только семья товарища Перевышко который по жене был связан тесно с городом Карса и предупреждала меня во время.

ՀԱՍ, Զ-Պ. 1022, ց.5, գ.172, թ.1-2; և՛րհիւսիղիր

ՀՈԴԿՎԱԾ «ԳՅՈՒՂԱՑՈՒ ՁԱՅՆ» ԹԵՐԹՈՒՄ
Հայ աշխատավորի կողմնորոշումը պետք է լինի սովետական
(19 ապրիլի, 1920թ.)

Վորը Պիտի Լինի Մեր Որինեստացիան

Բոլոր յերկրների բանվորների ու գյուղացիների փրկարար հզոր կարմիր բանակը մի կուռ ու համառ հարվածով ջարդ ու փշուր անելով Դենիկինյան հակահեղափոխության վորջը, փախուստի ե տվել գեներալների վոհմակը:

Կարմիր բանակը գրավել ե ամբողջ Հյուսիսային Կովկասը ու բաղդխում ե այժմ անդրկ. դռները:

Անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունները ու տիրող շրջանները նորից կանգնած են մի հզոր ուժի առաջ. Հյուսիսից առաջ շարժվող հեղափոխական կարմիր բանակի կամքը սպառնում ե վերջ տալու տիրող խավերի արտոնյալ դրությամբ:

Ինչպիսի քաղաքականություն վարել, դեպի ուր ուղղել հայացքը, ումից ոգնությունը աղերսել:

Ահա այն անիծյալ հարցերը, վոր քուն չեն տալիս վրաց մենշեվիկներին, թուրք մուսավաթիստներին ու հայ դաշնակցականներին:

Յեվ այդ հարցերի պատասխանը վորոշում ու բնութագրում ե տիրող հոսանքների հասարակական ելության ու քաղաքական դիմակը:

Բանվորի ու աշխատավորի համար պարզ պիտի լինի բոլոր գեներալների, բարձրաստիճան չինովիկների, գյուղական ցեցերի ու տզրուկների տեսակետը քանի վոր իրանք իրենց իշխանությունն ու արտոնյալ իրավունքները կկորցնեն հենց վոր Սավետների վառ կարմիր դրոշակը կծածանվե յեվ Անդրկովկասում:

Դրանք մինչ այժմ դեռ ապրում եյին Դենիկինի տված հույսերով ավելի ճիշտ դրանք իրենց բաղտը կապել եյին Դենիկիիյան հակահեղափոխության ժամանակավոր հաջողությունների հետ հետեվապես, հեղափոխության պարտությունն ու բանվորների ու աղքատ գյուղացիության ստրկացումն եր դրանց յերազների նյութը: Բայց Դենիկիիյան ավազակախմբի կորիզլուխ պարտությամբ, հողս պիտի ցնդեն Դենիկինից ազատություն սպասողների իղձերն ու բաղձանքները:

Այդ տեսակետը, այսինքն Դենիկիիյան որինեստացիան ավելի քան յերբեմնից ե անընդունելի, անիրագործելի ու ֆանտաստիքական:

Մի ուրիշ կարգի տեսակետ, տարբեր տեսակի որինեստացիա ունեն կառավարչական կուսակցություններն ու իշխող խավերը: Դա մենշե-

վիկների, մուսաֆաթիստներին ու դաշնակցականների որիենտացիան է: Դրանց ցանկությունն է պահպանելով իրենց հանրապետությունների ներկա կարգերը մանր բուրժուազիայի միջոցով ստեղծել բուրժուական հասարակարգ ազգային սահմաններով: Դա առհասարակ նեղ ազգայնականների ու բուրժուական մտածելակերպ ունեցող խավերի տեսակետն է, վորոնք փափագում են մի „դեմոկրատիկ,, ֆրոնտ ստեղծել հարավ արշավող հեղափոխական բանակի առաջն առնելու նպատակով:

Բաղտի դառն հեզնանքով այս յերկրերդ որիենտացիան, ինքնըստինքյան անկենդան ու խաբուսիկ է, Անդրկովկասում ստեղծված իրերի ներկա դրության բարդության պատճառով, յերբ կարճամիտ քաղաքականություն վարող դաշնակցականներն ու մուսաֆաթիստները իրենց կորստաբեր ու վոճրագործ քաղաքականությամբ յերկու հարեվան յերկրների մեջ ազգամիջյան յեղբայրասպան կոիվների սպանդանոց են սարքել, ավելի քան յերազային է:

Այս տեսակետի հեղինակները հնարավորություն չունենալով հենվել վորյեվէ դասի վրա, իրենց վախկոտ հայացքը մեկ դեպի դաշնակիցներն են դարձնում, մեկ դեպի համաշխարհային „դեմոկրատիան,, ու դրանցից սպասում իրենց փրկությունը: Նրանք մոռանում են, վոր իրենց իշխանության յերբեմնի նեցուկ բուրժուազիան արդեն կորցրել է իր ղեկավարիչ դերը վոր ահեղ քաղաքական կովում ամբողջ մարդկությունը բաժանվել է յերկու իրար թշնամի բանակների:

Մի կողմը կապիտալիստական աշխարհը մարմնացնող ֆաբրիկատների, կուլակների ու ամեն կարգի տգրուկների բանակը, վորոնք իրենց փրկությունը գտնում են հակահեղափոխության հաղթանակում ու հանգիստը բանվորագյուղացիական արյան ու քրտինքի մեջ:

Մյուս կողմը բանվորները, աղքատ գյուղացիությունը ու առհասարակ աշխատավոր մասսաները, վորոնց միակ փրկությունը խորհուրդների աշխարհն է, Սավետական իշխանությունը, ու դրա առաջ կարմիր բանակը:

Յեվ բոլոր դրանք, սայթաքում յեվ յերերվում են այդ յերկու բանակների միջեվ ու փափագում են արիեստական կերպով պսակել վերոհիշյալ կողմերը, մատնված են ակներեվ կորստի ու վաղաժամ տապալման:

Կա յեվ մի յերրորդ տեսակետ մի որիենտացիա յեվա: Այդ Անդրկովկասյան բանվորագյուղացիության մասսաների որիենտացիան է, վոր իսկապես ելությունն է կոիվ հայտարարելով բոլոր մյուս հոսանքներին հակառակ տեսակետ պաշտպանող խավերի գլխի վրայով յեղբայրական ձեռք է մեկնել կարմիր բանակի քաջ մարտիկներին ու ամեն կերպ նպաստում է նրանց առաջխաղացման:

Սա Սավետական որիննտացիան է, սա հեղափոխական լայն մասսաների տեսակետը, սա բանվորների ու աղքատ գյուղացիների կաշկանդված դրույթունից դուրս գալու միակ յեքնն է:

Ով դեմ է այս տեսակետին, նա դեմ է չարքաշ բանվորի ու աղքատ շինականի դասակարգային շահերին: Ով դեմ է այս տեսակետին, նա դեմ է աշխատավոր մասսաների ազատագրման, աղքատ դասի թշնամինն է ու բուրժուա-կուլակների բարեկամը:

Այժմ քանն երբևիցե հայ բանվորն ու աղքատ գյուղացին աչալուրջ կերպով պիտի հետննե իրերի դրույթյանն ու միշտ հակադրե անկենդանն ու անոգուտ տեսակետներին, իր տեսակետով սովետական որիննտացիաով:

Նադին

„Գյուղացու Ձայն,,

№ 1. 1920թիվ 19/IV (որգանն Հայ աշխատավոր գյուղացիական միույթյունների)

Անպետքացած-չկարդացվող մեքենագրից արտագրիցի

Հ.Կ. Պարտ արխիվից

Ֆոնտերի պահպանող /ստորագրույթյուն/ Տ. Սահակյան

7/ X 42 թիվ.

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.8, գ.29, թ.1,2; մեքենագիր

* * *

Բերված նյութերից երևում է, որ, ինչպես կասեր ԽՍՀՄ առաջին ու վերջին՝ այդ կայսրության կազմաքանդող նախագահ Միխայիլ Գորբաչովը,- «*Проще новел!*»: Այդ օրերին Հայաստանում ընթացք էր առել բոլշևիկյան կառույցների ստեղծումը: Կլասիցիզմի ժամանակաշրջանի դրամատուրգիայում գործող կանոններից մեկն այն է եղել, որ բեմի վրա ոչ մի անձ, ոչ մի իր «հենց այնպես» չի կարող հայտնվել: Մասնավորապես, եթե պատից կախված է հրացան, ապա ներկայացման ընթացքում այն պարտադիր կրակելու է: Պատմությունը ցույց է տվել, որ բոլշևիկների մասնակցությամբ քաղաքական սցենարներում այդ կանոնը նույնպես գործում է. եթե մի ինչ-որ երկրում ստեղծվել է բոլշևիկյան կառույց, ապա շուտ թե ուշ այն պարտադիր արձակելու է իր հակապետական կրակոցը...

ԲԱԺԻՆ II

Հայ բոլշևիկների կողմից բարձրացրած զինված
հակակառավարական ապստամբությունը

Մայիս, 1920թ.

ՄԱՅԻՍՅԱՆ ԴԵՊՔԵՐ. ԱՊՍՏԱՄԲՐՈՅԹՈՒՆ, ՈՐԻ

ՀԱՂԹԱՆԱԿՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԵՐ

...Եվ այդ կրակոցը հնչեց: 1920-ի մայիսին Հայաստանի տարբեր շրջաններում՝ տարբեր մասշտաբի և տարբեր տևողությամբ, տեղի ունեցան հակապետական (այդ պահի համար, թերևս, ավելի ճշգրիտ կլինի ասել՝ հակախիսանական) բնույթի ելույթներ, որոնք հանրագումարում կարելի է որակել որպես զինված խռովություն: Կամ, ինչպես միշտ ընդունված է եղել ասել՝ Մայիսյան ապստամբություն: Մի ապստամբություն, որը երկրի կառավարության կողմից ձեռնարկած միջոցների շնորհիվ բավականին արագ ճնշվեց: Բայց, առաջ անցնելով, նշենք, որ երկրի համար այդ ապստամբությունը ոչ միայն անհետևանք չանցավ, այլ դեպքերի հետագա զարգացումների առումով ունեցավ իր խիստ բացասական ազդեցությունը:

Այդ ապստամբություն կոչվածը իր տեսակի մեջ բավականին բացառիկ էր, եթե չասենք՝ եզակի: Հարցը նրանում է, որ որքան որ այն ցանկալի էր ու անհրաժեշտ բռնկվել-սկսելու առումով, նույնքան, նույնիսկ, երևի թե ավելի անցանկալի, անգամ անթույլատրելի էր՝ հաղթական ավարտին հասնելու առումով: Պատվիրատու կողմի՝ Խորհրդային Ռուսաստանի համար իր տարածաշրջանային նպատակների իրագործման տեսանկյունից այդ ապստամբությունը դրական արդյունք կարող էր տալ միայն ու միայն պարտվելու պարագայում:

Ու թեև պատմության կողմից ենթադրական հողվումը մերժված և անընդունելի կատեգորիա է, բայց սա այդ դեպքը չէ, և իմաստ ունի թերևս անդրադառնալ այդ ապստամբության երկու ելքին էլ. և՛ հիպոթետիկ-ենթադրականին, այն է՝ հաղթանակը, և՛ իրականին՝ պարտությանը:

Համաձայն այդ օրերին իրենց ընտրած մարտավարության՝ Հայաստանում ապստամբած բոլշևիկները, բացառությամբ Խորհրդային Ադրբեջանի հետ սահմանակից շրջանների ապստամբների, զերծ մնացին ծայրահեղ քայլերից, ինչպիսիք են գնդակահարությունները, զանգվածային ձերբակալությունները և այլն: Ապստամբության կողմն անցած զինվորականները նույնիսկ հայտարարում էին, որ իրենք հայի, թեկուզև դաշնակցականի արյուն չեն թափի: Բացի երկրի խորհրդայնացումը պահանջող կարգախոս-լոզունգից, Արմենկոմի կողմից այդ օրերին այլ, հատկապես Հայաստանի տարածքային ամբողջականությունը այս կամ այն ձևով վտանգող լոզունգներ չեն հնչեցվել. կրկին՝ բացառությամբ Խորհրդային Ադրբեջանի հետ սահմանակից շրջանների ապստամբների: Ավելին. երբ

դաշնակցական կառավարությունը շրջանառության մեջ դրեց իր տրամադրության տակ եղած բուլշևիկա-թուրքական հակահայկական բնույթ կրող տեղեկությունները, այն է՝ Թուրքիային և Ադրբեջանին հայկական տարածքներ զիջելու վերաբերյալ համաձայնություններին առնչվող փաստերը, հայ բուլշևիկները դա անվանեցին կեղտոտ պրովոկացիա և դրանից վիրավորվեցին, ինչպես ասում են՝ անկեղծորեն ու ի սրտե:¹⁴ Այդ նույն տեսանկյունից չի կարելի շրջանցել նաև այն իրողությունը, որ, գիտակցելով թուրքական վտանգը, Արմենկոմի կողմից, հատկապես ապստամբությունից առաջ, ամենևին չի խրախուսվել բանակի ներքաշումը քաղաքական գործընթացների մեջ: Այսինքն, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և համաշխարհային հեղափոխության գաղափարների վրա խարսխվող հայ-թուրքական եղբայրության և տարածքային զիջումների պատրաստականության և նույնիսկ դրանց անհրաժեշտության կոչերը՝ հանուն այդ նույն գաղափարների հաղթանակի, այդ օրերին ասպարեզ դեռևս նետված չէին:¹⁵ Եվ ի վերջո, ստրատեգիական առումով, ապստամբություն բարձրացրած տեղի հայ բուլշևիկների կողմից հայտարարված նպատակն էր իշխանությունից հեռացնել Դաշնակցությանը, և խորհրդային կարգեր հաստատել այդօրվա Հայաստանի Հանրապետություն անունը կրող պետության ամբողջ տարածքում: Ըստ նրանց պլանների՝ խորհրդայնացումից հետո Հայաստանն այդօրվա իր ամբողջ տարածքով ինչ-որ ձևի պետք է կազմեր կամ Խորհրդային Ռուսաստանի մի մաս, կամ լիներ նրա կողմից հովանավորվող բարեկամ մի պետություն:

Այսինքն, ապստամբության հաղթանակի պարագայում, բուլշևիկյան Ռուսաստանը ստանում էր խորհրդայնացված, բայց այդօրվա իր սահմանները և որոշ չափով նաև պետականության իրավասությունները պահպանած մի Հայաստան, որը, ճիշտ է, ղեկավարվելու էր իրեն ենթակա ու հնազանդ ընկերներով, բայց որոնք ոնց որ թե ոչ պատրաստ էին երկրի տարածքները նվիրաբերել իրենց ազգի ջարդարարներին, ոչ էլ իսկական բուլշևիկին արժանի մեթոդներով պայքար տանել ներքին թշնամու դեմ:

Հասկանալի է, որ այդ ամենը մի կողմից չէր տեղավորվում թուրք-բուլշևիկյան համաձայնությունների տրամաբանության շրջանակների մեջ, քանզի ռուսական կողմի համար անհնարին էր դարձնում թուրքական կողմի բարեկամական դիրքորոշման դիմաց իրականացնել հայերի հաշվին խոստացված տարածքային հատուցումները, մյուս կողմից՝ Արմենկոմի դրսևորած վարքագիծը բացարձակապես համահունչ չէր բուլշևիկյան իշխանությունների կողմից որդեգրած կառավարման եղանակների ընդհանուր փիլիսոփայությանը:

Լրիվ այլ իրավիճակ էր ստեղծվում ապստամբության պարտվելու պարագայում: Նախ, Հայաստանն այդ դեպքում դեռ շարունակում էր մնալ

¹⁴ Մ. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 406

¹⁵ А.В. Квашонкин, Советизация Закавказья в переписке большевистского руководства 1920-1922гг., *Cahiers du Monde russe*, 1997, (v.38 (1-2), p.p.163-194), էջ 173

մանաստման-հոշոտման ենթակա մի տարածք, որի բզկտման համար պետք էր պարզապես ստեղծել հարմար մի իրավիճակ: Երկրորդը՝ Հայաստանի գործող իշխանությունների կողմից ապստամբների նկատմամբ անխուսափելի պատժամիջոցների կիրառումը հրաշալի հնարավորություն էր ընձեռում բոլշևիկյան Ռուսաստանին՝ նրա ներքին հարցերին անմիջականորեն միջամտելու համար: Եվ ի վերջո, կարելի էր ապստամբության պարտության ամբողջ մեղավորությունը բարդել տեղի ընկերների վրա, մեղադրել նրանց անվճռականության և փափկասունության, անգամ դաշնակցական գաղափարների ազդեցության տակ լինելու մեջ:¹⁶ Իսկ հետո, նպատակների իրագործումն արագացնելու և առավել արդյունավետ գործելու համար, փոխարինել նրանց ավելի վճռական և գաղափարապես ավելի հասուն ընկերներով:

Այնպես որ, հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում պարտադիր պետք է պարտվեր: Առավել ևս, որ դրա համար մեծ ջանքեր էլ պետք չէր գործադրել:

Իրոք, ինչ ներուժով ու հույսով սկսեցին հայաստանյան բոլշևիկները մայիսյան ապստամբությունը: Ռազմական և մարդկային ռեսուրսները ավելի քան համեստ էին. հենց դեպքերի մասնակիցների վկայությամբ՝ ապստամբության նախօրեին բոլշևիկների թիվը Հայաստանում, ամենաճոխ հաշվարկներով, չէր կարող գերազանցել հազարը:¹⁷ Ճիշտ է, այդ օրերի Հայաստանի ներքին դրությունը բոլոր ոլորտներում էլ չափազանց ծանր էր, և առկա էր դժգոհությունը գործող իշխանություններից, բայց բոլշևիկները չունեին այն ազդեցությունը բնակչության միջավայրում, որ կարողանային իշխանության հանդեպ դժգոհությունը վերածել զինված դիմակայման և ուղղորդել այն իրենց ուզած հունով:¹⁸ Ապստամբությունը հաղթական ավարտին հասցնելու համար մնում էր մեկ այլ, բայց ամենակարևոր և ամենահզոր գործոնը՝ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական և ուղղակի ռազմական օժանդակությունը ապստամբությանը: Հասկանալի է, որ միայն ու միայն այդ հույսով էլ «բռնկացել» էին հայ բոլշևիկները:

Այսօր դժվար է ասել, թե ինչ չափով և խորությամբ են իրականում տիրապետել ոչ միայն Հայաստանի, այլ նույնիսկ անգամ Կովկասյան բոլշևիկյան կազմակերպության տարբեր կարգի գործիչները թուրք-բոլշևիկյան համաձայնության իրական նպատակներին և դրանց իրականացման ժամկետներին վերաբերող տեղեկություններին, բայց փաստն այն է, որ 1920-ի մայիսին Խորհրդային Ռուսաստանի բարձրագույն ղեկավարության կողմից Կարմիր Բանակին թույլ չտրվեց, որ այդ օրերին նա մտներ Հայաստան¹⁹ և, ինչպես իրենց մոտ ընդունված էր, ապստամբներին օգ-

¹⁶ Б. Борьян, նշված աշխատությունը, էջ 101-102

¹⁷ Գ. Ամիրխանյան, նշված աշխատություն, էջ 90; Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը: Ա. Մայիսյան Ապստամբություն, Երևան, 1923, էջ 9-10

¹⁸ Ա. Հովհաննիսյան, նշված աշխատություն, էջ 10

¹⁹ Ю.Г. Барсегов, նշված աշխատությունը, էջ 61; Գ. Ամիրխանյան, նշված աշխատությունը, էջ 124-128; А.В. Квашонкин, նշված աշխատությունը, էջ 172

նույնպես հասնելու խնդրանքը բավարարելու բեմականացման միջոցով ուժով հաստատել այնտեղ խորհրդային իշխանություն: Այն դեպքում, երբ ապստամբների կողմից այդ ամենն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանները կատարվել էին. Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ստեղծվել էին ռազմաեղափոխական կոմիտեներ, հրապարակված էր արդեն նույնիսկ Խորհրդային Հայաստանի նոր կառավարության կազմը: Ընդ որում, ռուսական Կարմիր Բանակի գալստյանն այդ օրերին, կարելի է ասել, սպասում էին ոչ միայն ապստամբ հայ բոլշևիկները, այլ նաև Հայաստանի իշխանությունը: Դեպքերի լուրջ և սոյիդ ընթացքի պարագայում, այն է, եթե հստակ դրսևորվեր Խորհրդային Ռուսաստանի անմիջական աջակցությունն ապստամբներին, նրա տեսանելի շահագրգռվածությունն ապստամբությունը հաղթական ավարտին հասցնելու հարցում, դաշնակցականները, ըստ որոշ վկայությունների, սկզբունքորեն դեմ չէին նույնիսկ հանձնել իշխանությունը բոլշևիկներին:²⁰ Այնպես որ, դաշնակցական կառավարությանը կարելի է ամբաստանել հազար ու մի գործած ու չգործած մեղքերի ու սխալների համար, բայց ոչ երբեք նրանում, որ անտեսեցին ազգային շահը և չհամաձայնվեցին Հայաստանի խորհրդայնացմանը 1920-ի մայիսին: Անարդարացի է այդօրվա իշխանությանը մեղադրել նրանում, որ իբր, եթե այդ ժամանակ Դաշնակցությունը չկառչեր իշխանությունից և այն հանձներ բոլշևիկներին, ապա Հայաստանը կպահպաներ զոնե իր 1919-1920թթ. տարածքն ու սահմանները: Բայց էդ ով եկավ ու խորհրդայնացրեց, էդ ով երաշխիքներ ներկայացրեց երկրի տարածքի պահպանման ու անձեռնմխելիության վերաբերյալ ու հետո նոր, «լրջով» իշխանություն պահանջեց, որ սրանք էլ խորհրդայնացմանը չհամաձայնեցին, իշխանությունն էլ չսովեցին:

Իսկ եղավ այն, ինչ որ եղավ: Ռուսական կողմը՝ Կարմիր Բանակը, այս անգամ էլ «ուշացավ»: Դրա փոխարեն 1920-ի մայիս-հուլիսին խորհրդային զորքերը մտան Ղարաբաղ, Չանգեզուր ու Նախիջևան:

Այս բաժնում զետեղված են նյութեր, որոնցից երևում է, թե ինչպես Ադրբեջանը, խորհրդայնացումից հետո բառացիորեն ժամեր անց, սկսեց տարածքային պահանջներ ներկայացնել Հայաստանին, ինչպիսին է եղել Մայիսյան ապստամբության ընթացքը, թե ինչպես սահմանամերձ շրջանների ապստամբած բոլշևիկները խնդրում էին Խորհրդային Ադրբեջանին իր կազմի մեջ ընդգրկել հայկական այդ տարածքները: Եվ նույնիսկ հեռագիր Լենինին՝ ապստամբած շրջաններին ռազմական օգնություն ցուցաբերելու խնդրանք-պահանջով:

Զգալի քանակի նյութեր վերաբերում են Կարմիր Բանակի կողմից մայիսյան ապստամբությանը միջամտել-չմիջամտելու հարցին: Որոշ նյութեր էլ առնչվում են ապստամբությունը ճնշելու ընթացքում և հետագա օրերին Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության կողմից բոլշևիկների հանդեպ կիրառած պատժամիջոցներին:

²⁰ Б. Борьян, նշված աշխատությունը, էջ 105; Ծ. Ամիրխանյան, նշված աշխատությունը, էջ 126

Doc.II-1

ՕՐԶՈՆԻԿԻՁԵԻ, ԿԻՐՈՎԻ, ՄԵԽՈՆՈՇԻՆԻ ԵՎ ԼԵՎԱՆՌՈՎՍԿՈՒ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
Հայկական կողմին 24 ժամ ժամանակ է տրվում զորքերը Խորհրդային
Ադրբեջանի տարածքից դուրս բերելու համար (սկսարկվում են
Ղարաբաղն ու Զանգեզուրը)
(1 մայիսի, 1920թ.)

В Эривань. Армянскому Правительству. Копия, Ревкому Азербайджанской Советской Республики. Копия Москва, Председателю Совета. Народных Комиссаров ЛЕНИНУ, Копия народному Комиссару по иностранным делам ЧИЧЕРИНУ, копия Командкавказского фронта СМИЛГЕ.

В пределах Армении и в пределах дружественного и союзного нам Советского Азербайджана продолжают военные действия между Арменией и Азербайджаном. Российское Рабоче-Крестьянское Правительство считает своим священным долгом притти на помощь всеми силами к обратившемуся к нему от имени всех трудящихся Азербайджана Советскому Правительству окончательно утвердить Рабоче-Крестьянскую власть в Азербайджане. Происходящая на почве национальной вражды, разжигаемой агитацией и партиями дашнакцетюн и муссават, военные действия между армянскими и азербайджанскими войсками выгодны только победителям угнетенных народов и эксплуататорам трудящихся классов Армении и Азербайджана. Все спорные вопросы о границе между Азербайджаном и Арменией могут быть разрешены только волею трудящихся и самоопределяющихся народов. Советский Азербайджан не может поддерживать никаких шовинистических, националистических агрессивных действий. Междуплеменной вражде в Советском Азербайджане не может быть больше места. От имени Российской Социалистической Федеративно-Советской Республики предлагаю Армянскому Правительству немедленно прекратить всякие военные действия в Советском Азербайджане и вывести свои войска из пределов его. Это должно быть сделано в течение 24 часов со дня получения настоящего предложения. Неисполнение настоящего будет рассматриваться как вызов Армянского Правительства Российской Социалистической Федеративно-Советской Республике. Предложенное будет выполнено силами российской красной армии, ответственность же за последедствия этого ляжет целиком на Армянское Правительство. Революционный Военный Совет Кавказского фронта ОРДЖОНИКИДЗЕ, революционный Военный Совет 1-й армии КИРОВ, МЕХОНОШИН, ЛЕВАНДОВСКИЙ.

Баку 1 мая 1920 года.

ОСНОВАНИЕ : ЛОР ЦАУ ССРАрм. Ф. 66, дело 530, лист 36.

Верно: ЗАМ УПРАВ. ЦАУ ССРАрм. *Подпись* /А. ГЮРДЖЯН/

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.5, գ.364, թ.1; ավերիւմիզիր

Doc.II-2

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորքերը դուրս բերելու պահանջով
(4 մայիսի, 1920թ.)

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ.

ՅԵՐԵՎԱՆ, մայիսի 1, ժ. 15-ին 30 րոպե: Հայաստանի կառավարությունը ստացել է հետեվյալ նոտան.

„Ադրբեջանի Սովետական Հանրապետության բանվորա-գյուղացիական կառավարությունը, հանձինս հեղափոխական կոմիտեյի, պահանջում է նախ՝ մաքրել ձեր զորքերից Ղարաբաղի յեվ Զանգեզուրի տերիտորյան, յերկրորդ՝ հետ քաշվել ձեր սահմանները, յեվ յերրորդ՝ դադարեցնել ազգամիջյան կոտորածը: Հակառակ դեպքում Ադրբեջանյան սոցիալիստական յեվ սովետական Հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կը համարի պատերազմի դրության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության հետ: Նոտայի պատասխանը պետք է ստացվի 3 օրվա ընթացքում:

Ապրիլի 30:

Ադրբեջանի Սովետական Հանրապետության արտաքին գործերի կոմիսարի ոգնական ՀՈՒՍԵՅՆՈՎ:

„Նոր Աշխատավոր =1920թ. №24, էջ 2, 4 մայիսի

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.5, գ.364, թ.2; մեքենագիր

Doc. II-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ
ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ
ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՌԱԶՄՀԵՂԿՈՄԻՆ, ՕՐՋՈՆԻԿԻԶԵԻՆ, ԿԻՐՈՎԻՆ,
ՄԵՆՈՆՈՇԻՆԻՆ, ԼԵՎԱՆՈՎՍԿՈՒՆ

Խորհրդային Ադրբեջանի տարածքում հայկական զորքեր չկան, իսկ Ղարաբաղի տարածքում առկա են հենց ադրբեջանական զորքեր, չսայած այն բանի, որ տեղի գյուղացիությունն իր համագումարներում արդեն 9 անգամ հայտարարել է Հայաստանի կազմի մեջ լինելու իր որոշումը (2 մայիսի, 1920թ.)

РЕВОЛЮЦИОННЫЙ ВОЕННЫЙ СОВЕТ КАВКАЗСКОГО ФРОНТА
ОРДЖОНИКИДЗЕ.

РЕВОЛЮЦИОННЫЙ ВОЕННЫЙ СОВЕТ 1-ой АРМИИ- КИРОВ
МЕХОНОШИИ
ЛЕВАНДОВСКИЙ. Баку первого мая 1920 года.”

Первого же мая Мининделом был послан следующий ответ”: Ответ на Вашу ноту от первого мая имею сообщить, что армянских войск на территории Азербайджана не имелось и не имеется. Наоборот войска Бекского Муссаватского Правительства Азербайджана находится в оспариваемых им областях Армянского Карабаха и еще недавно производили там избиение армянского населения, сжигали села и города. Население Карабаха многократно на своих съездах Крестьянских депутатов выразило свою непреклонную волю не входить в состав Азербайджана, и войска Азербайджана находится в этой области именно для того, чтобы сломать эту волю самоопределяющегося народа. Не имея вовсе своих войск в пределах Азербайджана Армянское Правительство Просит Вас предложить новому Правительству Азербайджана вывести из пределов Нагорного Армянского Карабаха войска и затем произвести уже в 10 раз опрос населения этой области и поступить согласно воле населения. Заявление Российской Советской власти как мирного посредника и разрешителя спорных вопросов будет конечно приветствуемо пострадавшим и истекающим кровью армянским крестьянством Карабаха. Армянское Правительства предлагает представителям Советской Социалистической России послать в Карабах Нейтральную Комиссию для выяснения истинного положения дела. В виду всего изложенного мое Правительство считает нужным заявить, что в данном случае никакого основания для ультимативной ноты нет и выражая полную уверенность, что Рабоче Крестьянское Правительство Советской России и уже давно призывавшее независимость и самостоятельность Армении декретом ЛЕНИНА и постановлением Четвертого

Всероссийского съезда Советов не допустить произвести новое насилие над трудовым армянским народом истекающим кровью в продолжении многих лет.” Номер 2702 мая второго

МИНИНДЕЛ ОГАНДЖАНЯН

С копией верно: Делопроизводитель
Дипломатической Миссии Армении в Грузии
Верно Зам. Управляющего Цау. ССРА. (Гюрджиян)

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.5, գ.365, թ.3-4; սկրիպտի

Doc. II-4

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատկանում է Խորհրդային Ադրբեջանի Կարմիր Բանակի
ինտախուզական բաժնին և պարունակում է գործակալական ցանցի
միջոցով ստացված տեղեկություններ Հայաստանի Հանրապետության
զինված ուժերի վերաբերյալ
(18 մայիսի, 1920թ.)

ДЕЛО АКА 74-832 лист 203.

Секретно.

РАЗВЕДЫВАТЕЛЬНАЯ СВОДКА №3.

Агентурных сведений, полученных Оперативно-Разведывательным
отделением Оперативного отдела Штаба Красной Армии
Азербайджанской Республики к 17 мая 1920 года.

А. Армения.

1. Большая часть армянских регулярных частей сосредотачивается южнее линии Карс-Эривань.
2. Судя по базарным слухам, с юга на Армению двигаются большие силы турок /не менее 3-х дивизий/. Говорят, из Хоя в Нахичевань прибыла уже одна дивизия.
3. Большую организационную работу по формированию войсковых частей из местного населения из Эривани ему присланы до 100 офицеров разных специальностей и национальностей, при чем много русских офицеров. Ему же прислано вооружение, снаряжение.
4. По сведениям Дро уже сформировал 4 полка пехоты /1500-2500 штыков каждый/, до 10 железных батальонов /600-800 штыков каждый/, два конных полка /400 коней каждый/ и до 6 батарей /по 4 орудия горных или легких/. Все эти части, главным образом, собраны в районе Герюсы и усиленно обучиваются.
5. Ревностными помощниками ДРО являются Осипьян, Пирадов, Самойленко, Тимченко и др. все – бывшие офицеры русской армии.
6. По непроверенным сведениям, Драценко со своими соратниками-приятель на службу в Армянские войска.
7. Из Карса и Сарыкамыша все военные запасы вывозятся в Александрополь и Эривань.
8. Железная дорога работает слабо.
9. Производится реквизиция более или менее больших запасов зерна, фуража и рогатого скота.
10. Ведется по всей Армении усиленная агитация против установления Советской Власти. Эта агитация ведется и среди мусульман/живущих в Армении, но вряд ли успешно так как сильнее влияние турок.

Б. Грузия.
Новых сведений не поступало.

В. Персия.
Посланные в 20 числа апреля с/г. агенты, до сего времени не вернулись.

Начоперот
Генерального Штаба Карганин
18 мая 1920 года No. 2184/р.
Гор. Баку.

Старший Помощник Начальника оперативного отделения /подпись/

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 8, գ. 40 թ. 1-2; սկրիպտ

Doc.II-5

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կուսակցական կոմիտեների կազմերը
տարբեր ժամանակահատվածներում
(1919 թ. մայիս – 1920թ. մայիս)

ԱԼԵՔՊՈԼԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ ՄԱՅԻՍԻ
ՈՐԵՐԻՆ

1. Խանոյան Սերգո
2. Գոգունց Արշակ
3. Գրիգորյան Սաշա
4. Նուրիջանյան Ավիս
5. Ուլիբեկյան Լեվոն
6. Տեր-Սահակյան Աշոտ
7. Ղարիբջանյան Բագրատ

ՀԵՏԱԳԱՅՈՒՄ 20թ. ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԲԶԻՋՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎՈՒՄ (20 ՀՈԳԻ ՔԱՂԱՔԻ ԲԶԻՋ-1, ԳՈՐԱԺ-1, ՅԵՐԿԱԹԳԻԾ-3,
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ-2, ԸՆՏՐՎԱԾ Է ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿՈՒՍԿՈՄԻՏԵ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.

1. Թոմասյան Արշակ.
2. Ղազանջյան Վոսմ.
3. Մելիքյան Միտյա.
4. Գավրազով Պետյա.
5. Փորսուղյան Անուշ.

20թ. ՄԱՅԻՍԻ 7ԻՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻ ՍԵՂՄ ԽՈՐՀՐԴԱԿ-
ՅՈՒԹՅՈՒՆԸ ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆՇԱ-
ՆԱԿՎՈՒՄ Է ՈԱԶՄՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.

1. Թովմասյան Արշակ.
2. Ղազանջյան Վրամ.
3. Ղուկասյան Ղուկաս. (նախագահ)
4. Մելիքյան Դմիտրի (Միտյա)
5. Պայթունի:

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.10; մեքենագիր

Doc.II-6

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Կարսի բոլշևիկյան կոմիտեի, բյուրոյի և ռազմհեղկոմի
(1919 երկրորդ կես – 1920թ. մայիսի սկիզբ)

1919թ. Յերկրորդ կիսին ՂԱՐՍՈՒՄ ԿՈՒՍ-ԱՆԴԱՄՆԵՐ 7 ՀՈԳԻ
ԸՆՏՐՎՈՒՄ Է ԿՈՒՍ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈ ՀԵՏԵՎՅԱԼ
ԿԱԶՄՈՎ՝

1. Բայրուրցյան Վարշամ.
2. Բոգեմսկի Սամվել.
3. Ղազանջյան Վոսամ.

ՀԵՏԱԳԱՅՈՒՄ 20թ. ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԲԶԻՋՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎՈՒՄ (20 ՀՈԳԻ ՔԱՂԱՔԻ ԲԶԻՋ-1, ԳՈՐԱԺ-1, ՅԵՐԿԱԹԳԻԾ-3,
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ-2, ԸՆՏՐՎԱԾ Է ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿՈՒՍԿՈՄԻՏԵ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.

6. Թոմասյան Արշակ.
7. Ղազանջյան Վոսամ.
8. Մելիքյան Միտյա.
9. Գավրազով Պետյա.
10. Փոքսուղյան Անուշ.

20թ. ՄԱՅԻՍԻ 7ԻՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻ ՍԵՂՄ ԽՈՐՀՐԴԱԿ-
ՅՈՒԹՅՈՒՆԸ ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆՀԱ-
ՆԱԿՎՈՒՄ Է ՌԱԶՄՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.

6. Թովմասյան Արշակ.
7. Ղազանջյան Վրամ.
8. Ղուկասյան Ղուկաս. (նախագահ)
9. Մելիքյան Դմիտրի (Միտյա)
10. Պայթունի:

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.11; մեքենագիր

Doc.II-7

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Հայաստանի և Հայաստանի տարբեր շրջանների ռազմեղկոմների
կազմերի
(մայիս, 1920թ.)

1920թ. Մայիսի 3-ին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ

1. Գոգունց Արշակ (բանվոր)
2. Մուսաեյան Սարգիս.
3. Մելքոնյան Արտաշես.
4. Նուրիջանյան Ավիս.
5. Պետրոսյան Պետրոս. (զինվոր)
6. Սարգիսյան Գեվորգ. (բանվոր)
7. Տեր Սահակյան Աշոտ. (Ալեքսյոյի կուս. կոմիտեյից).
8. Տեր-Սիմոնյան Դրաստմատ.
9. Ուլիբեկյան Լեվոն (բանվոր):

ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ ԸՆՏՐՎԱԾ 1920թ. ՄԱՐՏԻՆ
ԳԱՎԱՌԱՅԻՆ ՅԵՐՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ.

1. Անտոնյան Անտոն.
2. Գոգունց Արշակ.
3. Գրիգորյան Սաշա.
4. Խանոյան Սերգո.
5. Ղարիբջանյան Բագրատ.
6. Մանդալյան Թադևլոս.
7. Նուրիջանյան Ավիս.
8. Ուլիբեկյան Լեվոն.
9. Տեր-Սահակյան Աշոտ.

ՔԱՎԱԹԱՌՈՒՈՒ ԳԱՎԱՌԱՄԱՍԻ ԿՈՒՍԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ ՄԱՅԻՍԻ
ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

1. Ամայյան Մեսրոբ.
2. Գալոյան Սողոմոն.
3. Կուրդինյան Նահապետ.
4. Մովսեսյան Աղասի.
5. Մելիք Յարգիսյան Հովագիմ (սպանված փետրվարյան
ավանտյուրայի ժամ)
6. Աթանեսյան Վարսենիկ (կին ընկեր ակտիվ աշխատող).

ՌԱԶՄԱ ՀԵՂ-ԿՈՄԻՏԵՆ ՄԱՅԻՍԻՆ ՔԱՂԹԱՌԻԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Կուրդինյան Նահապետ.
2. Մովսեսյան Աղասի.
3. Փանյան Արշալույս.

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.2; սևքենագիր

Doc.II-8

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Իջևանի-Դիլիջանի և Նոր Բայազետի կուսկումիտենների և
ռազմհեղկումների
(մայիս, 1920թ.)

ԻՋԵՎԱՆԻ ԴԻԼԻՋԱՆԻ ԳՍՎԱՌԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿՈՍԿՈՄԻՏԵՅԻ
ԿԱԶՄԸ ԸՆՏՐՎԱԾ 1920թ. ԱՊՐԻԼԻ 25ԻՆ ԿՈՒՍ-ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ
(ՔՐԴՎԵԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ 30 ՀՈԳԻ)

1. Ամիրխանյան Շավարշ.
2. Բերբերյան Անանյա.
3. Հարությունյան Գալուստ.
4. Մկրտումյան Յենոք.

ԻՋԵՎԱՆ-ԴԻԼԻՋԱՆԻ ԳՍՎԱՌԻ ՌԱԶՄՀԵՂԿՈՄԻ ԿԱԶՄԸ
ԼՆԱՆԱԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ
20թ. ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ

1. Ամիրխանյան Շավարշ. (նախագահ)
2. Այվազյան Կոստյա.
3. Յաղոբյան Հայկ.
4. Մկրտումյան Յենոք. (Փ. նախագահ) կոոպտացին կարգով):
5. Բերբերյան Անանյա. (կոոպ. Կարգով):

ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱԶՄԸ ՀԵՏԶՀԵՏԵ
ԼՐԱՑՎԵԼ Է ՀԵՏԵՅԱԼ ԸՆԿԵՐՆԵՐՈՎ

1. Գիգոյան Գ.
2. Գարդաշյան Գարեգին:
3. Պողոսյան Հովսեփ.

ԼՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿՈՒՍ-ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ 1919թ.

1. Բատիկյան Բաղիկ. (գնդակահարված)
2. Բոշնադյան Սերգո.
3. Պետրոսյան Հովհաննես
4. Պետիկ Պետրոսյան, (Սպարտակից):
5. Սարուխանյան Հովհաննես. (գնդակահարված)
6. Տեր-Միքաելյան Սուրեն:
7. Ակտիվ կին աշխատող Մադիկյան Արծվիկ

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ՌԱԶՄՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԱԶՄՎԱԾ
ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ (ՆԵՐՔԻՆ ՂԱՐԱՆԼՈՒԿ) ՄԱՅԻՍՅԱՆ ՈՐԵՐԻՆ

1. Լազրյեվ Արմենակ.
2. Խանֆերյան Լազր.
3. Հակոբյան Սրապիոն.
4. Ներսեսյան Լեվոն. (քարտուղար)
5. Մակարյան Սուրեն.
6. Սարուխանյան Հովհաննես. (նախ).
7. Սիրունյան Վանո.
8. Պետրոսյան Միհրան.

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.3; սևքենագիր

Doc.II-9

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Հայաստանի, Ալեքսանդրապոլի և Կարսի ռազմահեղափոխական
կոմիտեների կազմերի
(մայիս, 1920թ.)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄՀԵՂՎՈՄԻ ԿԱԶՄԸ (խոշոր)

1. Ավիս Նուրիջանյան
2. Սարգիս Մուսաբեյան
3. Արտաշես Մելքոնյան
4. Արշակ Գոգունց
5. Լեվոն Ուլիբեկյան
6. Դրաստամատ Տեր-Սիմոնյան
7. Աշոտ Տեր-Սահակյան
8. Պետրոս Պետրոսյան
9. Գեվորգ Սարգսյան

5. ԱԼԵՔՊՈԼԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ ՄԱՅԻՍԻՆ
(մանր նկար)

1. Խանոյան Սերգո
2. Գոգունց Արշակ
3. Գրիգորյան Սաշա
4. Նուրիջանյան Ավիս
5. Ուլիբեկյան Լեվոն
6. Տեր-Սահակյան Աշոտ
7. Ղարիբջանյան Բագրատ
8. Մանդալյան Թադեոս
9. Սեվյան Յեգոր

7. ՂԱՐՍԻ ՌԱԶՄՀԵՂՎՈՄԻ ԿԱԶՄԸ

1. Ղուկասյան Ղուկաս (խոշոր)
2. Մելիքյան Դմիտրի
3. Ղազանջյան Վոսմ

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.4; մեքենագիր

Doc.II-10
ՑՈՒՑԱԿ
Կարսի ռազմհեղկոմի կազմի
(մայիս, 1920թ.)

ՂԱՐՍԻ ՌԱԶՄՇԵՂԿՈՄԻ ԿԱԶՄԸ

1. Ղուկասյան Ղուկաս (նախագահ)
2. Մելիքյան Դմիտրի (Կարմիր զորամ. հրամանատար)
3. Ղազանջյան Վոսան
4. Թոմասյան Արշակ
5. Բայթունի

ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԻՑ

1. Անուշ Փորսուղյան
2. Բոգեմսկի

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.6; մեքենագիր

Doc.II-11

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Նոր-Բայազետի, Իջևան-Դիլիջանի, Քավթառլուի ռազմիեղկումների
կազմերի
(մայիս, 1920թ.)

7. ՆՈՐ-ՔԱՅԱԶԵՏԻ ՌԱԶՄՇԵՂԿՈՄԻ ԿԱԶՄԸ

1. Սարուխանյան Հովհաննես (խոշոր)
2. Բաղիկյան Բաղիկ
3. Մակարյան Սուրեն
4. Սիրունյան Վանո
5. Խանֆերյան Լազր
6. Պետրոսյան Միհրան
7. Լազրեվ Արմենակ
8. Ներսիսյան Լեվոն

8. ԻՋԵՎԱՆ-ԴԻԼԻՋԱՆԻ ՌԱԶՄՇԵՂԿՈՄԻ ԿԱԶՄԸ

1. Ամիրխանյան Շավարշ
2. Այվազյան Կոստյա
3. Յաղուրյան Հայկ
4. Մկրտումյան Յենոք
5. Բերբերյան Անանիա

9. ԳԱՎԱՌՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԱԿՏԻՎ ԸՆԿԵՐՆԵՐ

1. Յեղիշե Շամախյան
2. Ժորժիկ Իշխանյան
3. Գալուստ Հարությունյան
4. Ալեքսեյեվ
5. Ապոստոլով (տեղ. շրջանակ)
6. Հակոբջանյան (շրջանակ)
7. Հովհաննիսյան Վաղինակ (շրջանակ)

10. ՔԱՎԹԱՌԼՈՒՅԻ ՇՐՋԱՆԻ ՌԱԶՄՇԵՂԿՈՄԻ ԿԱԶՄԸ

1. Կուրդինյան Նահապետ
2. Փանյան Արշալույս
3. Մովսիսյան Աղասի

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.8; մեքենագիր

Doc.II-12
ՑՈՒՑԱԿ
(մայիս, 1920թ.)

ԱԼԵՔՊՈԼԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ ՄԱՅԻՍԻ
ՈՐԵՐԻՆ

1. Խանոյան Սերգո
2. Գոգունց արշակ
3. Գրիգորյան Սաշա
4. Նուրիջանյան Ավիս
5. Ուլիբեկյան Լեվոն
6. Տեր-Սահակյան Աշոտ
7. Ղարիբջանյան Բագրատ
8. Սեվիան Եգոր

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.257, թ.9; անքննագիր

ՑՈՒՑԱԿ
Սարիղամիշի ռազմհետկոմի կազմի
(մայիս, 1920թ.)

ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ՌԱԶՄՀԵՂԿՈՍԻ ԿԱԶՄԸ

1. Ճուղուրյան Անդրանիկ (Ադոկ) – սպանված (շրջանակ)
2. Առաքելյան Ալեքսանդր
3. Կուխմալակին Պավել (սպանված) (շրջանակ)
4. Մխչյան Լիպարիտ - սպանված
5. Մատիչկո Պյոտր – սպանված (շրջանակ)

ԱԿՏԻՎ ԱՇԽԱՏՈՂ ԸՆԿԵՐՆԵՐ

1. Նալբանդյան Լեվոն – սպանված
2. Վոսկանյան Սամվել – սպանված

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 257, թ. 12; մեքենագիր

Doc.II-14
ՑՈՒՑԱԿ
Սուրմալուի հեղկումի կազմի
(մայիս, 1920թ.)

12. ՍՈՒՐՄԱԼՈՒՅԻ ՀԵՂԿՈՄԸ

1. Մուրադյան Արաքս
2. Ելոյան Մարկոս
3. Վարդանյան Հրաչյա

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 257, թ. 14; անքննագիր

Doc.II-15

ՑՈՒՑԱԿ

Ղարաքիլիսայում ակտիվ կուսակցական աշխատանք տանող անձանց
(մայիս, 1920թ.)

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԱՇԽԱՏՈՂ
ԸՆԿԵՐՆԵՐԸ ՄԱՅԻՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Անուշավան Վարդանյան
2. Վերգուշ Մխիթարյան
3. Հաջիղարեցի Միսակը (Խփված)
4. Մռավյան Վաղինակ
5. Մարկոս Գրիգորյան

Փաստաթղթում առկա են անընթեռնելի ձեռագրով լրացումներ

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 257, թ. 18; անթեռնագիր

Doc.II-16

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Ջանգեզուրի տարբեր շրջանների բուշնիկյան կոմիտեների և
ռազմհեղկոմների կազմերի
(մայիս, 1920թ.)

1920 թվի մայիսի 5-ին, Գորիսում ակտիվի նիստում (15-20 հոգի)
ընտրվում է գավառական ժամանակավոր կուսկոմիտե, ուր փոխվում է
կոմիտեյի նախագահը:

Յեր. Բակունցի տեղ ընտրվում է ԿԱՄԱՐԻ ՀԱԿՈՐԸ:

Կոմիտեյի կազմը-

- Կամարի Հակոբ (նախագահ)
- Մկրտչյան Խրիստաֆոր
- Մաշուրյան Հակոբ
- Բակունց Յերեմյա (մնում է, վորպես կոմիտեյի անդամ)
- Սիլանյան Հայկ
- Արզումանյան Նիկոլայ (Ներկայացուցիչ Սիսյանից)
- Թաթարյան Հարություն (ակտիվ մասնակցող Խնձորեսկի
շրջանից)

Գավառի մաշտաբով Ռազմական հեղկոմ չի կազմվել, յեղել են
շրջանային հեղկոմներ: Խնձորեսկում կազմված է մայիսի 26-ին

- Թաթարյան Հարություն
- Սիլանյան Հայկ (նախագահ)
- Սայելյան Գարեգին
- Զավալյան Աբել
- Մայսուրյան Արսեն (քարտուղար)

Սիսյանի շրջանի հեղկոմը կազմը-

- Ադունց Թովմաս
- Գեվորգյան Հակոբ Տանին
- Տեր-Ղազարյան Պատվական
- Գրիգորյան Միքայել թիկնաձու
- Արզումանիան Նիկոլայ

Ապստամբության ընդհանուր ղեկավարն է յեղել ԿԱՄԱՐԻ ՀԱԿՈՐԸ, վո-
րին մայիսի 22-ին զինված ուժերով իլել են թշնամու ձեռքից ու փախցրել
անտառները. Պահվել է Մթնածորի անտառում, վորտեղից սուրհան-
դակների միջոցով ու նամակներով կապվում է ռազմհեղկոմի հետ:

1920 թվի մայիսի 26-ին Խնձորեսկում կազմվել է շրջանային կուսկոմիտե՝ հետևյալ կազմով:

- Թաթարյան Հարություն նախագահ
- Սիլանյան Հայկ
- Սայելյան
- Մայսուրյան
- Մայսուրյան Արսեն
- Յուզբաշյան Ղուկաս

Դեռ 1919 թվին Խնձորեսկում յեվ շրջակա գյուղերում կազմված են յեղել բջիջներ.

Խնձորեսկ-30 հոգի. Ալիղուլիշեն-12. Խանաձախ-5. Գեյորու-7. Մաշանջուղ-3. Կորիձոր-14. Տեղ-4 (տես Մկրտչյան Խրիստաֆորի ձեռքով կազմված Գորիսի շրջանային կոմիտեյի ցուցակը):

Փաստաթղթում առկա են անընթեռնելի ձեռագրով լրացումներ:

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 257, թ. 20,21; մեքենագիր

Doc.II-17

ՑՈՒՑԱԿ

Սիսիանի և Խնձորեսկի ռազմաօդակորմաների կազմի
(մայիս, 1920թ.)

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ, ՍԻՍԻԱՆԻ ՅԵՎ ԽՆՁՈՐԵՍԿԻ ՇՐՋԱՆԻ
ՌԱԶՄՇԵՂԿՈՄՆԵՐԻ ԿԱԶՄԸ

1. Հակոբ Կամարի նախագահ
2. Թաթարյան Հարություն
3. Սիլանյան Հայկ
4. Աղոնց
5. Տեր-Ղազարյան Պատվական
6. Հակոբ Տանին

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 257, թ. 22; սևեռնագիր

Doc.II-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ
ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԻՍԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԵԿՋԱԴՅԱՆԻՆ

Ալեքսանդրապոլում կայազորն ու զրահագնացքը անցել են բոլշևիկների կողմը, և իրավիճակն այնպիսին է, որ իշխանությունը երկրում կամ պիտի մնա Դաշնակցության ձեռքում, կամ պետք է անցնի բոլշևիկներին (10 մայիսի, 1920թ.)

ԹԻՖԼԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՍԻՅԻԱ ԲԵԴՋԱԴՅԱՆԻՆ

Հաղորդեցեք դաշնակցության Կենտկոմին հետևյալը:
Ալեքսանդրապոլի կայազորը յեվ Մուսայելյանը զրահապատով անցան բոլշևիկների կողմը, քաղաքացիական կռիվն անխուսափելի է: Դրությունն այնպես է, վոր իշխանությունը կամ մեր ձեռքում պիտի մնա կամ պիտի անցնի բոլշևիկներին, յերրորդ յելք չկա:
Կուսակցության բյուրոն վճռապես առաջարկում է Կորյունին, Աշոտին, Տիգրանին յեվ մյուս ընկերներին բոլոր մարտյան ուժերով մեկնել Ղարաքիլիսա կայարանը յեվ գավառը գրավելու համար: Հրանագներ կստանաք Ղարաքիլիսայում : Մեկնելու մասին հեռագրեցեք Դաշնակցության Բյուրոյին: Առաջարկեցեք ինժիներ Խատիսովին գանձարկղի փողերից 25 հազար թուրքի հանձնել Ջամայանի ընտանիքին, դրամը փոխադրվում է: Նո 2823 մայիսի 10:

Արտ. Գործ.Մինիստր ՈՀԱՆՋԱՆՅԱՆ

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 261, թ.12; մեքենագիր

Doc.II-19

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՌԱԶՄՇԵՂՎՈՄԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնակիցների կողմից հնչեցվել են կարծիքներ՝ քաղաքում
ապստամբության ընթացքի, դրա անհաջողության և քաղաքը
կառավարական ուժերին հանձնելու, կամ էլ պայքարը շարունակելու
հարցերի վերաբերյալ
(13 մայիսի, 1920թ.)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդրոպոլի Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեի նիստի
պատասխանատու պարտաշխատողների հետ միասին 1920 թվականի
մայիսի 13-ին /կայարանում, վազոնում երեկոյան ժամը 8-ին/

ՕՐԱԿԱՐԳ

1. Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեի զեկուցումը քաղաքը հանձնելու
վերաբերյալ ուլտիմատումի կապակցությամբ
Նիստի նախագահ ընտրվեց ընկ. Ավիսը
Քարտուղար ընկ. Մանուկյանը

ԼՍԵՑԻՆ

ՈՐՈՇԵՑԻՆ

Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեի զեկուցմամբ հանդես եկավ ընկ.
Մուսայեյանը,

Ընկ. Մուսայեյանը, նշելով այն լուրջ դրությունը, որպիսին ստեղծվել է
պարենավորման և ռազմական ճակատներում, կոչ է անում զեկուցմանը
վերաբերվել ամբողջ լրջությամբ, նկատի ունենալով, որ այս զեկուցմամբ
քննարկման է դրվում ապստամբության հետագա ճակատագրի հարցը:

Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեն, նկատի ունենալով հետագա պայքա-
րը, ձգտում էր գրավել Ալեքսանդր.-Ղարաքիլիսա գիծը: Այդ գիծը հնա-
րավորություն կտար նվազեցնել պարենավորման ճգնաժամը, ընդլայնել
ապստամբության տերիտորիան, մոբիլիզացնել մեծ ռևոլյուցիոն ուժեր,
ապստամբություն բարձրացնել չեզոք զոնայում, ուր բնակչությունը հե-
ծում է Հայաստանի դաշնակների և Վրաստանի մենշևիկների լծի տակ:
Զրահապատների մի մասը ուղարկվել է այդ գծով, բայց նկատի ունենա-
լով, որ գիծը Ջաջուռ կայարանից այն կողմը քանդված է և նկատի ունե-
նալով գրահապատը կորցնելու ռիսկը /առավել ևս, որ Ալեքսանդրոպո-
լում հուսալի զորամասեր չկային/ այդ փորձը դադարեցվեց: Այդ գծի
գրավումը մեզ ժամանակ կտար վերացնել պարենավորման ճգնաժամը.
գնալով էլ ավելի է ուժեղանում պարենավորման ճգնաժամը և մենք

կանգնած ենք այն բանի առաջ, որ վաղը չէ մյուս օրը մենք նույնիսկ լոբի չենք ունենա զորամասերի համար, էլ չխոսելով, ծառայողների և բանվորների մասին: Գրավելով Ղարաքիլիսան դաշնակները կտանեն Սանահնից ժամանող բեռները: Այժմ պարտիան լայն լիազորություններով չեզոք զոնա է ուղարկում մի ընկերոջ /Մանուկյանին/: Նույն պատճառներով Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեն չէր կարող մասնատել իր տրամադրության տակ գտնվող զորամասերը, ապստամբության կենտրոնը /Ալեք-պոլը/ վտանգի ենթարկել այն բանի համար, որպեսզի դրվի դեպի Երևան գնացող գիծը: Այնուամենայնիվ առաջին իսկ օրը զրահապատը հետախուզության ուղարկվեց այդ գծով, մինչև Մաստարաի կիսակայարանը չհանդիպելով ոչ-ոքի: Եվ այսպես հնարավորություն չեղավ ընդարձակել ապստամբությունը, գրոհ ձեռնարկել շփոթված թշնամու վրա: Ուշքի գալով առաջին սրընթաց հարվածից դաշնակները գրավեցին Ղարաքիլիսան և դրանով իսկ իրենց ապահովեցին Սանահինում գտնվող պարենամթերքներով և իրենց ուժերը Երևանից շարժեցին Ալեք-պոլի ուղղությամբ: Այդ ուժերի հետ առաջին ընդհարումը ձեզ հայտնի է: Դաշնակցական բանդաները Սեպուհի առաջնորդությամբ առաջ են շարժվում, Ադինն արդեն գրավել են: Դրա հետ միասին դաշնակցական կոնտրոլայուցիան զլուխ է բարձրացրել բուն իսկ Ալեք-պոլում: Գեներալ Խաչատուրովի սպանությունը ցույց է տալիս, որ Ալեք-պոլի դաշնակները, դեպի ռևոլյուցիոն կենտրոնը դաշնակցական բանդաների առաջխաղացումից և մոտեցումից թև առած սկսել են իրենց ակտիվ հարձակումը. բուն իսկ Ալեք-պոլի շուրջը արդեն վխտում են զանազան խմբապետների կազմակերպած կոնտրոլայուցիոն բանդաները. այդ բանդաների կողմից Ջաջուռը գրավված է: Պարենավորման բացակայությունը մեծացնում է առանց այն էլ անհուսալի և կիսագիտակից զորամասերի տատանումները: Կարմիր Գվարդիան, որը կազմված է բանվորներից և կոմունիստներից, խիստ փոքրաթիվ է, որպեսզի որևէ ազդեցիկ ուժ ներկայացնի: Եվ այսպես, շատ ծանր դրություն է ստեղծվել ինչպես պարենավորման, այնպես էլ ռազմական տեսակետից:

Դաշնակցական բանդաները, որոնք խմբապետ Սեպուհի առաջնորդությամբ առաջ են շարժվում դեպի Բայանդուր կիսակայարանը, խմբապետ Սումբաթի միջոցով ուլտիմատում են ներկայացրել Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեին, պահանջելով առանց կռվի քաղաքը հանձնել, ընդամին քաղաքի հանձնելու դեպքում ապստամբության բոլոր մասնակիցների կյանքը կերաշխավորվի, ինչպես և երաշխավորվում է մասնակիցների մեկնումը Սովետական Ռուսաստան:

Նկատի ունենալով հարցի լրջությունը Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեն որոշեց ստեղծված դրության և ուլտիմատումի հարցը դնել տվյալ նիստում:

Ընկ. Ղազարյան Լևոնը նշելով այն ծանր դրությունը, որն ստեղծվել է պարենավորման և ռազմական ճակատներում, կշտամբում է Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեին այն բանի համար, որ նա բոլորովին պատրաստված չլինելով ապստամբության համար, ապստամբության դրոշ է բարձրացրել: Ընկերը գտնում է, որ ապստամբությունը տանուլ է տրված, առաջարկում է քաղաքը հանձնել առանց կռվի, քանի որ նախապես արդեն պարզ է, որ զինված դիմադրությունը առանց այն էլ փոքրաթիվ կոմունիստների և պրոլետարական ուժերի արյունալի սպանդից բացի ուրիշ ոչինչ չի տա: Այն զորամասերը, որոնք գտնվում են մեր տրամադրության տակ, շատ աննշան են: Համենայն դեպս անհնարին է նրանց վրա հույս դնել. առավել ևս, որ մենք ոչինչ չունենք վաղը նրանց կերակրելու համար: Ընկերը գտնում է, որ ստեղծված դրությունից դուրս գալու միակ միջոցը առանց կռվի քաղաքը հանձնելու մասին ուլտիմատումն ընդունելն է: Նկատի ունենալով, որ ապստամբության բոլոր մասնակիցների կյանքը երաշխավորվում է, ընկերն առաջարկում է բոլորով հանդերձ հանձնվել դաշնակցականների ձեռքը ազատ կերպով Սովետական Ռուսաստան մեկնելու համար: Այն բանի համար, որպեսզի դաշնակների պրովակացիոն ելույթների համար ոչ մի առիթ չտրվի, ընկերն առաջարկում է վերադարձնել այն գումարը, որը վերցվել է Ալեքսանդրոպոլի պետական գանձարանից /5 միլիոն/:

Ընկեր Ղարիբջանյան

Հանդես է գալիս Ռ. Հ. Կոմիտեի խիստ քննադատությամբ. սկզբից ևեթ Ռազմա-Ռևոլյուցիոն կոմիտեն կատարեց մի շարք տակտիկական սխալներ: Նախապատրաստված չլինելով ապստամբությանը, Ռ. Հ. Կոմիտեն մայիսի առաջին օրերի իրադարձություններից հետո իր տակտիկայով վերցրեց ապստամբության կուրս, արվեցին մի շարք քայլեր, որոնք պետք է հասցնեին ապստամբության: Այդպիսին համառոեսպարկական մասշտաբով չնախապատրաստվեց: Ռ. Հ. Կոմիտեն ձեռնարկեց մի շարք պատասխանատու քայլերի առանց Հայաստանի կ.կ.-ի սանկցիայի և տեղական պարտիական կազմակերպության լայն քննարկման: Չնայած Հայաստանի կ.կ.-ի բոլոր բողոքներին, առայժմ ելույթից ձեռնպահ մնալու վերաբերյալ կատեգորիկ առաջարկությանը, Ռ. Հ.-ն ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք պարտիային կանգնեցրին ապստամբության առջև: Ամսի 8-ին պարտկոնֆերենցիան կամա թե ակամա պետք է ընդուներ և սանկցիա տար ապստամբությանը, որովհետև այն ժամանակ դա կատարված փաստ էր, կայարանն ապստամբել էր և մեր ձեռքում էր: Ապստամբության պատասխանատվությունը ընկնելու է մի քանի անձնավորությունների վրա, որոնք հանուն իրենց շահերի դիմեցին այդպիսի քայլի: Փարիզի կոմունան դիմացավ 6 շաբաթ, իսկ Ալեքսանդրո-

պուր 8 օր էլ չչարունակվեց, միթե դա ավանտյուրա չէ /նախագահ. կարգի է հրավիրում ընկ. Ղարիբջանյանին: Աղմուկ, բողոքներ/: Անցնելով ստեղծված դրությանը, ընկերը այն համարում է ծանր, բայց ոչ անհուսալի. հարկավոր է կազմակերպել զինված դիմադրություն և գործը պատվով մինչև վերջը հասցնել նախագգուշացնում է այն հուսահատական տրամադրությանն անձնատուր լինելուց, որպիզի ունի Ղազարյանը, չափից դուրս նախ ու ծիծաղելի է համարում հանձնվել դաշնակների ողորմությանը, ունենալով այնպիսի փորձ, ինչպիսին Փարիզի կոմունան է:

Ընկ. Հակոբյան Գրիշա – ընկ. Ղարիբջանյանի տեսակետը Ալեքսանդրոպոլի ապստամբության մասին բոլորովին ճիշտ չէ: Ալեքսանդրոպոլի ապստամբությունը տրամաբանական հետևանք է այն քաղաքականության, որ վարում էին դաշնակները Հայաստանում իշխանությունը վերցնելու մոմենտից: Ռ. Հ. Կոմիտեի քննադատությունը մի այնպիսի պատասխանատու մոմենտում, երբ պետք է վճռել ապստամբության բախտի հարցը և շտապ պատասխան տալ ուլտիմատումին, ընկերը հայտարարում է միայն ռևոլյուցիոն ոգու բացակայություն: Ղազարյանի ելույթը բացատրում է քաղաքական վախկոտությամբ: Քաղաքն առանց մարտի հանձնելու մասին խոսք անգամ չի կարող լինել, հարկավոր է ամեն ինչ անել՝ քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու և պատշաճ զինված դիմադրություն ցույց տալու համար:

Ընկ. Օհանջանյան Խաչիկը խիստ քննադատում է Ղազարյանի դիրքը և առաջարկում է կազմակերպել քաղաքի պաշտպանությունը: Նկատի ունենալով, որ ժամանակն ուշ է և ուլտիմատուի ժամանակն անցնում է, առաջարկվում է վիճաբանությունները դադարեցնել: Միաձայն ընդունվում է ընկ. Ամիսի բանաձևը՝ մեկ հոգու ձեռնպահությամբ:

Ռ. Հ. Կոմիտեի նիստը պատասխանատու պարտընկերների հետ, լսելով ընկ. Մուսայելյանի զեկուցումը ճակատում տիրող դրության և Սեպուհի ուլտիմատումի մասին, ուլտիմատումը համարում է անընդունելի և առաջարկում է Ռ. Հ. Կոմիտեին՝ շտապ կազմակերպել քաղաքի պաշտպանությունը:

Մի ժամ հետո Ռ. Հ. Կոմիտեի նիստում որոշվեց հանձնել քաղաքը առանց մարտի:

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.2, գ.128, թ.6-11; մեքենագիր

Doc.II-20

1920թ. ՄԱՅԻՄԻ 13-ի – ԼՈՒՅՍ 14-ի ԳԻՇԵՐԸ, ԶՐԱՀԱԳՆԱՑԻ ՎՐԱ
ԿԱՅԱՑԱԾ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՌԱԶՄԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ
ԸՆԴՂԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ.Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ
разошлись, с крепости нами были пущены разрывы. Положение было крайне критическое: Штаб находился в крайне неудобном месте и час от часу можно было ожидать его захвата, части находились далеко от Штаба, в войсках, утомленных в течении трех дней начиналось брожение, агитация контр-революционеров: дашнаков, командного состава в нейтральных частях, подкупы путем денег отдельных солдат, все это перекинулось и на сел-повстанцев; принимая во внимание такое положение вещей. Реввоенком принужден бы перейти в крепость, перевести Штаб свой в форт Александра 2-го и оттуда резко проводить свои постановления и приказы, угрожая бомбардировкой города. Штаб перевелся 11-го мая в форт Александра 2-го. Подготовленных товарищей было очень мало, в то время как работы было очень много. Вся работа лежала на 5-7 товарищах, которым было не вмоготу справиться со всей работой. Связь с Сарикамышом и Александрополем была не на должной высоте. Надежда была на Александрополь, который обещал отправить подготовленных товарищей и товарищи из военных. 11-го мая посылался ультиматум за ультиматумом, как городскому самоуправлению, так равно и генералу Пирумову, только начинались назначения политических комиссаров в учреждения. Одновременно с утвердительным ответом на наш ультиматум, лъстивые дашнаки, сформировали громадные отряды из крестьян, что удавалось им легко, в виду того, что деревни совершенно не были подготовлены к событиям, путем подкупов перевели на свою сторону Караульный батальон, ввели в заблуждение большинство солдат повстанцев: 12-го мая к крепости направился отряд Хнысцев: впереди шли сироты, за ними женщины-беженки с красными флагами, а за ними отряд. Одновременно было отправлено 2 автомобиля с пулеметами и вооруженными повстанцами для ареста губернатора Корганова и установления охраны города. Как только автомобили стали подходить к толпе, последняя окружила автомобили и воспользовавшись тем, что с нашей стороны не будет ни одного выстрела в виду того, что впереди женщины и сироты, захватывают автомобили, избивают товарищей и продолжают двигаться к Штабу. Видя такое положение Командующий войсками тов. Меликян приказывает с крепости пустить огонь по толпе, а затем и бомбардировать город, на что повстанцы /большая часть/ заявляют после колебания, что они не будут бомбардировать город, в виду того, что в городе их семейства да и сверх того, они против избияния своих армян и вообще против пролития армянской крови, хотя бы дашнакской крови. Положение немного ухудшилось, тем более, что к вечеру достоверно выяснилось, что 5-ый полк уже изменил нам хотя и продолжал оставаться с нами, что посредством подкупленных солдат и фельдфебелей ночью 12-го должны расстрелять всех главарей повстанческого движения и захватить Штаб в свои руки. Никакая агитация с нашей стороны уже не имела успеха, город уже был захвачен противником. Единственными стойкими и революционными частями были и оставались: Комендантская рота из 30 товарищей и

2-ая рота крепостной Артиллерии из 40 товарищей, что было слишком мало, а потому оставался один исход: перейти на форт Бучкиев, отступить в Александрополь, в полном уверенности, что Александрополь наш, что и было сделано в ночь на 13-ое мая. Никаких соглашений с греками, мусульманами и молоканами не было. Были получены приветствия от Греческого и Русского Национальных Советов, которые приветствовали Советскую власть в Армении. Указанным Советам, несмотря на предложение с их стороны о вооруженной поддержки нам Реввоенкомом было заявлено: пока воздержаться от вмешательства в повстанческое движение, в виду того, что национальный антогонизм настолько силен в массах, что может пагубно отразиться на повстанцах.

Итак главной причиной провала революционного движения в городе Карсе была:

1. Полное отсутствие работы и агитации в деревнях /самое важное/.
2. Отсутствие кадра подготовленных товарищей.
3. Неоднократное выступление по всем городам Армении.
4. Отсутстви планомерной связи с Александрополем с Саракамышем.
5. Непоследовательность Александропольского Комитета в деле преподанных директив.

Профессионал гор. Карса, член Военно-Революционного Комитета гор. Карса член Р.К.П. /большевиков/ А. Назарян.

Указанный доклад и точку зрения товарища Назаряна вполне разделяю. Член Военно-Революционного Комитета, Командующий повстанческими частями Меликянц, г. Тифлис 31-го мая 1920 года.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 2, գ. 154, թ. 1-4; ւերիւնիւզիը

Doc.II-28

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ապստամբության ընթացքում պետական պաշտոնյաների
ձերբակալությունների և Ղարաբաղի որոշ հատվածներում խորհրդային
իշխանություն հայտարարելու վերաբերյալ
(մայիս, 1920թ.)

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հակահեղափոխականների ձերբակալումը.

ԳԱՆՁԱԿԻՑ- հայտնում են, վոր Գիմիջի շրջանից քաղաք են բերված
գեներալ Բաղդասարովը, Հայաստանի ներքին գործերի մինիստրի
ոգնական Մանասյանը, գավառական կոմիսար Սպրանտիկովը,
Մատեսյանը յեվ ելի յերեք հոգի: Նրանց ձերբակալելն հայ
գյուղացիները Քարվանսարայի շրջանում: Հանձնված են 32-րդ
դիվիզիայի շտաբին: Ձերբակալվածները ուղարկված են Բագու:
Դեռ յեվս չստուգված լուրերի համաձայն, Դիլիջանում խորհրդային
իշխանություն ե հիմնված:

Ղ ա ր ա ք ա ղ ու մ .

Շուշուց հաղորդում են, վոր Ջեվանշիրի գավառի հայկական մասում
հաստատված ե խորհրդային իշխանություն:

Ժողովրդի մեջ անսովոր վրդեվորություն ե տիրում: Պարենավորման
գործը կարգավորելու համար միջոցներ են ձեռք առնված: Հացը, վորի
գրվանքան 25 ռուբ.եր, ժողովրդին պիտի ծախվի 8 ռուբլիով: Կարիագի-
նում բացվում են կարճաժամանակյա դասընթացներ, խորհրդային
գործիչներ պատրաստելու համար: Դաշնակների յեվ մուսավաթիստների
ձեռքով թշվառացած կանայք յեվ յերեխաներն ուղարկվում են Բագու:
Բոլոր հակա-հեղափոխականները ձերբակալված են:

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 4, գ. 68, թ. 1; մեքենագիր

ԲՈԼՇԵՎԻԿ ԼԱԶՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԸ ԲԱՔՎՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՄՆՈՂ
«ԿՈՄՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹՈՒՄ

Տաճկաստանի աղքատ աշխատավորությունը քանի զարգանում, այնքան ավելի է իրեն նետում դեպի միջազգային շարժումը, Խորհրդային կառավարության ու ազգերի եղբայրության գաղափարը Տաճկաստանում լայն հող է գտնում, իսկ արևելյան հալածված թյուրք ազգությունների առաջնագունդը՝ Ադրբեջանի աշխատավորությունը գործով հաստատեց իր հեղափոխական լինելը, ու որպեսզի հայ աշխատավորությունը կարողանա առանց շեղվելու օրինավոր տեղ բռնել միջազգային հեղափոխական շարքերում, պիտի անխնա ոչնչացնի «ազգասերների» ու ազգակիցների բոլոր բանդաները
(22 մայիսի, 1920թ.)

ՏՎԵՔ ԶԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Հասել ե որը:

Յերկար ու բարակ խոսելու ժամանակ չե: Պետք է գործել ու գործել շտապ:

Տասնյակ տարիների ընթացքում հայ ինտելիգենցիայի մեծամասնությունը՝ դաշնակցական ավազակներն, կեղծավոր հոգեվորականները, միշտ աշխատել են թաքցնել մեր միտքը, մթացնել մեր պարզ հասկացողությունը: Մեր ազգի նույնանման „ղեկավարները,, տարիներ ու տասնյակ տարիներ կրկնել են մեզ միշտ մի բան.

- Թյուրքն ու տաճիկը ընդունակ չեն ըմբռնելու ազատության ու դասակարգային կռվի գաղափարը:

Սա մի պատմական սուտ է: Սա մի վոճրագործություն է:

Ու պատմությունը ինքը իրական փաստով քարոս քանդ արավ այս զրպարտությունը:

Տաճկաստանի աղքատ աշխատավորությունը քանի զարգանում, այնքան ավելի նետում է իրեն դեպի միջազգային շարժումը:

Խորհրդային կառավարության ու ազգերի յեղբայրության գաղափարը Տաճկաստանում լայն հող է գտնում, իսկ արեվելյան հալածված թյուրք ազգությունների առաջնագունդը - Ադրբեջանի աշխատավորությունը գործով հաստատեց իր հեղափոխական լինելը:

Մութ ու հետամնաց աշխատավորությունն ավելի հեղափոխական դուրս յեկավ, քան վոտից մինչեվ գլուխը զինված „հեղափոխական,, կոչվող դաշնակցական բիժաներն ու ջոջերը:

Այս ուրախալի փաստից հետո, աններելի վոչրագործություն արած կլինի նա, ով „ինքնապաշտպանություն,, , „ազգի փրկություն,, ու

նույնանման հիմարություններ կրկնելով, հեռու կանգնի ճնշվածների հեղափոխական մեծ գործից:

Ու վորպեսզի հայ աշխատավորությունը կարողանա առանց շեղվելու որինավոր տեղ բռնել միջազգային հեղափոխական շարքերում, նա պիտի անխնա վնջնացնի „ազգասերների,, ու ազգակիցների բոլոր բանդաները:

Հասել ե „Հին աստվածների,, ու հին հասկացողությունների կործանման ժամը:

Վայ նրան ով չի կատարի որվան պահանջը: Վայ նրան ով չի հասկանա պատմության լեզուն:

Ինչքան ել հիվանդ ու թույլ չլինի հայ աշխատավորության գիտակցությունը, ինչքան ել նա տարված չլինի դաշնակցության կործանիչ գաղափարներով պրոլետարական մեծ հեղափոխական հողմը կպարզի հայ գյուղացու ու բանվորի գիտակցությունը, կլուսավորի նրա միտքը:

Այլ կերպ չի ել կարող լինել:

Յեվ այս բուպեյին յերբ Արարատյան կառավարությունը զենքի յե կանչում հայ ժողովրդին Խորհրդային Կարմիր բանակների դեմ կռվելու նպատակով, հայ աշխատավորությունը պետք ե տա իր պատասխանը: Նա պետք ե պատասխան ե վոչ թե խոսքով, այլ շուտափույթ գործով:

Պետք ե դիմել զենքի, բայց վոչ կարմիր բանակների, այլ աշխատավորության թշնամի- դաշնակցականների դեմ:

Գործով պետք ե ասել, „կորչին դաշնակցական ավազակները. Կեցցե հեղափոխությունը ու ազգերի յեղբայրությունը,,:

Լազյան:

.....»»»»».....»»»»».....

„ԿՈՄՄՈՒՆԻՍՏ,, Նո. 4.

22-ին մայիսի 1920թ. Ադրբեջան.

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.4, գ.68, թ.6; մեքենագիր պատճեն

ՀՈՂՎԱԾ ԲԱՔՎՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՄՆՈՂ «ԿՈՄՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹՈՒՄ

Անդրկովկասի ժողովուրդները, մանավանդ հայ սոված տկլոր գյուղացիները, միմիայն Ռուսաստանի օգնությամբ կարող են իրենց կյանքը լավացնել, Ռուսաստանը ոչ միայն լավացնելու է հայ գյուղացու, աշխատավորի կյանքը, այլ ուղղակի փրկելու է նրան հաստատ կործանումից (23 մայիսի, 1920թ.)

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ.-

Հայաստանի այդ փոքրիկ մոռացված յերկրի վրայով ել անցավ հեղափոխական կարմիր ալիքը: Այնտեղ շատ անգամ թափված ժողովրդական արյունը սրվեց, նվիրագործվեց նույն ժողովրդի յերակից թափված արյունով:

Մինչեվ այժմ այդ արյունը թափվում եր վորպես քավում հայ բուրժուազիայի յեվ դաշնակցության աշխարհակալ ձգտումների. թափվում եր ազգային անմիտ, հետադեմ կռիվների մեջ: Յեվ այդ արյունը հեծում, կազմալուծում եր նրան:

Այս անգամ սակայն, այս վերջին անգամ դաշնակցության իսկ ձեռքով թափված արյունը պիտի կազդուրի, վերականգնի ժողովրդական ուժերը: Առաջին հերթին նա փակում ե Դաշնակցության ու բուրժուազիայի նշտարով հայ գյուղացու բանվորի յերակին բացված այն անբուժելի անցքը, վորից, հոսում, շարունակ հոսում եր արյունը: Հայ աշխատավոր մասսաների այս ինքնաբուժումը արթնացման ու կազդուրման միակ յեվ անհրաժեշտ պայմանն ե, միայն յեվ միայն այդ ուղիով, այդ միջոցով նրանք կարող եյին առողջանալ, ֆիզիկապես յեվ բարոյապես:

Ինչ կասի այժմ Դաշնակցությունը. մինչեվ այժմ նա կրկնում եր, թե պաշտպանում ե հայ ժողովուրդը թյուրքերի յեվ տաճիկների դեմ: Իսկ այժմ չե վոր ինքը իր ձեռքով ե թափել այս ժողովրդի արյունը:

Այժմ արդեն ամեն բան պարզ ե, պարզ ե ամենքի համար: Դաշնակցությունը մտածում ե վոչ թե հայ ժողովրդի մասին, այլ մտածում ե հարուստների շահի մասին, մտածում ե իր մեծամեծերի կաշվի մասին:

Այդ մի քանի դաշնակցական մեծերը մինիստր մնան, լավ պաշտոն ունենան, գյուղացին ու բանվորը լուռ հպատակ լինեն հարուստներին- հերիք ե, ել ուրիշ բան չի հարկավոր դաշնակցականներին: Ուզում ե Հայաստանը վողջ ավերակ լինի, ժողովուրդը սովից փչանա- միյեվնույն ե նրա համար:

Յեթե այդպես չլիներ ինչու պիտի կոտորեր Ռուսաստանի իր յեղբայր բանվորների, գյուղացիների հետ միանալու դուրս յեկած Հայաստանի աշխատավորներին: Չե վոր ամենքը գիտեն, վոր Անդրկովկասի ժողովուրդները, մանավանդ հայ սոված տկլոր գյուղացիները միմիայն Ռուսաստանի ոգնությամբ, կարող են իրենց կյանքը լավացնելու: Բայց

Ռուսաստանը վոչ թե միայն լավացնելու յե հայ գյուղացու, աշխատավորի կյանքը, այլ ուղղակի փրկելու յե նրան հաստատ կործանումից:

Հիշեցեք այդ մի-յերկու տարին, վոր բաժանված էյինք Ռուսաստանից, ինչեր ասես չանցան Հայաստանի վրայով. ինչպիսի որեր ապրեցինք: Հիշեցեք, ինչպես հայ աշխատավորը կարոտում ու կանչում եր Ռուսաստանին, մի մեծ նեղության մեջ ընկածի պես: Այո նրա նեղությունը շատ մեծ եր, դաշնակցականները չորս կողմից թշնամիներով շրջապատել էյին նրան:

Իսկ այժմ, վոր յեկել ե այդ նեղության վերջը, յերբ Ռուսաստանի ազատարար Կարմիր զորքը կանգնած ե այդ Հայաստանի շեմքին, յերբ հեռու Պետերբուրգից Մասկովից ռուս բանվորը, գյուղացին իր ձեռքն ե պարզում հայ չարչարված գյուղացուն ու բանվորին, հանկարծ չեն թույլ տալիս այդ. այդ յերազամ, կանչած ձեռքը բռնելու:

Ով չի թույլ տալիս,- դաշնակցությունը. նա կտրեց այն ձեռները, վորոնք պարզվեցին դեպի ազատարար Ռուսաստանը:

Ել վոչինչ չի մնում. ամեն ինչ պարզ ե. Հայ գյուղացին պիտի հասկանա, թե ով ե յեղել իր թշնամին մինչեվ այժմ յեվ այժմ ել ով ե: Յեվ նա արդեն հասկացել ե դա ու դուրս յեկել նրա դեմ:

Մի-յերկու տարի առաջ դաշնակցությունը դեռ շատ համարձակ եր: Նրա „խելոք», գլուխներից մեկը մի մեծ ժողովում հայտարարել ե, վոր հայ ժողովրդի բախտը շինում ե դաշնակցությունը, ինչպես մի վարպետ դարբին, վորն իր մուրճով պիտի խրատի այն բոլորին, վորոնք „հայ ժողովրդի շահերին», այսինքն, դաշնակցության դեմ կլինեն: Բայց այսոր արդեն պարզ ե, թե ով ե վնասում հայ ժողովրդի բախտին: Վնասել ե ինքը, ճիշտ վոր այդ գլխավոր վարպետը, այսինքն դաշնակցությունը: Յեվ ահա դարբնոցի կռան խփող բանվորները իրենց ծանր կռանները բարձրացրել են այդ դավաճան վարպետի գլխին ու շուտով նա ցած կնկնի: Դեն կշարտեն այն բախտը, վոր պատրաստում ե վարպետ դաշնակցությունը յեվ կսկսեն նոր բախտ դարբնել:

Այդ նոր բախտի վարպետը կոմունիստական կուսակցությունն ե, այսինքն ինքը Հայաստանի բանվորն ու գյուղացին:

Կորչեն բոլոր դավաճանները: Կեցցե հեղափախական գյուղացին ու բանվորը:

Ա.Ի.

.....
„ԿՈՄՄՈՒՆԻՍՏ», Նո. 5.
23-ին Մայիսի 1920թ. Ա.

ՀԱԱ, Ծ-Պ. 1022, ց.4, գ.68, թ.7; մեքենագիր պատճեն

Doc. II-31

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՎՈՐ ԿԱՄԱՐԻԻ
(ՄԿՐՏՉՅԱՆ) ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Անհրաժեշտ է շտապ նամակ հասցնել Ղարաբաղ
(մայիս, 1920թ.)

Товарищи!

Необходимо весьма срочно и секретно послать письмо в Карабахъ, серьезной важности, нашим товарищамъ. Только остановка въ вѣрномъ челевѣкѣ. Постарайтесь выбрать изъ товарищей по желанію одного и немедленно отправить съ сурандаками въ Карабахъ для доставки писемъ. Въ Карабахѣ наши товарищи окажутъ ему всякую помощь я уже въ своемъ письмѣ написалъ.

На дорогу дат ему 1000 руб.

500 руб получите на дняхъ изъ нашей организации. Черезъ посторонняго человека не отправлять письма.

Жду ответа о результатахъ.

Абель кажется хочетъ уѣхать.

А. МКРТЧЯН /Подпись/

ՀԱՍ, Զ-Պ. 1022, ց. 5, գ. 191, թ. 6ա; ձեռագիր, անստորագրված

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ
ՆԱԽՍԱԳԱՀ ՀԱԿՈՐ ԿԱՄԱՐԻԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Զանգեզուրում ապստամբության ընթացքի վերաբերյալ
(27 մայիսի, 1920թ.)

27/5-ի

Ժողովրդական ապստամբությունը Զանգեզուրում Խնձորեսկում և նրա շրջակա գյուղերում արդեն սկսված է: Շարժումն ուղղված է Ղարաբաղից դարձող հրոսակապետներ Դրոյի և Նժդեհի բանակների դեմ, վորոնց մտադրությունը մինչև այժմ պարզ չէ Զանգիզուրի վերաբերյալ- հավանական է նրան փախչելով Կարմիր բանակի Ղարաբաղ մտնելուց, ուզում են Զանգեզուրն իրենց համար բազա դարձնել, թե դրսից յեկող, թե ներսի բոլջևիկների դեմ կռվելու համար: Խնձորեսկն արդեն ապստամբված է և խորհրդային իշխանություն է հայտարարել, նույնը պատրաստվում են անել և շրջակա մի քանի գյուղեր : Հակառակորդն իհարկե լավ պատրաստ է և թնդանոթներով կարող է կռվել, իսկ մեր ձեռքին յեղածն էլ այնքան շատ չէ շարունակ կռվելու: Ապստամբությունը ընդհանուր դարձնելու համար Սիսյանի բոլոր ընկերներն ու ամբողջ մասսաները պետք է ապստամբության դրոշը պարզեն և պատկառելի ուժով շարժվեն դեպի Գորիս մեզ ոգնության հասնելու, վորպեսզի գազա- նը հենց ճանապարհից, իսկ այժմ նա Կոռնիձորում է հաստատված, ուզում է ամրանալ Տեղ գյուղում սպանվի: Յեթե Սիսյանն այսպիսի վճռա- կան թույլ է չսպստամբվեց, չհասավ մեզ օգնության հավանական է վոր կռիվը տանուլ տանք, իսկ այն ժամանակ Սիսյանն էլ առանձին պետք է նրա վոտքերի տակ գալարվի: Ընկերներ, հասել է ժամը- ուշանալ նշանակում է մեռնել:

Ձեր ծրագրի և շարժման մասին իսկույն մեզ հաղորդել Խնձորեսկ:

Կենտ.Կոմ Նախագահ՝

Հ.Կամարի.

Իսկականի հետ ճիշտ է՝

ՊԱՐՏ.ԱՐԽԻՎԻ ԴԻՐԵԿՏՈՐ՝ ստորագրություն /Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆ/
23/11-42թ

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 5, գ. 191, թ. 1ա; մեքենագիր

Doc.II-33

ԲՈՒՇԵՎԻԿ ՀԱԿՈՐ ԿԱՄԱՐԻԻ ՆԱՄԱԿԸ
Ղարաբաղում տեղակայված կարմիր զորամասերի շտաբի հետ
բանակցելու անհրաժեշտության վերաբերյալ
(28 մայիսի, 1920թ.)

28/5

Հարություն.

Իսկույն այս նամակը պետք է ուղղել Ղարաբաղ: Ընկերներ մի ընկեր թող
վերցնի տանի Ղարաբաղ բժիշկ Համբարձումյանին որը կանցնի
խորհրդակցելու կարմիր բանակի շտաբի հետ: Թող գնացողը իրեն
ձեվացնի Ղարաբաղցի, գնա արագի հետ, թողթը կարի մարմնի մի
մասում, որ խուզարկելիս չգտնեն.

Կամարի

Իսկականի հետ ճիշտ է

ՊԱՐՏԱՐԻՏԻՎԻ ԴԻՐԵԿՏՈՐ՝ /ստորագրություն/ /Ա.Թումանյան/
23/11-42թ.

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 5, գ. 191, թ. 6; անթննագիր

Doc. II-34

ԲՈԼՇԵՎԻԿ ՀԱԿՈՐ ԿԱՄԱՐԻԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դրոն Ղարաբաղից դուրս գալուց հետո մտել է Զանգեզուր, այստեղ կոմկուսը օրենքից դուրս է հայտարարված, Կամարին դարաբաղյան ընկերներից ու Կարմիր Բանակի շտաբից ուսգմական օգնություն է խնդրում (28 մայիսի, 1920թ.)

К а р а б а х

Т.т

Дро и его сила выпущенные из Карабаха внезапно ворвались в Зангезур и застали нас врасплох.

С их стороны уже коммунистическая партия объявлена вне закона. Дро упрачивается в Зангезуре. Коммунистический центр Зангезура настойчиво просит карабахских товарищей и штаб Красной Армии в Карабахе военной силой по шоссе немедленно подоспеть нам на помощь.

28/V

Камари

Т.т Бахши и Лева по дороге в Зангезуре по приказу Нждей арестованы.

С подлинном верна:

ДИРЕКТОР ПАРТАРХИВА /подпись/ (А. ТУМАНЯН)

3/Х1-42г.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 5, գ. 191, թ. 8; սերիալային

Doc.II-35

ԲՈՒՇԵՎԻԿ ՀԱԿՈՒԲ ԿԱՄԱՐԻԻ ԿՈՂՄԻՑ ՀՂԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆ
Գորիսի շրջանի ապատամբների հրահանգվում է իրականացնել
համապատասխան գործողություններ
(28 մայիսի, 1920թ.)

Պատճեն

Խնձորեսկու կոմիտեյին

Այս գիշեր, վաղը և շարունակ պատրաստ լինել բոլոր անդամներին
զինված, հսկել զինապահեստին սպաներին, ձիերին, վոր չփախչեն-
ամեն ինչ մնա իր տեղը: Այս գիշերվանից գյուղից վերև, դեպի
Ղարաբաղի ուղղությունը, դեպի Գորիս ճանապարհներին ունենալ
պահակներ: Կապ պահել Տեղ գյուղի հետ, հսկել Դրոյի զորքի
շարժմանը և ուղղություն կբռնեն ձորից մինչև Գորիս: Միևնույնը
հաղորդել Տեղի կոմիտեյին, վոր զինված դիրքերը- գյուղը
շրջապատած պահեն- յեթե մի բան պատահի Տեղում, իսկույն թող
հայտնեն Խնձորեսկ և մեզ բոլորիս: Յերբ զորքը մտնի Տեղ, իսկույն
մեզ սուրհանդակ ուղարկեն, դուրս գալիս նույնպես: Գիշերները չքնել,
վաղը վոչ վոք գործի չգնա:

Հ. Կամարի

28/ V. 20թ.

Իսկականի հետ ճիշտ է՝

ՊԱՐՏ. ԱՐԽԻՎԻ ԴԻՐԵԿՏՈՐ՝ /ստորագրություն/ /Ա.

ԹՈՒՄԱՆՅԱՆ/

23/ 11-42թ.

Կնիք

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.5, գ.191, թ.10; մեքենագիր

ՀՈՒՎԱԾ ԲԱՔՎՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՄՆՈՂ “КОММУНИСТ” ԹԵՐԹՈՒՄ
Հայաստանում բոլշևիկյան արյունալիության ընթացքի մասին
(20 մայիսի, 1920թ.)

ВЫПИСКА ИЗ ГАЗЕТЫ “КОММУНИСТ” Орган Центрального и Бакинского Комитетов Азербайджанской Коммунистической П а р т и и .
No. 16, на стр. 1, 5 и 6 столбцы. (г. Баку, четв., 20 мая 1920г.)

“РЕВОЛЮЦИЯ В АРМЕНИИ”.

ЕВЛАХ. 18 мая. В Акстафу прибыла из Армении делегация, приславшая в реввоенсовет 11 армии следующее заявление:

“Товарищи, 28 апреля радио принесло нам радостную весть о падении контр – революционнофо правительства Азербайджанских беков и ханов и о захвате власти нашими товарищами коммунистами. Эта радостная весть передавалась по всей территории Армении.

Рабочие и крестьяне Армении, узнав об этом событии, ликовали и сами стали готовиться к свержению дашнакского контр революционного правительства и 11 мая подняли красное знамя восстания. Дашнаки, почувствовав красную опасность, прибегли к своему обычному оружию-провокации. Они распространили слухи, что в новом Азербайджане власть не большевистская, и что известие о красном перевороте в Баку исходит от местных армянских коммунистов и фактами не подтверждается. Угрожали населению, что если оно пойдет за большевиками, то Америка не даст Армении хлеба, фабиковали ложные ноты, якобы от имени Советского Азербейджана о пропуске через территорию Армении воиск для помощи Турции и т.п. К счастью, эти провокации остались без успеха и 12 мая александропольский пролетариат, совместно с беднейшим крестьянством и солдатами, свегнул в Александрополе ненавистную власть дашнаков и стал двигаться по направлению на Карс, Саракамыш, Караклис и Эривань. Дашнаки в ответ на это спровоцировали внешнюю войну с беквединцами, игдырскими, саракамышскими и карскими курдами, а тем временем с 3.000-ой бандой маузеристов и такой же бандой подкупленных денкинских офицеров дашнаки напали с тыла на малочисленных гарнизон красного Александрополя и, перебив до 2.000 безоружных рабочих и крестьян, восстановили свою контр-революционную власть. Дашнакская система террора ужасна –каждого коммуниста расстреливают на месте. О судьбах многих товарищей ничего неизвестно. Но это не сломило духа армянского пролетариата. Он готов к восстанию, и мы приехали к вам для установления связи с вами. Армения ждет русских красных бойцови при вступлении их на территорию Армении ни один армянский солдат, будь он даже дашнак, не рискнет встретить их выстрелом.

Член Военно-Революционного Комитета Дилижанского уезда.

КОСТА АЙВАЗОВ

Делегат местной коммунистической партии

АКОП АКОПОВ.

С подлинным верно: подпись

19¹⁷/III 30г.

(Ձեռագիր լրացում)

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 4, գ. 69, թ. 5-6; մերենագիր պահպանելու

ՀՈՒՎԱԾ ԲԱՔՎՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՄՆՈՂ “КОММУНИСТ” ԹԵՐԹՈՒՄ
Քարվանսարայի և Դիլիջանի շրջաններում ապստամբության ընթացքը
(26 մայիսի, 1920թ.)

Выписка из газеты “КОММУНИСТ” орган Центрального и Бакинского Комитетов Азербайджанской Коммунистической Партии. Номер 20, г. Баку, среда, 26 мая 1920 г.

СОЦИАЛИСТИЧЕСКАЯ РЕВОЛЮЦИЯ В АРМЕНИИ.

20 мая 1920г. в 12 час. ночи в гор. Каравансарае власть была захвачена местными коммунистами. Город был взят без единого выстрела. В 10 час. вчера Карадашская рота 6-го полка, во главе с тов. Акопджановым подошла к городу, окружила его со всех сторон. Тов. Акопджанов с малочисленным отрядом и представителем минист. вн. дел, командующим Шавортом захватили все учреждения города, почту и телеграф. К часу ночи к городу подошел автомобиль с центральным и местными представителями дашнакской власти, г-дами Манасяном, представителем мин. внутр. дел, командующим местным отрядом, генералом Багдасаровым, председателем земуправы Нерсесом Джагиняном, Месроп-беком Саратикяном, чрезвычайным комиссаром Каравансарайского уезда по борьбе с большевизмом Тер-Гукасовым и др., которые немедленно же были арестованы. После ареста этих контр- революционеров на следующее утро город был разукрашен красными знаменами и был выпущен первый приказ Ревкома, где говорилось о захвате власти, население призывалось к спокойствию и к обычным работам. Были устроены митинги, где выступали представители крестьян, которые призывали народ к защите Советской власти и к организации боевых отрядов для дальнейшего наступления на контр- революционное гнездо, на Эривань. После захвата власти Ревкомом была дана команд. XI армии телеграмма с просьбой прислать подкрепление для поддержания бодрости духа у восставших.

Русский красный отряд в 12 час. дня 21 мая вступил в город, и население встретило его хлебом-солью, и слезами умоляло командира поддержать дальнейшее наступление восставших на Эривань для освобождения угнетенного народа от власти контр- революционных дашнаков, которые своей глупой политикой отдали разоренную Армению на разгул западных империалистов и ужасам братоубийственной бойни.

В ту же ночь восставшими было предпринято наступление на городок Деликан и Шамшадинский район, которые также были взяты без единого выстрела, и городской гарнизон Деликана перешел на нашу сторону с артиллерией. Вступление красных русских частей в занимаемые территории встречается населением восторженно.

Наступление ведется по Эриванскому и Караклисскому шоссе. Перевал на этих дорогах взяты нами.

Контр- революционное правительство перебрало против восставших десятки тысяч маузеристов и 4 тысяч деникинских офицерских банд. Необходима помощь Красной армии.

К. АЙВАЗОВ.

Верно: /подпись/

(Ձեռագիր լրացում)

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 4, գ. 69, թ. 7-8; սերժանտի ցուցանիս

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ ՀԵՂԿՈՄԻ ՆԱՄԱԿԸ ՍԵՊՈՒՀԻՆ

Մաուգերիստները մայիսի 28-ին սահմանի վրա կրակ են բաց արել ռուսական կարմիր զորքերի դեմ, և ապստամբների ընկեր կարմիր զինվորները չեն ների մաուգերիստներին այդ քայլը (1 հուլիսի, 1920թ.)

**ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ
ՆԱՄԱԿԸ**

Մաուգերիստների խմբապետ. հայ աշխատավոր գյուղացիության
հալածիչ, հակահեղափոխական Սեպուհին

Քարվանսարայի գավառական ռազմհեղափոխական կոմիտեյում գտնվում են Ձեր և ուրիշ մի քանի „անկուսակցական բարեգործների,, հենց Ձեր ձեռքով ավերված գյուղացիության ուղղած նամակները, վորտեղ ասվում է, վոր յեթե նրանք չհրաժարվեն խորհրդային իշխանությունից և չհպատակվեն մաուգերիստներին, անխնա կվարվի նրանց հետ, նրանց ամբողջ կարողությունը կթալանվի, տները գետնի հետ կհավասարացվեն, իսկ յերեխաներն ու կանայք անխղճահար սրի կանցվեն:

Մենք ձեզնից դեպի հայ գյուղացիությունը ուրիշ վերաբերմունք չէյինք սպասում: Նրանց համար Դուք նույնն եք ինչ վոր ձեր բարեկամ մուսավաթիստները: Գյուղացին ինչ ազգության ել պատկանե, հենց վոր զլուխ ե բարձրացնում ընդեմ իր ճշողների քաղաքական և տնտեսական լծի, այն ժամանակ թե դաշնակները և թե մուսավաթիստները պետք ե վոր սկսեն անխնա հալածել գյուղացիներին:

Մենք միշտ այդ ասում էյինք հայ գյուղացիության, բայց նրանք մեզ չէյին հավատում, այժմ այդ ինքներդ ապացուցիք նրանց: Այժմ նրանք հավատում են և դրա համար ել վորոշել են թոթափել ձեր լուծը: Քարվանսարայի ռազմա-հեղափոխական կոմիտեն հայտարարում ե ձեզ կտրականապես, վոր յեթե դուք վերջ չեք տալ ապստամբ գյուղացիների, նաև Հայաստանի կոմունիստների ընտանիքների կոտորածին և ստացվածքի թալանին, այդ դեպքում գերի դաշնակցականները, վորոնք բանտարկվել են մեր կողմից և համարվում են պատանդ, կյենթարկվեն կարմիր տերրորի, իսկ դաշնակցություն կուսակցությունը կհայտարարվի որենքից դուրս, ինչպես մարդակերների կուսակցություն:

Բացի այդ, Քարվանս. Ռազմհեղ. կոմիտ. հայտնում ե ձեզ ի գիտություն, վոր ձեր մաուգիստները մայիսի 28-ին սահմանի վրա կրակ են բաց արել ռուսական կարմիր զորքերի դեմ և մեր ընկեր կարմիր զինվորները չեն ների ձեզ և ձեր մաուգերիստներին այդ քայլը:

„ԲԱՆՎՈՐԻ ԿՈՒՎԸ,, № 24, 1920թ. Հուլիսի 1-ի, էջ 1.

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.4, գ.78, թ.4-5; մեքենագիր պատճեն

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՀԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
ԶԵԿՈՒՅՅԸ ՌՍՖՏՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆԸ

Նկարագրվում են մայիս-հունիսին Ղազախ-Շամշադինում տեղի ունեցած դեպքերը, որոնք զեկույցի հեղինակի կողմից գնահատվում են որպես ավանտյուրա, քննադատվում են անհարկի բռնություններն ու թալանը բնակչության նկատմամբ, մերկացվում են ապստամբության ղեկավարների ըստ էության ավազակաբարո կերպարները (31 օգոստոսի, 1920թ.)

ՊԱՏՃԵՆ

Ռ.Ա.Ֆ.Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

ԱՌՆՆԹԻՐ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲՅՈՒՐՈՅԻ ԲՅՈՒՂԼԵՏԵՆԻ.

Հավելված 1920թ օգոստոսի 31-ի ն. 17.

ԱՆՑՔԵՐԸ ՂԱԶԱԽՈՒՄ ՅԵՎ ՇԱՄՇԱԴՆՈՒՄ.

Ղազախի յեվ Շամշադին դեպքերը, վոր տեղի ունեցան ս.թ. մայիսին յեվ հունիսին, իրենց հետեվանքներով ամբողջովին ավանտյուրիստական էյին, շնորհիվ արհեստական կերպով ստեղծված «հեղափոխության»: Դեռ ապրիլ ամսին, յես Ղազախում նախազգուշացնում էյի ընկ. Ամիրխանյանին, Բերբերյանի ավանտյուրիստական տրամադրությունների մասին, յեվ մենք վորոշեցինք նրան ուղարկել Յերեվան՝ Կենտրոնական Կոմիտեյի հայեցողության, իսկ Կոստյա Ատվազյանի մասին յես նախազգուշացրել էյի ընկ. Դրաստամատին ու Մարտիկյանին, նրանից հետո, յերբ Այվազյանը յերկու անգամ յեվ այն ել յերկու որով յեկել եր Քարվանսարա յեվ մեր ընկերներից ստացած թռուցիկ տպավորությունների ազդեցության տակ՝ նա Յերեվան գալով՝ Կենտկոմին անճիշտ տեղեկություններ եր տվել, վոր ամենեվին չէյին համապատասխանում Ղազախում գոյություն ունեցող գործերի դրությանը, ասելով վոր իբր թե ամբողջ շրջանը ծածկված ե բջիջների ցանցով, վորոնք կապված են կենտրոնի հետ յեվ բավական ե ձեռքի մի նշան՝ հեղաշրջում առաջ բերելու համար: Յես իբրեվ տեղացի յեվ կազմակերպական կոմիտեյի անդամ՝ նկատել էյի, վոր Այվազյանի ինֆորմացիան չի համապատասխանում իրականությանը յեվ ընկ. Ավետիք Տեր-Աբրահամյանի (Հայաստանի կոոպերացիայի աշխատակցի) ներկայությամբ նախազգուշացրի, վոր չը հավատան Այվազյանի յեվ Բերբերյանի նման անպատասխանատու անձանց խոսքերին, յեվ Ղազախում ու Շամշադինում գործերի վիճակն

այն ձեվով չը պատկերացնեն, ինչ ձեվով նկարագրում էյին վերոհիշյալ ընկերները: Ընկ. Դրաստամատի հետ ունեցած խոսակցությունից ինձ համար պարզվեց, վոր նա առանձնապես չի հավատում Այվազյանի խոստումներին. Սակայն մի քանի որ անց, յերբ յես Հայաստանի կոոպերացիայի համագումարից յեկա Ալեքսանդրոպոլ, այնտեղի շարժման անհաջողությունից հետո, յերբ Սեպուհի խմբերը բռնեցին Ղազախ տանող բոլոր գծերը, յես տեղեկացա, վոր Ղազախումն ել ե բռնկել ապստամբություն: Շատ լավ գիտենալով, մեր տեղական կազմակերպությունների ուժը, յես սրտի կսկիծով հայտնեցի մի քանի ընկերների, վոր այս շարժումն ել վաղաժամ ե յեվ հեղափոխություն չէ, այլ այն ավանտյուրիստների գործն ե, վորոնք իրենց անմտությամբ, փառքի համար ամբողջ շրջանն անձնատուր են անում արկածախնդրության, իսպառ կորցնելով իրենց հմայքը ամբողջ շրջանում:

Այսպես ել յեղավ: Գլուխ կանգնելով (մի խումբ) ավազակների, վորոնցից գյուղացիները հանգիստ չունեյին դաշնակաների տիրապետության ժամանակ, գործը հասցրին վիժման: Այս մասին յես բազմաթիվ փաստեր ունեմ:

Հունիս ամսին, յերկրորդ ավանտյուրայի նախորդակին, յես Թիֆլիսից Աղստաֆայով հասա Ղազախ յեվ ապստամբած գյուղացիների պահանջով հավիրելով հեղկոմի ժողով, քննության դրի կատարված անցքերը, այդ հարցի շուրջը աղմուկ բարձրացնելով: Փաստերից պարզվեց վոր Կոստյա Այվազյանը յեվ Բերբերյանը սրկածախնդիր են, գուցե յեվ ընկ. Շ. Ամիրխանյանի պատասխանատվությամբ աշխատող: Նրանցից Կոստյա Այվազյանը խրախուսվելով Ադրբեջանի «իսկական» կոմունիստների պնդումներով, վորով նրանք առաջարկում են իրենց հանձնել 6 հոգի հատուկ ցուցակով, ապացույց այն բանի, վոր ինքն իսկապես իսկական կոմունիստ ե, նա արդարացնում ե նարանց պահանջը, գերի յե վերցնում 6 հոգու յեվ իբրեվ պատանդներ՝ ուղարկում ե ընկ. Յենգիբարյանի ձեռքով Ադրբեջան: Ճանապարհին «իսկական» կոմունիստները փորձել են սպանել պատանդներին, սակայն շնորհիվ ընկ. Յենգիբարյանի յեվ ռուս կոմունիստների՝ նրանք ազատվեցին յեվ բերվեցին Բագու: Այս առթիվ ինքը Այվազյանը Հեղկոմից գովասանական գրություն ստանալուց հետո, այն միջոցին, յերբ փախել եր Բագու, պատմեց ընկ. Յենգիբարյանին, համարելով ավանտյուրիստական՝ ամբողջ շարժումը: Նրա կարծիքով հնարավորություն չկար յեվ անհրաժեղշտ եր հեռանալ: (նահանջել)

Ինչ վերաբերում ե Բերբերյանին, ապա նրան փոխանակ ուղարկելու Յերեվան՝ Կենտկոմի կարգադրության տակ, տալիս են նրան 200.000 ռուբլի յեվ ուղարկում են Շամշադին՝ գյուղացիներին կազմակերպելու: Այստեղ նա փոխանակ կազմակերպչական աշխատանքի ձեռնարկելու,

իր շուրջն է խմբում հասարակության տականքներին, ավագակներին յեվ մի շաբաթվա մեջ ապստամբություն և բարձրացնում 1-2 գյուղում. իբր թե մեկ ավանտյուրան հերիք չէր, նա ուզում էր այն լրացնել յերկրորդ ավանտյուրայով՝ «նշանավոր» Թարխանի գլխավորությամբ: Նա այնպես վորգեվորվել էր, վոր իր կարծիքով նա մեկ շնչով պետք է հասներ Յերեվան, բայց փաստորեն հասավ մինչեվ Քարվանսարա, այստեղ նա մի ճառ խոսեց, վորի մեջ հիշատակում էր, վոր նա ինքը դաշնակցական է յեղել յեվ 40 տերրոր և կատարել, բայց այժմ կոմունիստ է, մսագործ (ղասաք) յեվ յեկել և «մորթելու» դաշնակներին:

Դրա հետ միասին գնդակահարեց մի քանի հոգու, հայտնի չէ, թե վորքան տեղին էր այդ: Քարվանսարայում յերկու որ իշխելուց հետո, թյուրք փաշայի նման, նա վախենալով յեվ սարսափելով 26 պարտիզանների հրացանաձգությունից՝ բառիս բուն մտքով փախավ Ղազախ, գյուղացիների ասելով՝ գլխաբաց, շտապելուց չկարողանալով իր հետ վերցնել գլխարկը:

Ասում են, վոր նա իր հետ վերցրել էր մեծաքանակ թալան յեվ տարել իր հետ Բագու:

Հեղկոմն ու հատուկ զորամասը չը համարձակվեցին նրան խուզարկել, այնքան յերեվի նա ուժեղ էր իր շքախմբով:

Բագվում նրան պետք է դատելին, բայց ի զարմանս բոլորի, նա դրա փոխարեն նշանակվեց Զանգեզուրի ճակատի գլխավոր պետ: Սակայն այդ մասին յես լուում եմ, թող խոսեն նրանք, վորոնք գործին ավելի մոտ են կանգնած: Յես կը շոշափեմ բացառապես Շամշադնի անցքերը:

Նախ յեվ առաջ յես կը նկատեմ, վոր գնդի պետ նշանակված էր Բերբերյանը, նրա ոգնական՝ Տեր – Սարգսյանը յեվ նրան առընթիր, իր ճաշակով ընտրված «հատուկ զորամաս»: Վորաշման համաձայն յերկրորդ արշավանքը Քարվանսարայի վրա պետք է տարվեր միաժամանակ Շամշադնից, վոր բաժանված է միայն մի լեռնաշղթայով, բայց նրանք մտան Քարվանսարա, իսկ մենք նստած սպասում էլինք, վոչ մի կապ չունենալով նրանց հետ: Միայն յերկու որից հետո մենք իմացանք այդ մասին, սակայն արդեն ուշ էր, քանի վոր հակառակորդը թիկունքից հարվածում էր յեվ նրանց Ղազախից դուրս քշեց: Շամշադնի ապստամբյալները հետ շարտեցին Թաթլու, Թոուզ-Ղազա (բերդ) յեվ Նուար գյուղերի ճակատից հայկական զորքերի հրամանատար Բեկ-Մամիկոնյանին, վորի հետեվից սարերը փախան այդ շրջանի գյուղերի բոլոր հակա-հեղափոխական կուսակները իրենց ամբողջ գույքով: Ըստ մեզ մոտ յեղած տեղեկությունների՝ թշնամին դիրքերը և գրավել Քարվանսարայի, Նավուրի, Բերդի յեվ Չամբարակի կատարներին յեվ սպասում է մեր գործողություններին:

Գրավելով Բերդն ու Նաուրը, մեր հրամանատարությունը մնացած ազգաբնակչությանը հայտարարեց, վոր մինչեվ չը վերադառնան ու անձնատուր չը լինին փախած հակահեղափոխականները, վորոնց անունները դրա հետ միաժամանակ հայտարարված էին, զորքերը չեն հեռանա այդ գյուղերից յեվ նրանց ամբողջ ծախքը վերջին գյուղերի վրա պետք է ընկնի: Դրա համաձայն ամբողջ մի շաբաթվա ընթացքում այդ թվով մինչ 200 զորքը ոգտվում էր պարենավորումով ի հաշիվ այն գյուղացիների , վորոնք նեղ պայմաններումն էին: Վերցնում էին ու գրավում՝ հացը, պանիրը, յուղը, կովերը, ձիաները, խալիները: Դրա հետ միաժամանակ ձերբակալում էին անմեղ գյուղացիներին, փչացնում էին մեղուների փեթակները: Այդ գործողություններին մենք դարձրինք մեր ուշադրությունը յեվ միյեվնույն ժամանակ մատնանշեցինք հանցավորներին, սակայն չը նայած դրան հանցավորներն անպատիժ մնացին:

Յեղել են բոլորովին անմեղ գնդակահարության դեպքեր, ինչպես որինակ Նավուր գյուղի կույր աշուղի գնդակահարությունը, գուցե ամբողջ շրջանում նրա հոչակավոր ձին խլելու նպատակով: Այդ ձին այժմ գտնվում է Բագվում: Հետո դարձյալ մերոնցից մեկին, վորին ինքը Բերբերյանն էր գնդակահարել, այն պատճառով, վոր նա նախագզուշացրել էր հակառակորդի առաջխաղացման մասին յեվ դրա հետեվանքով դիրքերում իրարանցում ընկավ: Բերբերյանը տեսնելով, վոր դրությունը վտանգավոր է յեվ պատասխանատու յե դառնում, նույախի խորամանկություն է բանեցնում, ինչպես առհասարակ, մեկնում է Թուուզ կայարանը, այդ լուրջ մոմենտի ամբողջ ծանրությունը ձգելով իր ոգնական Տեր-Սարգսյանի վրա: Յեվ, յեթե վերջինս այնախի իսկական կոմմունիստ լիներ, ինչպես Բերբերյանի մյուս ոգնականները՝ Ապոստոլովն ու հանգուցյալ Սակուլվակին էր, նրանց նման կը ձերբակալեր մի քանի որով դաշնակ-պարտիզանների առաջխաղացության մասին նախագզուշացնող գյուղացուն: Իսկ Բերբերյանը, վոր գնդակահարեց գյուղացուն, պատճառ դառավ ամբողջ Նավուր գյուղի փախուստի՝ նախ դեպի Կարմիր-Աղբյուր յեվ ապա Թուուզ կայարանը՝ նահանջի ժամանակ:

Մինչ այս, մինչ այն, հենց հետեվյալ որը դաշնակները միանալով ճնշումների հետեվանքով մեզանից փախուստի տված տեղական բնակիչներին, մեզ առաջացան յեվ մի ամբողջ որ տեվող անդադար հրացանաձգությունից հետո ստիպեցին մեզ հետ գնալ դեպի մեր նախկին դիրքերը՝ Վերին Կարմիր-Աղբյուր գյուղի մոտերքը: Յերկու շաբաթ թշնամուն դիմադրելուց հետո, մենք փամփուշտների բացակայության հետեվանքով, թողինք այդ դիրքերը, վորովհետեվ մեր սուրհանդակը գալով Թուուզ կայարանը յեվ հայտնելով մեր դրության մասին «հեղափոխական» պետ Բերբերյանին, վոչ մի շուտափույթ ոգնություն չը ստացավ: Բերբերյանն

իմանալով դրությունը, գրահապատով յեկավ Աղստաֆա: Նա կանչում է Ղազախի հեղկոմին, տալիս է ինֆորմացիա յեվ դրանից հետո վերադառնում է Թուուզ կայարանը, իսկ այդտեղից ձիով հինգերորդ որը՝ մեզ մոտ: Այդտեղ նա հայտնում է Ջինվորական խորհրդին, վոր փամփուշտների բացակայության հետեվանքով Ղազախի հեղկոմը վորոշեց նահանջել: Անմիջապես նա կանչեց տնտեսական մասի պետին ու կարգադրեց թնդանոթներն ու այլորը տանել Թուուզ կայարանը, բայց այնպես, վոր դա աննկատելի լինի, ազգաբնակությանն իրարանցման մեջ չը ձգի: Սակայն գյուղացիները շուտով նկատեցին այլորով բեռնված սայլերն ու թնդանոթները յեվ սկսվեց խուճապը: Նրանք այդ առթիվ վորոշեցին ձերբակալել Բերբերյանին ու նրա ոգնականին նրա համար, վոր նրանք իրենց չեն նախագգուշացրել նահանջի մասին, վորպեսզի իրենք ել կարողանային փրկվել, փրկել իրենց ընտանիքը դաշնակների ձեռքից: Յես, իբրեվ շրջանային Հեղկոմի նախագահ՝ առաջարկեցի առանց թագցնելու հայտարարել նահանջի մասին յեվ 3 ժամ ժամանակ տալ, վորից հետո նահանջը կատարել: Սրան կարծես թե համաձայնեցին, սակայն կես ժամ չանցավ, հենց վոր մթնեց, առաջ գցեցին թալանած իրերով սայլերը, իսկ իրենք ձիաները հեծնելով յեվ քայլերգով առաջ շարժվեցին: Իմ տված հարցին թե՝ ո՞ր եք գնում, Բերբերյանը պատասխանեց, վոր խոսելու ժամանակ չե յեվ առաջարկեց ինձ ձին հեծնել յեվ իրենց հետեվել: Ինձ այլեվս վրչինչ չեր մնում անել յեվ կես ժամից հետո յես ուղեվորվեցի նրանց հետեվից: Անհնար է նկարագրել առաջ յեկած խուճապը, բնակիչների աղաղակն ու վայնասունը...

Նավուր յեվ Բերդ գյուղերից թալանած իրերի մասին, վոր Բերբերյանը Կարմիր-Աղբյուրից փոխադրել եր Թուուզ կայարանը՝ յես գրավոր կերպով գեկուցել էյի Գանջա՝ հատուկ զորամասին, իսկ բերանացի կերպով հայտնեցի հեղկոմին, վորը հանձնարարեց հանձնաժողովին՝ Գիզոյանի նախագահությամբ ու Յոլակ Ամատունու յեվ մյուս մի ընկերոջ մասնակցությամբ՝ քննել գործը, սակայն այդ քննությունը հաստատեց միայն Բերբերյանի իբրեվ զինվորական պետի անպետքությունը յեվ գրկեց նրան հրամանատարությունից, հանձնարարելով նրան ավելի պատվավոր պաշտոն՝ զինկոմ. մնացյալում բողոքը անհետեվանք թողնվեց: Հանձնաժողովի հայտարարության համաձայն՝ Բերբերյանը հանձնել է տնտեսական մասի պետ Յերվանդ Հարությունյանին «միայն» հակահեղափոխականներից վերցված իրերը, բայց տնտեսապետը բացասում եր, այդ թեպետ յեվ մի ընկերոջ ներկայությամբ հայտարարեց, վոր տեսել է բարձրված սայլերը՝ կողովներով, դոշակներով, անկողիններով՝ Կարմիր-աղբյուրից Թուուզ կայարանն ուղեվորվելիս, բայց թե ո՞ր

են տարել այդ իրերը, նա չը գիտե: Կարմիր ապստամբյալներն ասում են, վոր այդ իրերը տարել են ծախել Գանջա:

Իսկ 200.000 ռուբլու գումարի հաշիվը... Յեվ, յերբ այս բոլոր գործողություններին մենք, ընկերներս, քննադատաբար ենք վերաբերվում յեվ դեկավարներից հաշիվ ենք պահանջում, մեզ խոսքից գրկում են, կուսակցական աշխատանքից հեռացնում յեվ Գիգոյանը Բերբերյանի ոգնությամբ մեզ հանձնում են արտասահմանյան բյուրոյի լիազոր Աշ. Տեր-Սահակյանին յեվ գործը քննելով՝ մեզ հայտարարում են, թե թյուրիմացություն ե դուրս յեկել, վոր անցողական ժամանակաշրջան ե յեվ զգույշ պետք ե լինել:

Ահա թե ինչ արին անպատասխանատու կոմունիստները գյուղացիների հետ՝ մեր քաղաքական նպատակների յեվ շահերի վերաբերմամբ: Նրանք մի ամսվա աշխատանքն յերկարացրին տաս տարով: 30 տարեկան մեռնող դաշնակցական կուսակցությունը նորից կյանքի կանչեցին:

Մեր ավանտյուրայի շնորհիվ, ըստ հավաստի տեղեկությունների, ապստամբ գյուղացիները հետ վերադառնալով, կատաղաբար կռվում են դաշնակների հետ միասին մերոնց դեմ: Եվ սրանից ավելի ի՞նչ կարելի յե սպասել արկածախնդիրների գործունեությունից:

Մեր պրեստիժը (վարկը) կը բարձրանա գյուղացիների աչքում այն դեպքում միայն , յեթե ավանտյուրիստներն անպատիժ չը մնան:

Շամշադնի Հեղկոմի նախագահ՝
Ա զ ա ս ի Վ ա ր դ ա ն յ ա ն :

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 2, գ. 143, թ. 4-9; մեքենագիր

Doc.II-40

ԿԱՐՄԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ՆՈՐԱԹՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻ
ՀԵՂԿՈՄԻՆ

Նորայթյանն իր պատրաստակամությունն է հայտնում ծառայել
ցանկացած իշխանությանը, որը կհաստատվի Հայաստանում, այդ թվում
նաև խորհրդային իշխանությանը:

(11 մայիսի, 1920թ.)

ԿԱՐՄԻ ԲԵՐԴԱՇՐՋԱՆԻ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Ստացայ Ձեր N 2 գրությունն ինձ ուղարկած, որին պարտք եմ համարում
պատասխանել հետևեալը:

Ես, իբրև աշխատաւոր դասի ընտրեալ ներկայացուցիչ, պարտաւոր եմ
հնազանդուել և ընդունել այն կառավարութիւնն ու հնազանդուել
նրան, որը կհաստատուի մեր երկրում, այս դեպքում սովետական
իշխանութեանը:

Ես ամբողջ կեանքս նուիրել եմիմ ժողովրդի և ազգի բարօրութեան և
աշխատել եմ այն կուսակցութեան մեջ, որը նպատակ է ունեցել իմ
հայրենիքի փրկութիւնը:

Այժմ վստահ եմ, որ ոչ մի անձնական և այլ հակառակութիւն չի կարող
առիթ տալ որևէ անարդար վերաբերմունքի դեպի ինձ և մեր երկրի
խաղաղ յեղաշրջումը արատավորել որևէ էկսցէսներով:

Եթէ երբեք անհեռատես մարդիկ պիտի անձնական մօտիվներից
դրդուած մեկին կամ միուսին բանտարկելու կամ նոյն իսկ սպանելու
փորձ անին՝ յեղափոխական կոմիտե երբէք թոյլ չի տալու այդ բանը:

Վստահ յեղափոխական կոմիտէի արդարութեան և անաչառութեան
վրայ, ընդունում եմ նրա առաջարկը և մնում իմ պաշտօնին մինչև այն
վայրկեանը, երբ ինքը կը կամենայ և նրա առաջին առաջարկին
կթողնիմ պաշտօնս:

Վերջացնելով պարտք եմ համարում յայտնել, որ լիայոյս եմ յեղափոխա-
կան կոմիտէի անյիշաչարութեան վրայ և որ եթէ նա կամենայ իմ ծառա-
յութիւնից օգտուիլ՝ նոյնպիսի անձնութեամբ կը ծառայիմ հայրենիքս և
նրա աշխատաւոր դասի համար, ինչպէս մինչ այժմ:

Յարգանքով՝ Կարսի Գաղաքագլուխ՝ Ն.Ն.

11 .V.1920

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 2, գ. 151, թ. Թ. 1-2; լուսապարճնն ձեռագրից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԶԱՄԱԼՅԱՆԻ
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԻՋԵՎԱՆ-ԴԻԼԻՋԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Կառավարական ուժերը ճնշել են ապստամբներին և Հայաստանի սահմաններից դուրս են մղել Ադրբեջանից հայկական տարածքներ ներթափանցած ռուսազգի՝ հավանաբար վարձկանների ջոկատները (2 հունիսի, 1920թ.)

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԶԱՄԱԼՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ԻՋԵՎԱՆ-ԴԻԼԻՋԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ.

Հունիսի 2-ին առավոտյան ժամը 11-ին հաղ. Նախարար Ա. Զամալյանը հրապարակային զեկուցում տվեց Իջեվան-Դիլիջան դեպոերի մասին, պարլամենտի դահլիճը լիքն էր խուռն բազմությամբ, վոր աղմկալից ծափահարությամբ ընդունեց նախարարին:

Քաղաքացիներ.

Վերջին շաբաթվա անցու դարձը Ալեքսանդրապոլում, Ղարսում, Սարիղամիշում յեվ Նոր-Բայազետում հայտնի Ե ձեզ արդեն, այսոր ձեզ պիտի հայտնեն Իջեվանում յեվ Դիլիջանում պատահած դեպքերը: Յերկու որ առաջ Ադրբեջանի զորքերը դրանց թվում նայեվ փոքրաթիվ ռուսական զորամասերը, տեղական հայ խռովարար բոլշեվիկների հորդորով ու աջակցությամբ անցնելով սահմանը մտել են Իջեվան, ձերբակալել մեր իշխանությունները յեվ առաջացել դեպի Դիլիջան:

Իջեվանի մեր զորամասը, մոռանալով իր պարտքը հայրենիքի հանդեպ ականատեսի դեր Ե կատարել, իսկ թշնամին առանց արգելքների հանդիպելու առաջ Ե խաղացել դեպի Դիլիջան: Սակայն, այդ տարտամ դրությունը յերկար չի տեվել, ժողովուրդը գիտակցել Ե, վոր իր շուրջը խաղեր են սարքվում, մյուս կողմից վրա են հասել հավատարիմ զորամասերն ու դաշնակցական մարտիկները յեվ միացած հարձակվել են թշնամու վրա: Թշնամին տեսնելով, վոր իր ջախջախումը անխուսափելի Ե հատուկ դրությամբ հանդերձ մի պատվիրակություն Ե ուղարկել զեն. Խանքալամյանի մոտ, առաջարկելով դադարեցնել ռազմական գործողությունները 24 ժամով, մինչեվ կպարզվի, թե յեկող ռուսները իրոք սովետական զորքեր են, թե ադրբեջանյան վարձկաններ. Վերջինս կտրուկ կերիսով պատասխանել Ե, վոր իր համար միեվնույն Ե թե հողամասը մտած զորքերը ում են պատկանում յեվ ինքը պետք Ե ռազմական գործողությունները շարունակի, յեթե անմիջապես անձնատուր չլինեն յեվ պարագլուխներին չհանձնեն:

Ու շարունակում են գործողությունները, հավատարիմ քաջարի գործը, դաշնակցական մարտիկները ու ժողովուրդը հարձակում են, Դիլիջանը գրավում ու թշնամուն հալածում /վորոտնդոստ ծափահարություն/: Դիլիջանի փոստի առաջ ընկած է խռովարար սպա Հակոբջանյանի դիակը, մյուսները հաջողում են փախչել:

Այսպիսով դուք տեսնում եք, վոր Ադրբեջանը չի դադարում գործ դնել բոլոր ստոր միջոցները մեր անկախությունը ի չիք դարձնելու համար. նրա վերաբերմունքը դարձել է անտանելի ու անպատկառ: Հայաստանի կառավարությունը համբերեց յերկար, սակայն թշնամին վատաբար շահագործեց նրա համբերատարությունն ու խաղաղասիրությունն յեվ այժմ, յերբ նա միքանի վատ հոգի ու ստոր հայ բուլշեփիկների հորդորով ու աջակցությամբ հանդգնությամբ այլ բան չէ մնում անելու, քան վչռական միջոցներով պատժելու թե ներքին յեվ թե արտաքին թշնամուն /յերկարատեվ, աղմկալից ծափեր. Ձայներ կեցցե կառավարությունը/:

Այս խնդրում մեզ միացած է Վրաստանը. նրա զինադադարը Ադրբեջանի հետ խաղտվում է, վորովհետեվ վերջինս հենված դարձյալ ռուսական թափթփուկների վրա նույնպիսի հանդուգն գործողություններ է սկսել ու նույնպիսի պահանջներ է անում Վրաստանին, ինչ վոր անում ու պահանջում է Հայաստանից:

Քաղաքացիներ.

Յեթե Ալեքսանդրապոլի, Ղարսի, Սարիղամիշի ու Նոր Բայազեդի դեպքերը կրում եյին տեղական բնույթ, ապա Իջևվան-Դիլիջան տեղական-մասնակի դեպոեր չեն, վորովհետեվ գործունեության ասպարեզ են իջել ինչ վոր ռուսներ անհրաժեշտ է, վոր դեպքերի բնույթի այդ տարբերությունը գիտակցեք ու միաժամանակ արմատացնեք ժողովրդի մեջ այն մտայնությունը, վոր մեր թշնամին միայն թուրքը չէ, այլ բոլոր նրանք, ովքեր հանդգնում են խորտակել մեր դարերի յերազը Հայաստանի անկախությունը /բուռն ծափեր/. թուրք թե ռուս, հրեյա թե հույն, այդ միեվնույն է յեթե նրանք փորձ կանեն ձերք բարձրացնել Հայաստանի վրա նրա անկախության հիմքերը փորելու համար, թշնամի են մեզ ու պիտի հավասարապես դիմադրության հանդիպեն ու հալածվեն /խանդավառ ծափահարություն, ձայներ ճիշտ է, այդպես է/:

Յեթե Ղազախի ժողովուրդը լուռ հանդիսատես է յեղել իր շրջանում կատարվող իրադարձությանց պատճառն այն է, վոր մտածել է թե պետք է, արդյոք դիմադրել ռուսներին: Նախ յես պիտի պարզեմ ձեզ, թե ովքեր են մեր սահմանների վրա յերեվացող ռուսները. նրանք յերբեք սովետական չեն, Դենիկինի բանակի թափթփուկ յեվ դավաճան զինվորներ են, վորոնք տմարդորեն վաճառեցին իրենց զենքերը Ադրբեջանին յեվ ստանալով մոտ 40 միլիոն կաշառք, դարձան վերջինիս վարձկան կամակա-

տարները. նրանց միացել են նայել տեղական մալականները. Այն մարդիկ, վորոնք հայերի համեմատությամբ յերեք անգամ ավելի հող ունեն, զերծ են զանազան տուրքերից, զինվորական ծառայությունից յեվ ըստ ամենայնի բարեկեցիկ կյանք են վարում, այսոր անցնում են մեր թշնամիների կողմը, վորովիետեվ նրանք ել դեմ են մեր անկախությանը: Այսպես մի խառնիճաղանչ ամբոխ կաշառված Ադրբեջանի դրամներով յեվ ինչ վոր իտալական ընկերությունից թալանած կտորներով, միատեսակ հագնված հանձակում ե սկսում Հայաստանի վրա. դրանք սովետական գորքեր չեն յեվ վերեվիետեվ վոչ մի ներքին իդեական կապ չկա նրանց միջեվ, վորով հավաքված մարդիկ են, ուստի մեր առաջին գրոհին տեղի տվին ու փախուստի դիմեցին:

Սակայն, քաղաքացիներ, ընդունենք մի րոպե, վոր այդպես չե, ընդունենք, վոր, իրոք, մենք գործ պիտի ունենանք իսկական սովետական գորքերի հետ, միթե մեր վերաբերմունքը նույնը չպիտի լինի /ձայներ նույնը պիտի լինի, ուրիշ կերպ չի կարող լինել/: մենք պիտի հայտարարենք բարձրաձայն, վոր վոչ մի արտաքին ուժ չի կարող վտնատակ տալ մեր անկախությունը, առանց մեր բուռն յեվ վճռական դիմադրությանը հանդիպելու /ուժգին ծափեր/: Յես հույս ունեմ, վոր սովետական Ռուսաստանը չի փորձի ձեռք տալ մեզ, նա անկախություն ե տվել շատ ժողովուրդների, համաձայնություն ե կնքել Վրաստանի հետ յեվ պատրաստակամություն ե հայտնել համաձայնություն կնքելու նայել Հայաստանի հետ. իսկ յեթե, անտես առնելով մեր ժողովուրդի արդար իրավունքն ու դարերի բաղձանքը, կփորձի իր ձեռքը դնել մեզ վրա, ապա կտեսնի հայ ժողովուրդի ցատումն յեվ հանուն իր անկախությանը կռվելու պատրաստակամությունը: Միանգամ ընդ միշտ պիտի պարզ լինի ամենքի համար, վոր մեր անկախությունը անվերապահ ե /խանդավառ ծափեր/:

Բախտ ունիմ հաղորդելու ձեզ, վոր մեր զորամասերը քշել են արդեն իրենց միջից խռովարար տարրարին, առաջվա նման նրանք տոգորված են վառ հայրենասիրությամբ ու պատրաստ են կռիվ մղելու բոլոր թշնամիների դեմ /յերկարատեվ ծափեր, ձայներ կեցցե գորքը, կեցցե հայ բանակը/: նույն զգացմունքներով յեթե տոգորված լինի նայել ժողովուրդը, ապա ուրեմն մեր փրկության գործը ապահովված ե:

Ժողովուրդի բարձր տրամադրության յեվ յերկարատեվ, աղմկայից ծափերի տարափի տակ նախարարը թողեց դահլիճը:

Մ.

Ֆ.-Պ.1022, ց.3, գ.261, թ.2-4,11; մեքենասգիր

Doc. II-42

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ ՀԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՄԻՐԻՆԱՆՈՎԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԲԱՔՈՒ՝ XI ԲԱՆԱԿԻ ՀԵՂԿՈՄԻՆ ԵՎ ՕՐՋՈՆԻԿԻՉԵՒՆ
Ապստամբները շրջապատել և կոտորել են մաուզերիստների ջոկատը,
Հայաստանի տարածքում անհրաժեշտ է կարմիր զորամասերի
ներկայությունը՝ ինչպես բարոյական աջակցության, այնպես էլ
դաշնակների դեմ պայքարելու համար
(25 մայիսի, 1920թ.)

Телеграфъ

БАКУ

ТЕЛЕФОННОГРАМА, БАКУ,
РЕВСОВЕТ XI/ОЙ АРМИИ КОПИЯ
АРДЖАНИКИДЗЕ

БКУ КАЗАХА 147, 52, 25/5, 1,

24, МАЯ ВЕЧЕРОМ ОКОЛО РЕВАЗИНСКАГО МОСТА КРАСНЫМ
ПОВСТАНЧЕСКИМ ОТРЯДОМ БЫЛ ОКРУЖЕН НАСТУПАЮЩИЙ
ОТРЯД МАУЗЕРИСТОВ ЧИСЛЕ 70, ЧЕЛОВЕК И РАЗБИТ УБИТО 40,
ЧЕЛОК ВЗЯТО 7, ЧЕЛОВЕК ОСТАЛЬНЫЕ РАЗБЕЖАЛИС
НЕОБХОДИМО ПРИСУТСТВИЕ КРАСНЫХ ЧАСТЕЙ НА
ТЕРРИТОРИИ АРМЕНИИ ДЛЯ МОРАЛЬНОГО ВОЗДЕЙСТВИЯ И
БОРЬБЫ С ПРОВОКАЦИЯМИ ДАШНАКОВ. ПРЕДРЕВКОМ
КАРАВАН САРАЙСКАГО УЕЗДА АМИРХАНОВ.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 8, գ. 46, թ.1; լուսապատճեն հետազոտից

Doc.II-43

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2-րդ ՀԵԾԵԼԱԳՆԻԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ և ՏԱՈՒՋ ԿԱՅԱՐԱՆԻ Ռ.Կ.Կ.

ՀԵՂԿՈՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻԱՑՑԱԼ ԺՈՂՈՎԻ

Հայաստանի ապստամբները կարմիր ընկերներից խնդրում են պարենային օգնություն, ինչպես նաև զինվորական մասնագետներ՝ ապստամբությունը ղեկավարելու համար, ինչը ժողովի կողմից դրական որոշում է ստանում (17 մայիսի, 1920թ.)

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արձանագրություն.

2-րդ հեծելազնի կողկետիվի յեվ Տաուզ կայարանի Ռ. Կ.Կ. Րեվկոմի ներկայացուցիչների միացյալ ժողովը:

Մասնակցում են 17 հոգի:

1920թ. Մայիսի 17-ին, Տաուզ կայարան. նախագահում է ընկ. Սոկոլովը, քարտուղար, ընկ. Գլոտովը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՂԱԶԱԽԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ.-

Զեկուցում է ընկ. Ալեռշինը: Այդ զեկուցումից յերեվում է, վոր Ղազախը անկման վրա յե. Բացի այդ, ընկերոջ զեկուցումից յերեվում է, վոր տեղական կոմունիստ ընկերները լարված աշխատում են յեվ բուրժուական դաշնակցական կառավարությունը իր վերջին որերն է ապրում: Հայ աշխատավորական մասսան վորոշեց մի ուժեղ հարվածով վերջ տալ հակա-հեղափոխականների այդ բույնին: Ղազախի հայկական լեռնոտ մասում դաշնակցության իշխանությունը տապալված է ու նրա տեղը հաստատված խորհրդային իշխանություն: Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում, Ղարսում, Սարիղամիշում նույնպես ապստամբության դրոշ է բարձրացված, ձերբակալել են կառավարության պաշտոնյաներին: Այժմ դիմում ենք մեր կարմիր ընկերներին յեվ խնդրում ենք ուղարկել մեզ.

1. Նյութական ոգնություն.-Շամշադինի հայ ազգաբնակությունը կտրված է Իջեվանից յեվ այնտեղից մթերքներ չի ստանում: Շամշադինի ազգաբնակություն մնացել է առանց հացի:
2. Հայկական փողերը ընդունել ու շրջանառության մեջ դնել Ադրբեջանի սահմաններում:
3. Հագուստ ու մթերք մատակարարել հայկական 2-րդ գնդի հեղափոխական զինվորներին /6 յեվ 4 միլիցիական/ խնդրում ենք միացյալ ժողովին միջնորդել 11-րդ բանակի շտաբի առաջ, վոր Իջեվանի Րեվկոմի տրամադրության տակ դնի մասնագետ

զինվորականներ, ղեկավարելու Ղազախի ապստամբությունը:
Նրանց պակասը զգալի յե Ղազախում:

Ընկ. Սոկոլովսկու զեկուցումը: Ընկ. Սոկոլովսկին ներկայացուցիչ ե ուղարկված 2-րդ հեծելազնդի կողմից, նա պատմում ե, վոր ինքը սկանատես ե յեղել դաշնակցականների իշխանության տապալմանը, ներկա յե յեղել կառավարչական պաշտոնյաների ձերբակալմանը, յեվ շատ յավ գիտե թե ինչ դրության մեջ ե գտնվում այդ ամբողջ շրջանը:

Միանալով ընկ. Ալեռչինի զեկուցմանը նա նույնպես առաջարկում ե նրա գրած բոլոր պահանջները իրագործել:

Ստորագրություն.

Լսելով ընկ. Ալեռչինի ու Սոկոլովսկու զեկուցումը ժողովը հետեվյալ վորոշումը կայացրեց:

1. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր հայկական զորամասերը թեյեվ գտնվում են Ղազախի շրջանում, յեվ գտնվում են ռուս.կոմ. բոլշեվիկական կուսակցության Կոմիտեյի հսկողության ներքո, բայց հրամանատարական կազմի բացակայության պատճառով, չեն կարողանում շարժումը ղեկավարել, վորոշվում ե պատասխանատու ընկերներին ուղարկել այնտեղ-թվով յեթո հոգի-վորոնց մեջ մտնում են հեծելազնդի կոմիս. ոգնական ընկ. Կոլումիյցեվ, գնդական կոմ. Հանձնաժողով անդամներ-ընկերներ Գուբին յեվ Զանին, գնդապետ –գանձապահ ընկ. Խաչատուրով, զորախմբի հրամանատար ընկ. Կաբանիկով, եսկադրոնի կոմիս. ոգնական ընկ. Պանկով, կարմիր զինվոր ընկ. Կարապետյան ու եսկադրոնի քաղաքական ղեկավար ընկ. Սոկոլովսկի: Սրանցից ընկերներ Սոկոլովսկուն ու Կոլումիյցեվին ընկեր Այրոշինի հետ ուղարկել 11-րդ բանակի շտաբը Հայաստանի ընդհանուր դրության մասին զեկուցանելու համար յեվ միջնորդելու վոր հարկավոր նյութեր ուղարկեն այդ շրջանում Խորհրդային զորք կազմակերպելու համար յեվ մարդիկ ուղարկեն կազմակերպչական գործի համար:
2. Ի նկատի ունենալով տնտեսական այն ծանր դրությունը, վորի մեջ գտնվում ե այնտեղի ազգաբնակությունը, միացյալ ժողովը դիմում ե 21-րդ շտաբին, վոր թույլ տրվի Հայաստանի բռների շրջանավորություն Ադերբեջանում, Ռուսաստանի ու Ադերբեջանի բռներին հավասար:

ՀԱՍ, Ծ-Պ. 1022, ց. 4, գ. 68, թ. 2; մեքենագիր

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առ այն, որ 1920-ի մայիսին Հայաստանում ապստամբություն բարձրացրած հայ բոլշևիկները դաշնակցական պրովոկացիա էին համարում Հայաստանի կառավարության կողմից հրապարակած լուրերն այն մասին, որ խորհրդային կողմը ձգտում է Հայաստանի վրայով զինուժ տեղափոխել քենալական զորքի հետ միավորվելու համար, և որ Հայաստանում սպասում են կարմիր մարտիկներին (18 մայիսի, 1920թ.)

ՇԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Յեվլախ 18-ին մայիս: Աղստաֆա ժամանեց Հայաստանից յեկաձ դե-լեգացիան: 11-րդ բանակի ռազմհեղափոխական խորհրդին ուղարկելով հետեվյալ դիմումը:

«Ընկերներ ապրիլի 28-ին ռադիոն մեզ ուրախ լուր բերեց Ադրբեջանի բեկերի յեվ խաների հակահեղափոխական կառավարության անկման յեվ մեր կոմունիստ ընկերների կողմից իշխանության գրավման մասին: Այդ ուրախալի լուրը տարածվեց ամբողջ Հայաստանի սահմանների վրա:

Մայիսյան ապստամբությամբ սկսվեց Հայաստանի պետականության առանց այն էլ խարխուլ նավակի ճոճելը: Այդ տեսակետից նման՝ պարտվելու ենթակա ապստամբությունը իր զգալի և կարևոր նպաստն էր բերում թուրք-բոլշևիկյան պլանների պրակտիկ իրագործմանը, քանզի դրանով սկիզբն էր դրվում հայկական պետականության գործնական ոչնչացման ընթացքին՝ ձեռամբ հայ բոլշևիկների:

Եթե մայիսյան ապստամբությանը մոտենում ես հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր՝ ավանդական դիալեկտիկայի տեսանկյունից, ապա այդ ապստամբության հենց նման ընթացքի մեջ որևիցե գաղտնիք կամ պարադոքս, ըստ էության, ոնց որ թե չկա էլ: Ամեն ինչ միանգամայն տեղավորվում է այդ ավանդույթի շրջանակների մեջ: Համաձայն ավանդույթի ռուսները՝ հիմա էլ բոլշևիկների կերպարով, ասել են. «դուք սկսեք մենք կհասնենք»: Հայերը՝ հիմա էլ հայ բոլշևիկների կերպարով համաձայն նույն ավանդույթի, սկսել են՝ օգնության հույսով ու ակնկալիքով: Իսկ այն կողմը՝ կրկին համաձայն ավանդույթի, զորքերը հետ ու առաջ տեղաշարժել, բայց վերջնական եկել է ոչ թե այն ժամանակ, երբ ապստամբներին էր պետք, այլ այն ժամանակ, երբ իրեն էր պետք: Եվ ինչպես միշտ, այս անգամ էլ հայերի պարտված ապստամբությունը ռուսական կողմի համար ապահովեց «երկու երնեկ» միաժամանակ: Մի կողմից ապստամբությունն էապես նպաստեց հակառակորդ կողմի, տվյալ դեպքում Հայաստանի թուլացմանը, մյուս կողմից այն սկիզբ դրեց այն գործընթացներին, որ հայությունը կրկին հայտնվեց ոչնչացման եզրին և բացի նրան հերթական անգամ «տեր կանգնած» ռուսական կողմի միջամտությունից, փրկության այլ ելք այդ պահին չպետք է երևար: Նորամուծությունը միայն այն էր, որ այս անգամ հայերը հանուն ռուսական շահերի խարխուլում էին ոչ թե պարսկական կամ թուրքական պետության հիմքերը, այլ ուղղակիորեն քանդում էին սեփական ազգային պետությունը:

ԲԱԺԻՆ III

Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության
ձեռնարկած քայլերը՝ երկրի ներքին կյանքի հնարավոր
քարելավման և արտաքին աշխարհի հետ սորմալ
հարաբերությունների հաստատման ուղղությամբ:

Ռուսաստանից Հայաստանին եկող ուղղակի վտանգը և հայ
բոլշևիկների հակապետական դիրքորոշումը հնարավոր բոլոր
ատյաններում և անցքերում

Մայիս-սեպտեմբեր, 1920թ.

ԿԱՐԹԱԳԵՆԸ ՊԵՏՔ Է ԿՈՐԾԱՆԿԻ

Առանց չափազանցության կարելի է ասել, որ հենց նման նշանաբանով էր բնութագրվում Խորհրդային Ռուսաստանի և Կովկասում իր բարեկամ քեմալական Թուրքիայի և արբանյակ Խորհրդային Ադրբեջանի կողմից Հայաստանի հանդեպ 1920թ.-ի հունիսից մինչև սեպտեմբերի վերջը՝ մինչև հայ թուրքական պատերազմի սկիզբը դրսևորված քաղաքականությունը: Որպեսզի, ինչպես ասում են, շատ չերկարացնենք, բերենք այդ օրերին Մոսկվայից ուղարկած մի հեռագրի տեքստ: Ստալինը 1920-ի հուլիսի 8-ին հեռագրում է Օրջոնիկիձեին. «Իմ կարծիքն այնպիսին է, որ չի կարելի անվերջ խուսանալել կողմերի միջև, պետք է սարսրել կողմերից մեկին որոշակիորեն, փոխալ դեպքում, իհարկե, Ադրբեջանին Թուրքիայի հետ: Ես խոսել եմ Լենինի հետ, ինքը չի ստարկում: Մտալին»:²¹ Դեհ, եթե Իլյին էլ չի առարկում, էլ ինչ հարցեր կարող են լինել: Ի գո՛րծ, ընկերներ:

Այս բաժնի նյութերի մի մասը լուսաբանում են այն քայլերը, որոնք 1920-ի ամռան ամիսներին ձեռք էր առնում Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը երկրի ներքին կյանքի կայունացման ուղղությամբ, ինչպես նաև դիվանագիտական այն քայլերը, որ իրականացվում էին միջազգային ասպարեզում երկրի ճանաչման և անվտանգության ապահովման ուղղությամբ: Մյուս մասը վերաբերում է թուրք-բոլշևիկյան կողմի և անձամբ հայ բոլշևիկների դիրքորոշմանն ու գործունեությանը այդ ժամանակահատվածում:

²¹ Ю.Г. Барсегов, նշված աշխատությունը, էջ 92

Doc.III-1

ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐԻՆ

Նոր-Բայազետի Գավկոմի օգնականը տեղեկացնում է Գանձակից
Հայաստան փախած Դենիկինի կամավորական բանակի զինվորների
մասին և խնդրում է հրահանգ տալ իր հետագա գործողությունների
վերաբերյալ
(21 մայիսի, 1920թ.)

Պատճեն նոր-Բայազետի Գավկոմի ոգնականի հեռագրի ուղղված
Ներքին Գործերի Մինիստրին:

Զանգեզուրի Դարալագյազի վրայով գալիս են Բայազետ Յերեվան
անցնելու համար ռուսներ կամավորական բանակի սպաներ յեվ
զինվորականներ մասամբ զինված յերեկ այսոր յեկել անցել են դեպի
Յերեվան հիսուն հոգի վաղն սպասվում ե մոտ 300 հոգի նրանց ասելով
իբր փախչում են Գանձակից յեվ թիվն հասնում ե յերկու յերեք հազարի
վորոնք պիտի շարունակեն գալ խնդրում են պատշաճ հրահանգ 36

ԳԱՎԿՈՄԻ ՈԳՆԱԿԱՆ՝ ՍԱԴՈՅԱՆ
ԳՈՐԾԱՎԱՐ՝ (ստորագրություն)
Իսկականի հետ ճիշտ ե

ՇՏԱՊ

Ներկա պատճեն ուղարկված ե Մինստրների խորհրդի դիվանը
իգիտություն Մինստրի նախագահի:

21 Մայիսի 1920թ.

ԴԻՎԱՆԻ ՓՈԽ ՏԵՍՈՒՉ՝ (ստորագրություն)
ԳՈՐԾԱՎԱՐ՝ (ստորագրություն)

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 76, թ. 6; անթանագիր

Doc.III-2

ՔԱՆԱՔԵՌԻ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ
Սանրամասն տեղեկացվում է Քանաքեռում հայտնված դենիկիյան
զինվորականների քանակի և զինվածության մասին, և հարցում է
կատարվում իր հետագա գործողությունների համար հրահանգների մասին
(31 մայիսի, 1920թ.)

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ Պ.ՌՈՒԲԵՆԻՆ.

Այսոր ժամը 2-ին Նոր-Բայազետից յեկան Քանաքեռ Դենիկիյի
կամավորներից 62 զինվորներ 8 սպա յեվ յերկու գնդապետ, թերյեվս
ինձ վոչ մի կարգադրություն չկար, վոր յես նրանց արգելի այստեղ,
բայց դրությունը ինձ ստիպեց նրանց արգելել մինչեվ Ձեզ
տեղեկացնել ի պատշաճ կարգադրություն:

Սրանից առաջ յես հայտնեցի մայրաքաղաքի կամենդանտ
պ.Շահխաթունուն, նրա պատասխանը ինձ չբավարարելով, դիմում
եմ Ձեզ ինչ եք կարգադրում. Սրանց շատերի վրա ասորճանակներ
կան վերցնենք թե վոչ, կա նայեվ սրանց մեջ մեկ հայ զինվոր, յեղեր ե
նայեվ մի հայ սպահ, վորը փախուստ տվավ չնկատեցինք, վորի
մասին դակումենտ մը ներկայացնում եմ Ձեզ գրությանս հետ: Յեվ
յեթե այստեղ մնալու յեն հսկողության տակ դնենք նրանց թե վոչ,
յերկրորդ նրանց ինչ միջոցներով կերակրենք:

Քանաքեռի ռոզիսկի Միլիցապետ՝ Շավարշ

1920թ. 31)5

Քանաքեռ

Պետական կենտրոնական Արխիվ
Դաշ. Կառ. Ներքին գործերի Մինիստրություն
Գաղտնի գրություններ
Գործ No 1763, եջ 192

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 76, թ. 7; մեքենագիր

Doc.III-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՐԱԿԻ, ԵՐԵՎԱՆԻ ԵՎ
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐԻՆ

Հայաստանում հայտնված մի խումբ ռուս զինվորականների անհրաժեշտ է զինաթափել և, անհրաժեշտ քանակի սնունդ տրամադրելով, հեռացնել Հայաստանի սահմաններից
(2 հունիսի, 1920թ.)

Նո. 4952

«2» հունիսի 1920թ

Յերեվան.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Շիրակի, Յերեվանի, Կարսի նահանգապետներին

Հայաստան են յեկել մի խումբ ռուս զինվորականներ, վորոնց՝ Ն.Գ.Մ. կարգադրությամբ պետք է հեռացնել Հայաստանի սահմաններից: Այս մասին տեղեկացնելով Ձեզ խնդրում եմ գործադրեք հետեվյալ կարգադրությունը

Ա) Զինաթափ անել բոլորին

Բ) Ցուցակագրել յեվ նշանակել խիստ հսկողություն նրանց վրա

Գ) Առաջարկել նոցա ուղեվորվել Ղարաքիլիսա, վորտեղից ամենակարճ ժամանակամիջոցում նրանք պետք է թողնեն Հայաստանի սահմանները յեվ անցնեն Վրաստան եվ

Դ) Նոցա տալ հաց-, վորի համար դիմել խնամատարության Մինիստրության ներկայացուցիչներին, վորոնց արված է համապատասխան կարգադրություն խնամատ. Մինիստրութ. Կողմից:

Ընդամին ուղարկվում է Ձեզ մի որինակ խն.մին.ուղղած գրության պատճենը:

ՏԵՍՈՒՉ՝ ստորագրություն
ԳՈՐԾԱՎԱՐ՝ ստորագրություն

Պետական կենտրոնական Արխիվ
Դաշ. Կառ. Ներքին գործերի Մինիստրություն
Գաղտնի գրություններ
Գործ No 1763, Եջ 189

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 76, թ. 8; մեքենագիր

Doc.III-4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՏԵՍՈՒՉԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ
Անհրաժեշտ է որոշ քանակի հաց բաց թողնել Հայաստան ժամանող ռուս
զինվորականների համար, որոնք հետո Հայաստանից ուղարկվելու են
Վրաստան
(2 հունիսի, 1920թ.)

Ն.Գ.Մ.

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՏԵՍՈՒՉ

Նո.4953

«2» հունիսի 1920թ.

Յերեվան

ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Ստացված տեղեկությունների համաձայն Հայաստան են գալիս մի
քանի խմբակ ռուս զինվորականներ, վորոնց՝ Ն.Գ.Մ. կարգադրությամբ
առաջարկվում է ուղեվորովել Ղարաքիլիսա, այնտեղից նոցա Վրաստան
ուղարկելու պայմանով: Ներկայումս խնդրվում է անել պատշաճ
կարգադրություն Ձեր ներկայացուցիչներին նոցա համար հաց բաց
թողնել գավառական Կոմիսարների դիմումների համաձայն:

Ընդամին ուղարկվում է Ձեզ մի պատճեն այն կարգադրության, վոր
արված է նահանգապետներին:

ՏԵՍՈՒՉ՝ ստորագրություն

ԻՏ. ԳՈՐԾՎԱՐԻ՝ ստորագրություն

Պետական կենտրոնական Արխիվ
Դաշ. Կառ. Ներքին գործերի Մինիստրություն
Գաղտնի գրություններ
Գործ No 1763, էջ 190

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 76, թ. 9; մեքենագիր

Doc.III-5a

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱՎԱՆ

Հրահանգվում է Դիլիջանի գավառական կոմիսարին, բոլոր նահանգապետերին, գավառային կոմիսարներին և միլիցիապետերին, որպեսզի Հայաստան եկող ռուս կամավորական բանակի զինվորականների զենքերը պարտադիր ենթարկվեն ռեկվիզիցիայի և վճարվի դրանց արժեքը (13 հունիսի, 1920թ.)

Ն.Գ.Ն.

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Նո.

«13» հունիսի 1920թ.

Յերեվան

Շրջաբերական
Դիլիջանի գավառական Կոմիսսարին,
բոլոր նահանգապետերին,
գավ կոմիսսարներին յեվ միլիցիապետներին

Հայաստան յեկող ռուս կամավորական բանակի զինվորականների զենքերը յենթարկել ռիկվիզիցիայի, վճարելով նրանց արժեքը: Րիկվիզիցիայի յենթարկած զենքերը ցուցակագրել յեվ յուրաքանչյուր դեպքի մասին հաղորդել մեզ:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՏԵՍՈՒՉ՝ (անընթեռնելի)

ԴԻՎԱՆԱՊԵՏ՝ (անընթեռնելի)

ԳՈՐԾԱՎԱՐ Վ. Աբրահամյան

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 76, թ. 11; մեքենագիր

Doc.III-5b

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱՎԱՆ

Հրահանգվում է Շիրակի նահանգապետին, որպեսզի իր կողմից կտրուկ միջոցներ ձեռք առնվեն մարզի մոլոկանների կողմից բացահայտ հակապետական տրամադրություններ դրսևորելու կապակցությամբ (30 հունիսի, 1920թ.)

N. 6111

30 հունիսի 20թ

ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ.

Մինիստրությունս տեղեկություն ե ստացել վոր Զալալ Ողլու Նովո սակրովիչ Նիկոլայեվկայի յեվ Գյարգյարի մալականները հակապետական տրամադրություն են արտահայտում: Ըստ յերեվոյթին դրսից դրամական նպատակով ամրապնդված լինելով նոքա նույնիսկ չեն ծածկում իրենց վերաբերմունքը դեպի Հայաստանի կառավարությունը ուստի կառաջարկեմ անհապաղ յեվ կտրուկ միջոցներ ձեռք առնել արմատախիլ անելու այդ չարիքը:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՏԵՍՈՒՉ՝
ԴԻՎԱՆԱՊԵՏ՝
ԳՈՐԾԱՎԱՐ՝

Պետական կենտրոնական Արխիվ
Դաշ. Կառ. Ներքին գործերի Մինիստրություն
Գաղտնի գրություններ
Գործ No 1763, էջ 213-248

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 76, թ. 11; անթնսագիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏՐ ԹԻՖԼԻՉԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՑ ՍՏԱՑԵԼ Է ՀԵՏԵԻՏԱԼ ՀԵՌԱԳԻՐԸ.**

—

**23-ԻՆ ՅՈՒՆԻ 1920Թ. 12Ժ. 15Բ.
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ Պ. ԽԱՏԻՍԵԱՆԻՆ**

—

Պատիւ ունեմ հաղորդելու հետևեալ հեռագիրը, որ ստացուեց այսօր առաւօտ ժամի 10^{1/2} Լօրդ Կերզոնից.

Գերագոյն խորհուրդը Պարիզում վճռեց ճանաչել Հայաստանի կառավարութիւնը, որպէս կառավարութիւն de facto, այն պայմանով, որ այդ ճանաչումը ոչ մի կերպով չի նախորոշում Հայաստանի սահմանների վերջնական որոշման հարցը: Ներկայ ճանաչումը անպայմանօրէն վերաբերում է Հայաստանին իր այժմեան մէջ Երևան մայրաքաղաքով և որ ևէ կերպով չի վերաբերում Տաճկահայաստանին:

Խնդրում եմ Ձերդ գերազանցութիւնից ընդունել իմ անկեղծ և սրտագին շնորհատրանքները այս դէպքի առիթով, որ այնքան նշանակալից է բազմաչարչար հայ ժողովրդի ապագայ բարօրութեան վրայ ազդելու տէսակէտից:

Այս ուրախառիթ լուրը հեռագրուած է Ուորդրոպին, որ գանում է Բագու և հաւանաբար Թիֆլիս է հասնելու երկուշաբթի:

Ուորդրոպի փոխանորդ՝ ԳՐԱՆԴԻ

Տպարան Ներքին Գործոց Նախարարութեան

ՀԱԱ, Ծ-Պ. 201, ց. 1, գ. 53, թ. 8; փպագիր

ԵՐԵՒԱՆԻՑ

Ալեքսանդրապոլ Նահանգապետին

Տաճկաստանը ստորագրեց պայմանագիրը: Եւրոպական
պետութիւններ հանդիսաւոր նիստում յայտարարեցին անկախ և
միացեալ Հայաստանի ճանաչումը: Նախարարապետի
կարգադրութեամբ խնդրում եմ յայտարարել ժողովրդին.

Նախարարապետի Քարտուղար՝

ՍԱՐԳԻՍ ԱԻԵՏԻՍԵԱՆ:

Իսկականի հետ ճիշտ է

Գործավար՝

Տպարան Հայաստանի Հանր. երկաթ., Ալեք-պոլ

ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց. 2, գ. 595, թ. 5; փպագիր, պարճնն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՀԱՅՏՆՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՑՈՒՑԻՉ ԳՐԵՑՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՄԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿՈՄԻՍԱՐԻՆ Տեղեկություններ են զետեղված Գրեյսի և Հայաստանի վարչապետ Հ.Օհանջանյանի միջև տեղի ունեցած զրույցի վերաբերյալ, որտեղ շոշափվել են Ադրբեջանի կողմից Հայաստանին ներկայացվող տարածքային պահանջները, հայ բոլշևիկների կողմից դրսևորվող կույր ռուսապաշտությունը, և նաև բրիտանական ադրբեջանամետ դիքորոշման մասին, մասնավորապես, Ղարաբաղի հարցում (19 հուլիսի, 1920թ.)

Գաղտնի տօքումէնտներ

Ներկայ տեղեկագիրը Երևանի Անգլ. ներկայացուցիչ Գրեյսի կողմէ ուղարկուած է Անդրկովկասի Բրիտ. գլխաւոր կոմիսարին

Հրամանատար Անդրկովկասի Բրիտ. գլխաւոր կոմիսար Յարգեյի պարոն.

Պատիւ ունիմ զեկուցանելու, որ Յուլիս 19-ին Հայաստանի մինիստր նախագահ բժ. Հ. Օհանջանեանի տեսակցութեան ատեն հետևեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ:

Բոլշևիկներու դրութիւնը Հայաստանում- Բոլշևիզմը բուն Հայաստանում մեռած է, բայց կան քիչ բոլշևիկներ Հայաստանի սահմաններից դուրս, այնտեղ, ուր ժողովուրդը բոլշևիկ պրօպագանդիստների հետ շփման մէջ է և մանաւանդ այնտեղ, ուր մեր երկիրը սահմանակից է Ատրպէճանին:

Բոլշևիկները Ատրպէճանում մի քիչ զանազանում են կենտրոնական Մօսկուայի Սօվիէտից: Կարող ենք սրանց նկարագրել միայն իբրև պանտուրանական բոլշևիկներ: Դրանց նպատակը կարծէք այն է, ինչ տաճկա-գերմանական ծրագիրը. միացնել բոլոր միաիվմանական ցեղերը ու կազմել մի ուժեղ մահմետական մասսա Անդրկովկասում և Հիւս.Կովկասում: Իրենք թուրքերը յաջողութիւն չունեցան այդ ծրագրում և մենք կարծում ենք, որ միջոցներ ունենք սրանց անյաջողութիւնը ապահովելու: Այո, կան մի քանի հայ բոլշևիկներ, բայց նրանք կաշառուած են բոլշևիկների փողով: Սրան կայ և մի ուրիշ պատճառ, նրանք կոռուլիս են եղել տաճիկների ու թուրքերի դէմ ամբողջ պատերազմի ընթացքում և յետոյ մինչև այսօր: Նրանք յիշում են, որ ռուսներն են, որ իրենց ազատեցին իրենց թշնամի տաճիկներից և անկասկած Ռուսաստանի անցեալի

փայլը մեծ դեր է խաղացել մեր ժողովրդին այս բազմակի շարժման ժամանակակից դարձնելու համար:

Ո՛չ, մենք չենք կարող յոյս դնել կամ վստահել ոչ մի խօսքի կամ դաշինքի, որ բազմակիները տալիս են կամ կնքում են: Ոչ մի խօսք նրանց չի կապում, ոչ մի դաշինք սուրբ չէ: Այնպես որ մենք նրանց չենք հաւատում: Երբ նրանք ուժեղ են, այն ժամանակ նրանց խօսքերն ու դաշինքներն ալ նշանակութիւն չունին:

Ահա ձեզ օրինակ Ղազախը, որտեղ բազմակիներն ընդունել էին մեր անկախութեան իրավունքները: Երբ նրանք տեսան, որ մենք նրանց հաւատալով դուրս էինք տանում մեր զօրքերը, նրանք արագութեամբ յարձակում գործեցին և գրաւեցին Իջևանը, որտեղից մենք պարտաւոր էինք նրանց դուրս քշել:

Բայց այս վերջին օրերս մենք երկու ուլտիմատում ենք ստացել նրանցից, որով պահանջում են, որ մենք թողենք որոշ գիւղեր, հակառակ դեպքում պատերազմ են սկսելու: Այն ինչ այդ գիւղերը միշտ եղել էին մեր ձեռքերում մինչև անգամ երբ Ատրպէճանում իշխում էր Մուսավաթ կառավարութիւնը: Մենք հնարատրութիւն չունենք համաձայնելու այդ պահանջի հետ ու մենք ի հարկէ կը պաշտպանենք մեր երկիրը մեր տրամադրութեան տակ եղած բոլոր ուժերով: Նրանց ծրագիրը մեզ քաջ յայտնի է, նրանք կամենում են վերցնել Իջևանը, Տիլիժանը, Ղարաքիլիսէն, Ալէքսանդրապօլը, Ղարսը և միանալ Մուստաֆա Քեմալի հետ: Եթէ մեծ ուժ ունենային, դա կարելի կը լինէր իրագործել ու երկաթուղագիծը կը հեշտացնէր նրանց առաջխաղացումը: Բայց մենք մտադիր ենք պաշտպանել մեր սուրբ երկիրը: Երկրորդ ճանապարհը՝ դէպի Մուսթաֆա Քեմալը, Ղարաբաղի և Ջանգեզուրի միջովն է: Ամբողջ Ղարաբաղը հիմա բազմակիների ձեռքումն է: Սկզբում նրանք մեզնից ուզեցին Ակերա գետի գիծը, յետոյ նրանք առաջ եկան ու գրաւեցին Գորիսը և որովհետև մենք կանոնաւոր ճանապարհ չունէինք հասնելու զօրք, զէնք և ռազմամթերք, նրանք յաջողութիւն ունեցան: Մեր ժողովուրդը դիմադրեց թուրքերին: Բայց երբ ռուս բազմակիները եկան, նրանք նորից հրապարեցին Ռուսաստանի անցեալ փառքով, չհասկանալով թէ նրանք ինչ նպատակով գալիս էին այս անգամ:

Այս անյաջողութիւնը, իմ կարծիքով, բրիտանական սխալ քաղաքականութեան հետևանքն է, որոնք միշտ պաշտպանել են Ատրպէճանի ազահութիւնը Ղարաբաղի վերաբերեալ, հակառակ մեր շահերին և Ղարաբաղի գերակշիռ մեծամասնութեան ցանկութիւններին: Եւ մեր շահերը պահանջում են ու պահանջում էին և դա այնպես կը լինէր յօգուտ բրիտանական շահերին, որ մեզ տրուէր այնինչ, որ ամէն տեսակիցէ ֆիզիքական և աշխարհագրական, նախապէս պատկանում էր մեզ:

Ներկայումս մեր զորքը գնում է Նախիջևանի վրայ ու մենք արդեն գրաւել ենք Շահթախթի քաղաքը: Երբ մենք վերցնենք Նախիջևանի քաղաքը, այն ժամանակ մենք կունենանք ազատ ճանապարհ Գորիսի վրայ գնալու բօլշևիկներին յետ մղելու և Ղարաբաղը գրաւելու: Մեր բոլոր գործողութիւնները այս ճանապարհի վրայ նպաստաւոր են մեզ համար և մենք մտադիր են այդպիսով կտրել պան-տուրանական բօլշևիկների ու Մուստաֆա Քեմալի կապը: Նախիջևանի խանը և Մեխետի Բետիրովը ներկայումս այստեղ են այդ գործի վերաբերմամբ վերջնական համաձայնության գալու համար: Մեր առաջխաղացման հետ երկաթուղային աշխատանքները նորոգում են այն 15 քիլօմէթր գիծը, որ թուրքերը փճացրել են, ասիկա կը վերաշինուի 3-4 օրում: Գործը յառաջանում է դանդաղ շնորհիւ այն հանգամանքի, որ Սարիղամիշից հիմնաւիայտեր չեն տեղափոխուում:

Գիւղերը, չնայած դաշտային աշխատանքների բուռն շրջանին, տալիս են տասնակական հոգի ամէն գիւղից այդ գիծը շինելու համար:

Կապիտան Գրեյսի

Այս տեղեկագրի հետ կան նաև զօրքի, ռազմամթերքի, ֆինանսներու մասին Օհանջանեանի խօսքերը, որոնք բոլորը Գրեյսին անգլ. կօմիսարի միջոցով կը հաղորդէ անգլ. կառավարութեան:

Շահան

Շահանի այս գրութեան հետ կայ նաև Հ.Հ. Թիֆլիսի դիւանագիտական ներկայացուցիչ Բեզգատեանի գաղտնի գրութիւնը ուղղուած արտաքին գործերի նախարարին: Վաղը կուղարկենք նաև գրութեանց պատճենները:

Ընկերական ջերմ բարևներով քարտուղար Հ.Յ. Տ...

ՀԱՍ, ֆ. 200, ց. 2, գ. 89, թթ. 1-4, պարճեն, ձեռագիր

Doc.III-9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐ-ՆԱԽԱԳԱՀԻ
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳԵՆԵՐԱԼ ՈՒՌՔԵՐԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ
ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական կողմից բարձրացվել են հացի, գաղթականության և երկաթգծի խնդիրները և ստացվել են հավաստիացումներ՝ այդ ուղղությամբ հետագայում անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ (հունիս-հուլիս, 1920թ.)

ՄԻՆԻՍՏՐ-ՆԱԽԱԳԱՀ

Մեզ այցելեց Բրիտանական զորքերի գլխավոր հրամանատարը Անդրկովկասում՝ Գեներալ Ուոքերը: Յերկար տեսակցություն ունեցանք հետը: Տեսակցության ներկա յեր անգլիական գեներալ Ասսերը յեվ յերկու անգլիական սպա, իսկ կառավարության կողմից՝ մինիստրներ Տիգրանյան, Ախվերդյան, Մելիք-Ղարաբյոզյան յեվ յես: Խոսակցությունը թարգմանի միջոցով եր: Յես պատմեցի Գեն. Ուոկերին մեր յերկրի ծանր կացության յեվ մեր անհրաժեշտ, անհետաձգելի կարիքների մասին: Ծանրացա մասնավորապես յերեք կետի վրա. Հաց, գաղթականության յեվ յերկաթուղային հաղորդակցության: Ասացի, վոր այդ խնդիրները, վոր կյանքի յեվ մահվան հարց են մեր յերկրի համար, մենք չենք կարող լուծել մեր սեփական ուժերով, վոր մեզ պետք ե ոգնեն համաձայնության պետությունների ներկայացուցիչները, մասնավորապես Բրիտանական հրամանատարությունը Անդրկովկասում: Ասացի թե ինչ մեծ անհամբերությամբ սպասում եր ժողովուրդը դաշնակիցների գալուն յեվ ինչ մեծ հույսեր եր դրել: Ապա պարտք համարեցի չթագցնել, վոր վերջի ժամանակները ժողովրդական մասսաների մեջ առաջ ե յեկել տարակուսանք, մի տեսակ կասկածոտ վերաբերմունք, հիասթափմունքի զգացում, դեպի դաշնակիցների գործելակերպը: Պատճառն այն ե, վոր մեր սպասած ոգնությունը դանդաղում ե յեվ չի կատարում կարիքին համեմատ չափով:

Գեներալ Ուոկերը պատասխանեց, վոր այդ կասկածները միանգամայն անհիմն են, վոր դաշնակից պետությունները յեվ մասնավորապես Բրիտանական հրամանատարությունը տեղյակ ե մեր ծանր կացության մասին յեվ ձեռք ե առել բոլոր հնարին միջոցները մեզ ոգնության գալու համար: Յեթե ոգնությունը մինչեվ հիմա հարկավոր չափերով չի կատարվել, դրա պատճառը այն չե, վոր դաշնակիցները անուշադիր են դեպի մեր կարիքները, այլ այն վոր յեղել ե յեվ այսոր ել կան դժվարություններ ու արգելքներ, վոր ան յեվս անկարելի յե յեղել վերացնել:

Գեներալ Ուոկերի խոսքերը միանգամայն համոզեցուցիչ էին: Թե յես յեվ թե խոսակցության ներկա յեղող մյուս մինիստրները մի ավելորդ անգամ յեվս համոզվեցինք, վոր դաշնակիցների վերաբերմունքը դեպի Հայաստան ինչպես անցյալում յեղել ե բարեացակամ, այսոր ել մնում ե նույնը որինակ դաշնակիցները չեն խնայում վոչ աշխատանք, վոչ նյութական միջոցներ մեզ ոգնության գալու համար, յեվ վոր ամենամոտ ապագայում մենք կտեսնենք նրանց ջանքերի կենդանի հետեվանքները:

Պարտք եմ համարում անել այս հայտարարությունը Պարլամենտի ամբիոնից: Հույս ունեմ, վոր այս իմ խոսքերից հետո կփարատվեն այն սին կասկածները, վոր բուն են դրել վոմանց սրտերում: Մենք շատ անյերախտագետ կլինենյինք, յեթե մեզ ցույց տրված բարեացկամությանը պատասխանեյինք անհիմն կասկածներով: Գիտեմ, վոր հայ ժողովուրդը աներախտագետ չէ յեվ վոր յեղած տարակուսանքները հետեվանք են մի այն անգիտակցության յեվ դրությանը անտեղյակ լինելուն:

Ի վերջո պետք է ավելացնում, վոր Գեներալ Ուոկերը նշանակել ե իբր իր ներկայացուցիչ Յերեվանում մի բարձրաստիճան սպա՝ Գեներալ Ասսերը: Սա մի նոր ապացույց ե Բրիտանական բանակի ուշադիր յեվ բարեացակամ վերաբերմունքի դեպի մեզ:

Պետ. Կենտ. Արխիվ

Դաշնակցութ. Կառավորութ. Նախարարների խորհուրդ

Գործ No. 12 եջ 66

ՀԱԱ, ֆ-Պ. 200, ց. 2, գ. 72, թ. 17-18; մեքենագիր

Doc.III-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Հայաստանի նավահանգիստների օգտագործման սկզբունքների և
պայմանների վերաբերյալ
(16 սեպտեմբերի, 1920թ.)

Հայկական Հանրապետության Կառավարութիւնը ներկայացած
յանձին

Այսու մտնում է հետեւեալ Համաձայնութեան նորին Բրիտանական
Վեհափառութեան Կառավարութեան հետ ներկայացած յանձին

1.Յօդած

Հայկական հանրապետութեան կառավարութիւնը Հայաստանի նա-
ահանգիստները ճանաչում է իբրև միջազգային բնոյթ կրող նաահան-
գիստներ, մի ճանաչում որով բնաւ չպիտի վտանգւի նրանց տերիտորիալ
գերիշխանութեան իրաւունքը եւ մի ճանաչում որը համաձայնում է յիշեալ
նաահանգիստներում ազատ զօնաների հաստատման:

2.Յօդած

Ինչորոյ առարկայ եղող նաահանգիստներից օգտւելու կատարեալ ա-
զատութիւնն են վայելում ազգերի Դաշնակցութեան Լիգայի անդամ եղող
բոլոր Պետութիւնների ազգայինները, ապրանքները եւ դրօշակները:

Այս եւ բոլոր այլ հանգամանքներում նարնց հետ պիտի վարուել կա-
տարեալ հասարակութեան հիմունքով, եւ ի մասնաւորի այն դէպքերում
ինչ վերաբերում է նաահանգիստի եւ քարափի բոլոր դիրութիւններին եւ
հարկերին, բովանդակելով նաւերի խարսխելուն. բեռցնելու եւ պարա-
պելու դիրութիւնները տարողութեան Տոննաժի հարկերը եւ վարձը:

Քարափի եւ նաւերը նաահանգիստից առաջնորդելու վարձը փարո-
սի, կարանտինայի եւ բոլոր նմանօրինակ ամեն տեսակի վարձեր եւ հար-
կեր, որոնք կը տրւին կառավարութեան հասարակական հիմնարկու-
թիւնների. մասնաւորի անհատների կամ ամեն տեսակի միութիւնների եւ
հաստատութիւնների անունով եւ նրանց օգտին. այս բոլոր դէպքերում ոչ
մի զանազանութիւն չպիտի լինի Հայկական Հանրապետութեան և միւս
Պետութիւնների, ազգայինների, ապրանքների եւ դրօշակների միջև: Ան-
հատների եւ նաւերի շարժման առաջ ոչ մի արգելք չպիտի լինի, բացի այն
արգելքներից, որոնք առաջ կգան մաքսերի, ոստիկանական, առողջա-
պահական, արտագաղթի եւ ներգաղթի եւ դարձեալ արգելած ապրանք-
ների ներմուծման արտահանման վերաբերող կանոններից. Կանոններ
որոնք պիտի լինեն արդարացի եւ մի օրինակ եւ զուր տեղը անկարելու
ծելով չը պէտք է խափանեն առեւտրական գործողութիւնները:

3.Յօդած

Նաահանգիստներից եւ նրանց շրջակայքից օգտւելու եւ կամ նաահան-
գիստներում տրած դիրութիւնների բոլոր հարկերը եւ վարձերը պիտի

սահմանի նախորդ յօդաձևում յիշած հաասարության սկզբունքներով եւ դրանք պէտք է լինեն արդարացի չափաւոր թէ իրենց քանակով եւ թէ զանձունի եղանակով. Ի նկատի առնելով նաահանգիստի եւ շրջակայքի պահանջած ծախսերը նաազանացութեան շահերը: Միա բոլոր հարկերը եւ տուրքերը արգելում են բացի յօդաձևեր 4, 8 եւ 9 ով սահմանաձևերից:

4.Յօդաձ

Օրէնքով սահմանած բոլոր մաքսերը եւ տեղական գլխահարկերը փաժ /.../ կամ սպառումի տուրքերը, որոնք կը տրուին Միջազգային ռէժիմի ենթակայ մի նաահանգիստի միջով ներմուծող կամ արտահանող ապրանքների վրայ պիտի լինին նոյնը. Հոգ չէ փոխադրութեան յատկացած կամ յատկացելիք նաւը Հայկական Հանրապետութեան դրօշակն է կրում թէ որ եւ է մի ուրիշ դրօշակ: Տնտեսական կարիքներից առաջացած մի բացառութիւնը արդարացնող մասնաւոր հանգամանքների բացակայութեան դէպքում հարկը պիտի որոշվի միեւնոյն հիմունքով եւ միեւնոյն տարիքներով ինչ որ գոյութիւն ունի նման հարկերի համար Հայկական Հանրապետութեան այլ մաքսային սահմաններում:

Հայկական Հանրապետութեան այլ ցամաքի եւ ջրի ճամփաների վրայ եւ նրանց նաահանգիստներում ապրանքների ներմուծման և արտահանման համար գրված բոլոր դիւրութիւնները պէտք է շնորհվեն նաեւ այն նաահանգիստներին որոնք ենթակայ են միջազգային ռէժիմին:

5.Յօդաձ

Նաահանգիստների պահպանութեան եւ բարտքման համար հարկաւոր եղած աշխատանքների գործադրման համար երբ բացակայում է որ եւէ մասնաւոր կարգադրութիւն այն ժամանակ Հայկական հանրապետութեան պարտականութիւնը պիտի լինի յարմար միջոցներ ձեռք առնել նաազանացութեան որեւէ արգելք կամ վտանգ վերցնելու եւ նաահանգիստներում նաւերի շարժման Դիւրութիւններ ապահովելու:

6.Յօդաձ

Հայկական Հանրապետութիւնը համաձայնում է, որ նա չը պիտի ձեռնարկէ որեւէ աշխատանքների որոնք կարող են վտանգել նաահանգիստներից եւ նրանց շրջակայքից օգտուելու դիւրութիւնները:

7.Յօդաձ

Մի ազատ զօնայում պահեստներ կառուցանելու եւ նրանցից օգտուելու կամ ապրանքներ դարսելու եւ դուրս տալու համար շնորհած դիւրութիւնները պէտք է համաձայն լինեն ժամանակի առեւտրական պահանջների:

Ազատ Ձօնայում սպառուելու համար թոյլատրած բոլոր ապրանքները ազատ պիտի լինին մաքսերից, Աքցիզներից եւ այլ բոլոր տուրքերից ինչ ձեւի եւ նկարագրի կը լինին. Բացի վիճակագրական տուրքերից, որը սահմանել է 8-րդ յօդաձում:

Հայկական Հանրապետութեան որոշումից եւ կամքից է կախած ազատ Ձօնայի սահմանում թոյլ տալ կամ արգելել արդիւնաբերութիւնը:

Այս յօդաձի նախատեսած կետերում որեւէ ջոկողութիւն չպիտի լինի թէ տարբեր ազգութիւնների պատկանող անհատների միջեւ եւ թէ տարբեր տեղերից եկած եւ տարբեր տեղեր գնացող ապրանքների միջեւ:

8.Յօդաձ

Ազատ Զօնայում ստացուող եւ այնտեղից դուրս եկող ապրանքների վրայ որ օտար երկրից էլ գալու լինին եւ դէպի որ օտար երկիր էլ գնալու լինին, 2 յօդաձում սահմանաձներից դուրս որեւէ այլ հարկեր կամ տուրքեր չպիտի դրին. Բացի մի վիճակագրական տուրքից, որը չպէտք է գերազանցի մի հազարերորդական մասը

Այս վիճակագրական տուրքի հասոյթը միմիայն պիտի յատկացվի ազատ Զօնայի առետրին պատկանող վիճակագրութիւնների հետ կապ ունեցող ծառայութեան պահպանման:

9.Յօդաձ

Հաջորդ յօդաձի նախատեսութեան ենթակայ ազատ Զօնայում ստացուող եւ այնտեղից դուրս եկող ապրանքների 4 յօդաձում սահմանաձ հարկերը նոյն յօդաձում յիշաձ պայմաններում պիտի տրուեն գանձուեն այդ ապրանքների Հայկական Հանրապետութեան տերիտորիան մտնելու եւ այնտեղից դուրս գալու ժամանակ փոխադարձաբար:

10.Յօդաձ

Ազատ Զօնայից դուրս եկող եւ կամ այնտեղ մտնող այն անձերը, ապրանքները, պօստային ծառայութիւնները, շոգենաւերը, բեռնանաւերը, կառքերը, վագոնները եւ ուրիշ փոխադրութեան միջոցները եթէ նրանք գալիս եւ գնում են ուրիշ որեւէ մի պետութեան տերիտորիայից եւ անցնում են Հայկական Հանրապետութեան տերիտորիայի միջով, նրանք այս տերիտորիայում պիտի համարին տրանզիտի վիճակում:

11.Յօդաձ

Բաթումի նաահանգիստի միջոցով դէպի սեւ ծովը ազատ ելք է տրում Վրաստանին, Ադրբեյջանին, Պարսկաստանին եւ Հայաստանին, միեւնոյն ատէն ազատ տրանզիտով Հայկական երկաթուղիների վրայով:

Ազատ տրանզիտ ասելով պիտի հասկացվի յաջորդ յօդաձում սահմանվաձ պօստային, հեռագրային եւ հեռախօսային ծառայութիւնների ազատութիւնը:

12.Յօդաձ

Տրանզիտի ազատութիւնը պիտի տարաձվի ազգերի Լիգայի պատկանող Պետութիւնների տերիտորիաներից եկող եւ այնտեղ գնացող անձերի, ապրանքների նաւերի, կառքերի, վագոնների եւ պօստային ծրարների վրայ. Հոգ չէ թէ այդ Պետքութիւնների տերիտորիաները իրաի յարակից են թէ ոչ, այս նպատակով տերիտորիալ ջրերից անցնելը թույլատրում է: Այսպիսի անձեր, ապրանքներ, նաւեր, կառքեր, վագոններ եւ պօստային ծրարներ ենթակայ չպիտի լինին որեւէ տրանզիտի հարկերի կամ անտեղի ուշացումների եւ կամ արգելքների եւ նրանք Հայաստանում պիտի վայելէն ազգային վերաբերմունք, վարձերի, դիտութիւնների եւ բոլոր այլ հարցերում:

Տրանզիտի ապրանքները ազատ պիտի լինին բոլոր մաքսերից կամ ուրիշ նման հարկերից:

Տրանզիտի ապրանքների փոխադրման համար նշանակաձև բոլոր վարձերը պիտի լինին արդարացի /չափաւոր/, նկատի առնելով առեւտրական պայմանները: Ոչ մի վարձ, դիւրութիւն կամ արգելք կախում չպիտի ունենայ ուղղակի կամ անուղղակի կերպով փոխադրութեան տիրոջից կամ փոխադրութեան միջոցից ազգութիւններից, որոնց միջոցով ճանրորդութեան որեւէ մի մասը կատարել է կամ կատարելու է:

13.Յօդաձև

Հայկական Հանրապետութեան կառավարութիւնը համաձայնում է յատկացնել որեւէ ընդհանուր երկաթուղիների դաշնին /.../, որը կարող է կապել ազգերի լիգան: Նա դարձեալ ապահովում է վերաբերմունքի բացարձակ հասաստութիւն բոլորին, որոնք կը օգտուին Հայկական երկաթուղիներից, անկախ ճամբորդների ազգութիւններից կամ ապրանքների որտեղից կամ ում սեփականութիւնը լինելուց:

14.Յօդաձև

Աղըրբէյջանին ի նպաստ պայմանաւորելիք որեւէ իրաւունքներ կախում պիտի ունենան այսօրինակ համաձայնութիւններից, որ պիտի կապուեն Աղըրբէյջանի երկաթուղիներին եւ Բագի համար:

15.Յօդաձև

Բացի կարեւոր հարցերից ազգերի Լիգային դիմումներ անելուց ազատելու համար մի յանձնախումբ պիտի հովանաւորէ միջազգային ռեժիմի գործադրութիւնը ինչ որ վերաբերում է Հայաստանի եւ Վրաստանի նաւահանգիստներին եւ Հայաստանում եւ Վրաստանում տրանզիտի ազատութեան: Այս յանձնախումբը պիտի բաղկանայ երկու Հայաստանի ներկայացուցիչներից, մէկ Վրաստանի, մէկ Պարսկաստանի եւ մէկ Աղըրբէյջանի ներկայացուցիչներից, եւ Ազգերի Լիգայի կողմից նշանակաձև մէկ նախագահից: Այն պայմանով, որ Վրացական նաւահանգիստների եւ երկաթուղիների վերաբերեալ հարցերում Վրաստանը պիտի ունենայ երկու ներկայացուցիչ, իսկ Հայաստանը մէկ: Վերոյիշեալ Միջազգային ռեժիմի վերաբերեալ բոլոր վիճելի հարցերը, որոնք չեն կարող լուծել համաձայնութեամբ առաջին առիթով պիտի ենթարկուեն վերոյիշեալ յանձնախումբերի քննութեան, որի որոշումը պիտի կայանան երկու երրորդի մեծամասնութեամբ, որի հաստատելու դէպքում նախագահի կարծիքը պիտի գերիշխէ:

Այս դէպքում երբ որեւէ մի շահագրգռող պետութիւն ... դիմել յանձնախումբի որոշումների դէմ, այսպիսի մի դիմում պիտի բերուի Ազգերի Լիգայի առջեւ, որի որոշման սպասելով յանձնախումբի որոշումը պիտի գործադրուի:

Իսկականի հետ ճիշտ է
Գործավար ստորագրութիւն

ՀԱՍ, Ֆ-Պ. 201, գ. 1, գ. 23, թ. 60-62; մեքենագիր

Doc.III-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Հունաստանի արքայական ներկայացուցչի հետ կայացած զրույցի ժամանակ
վերջինս հայտնել է, որ Հունաստանը պատրաստ է Հայաստանին
ուսումնական օգնություն ցուցաբերել Թուրքիայի դեմ պայքարում
(21 սեպտեմբերի, 1920թ.)

21/IX-20թ

Գաղտնի

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ Պ. ՄԻՆԻՍՏՐԻՆ.

Յերեկ Միսսիան այցելեց Հունաստանի արքայական ներկայացուցիչ պ.
Սկեֆերիսը: Խոսակցության ժամանակ նա բավական պարզ կերպով
ակնարկեց վոր յերթ մեր կառավարությունը խնդրի Հունաստանի
հովանավորությունը յեվ ոգնությունը, այդ ոգնությունը կըդրվի ամենայն
սիրով յեվ հույները կը տրամադրեն անհրաժեշտ չափով զորքեր Սիվաս-
երզրում ճանապարհը կտրելու համար, վորով տաճիկները ստիպված կը
լինեն դատարկել մեզ տրվող վիլայեթները, վորպեսզի ծուղակի մեջ
չընկնեն: Պ. Սկեֆերիսի սելով, դեռ յերկու ամիս առաջ խոսք չէր կարող
լինել այդպիսի ոգնության մասին, վորովհետեվ Թրակիայի-գրավումը,
Ջաֆեր-Թայասի կարծած համաձայնությունը բուլղարների հետ յեվ
Քեմալի յենթադրած զորությունը հարկադրել էին Հունաստանին մեծ
ուժեր կենտրոնացնել թե Սմիրնայի յեվ թե Թրակիայի ճակատների վրա:
Սակայն ներկայումս, յերբ ամբողջ Թրակյան խաղաղված է յեվ ազգա-
բնակչությունը գոհ է հունական գրավումից, իսկ Քեմալն անգոր է խոշոր
հարված հասցնելուց, Հունաստանը, վորը իր վրա է առել տաճկական
պայմանագրի իրագործումը Տաճկաստանի անհնազանդության դեպ-
քում ինքը շահագրգրված է վոր թուրքերի դիմադրությանը վերջ տրվի
ամենակարճ ժամանակում յեվ պայմանագրի բոլոր կետերը կատարեն
առանց հապաղման:

Պ. Սկեֆերիսը կարծում է վոր մեր դաշնակից ուրիշ պետությունները չեն
առարկի հունական ոգնության դեմ, վորովհետեվ նախ նրանք յեվս շա-
հագրգրված են վոր պայմանագիրը կատարվի յեվ ապա հունական
ոժանդակությունը ուժ կտա Անդրկովկասում հակաբոլշեվիկյան տարրե-
րին: Հունաստանն իր վրա վերցնելով Հայաստանին ոգնելու պարտա-
վորվածությունը, կարող է զորքեր տրամադրել նաեվ մեծամասնական-
ների դեմ կռվելու համար. Մի բան վորից նույնպես պիտի գոհ լինեն
Անտանտայի պետությունները:

Ձեկուցելով Ձեզ դորա մասին, Միսսիան պատիվ ունի խնդրելու առաջարկել հիշած հարցը Մինիստրների խորհրդի ուշադրությունը յեվ հետեվանքի մասին տեղեկացնել:

ԴԻՎԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝

Գ.Հ. Սկեֆերիսի կարծիքով մեր դիմումը Հունաստանին մեզ ոգնություն հասցնելու յեվ ըստ յերեվույթին նաեվ հովանավորելու նպատակով:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏ. ԳՈՐԾ. ՄԻՆ. ԳՈՐԾ Նօ
766 Ֆ»66 ԵՁ 111-112

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 72, թ. 12; մեքենագիր

Doc.III-12

ԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ Սենատում դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները բողոք են ներկայացրել ընդդեմ Սենատի կողմից ընդունած այն որոշման, ըստ որի մերժվում էր ԱՄՆ կողմից Հայաստանի հանդեպ մանդատ վերցնելու հարցը (1920թ.)

Копия.

Америка и Армения.

Сенаторы демократы американского сената обратились в сенат с петицией, в которой порицают резолюцию сената, отклоняющую мандат Америки над Арменией. В петиции, между прочим, заявляется, что резолюция вносит дух партийной политики в вопрос, имеющий важное значение для мира и цивилизации.

Неприязнь к мандату над Арменией- говорится в петиции- главным образом основана на недоразумениях, порождаемых докладом ген. о Харборда, который исследовал вопрос с точки зрения военного командования. Он имел ввиду установить мандат над Закавказьем и всей Оттоманской империей /за исключением Сирии, Палестины, Мессопотамии, Геджаса и Фракии/ По его расчетам мандат должен был занять территорию в 343.000 кв. миль, а между тем Армения, над которой следует принять мандат занимает 56.000 кв. миль.

Подлежащая мандату Армения состоит из следующих областей.

С подлинным верно: /подпись/

Զեռագիր ավելացրած.

7/IX. 35 г

№7

Эривань

печать

Инв. № 321

Центр. Арх.

РСФСР

ՀԱՍ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 7, թ. 1; մերենագիր

Doc.III-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ
ՕՇԱՆՋԱՆՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐ ՉԻՉԵՐԻՆԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ՇԱՆԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍՅԱՆ
ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՕՐՋՈՆԻԿԻԶԵՆ

Ղարաբաղի տարածք նուսական կարմիր զորքեր մտցնելու՝ խորհրդային
կողմի մտադրության և այդ տարածքի բնակչության՝ Հայաստանի
կազմում լինելու 8 անգամ իրականացված կամարտահայտության մասին
(31 մայիսի, 1920թ.)

Копия

МОСКВА

Комиссару по Иностранным Дела́м ЧИЧЕРИНУ копия Москва Председа-
телю делегации Республики Армении ЛЕВОНЫ ШАНТУ копия Баку
председателю Военного Совета Кавказского Фронта ОРДЖОНИКИДЗЕ.

Председателем Военного Совета Кавказского Фронта ОРДЖОНИ-
КИДЗЕ через уполномоченных Тергабриеляна Кайдалова и Пернани
заявлено армянскому населению нагорного Карабаха о намерении Совета
вести русския красныя войска в пределы нагорного Карабаха запятая
которая до реки Акеры должен по их словам принадлежать Советскому
Азербайджану точка Армянский нагорный Карабах до конца мировой
войны сохранивший свою неприкосновенность от наступавших на него со
всех сторон турко курдо татарских полчищ... запятая на восьми очеред-
ных съездах своих крестьянских депутатов каждый раз особо выносил
категорическое постановление о своем решении войти в состав родной
ему республики Армении точка В двадцатых числах апреля настоящего
года девятый съезд крестьянских депутатов Карабаха внов подтвердил
постоновление предыдущих съездов о своем непоколебимом решении
соединиться с республикой Армении точка Тот съезд категорический
отверг возможность признания им власти Азербайджана даже после
происшедшего в нем политического переворота и установления в нем
советской власти точка Несмотря на изложенное Правительство Армении
не желая подвергать Карабахское крестьянство новым бедствием войны
неоднократно предлагало Правительству Азербайджана занятая
пытавшемуся силой оружия навязать крестьянству Карабаха ненавистную
ему власть Азербайджана запятая разрешить вопрос путем мирного
между обеими республиками соглашения точка В настоящее время когда
делегация моего Правительство выехала в Москву для установления
дружественных взаимоотношений между двумя республиками Россией и

Арменией запятая требование комиссара ОРДЖОНИКИДЗЕ крестьянству Карабаха считать себя частью Азербайджана вопреки ясно выраженной воли этого крестьянства представляется совершенно непонятным точка Правительству моему также неизвестно от имени какого правительства-Советской России или Советского Азербайджана говорит комиссар ОРДЖОНИКИДЗЕ точка Правительство мое уже сообщало вам о своей готовности передать вопрос о дальнейшей судьбе Карабаха в руки самого населения и путем производства среди последнего уже в десятый раз плебесцита установить его истинные желания и намерения и решение присоединиться к тому или иному государственному образованию точка Настоящим внов подтверждаем указанную готовность Вас с нашей делегацией в Москве точка В интересах предоставления свободы волеизъявления населения Карабаха и в Целях избавления крестьянства последнего от неизбежного кровопролития в случае насильственного продвижения Советских войск вглуб их родины запятая от имени моего Правительства прошу не отказать предварительно срочно распорядиться о приостановлении дальнейшего движения на Армянский Карабах указанных войск а также об отводе их из района Гасан Риза. Дованширского у'езда как расположенного в пределах территории Республики Армении точка Эривань 31 мая 1920 года

МИНИСТР ИНОСТРАННЫХ ДЕЛ АРМЕНИИ: ОГАНДЖАНЫН
/подпись/

Верно: ДЕЛОПРОИЗВОДИТЕЛЬ /подпись/

ОСНОВАНИЕ: АСР ЦАУ ССРАрм. Ф.66, дело 808, лист 99.

Копия с копией верно. ЗАМ УПРАВ. ЦАУ ССРА /подпись/ /А.

ГЮРДЖЯН/

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.5, գ.365, թ.1-2; և՛րքիւնսգիր

Doc.III-14
ՌԱԴԻՈԳԻՐ

Միկոյանի, Կոստանոյանի և Ավիսի կողմից Հայաստանի կառավարությանը ներկայացված վերջնագիր առ այն, որ իբր Հայաստանում հարյուրներով կոմունիստներ են գնդակահարվում, և չդադարեցնելու դեպքում իրենք, իրենց թիկունքում ունենալով Խորհրդային Ռուսաստանն ու Ադրբեջանը, ամեն մի գնդակահարությանը կպատասխանեն տասը գնդակահարություններով (1 հունիսի, 1920թ.)

Ձեռագիր մակագրություն, թվագրված/ VI 920

Тифлисъ изъ Баку

По просьбѣ Тифлиса Баку повторилъ вторую половину что и перехвачено.

Ваше Правительство опираясь на силу маузеристовъ во главѣ Себу и совмѣстно съ Деникиисками офицерами предол ають поголовные аресты избіеніе, грабежи революціонныхъ рабочихъ и крестьянскихъ главарей возмущаетъ революціонную совѣтъсь Азербейджанскаго Правительства и красной арміи советской россіи крестьяне Арменіу изъ Казаха убѣгають отъ Вашихъ Башибозуковъ находя братскій пріютъ у советскаго Азербейджана. Пропускъ повторяеть дальше. Доказывастъ то, что рабочіе и крестьяне арменіи солидарни съ рабочими и крестьянами совѣтскаго Азербейджана въ ихъ борьбѣ противъ Дашнаковъ и муссаватистовъ всюду по всему совѣтскому Азербейджану мы съ пометью красной арміи советской россіи беспощадно подавляем контръ-революцію муссаватистовъ, а ваше Правительство Арменіи подавляетъ коммунистическую революцію рабочихъ. Намъ извѣстно, что Вашимъ Правительствомъ Карсскомъ районѣ разстрѣляно 300 человекъ въ самомъ Карсѣ арестованные члены Рев.Кома. Контръ-революціоннымъ трибуналомъ во главѣ съ Хорени и Агбалиномъ нещадно разстрѣляны. Вами разстрѣлянь члень военревкома тов. Мелкумянъ и члень Карскаго ревкома Гугасянъ члень Ново-Баязетскаго ревкома Тов. Сарухановъ и много другихъ всю коммунистическую организацию вы загнали въ тюрьмы, чтобы потомъ разстрѣливать по одиночкѣ представитель комитета съ представителемъ ревоенкома Арменіи въ Баку возмущенные палачской расправой надъ нашими Товарищами въ Арменіи обратились къ советскому правительству Азербейджана на каждый Вашъ разстрѣль мы отвѣтимъ десятью реазстрѣлами Вашихъ товарищей мы также обратились въ Москву куда Вы будучи настолько нахальными отправились съ коммунистами въ Арменіи мы увѣрены, что совѣтроссія приметъ всѣ мѣры, чтобы поставить предѣль Вашей кровавой расправѣ и предложить немедленно прекратить разстрѣливаніе нашихъ товарищей освободить всѣхъ задержанныхъ. Объ этомъ сообщить намъ черезъ нашего товарища Сергѣя Арк. ВАРТАНОВА если въ двухнедѣльный срокъ отвѣта не

послѣдуетъ то это нами будетъ учтено, какъ желаніе продолжать ту же политику ц.к. Азеркомпар преду... (Ми)коянь представ. К.Па Костандянь и представ. ревоенкома Арменіи Авис.

Перехвачена отъ “Бакинской” Радиостанціи.-
(Ձեռագիր անընթեռնելի լրացում)

ՀԱՍ, Ֆ-Պ. 201, ց. 1, գ. 53, թ. 31; անընթեռնելի

Doc.III-15

ՕՐՁՈՆԻԿԻՋԵԿԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԼԵՆԻՆԻՆ ԵՎ ՍՏԱԼԻՆԻՆ
Հայաստանում մայիսյան ապստամբության ձախողումից հետո
բոլշևիկների՝ իբր հարյուրներով իրականացվող գնդակահարությունների,
հազարներով ձերբակալվածների մասին, և որպես դրան համարժեք
հակաքայլ՝ Մոսկվա բանակցությունների մեկնած Հայաստանի պետական
պատվիրակությանը ձերբակալելու նպատակահարմարության մասին
(7 հունիսի, 1920թ.)

8/VI

т.Склянскому копия послана т.Троцкому
Вам для сведения.

Копия No. 4184
Дело 2
Москва-Кремль Ленину.

Из 14 Теконта

171 303 5/6 21 10

Принята 7.У1 13/35

Телеграмма

Москва т.ЛЕНИНУ СТАЛИНУ.

Начиная с 1-го мая прошедшего исключительно под лозунгами коммунистических организаций Р.К.П. в Армении перед Рабоче-Крестьянскими массами стал вопрос о власти знамя восстания первый поднял Александрополь где и был выделен военно революционный Комитет Армении. 3-го мая власть в Александрополе и его районах находилась фактически в руках местных коммунистов 10 мая приказом военревкома Армении была объявлена Советская власть, Дашнаков низвергнутой одновременно с объявлением Армении Советской восстают Карс и Саракамыш объявляя также Советскую власть правительство Армении разгромив в Эривани нашу организацию арестом всех товарищей предвинуло верные силы свои из Мазурио и убежавших в Армению Деникинских офицеров и Турецко Армянских бежвнцев спекулянтов во главе с палачем Себу против Революционного Александрополя после нескольких боев данных правительству его войскам революционные силы были поражены и 14 мая Советская власть в Армении пала Саракамыш держался до 19 мая и только после натиска правительственных войск Советская власть и там была разгромлена вся Армения была объята огнем восстания, воостал новый боязет казак, где до сих пор держатся повстанцы временное торжество контр-революции в Армении понесло сотни жизней наших лучших товарищей в Красном районе разстрелено триста человек в самом Карсе по приговору Дашнакского Трибунала

лучшие наши товарищи в нескольких десятках расстрелянных массовый расстрел в Александрополе и его районах по всей Армении ныне царствует ногайка Маузеристов Дашнаков оставшихся в живых товарищей с их семьями арестовали, тюрьмы Армении переполнены тысячами красных постанцев и их семей подвергшихся избиению и грабежу из Казаха бежавшие от Дашнаков крестьяне нашли братский приют у крестьян Советского Азербайджана повстанцы в Казахе в количестве 660 человек ведут жестокую борьбу и поныне против правительственных войск ими арестованы помощники министра внутренних дел МАКОСЯН, бывш. начальник Вичерахльской контр-разведки ДЖИГИТЯН и другие, которых держат как заложников идет страшная расправа было желательно доложить на Армению воздействовать на менее полагаю что было бы не лишним арестовать Армянскую делегацию.

ОРДЖОНИКИДЗЕ.

ЦПА ИМЛ, ф.461, оп. Ед.хр.33505,
Машинописная копия (подлинная)
вб

Верно : подпись
20/IV-57

ՀԱՍՏ. Ֆ-Պ. 1022, ց. 5, գ. 361, թ. 13-14; սխրհիսուցիր

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԳՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ

Օրջոնիկիձեի հետ ունեցած տեսակցության վերաբերյալ, որտեղ շոշափվել են հայ-ռուսական, հայ-ադրբեջանական հարաբերություններին և տարածաշրջանային գործընթացներին առնչվող մի շարք հարցեր (18 հունիսի, 1920թ.)

Պատճեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻՆ

No 904

“18” Հունիսի 1920թ

Հունիսի 12-ին, ցերեկվա ժամը 1-ին տեսակցություն ունեցա Որժոնիկիձեի հետ: Տեսակցությանս նպատակն էր բանտարկյալների վիճակը պարզել, ըստ կարելույն փոխանակություն առաջարկել յեվ ապա նրանից հասկանալ Սովետական իշխանությունների վերաբերմունքը դեպի Հայաստանը յեվ նորա ներկայացչությունը: Յես նրան պատմեցի մեր բանտարկության, Միսսիայի շենքի խուզարկության մասին, մի առ մի թվեցի Միսսիայից տարած իրերն ու գույքը յեվ վերջում ավելացրի, վոր ըստ յերեվոյթին մենք այստեղ ճանաչված ենք իբրեվ անկախ պետության ներկայացչություն, բայց յերբ չեն վերադարձնում մեզնից տարած իրերը յեվ ընդհանրապես մեզ կտրված են պահում դրսի աշխարհից ու Հայաստանից, Միսսիան բնականորեն զրկվում ե իսկական գործունեություն ցույց տալու հնարավորությունից: Ապա յես խոսեցի բանտարկյալների ու բանտարկությունների մասին, վորոնք մեծ մասամբ ուղղված են Սովետական իշխանության նկատմամբ վորյեվե հանցանք չգործած մարդկանց դեմ, ինչպես Ադրբեջանի Ռեվկոմի նախագահ Նարիմանովն որերում բանտում հայտարարել էր բանտարկյալներին, այլ լոկ միայն այն պատճառով վոր դոքա պատկանում են վորոշ կուսակցության, նրանք այստեղ մինչեվ այժմ Սովետական իշխանության դեմ չեն պայքարել: Բանտարկվածների մեջ կան նայեվ Հայաստանից բերված վեց հոգի:

Որժոնիկիձեն այստեղ ինձ ընդհատեց, ասելով թե իրան հայտնել են, վոր այստեղ բանտարկված ե նայեվ մի ինչ վոր Մանասյան:

Յես անմիջապես վրա բերի, վոր այո, դա հենց այն Մանասյանն ե, վորի հետ դուք միասին բանտում նստած եք յեղել յեվ ճանաչում եք: Յես ձեզ խնդրում եմ վորյեվե կերպ նորա հետ տեսնվել , ինչպես այդ դուք հարմար կը տեսնեք: Որժոնիկիձե-ինձ ներեցեք, վոր յես բոլոր հարցում-

ներին պաշտոնապես չեն կարող պատասխանել, բայց կասեմ, իբրեւ կոմունիստ: Ձեր կառավարությունը Հայաստանում տուկալի պայքար է մղում կոմունիստների դեմ յեւ ինչպես Հայաստանից յեկած մեր ընկերներն են պատմում, անխնա կերպով նրանց վոչնչացնում է: Յես, ի հարկե, այնքան միամիտ չեմ, վոր մտածեմ թե մի կառավարություն չպետք է պատժի յերբ յոր դեմ ապստամբում են: Ի հարկե Հայաստանի կառավարությունը չպետք է շոյեր ապստամբների գլուխը, դա նորա իրավունքն է, բայց մյուս կողմից մենք ել մեզ իրավունք ենք վերապահում ամեն կերպ ճնշել նրան դրսում ձերբակալություններով, նեղելով, պատանդներ առնելով յեւ այլն: Հայաստանում շարժումը ինքնաբերաբար է առաջ յեկել: Մեր կողմից վորյեվէ փորձ ներսից պայթեցնելու չի յեղել յեւ մեր գորքերը Հայաստան չեն մտել:

Հարությունյան- Դուք, ի հարկե, լավ գիտեք, թե ձեզանում ինչպես սիրում են ագիտացիոն նպատակով սեփական հաջողությունները մեծացնել յեւ հակառակորդներին նսեմացնել: Ներեցեք ինձ, բայց յես ձեր ընկերների տված տեղեկություններին չեմ վստահում. նոքա այստեղ թերթերում գրեցին, վոր իբր թե Հայաստանում 2000 բոլշեվիկ են կոտորել յեւ շատ շատերին ել բանդերն են լցրել. Դուք ել հասկանում եք, վոր սա ճշմարտություն չի կարող լինել: Իսկ վոր կարմիր ռուս գորքերը մտել են Հայաստան, այդ մասին նույնիսկ ձեր թերթերում գրվեց այստեղ յեւ հայտարարվեց, վոր բարձրից ստացված հրամանի համաձայն գորքերը յես քաշվեցին դեպի սահմանագիծը:

Որժոնիկիձե- Այո, մի փոքրիկ հեծելագունդ գնացել եր մինչեւ Քարվանսարա յեւ անմիջապես վերադարձել, վորից հետո, ինչպես մեր ընկերներն են պատմում, Հայաստանի գյուղացիությունը դժգոհ է մնացել, վոր ռուս գորքերը իրանց չեն ոգնում յեւ մենակ են թողնում պայքարի մեջ: Հայաստանում արդեն սկսված է քաղաքացիական կռիվ յեւ հայ կոմունիստները կռվում են կառավարության դեմ:

Հարությունյան- յես վորքան գիտեմ քաղաքացիական կռիվը դասակարգային բնույթ պիտի ունենա: Դուք գիտեք, վոր Հայաստանում դասակարգային կռիվ չկա, այլ կան մի խումբ մեծամասնականներ, վորոնք դժգոհների ոգնությամբ կամենում են կառավարության տապալել յեւ Սովետական իշխանություն հաստատել /հավանության նշան է ցույց տալիս/:

Որժոնիկիձե- Այսոր Ադրբեջանը Վրաստանի հետ խաղաղության դաշինք ստորագրում է, հետեւաբար մենք մի ամբողջ ֆրոնտից ազատվում ենք: Ներքին կռիվները կամաց-կամաց վերջանում են: Գանձակի շարժումը մենք ճնշեցինք Ղարաբաղում ել խաբված գյուղացիությունը այժմ աստիճանաբար զգում է յոր սխալը յեւ սկսում է բեգական հողերը գրավել: Շուտովմենք Ադրբեջանում կունենանք իսկական քաղաքացիական կռիվ: Բայց ինչպես պիտի լինի Հայաստանի հետ հարաբերությունը յեւ

յերբ պիտի Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղություն կայանա: Ձեր ներկայացուցիչները Ռոստովից անցել են Մոսկվա, բայց յես այստեղ առաջարկեցի Ադրբեջանի Ռեվկոմին Հայաստանի հետ բանակցություններ սկսել: Այն ժամանակ, յերբ Հայաստանից հեռագիր ստացվեց բանակցությունների սկսելու մասին, համաձայնություն չը կայացավ միայն տեղի վերաբերությամբ յեւ վերջին հեռագրի պատասխանը Հայաստանից չստացվեց յեւ այդ պատճառով ել բանակցությունները չսկսվեցին ու այդ հարցը մնաց առկախ: Այժմ յես հեռագիրներ եմ ստանում մեր ընկերներից, վորոնք ինձ հաղորդում են հայերի գործողությունների մասին: Յեւ վորովհետեւ մենք պարտական ենք Ադրբեջանի սահմանները պաշտպանել, ուստի յեւ ամեն մի փորձ հայերի կողմից Ադրբեջանի շահերը վնասելու՝ մեր կողմից յսիստ դիմադրության կը հանդիպի յեւ հանդիպում ել ե: Ղազախի կողմից մեր նաչդիվը ինձ գրում ե, վոր այստեղ հայ կոմունիստներից մի գորեղ բանակ ե կազմվել, վորը կատաղի կոիվ ե մղում Հայաստանի դեմ: Այսոր նույնպես հեռագիր եմ ստացել, վոր բազմաթիվ հայկական զորամասեր անցել են Ադրբեջանի սահմանը յեւ գրավել են Գետաբեգի պնձահանքերը: Այսոր տեղեկություն ե ստացել, վոր հայկական զորամասերը մոտենում են Թովուզին: Թարթարից ինձ հեռագրում են, վոր մերոնք կոտրել են հայկական զաստավան-վոր բաղկացած են յեղել հայ յեւ ռուս ռֆիցերներից, վորոնք, ինչպես տեղեկագրում են, հայկական տառերով ռուսական պագոններ են ունեցել: Այս ամենը ցույց ե տալիս, վոր Հայաստանի կառավարությունը չի ուզում Ադրբեջանի հետ յաղաղ ապրել: Յես ձեզ հայտարարում եմ, վոր Ռուսաստանի Սովետական իշխանությունը ամենեվին մտադրություն չունի յուր գորքերով Հայաստանը գրավելու: Թե ինչ դիտումներով՝ այդ մի կողմը թողնենք, բայց յեւ այնպես մենք ձեր ներքին գործերի մեջ չենք յառնվելու: Բայց ընդունեցեք, վոր մենք այստեղ նստած չենք կարող անտարբեր կերպով նայել, թե ինչպես Հայաստանում սոսկալի կերպով հայաձվում են մեր ընկերները յեւ ինչպես Հայաստանի գորքերը անցնում են Ադրբեջանի սահմանը: Այս ամենը ի նկատի առնելով՝ յես մտածում եյի հեռագրեյ Մոսկվա, վորպեսզի ձեր պատվիրակությունը կալանավորեն այնտեղ: Ամենից լավը կլիներ այն, վոր նոցա Հայաստանի կառավարությունը հնարավորություն տար մեր ընկերներին հեռանալ Հայաստանից յեւ ապա ժամանակավորապես մնան այն սահմանների վրա, վորը նախկին Ադրբեջանի կառավարության որով բռնված ե յեղել ու մի վորյեվե կերպով յաղաղություն հաստատել Ադրբեջանի հետ: Մենք Վրաստանի հետ հաշտություն կնքելիս պայման դրինք, վոր մեր կուսակցությունը Վրաստանում յեզալ լինի:

Հարությունյան - Զարմանալի յե, վոր դուք ուրիշներին այդպիսի առաջարկ եք անում, բայց ինքներդ ձեր տերիտորիայի վրա ուրիշ կուսակցությունների գոյություն չեք հանդուրժում: Գալով ձեր

շոշափած բոլոր մյուս հարցերին, յես պիտի ասեմ, վոր դժբախտաբար Ղարաբաղի անցքերից սկսած՝ յես կատարելապես կտրված եմ Հայաստանից յեվ չգիտեմ թե ինչ ե կատարվում այնտեղ: Բայց յեթե ինձ հնարավորություն տրվեր կամ մի մարդ ուղարկել Հայաստան յեվ կամ անձամբ գնալ, գուցե հնարավոր լիներ բանակցություններ սկսել յեվ ձեր հարուցած խնդիրներից շատերը լուծել:

Ուրժ.- Յես կարծում եմ, վոր ձեզ հնարավորություն կտան մարդ ուղարկելու յեվ ապա ժպիտով ավելացնում ե, թե ձեզ անձամբ գնալու յերեվի թույլ չեն տալ:

Վարդ.- Մարդ ուղարկելով կամ գրելով յես չեմ կարող այն անել, ինչվոր անձամբ կարող եյի: Յեթե այստեղ կասկածում են, թե յես կարող եմ չվերադառնալ՝ շատ են սխալվում, վորովհետեմ յես ազնիվ խոսք կտամ յեվ կը վերադառնամ: Յես վորյեմբե բանից յերկյուղ չունիմ: Կարող եյինք մենք որինակ բանտարկյալների փոխանակություն կատարել:

Որժոնիկիձե.- Շատ լավ: Թող Հայաստանի կառավարությունը ազատի Շախթախտինսկուն, իսկ այստեղ մենք կազատենք Մանասյանին:

Վարդյունյան.- Համաձայն եմ: Ուզում եք հեռագրենք ձեր յեվ իմ ստորագրությամբ:

Որժոնիկիձե. – Սպասեցեք, այս բոպեյիս խոսեմ Նարիմանովի հետ յեվ մի քանի բոպեյից հետո վերադառնալով հայտնվեց, վոր նրանք համաձայն են: Դուք յեվ Նարիմանովը կը հեռագրեք յեվ փոխանակությունը կը կատարվի:

Վարդյունյան.-Վոչ, յես ցանկանում եմ, վոր դուք ել ստորագրեք հեռագիրը յեվ փոխանակությունը կատարվի Վրաստանի սահմանի վրա:

Որժոնիկիձե. պատասխանեց, վոր ինչ հարկ կա Վրաստանի սահմանի վրա կատարել փոխանակությունը, ինքը յերաշխավորում ե Մանասյանի համար յեվ խոստանում ե յուր վագոնով տանել Վլադիկավկազ յեվ այնտեղից ճանապարհեն Թիֆլիս: Այսոր յես ժամը 5-ին Նարիմանովի հետ տեսնվելու եմ. Այդ մասին մանրամասն կը խոսեմ յեվ հետեվանքի մասին ձեզ կը տեղեկացնեմ:

Այնուհետեմ մեր խոսակցությունը դարձավ ընդհանուր քաղաքական հարցերի շուրջը: Որժոնիկիձեն ինձ ասաց, թե Փոքր-Ասիայի տաճիկ ապստամբներին իրանք անհրաժեշտորեն ոգնություն պիտի հասցնեն՝ զենք յեվ ռազմամթերքներ պիտի ուղարկեն յեվ կարծես ուզում եր իմանալ, թե հնարավոր չե Հայաստանի վրայով կատարել այդ փոխադրությունը: Իմ հարցումին, թե «Կարմիր Անատոլիային», նա պատասխանեց, թե մենք պիտի ոգնենք, վորովհետեմ նոքա կռվում են Անտանտի դեմ, ուրիշ նպատակ չունենք: Յես ասացի, վոր շատ դյուրությամբ այդ փոխադրությունը կարող եք կատարել Վարաստանի վրայով, մանավանդ վոր արդեն խաղաղության դաշինք եք կապել, ավելացնելով վոր տաճիկները զենքի յեվ ռազմամթերքի կարիք հազիվ թե ունենան, ընդհակառակը նո-

քա մարդկային կարող ուժերի կարիք ունեն: Մեր խոսակցության ընթացքում նա հայտնեց, վոր Մուստաֆա Քեմալը մեծ ուժ չունի յեվ Հայաստանի կառավարությունը իզուր ե վախենում տաճիկներից: Նոքա անկարող են հարձակվելու Հայաստանի վրա: Ինքը նոր ե նամակ ստացել յեվ ամենաճիշտ տեղեկություններ ունի (ձեռագիր լրացում)

Դառնալով Պարսկաստանում տեղի ունեցող անցքերին յեվ Քուչուկ խանի կոմունիստական ծրագիր ընդունելու խնդրին, վորի մասին տեղիս կոմունիստական թերթերը գրում եյին, Որժոնիկիձեն պատասխանեց, վոր Քուչուկ խանը չի կարող կոմունիստական ծրագրով քաղաքական գործունեություն ունենալ յեվ նա կոմունիստ չե, այլ մի սուկ հայրենասեր, վորի նպատակն ե մաքրել յուր հայրենիքը ոտար շահագործողներից, գլխավորապես անգլիացիներից: Քանի վոր այդ այդպես ե, մենք պարտավորություն ենք զգում նրան ըստ ամենայնի ոգնել յեվ ոժանդակություն ցույց տալ յուր քաղաքական ծրագիրն իրագործելու մեջ: Ճիշտ ե, պարսկական «Աղալեթ» կազմակերպությունը ցանկանում եր անմիջապես ձեռնամուխ լինել Պարսկաստանում կոմունիստական իշխանություն հաստատելու գործին, բայց յես նրանց հասկացրի, վոր ներկա պայմաններում հնարավոր չե Պարսկաստանում այդպիսի քաղաքական կազմակերպություն ստեղծել: Պարսկաստանը ազգային քաղաքական անկախ պետական կազմակերպություն պիտի ունենա, վորին յեվ ձգտում ե Քուչուկ խանը: Յեթե հաջողվի Շահին տապալել ու անգլիացիներին դուրս քշել մենք շատ գոհ կլինենք:

Շարունակելով մեր խոսակցությունը Որժոնիկիձե նույն կարծիքը հայտնեց նայել Ադրբեջանի վերաբերմամբ: Նորա կարծիքով զուտ կոմունիստական քաղաքական կազմակերպություն Ադրբեջանում յեվս հազիվ թե հաջողություն գտնի: Ադրբեջանն յեվս վերջ ի վերջո պիտի ձգտի ազգային քաղաքական ազատության:

Մեր խոսակցության վերջում նա խոստացավ հաջողեցնել թե բանտարկյալների փոխանակությունը յեվ թե Հայաստան սուրհանդակ ուղարկելու խնդիրը: Սորանով ել վերջացավ մեր տեսակցությունը Որժոնիկիձեյի հետ:

Դ Ի Վ. Հարությունյան

Ք. Առաքելյան

Պետ. Կենտ. Արխիվ: «Հ. Հ. Դիվանագիտության ներկայացություն Ադրբեջանում քաղաքական գրությունների մասին», գործ 805, եջ 12

ՀԱԱ, Ծ-Պ. 200, ց. 2, գ. 112, թ. 8-13; ավերնագիր

Doc. II-17

ԳՐՈՒԹՅՈՒՆ 11 ԲԱՆԱԿԻ 20 ԴԻՎԻԶԻԱՅԻ ՇՏԱԲԻ ՊԵՏԻՆ
Հրահանգվում է դաշնակցականների դեմ պայքարող հայկական
ապստամբական ջոկատի կազմի մեջ ներմուծել կոմունիստ
մահմեդականների, որպեսզի նրանք համատեղ պայքարով օրինակ
ծառայեն աշխատավոր զանգվածների համար, և դրանով
հնարավորություն տրվի հետագայում հայկական ջոկատների կազմի մեջ
ներգրավել արդեն նաև անկուսակցական մահմեդականների
(16 հունիսի, 1920թ.)

Дело АКА 263-180 лист 6.

Наштадиву 20 16 июня 1920 года Баку.

Наштарм приказал в действующий против дашнаков армянский повстанческий отряд влить мусульман коммунистов дабы эти лучшие представители трудящихся сблизившись в условиях борьбы за общее дело способствовали своим примером искоренению национальной розни между армянскими и татарскими пролетариями и заразившим своим примером беспартийные массы тем самым дали бы возможность в будущем безболезненно производить влияние в армянские повстанческие отряды беспартийных труженников мусульман.

Нр. 01391/оп.

За Начоперодарм XI
Военком.

Дело АКА 263-180 лист 7.

В. Срочно. телеграмма № 01395/оп. Штаба XI армии
Отделение оперативное. Баку 16-6-20г. 16 час. 25 мин.
Начвосоарм XI.

Наштарм приказал эшелон с третьим батальоном 251 стр. Полка немедленно вернуть обратно на ст. Зубовская.

За Начоперодарм Якубчик.
Военком /подписи нет/

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 8, գ. 96, թ. 2; սերենսագիր

Doc.III-18

ՀՈՂՎԱԾ ԲԱՔՎՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՄՆՈՂ «ԿՈՄՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹՈՒՄ
Կատեգորիկ կերպով շեշտվում է, որ Խորհրդային Ռուսաստանը ոչ մի
պարագայում չպետք է որևիցե համաձայնության եզրեր գտնի
Հայաստանի իշխանությունների հետ, այլ բոլոր իրավունքներն
ունենալով միջամտելու Հայաստանի ներքին կյանքին, պետք է վերջ դնի
այնտեղ դաշնակցական իշխանությանը
(17 հունիսի, 1920թ.)

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԳՈՐԾԻ ՎՐԱ ՅԵՆ.

Դաշնակների կառավարությունը ուղարկել է իր ներկայացուցիչներին
Մոսկվա Խորհրդային Ռուսաստանի հետ հաշտություն կնքելու համար:

Ներկայացուցիչները ճանապարհվել են յերկու յերեք շաբաթ սրանից
առաջ: Նրանց վարակել է վրաց մենշեվիկների որինակը: Ինչ կարող է
ավելի դուրեկան լինել, քան ճանապարհորդել մինչեւ Խորհրդային Ռու-
սաստանի մայրաքաղաք: Մի յերկու որ գրուցել Չիչերինի հետ, ձեռնատու
հաշտության պայման կնքել, վորով ճանաչվի դաշնակցական իշխանու-
թյան սովերեն իրավունքը „Մեծ Հայաստանի,, տերրիտորիայի վրայով
հաղթական դեմքով տուն վերադառնալ ի ցույց նախանձ հարեվանների:

Խատիսյանի կառավարությունը հետեւել է պ. Ժորդանիայի որինա-
կին, իսկ դաշնակների պատվիրակությունն իսկ յեվ իսկ գնացել է վրաց
դիվանագետ պ. Ուրաբաձեյի ուղիով: „Հաշտության յեվ բարեկամու-
թյան, առաքյալները Մոսկվա յեն անցել, առանց հայտարարելու իրենց
միսիայի մասին, առանց աղմուկի հանգիստ ու համեստ,,:

Իրենց բոլոր բազմաթիվ առավելություններից բացի, դաշնակները
հմուտ ու ճարպիկ մարդիկ են: Նրանք Մոսկվա հասան, բայց այնուհե-
տեվ նրանց հետքը կորավ: Թե ինչ դրության մեջ են նրանց գործերը,
բանակցություններ վարել է արդյոք նրանց հետ բանվորա-գյուղացիա-
կան կառավարությունը, ստորագրված է արդյոք վորյեվե պայմանագիր
Խորհրդային Ռուսաստանի յեվ դաշնակցական Հայաստանի միջեւ,-
այս բոլորի մասին վոչինչ հայտնի չէ: Լուրեր են պտտվում, վոր պ. Խա-
տիսյանի ներկայացուցիչները Մոսկվայում ցնձալիր ընդունելություն չեն
գտել նրանց հետ չեն կամեցել խոսել: Թեյեվ սա շատ հավանական է,
բայց դժբախտաբար չի կարելի բացարձակապես պնդել, վոր դաշնակ-
ների ներկայացուցիչների ուխտագնացությունը Մոսկվա փառավոր
կերպով խորտակվել են:

Ով կարող է իմանալ թե ինչպիսի խայտառակ կոմեդիա յեն խաղում
արյունարբու կեղծավորները Ռուսաստանի պրոլետարական կառավա-
րության առաջ: Ոգտվելով այն հանգամանքից, վոր Մոսկվայի ընկերնե-

րը տեղյակ չեն դաշնակցության Հայաստանում կատարած „փառավոր քաջագործություններին յեվ հերոսական գործերին, ոգուվելով, վոր աշխատավորական Ռուսաստանի ուշադրությունը դարձված ե արեվմտյան ճակատի յեվ ժողովրդական տնտեսությունը փրկելու կողմը դաշնակցականների ներկայացուցիչները ամեն կերպ կաշխատեն թեկուզ մի կտոր թուղթ ձեռք բերել այն մասին, վոր Խորհրդային Ռուսաստանը ճանաչում ե նրանց անկախությունն ու տիրապետությունը Հայաստանում: Ով պետք ե Մոսկվայում նրանց մերկացնի:

Հայաստանի բանվորության ու գյուղացիների իսկական ներկայացուցիչները մասամբ նահատակվել են տանջալից մահով, մասամբ ել շարունակում են հերոսական կռիվ մղել գազանացած բռնակալների դեմ, դաշնակների լծի տակ հյուծված Հայաստանում:

Վոչ վրք չկա, վոր Ռուսաստանի պրոլետարական իշխանության առաջ պատռի դիմակը նրանց կեղտոտ դեմքից, յեվ այս հանգամանքի մեջ մեծ վտանգ ե թագնված Հայաստանի հեղափոխության համար:

Խորհրդային Ռուսաստանի միջազգային քաղաքականությունը վրորշում ե վոչ միայն դասակարգային համերաշխության, սկզբունքով դեպի ճնշված աշխատավոր մասսաները: Հայտարարելով ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը, Խորհրդային Հանրապետությունը չի կարող սվինների յեվ միայն սվինների ուժով բուրժուական յերկրների բանվորներին ու գյուղացիներին ազատագրել:

Բայց ներկա դեպքում բոլոր փաստերը աղաղակում են, վոր դաշնակցությունը ու նրա կառավարությունը իրավունք չպետք ե ունենան ժողովրդի անունից խոսելու յեվ նրա կամքն արտահայտելու: Հրապարակի վրա յեն դրված բոլոր առիթները, վորոնք թույլ կտան Խորհրդային Ռուսաստանին միջամտելու Հայաստանում յեռացող քաղաքացիական կռվին:

Յեվ իրավ չի կարելի ճանաչել այն իշխանության, սուվերենիտետն, վորի դեմ ե բարձրացել ամբողջ աշխատավոր Հայաստանը- բոլոր գյուղացիներն ու բանվորները, մի իշխանության, վորն իր անասելի հանցագործությամբ ապացուցել ե, վոր իր տիրապետությունը կարճատեվ պետք ե լինի, վորն արյան ծովում խեղդել ե Հայաստանի առաջին բանվորա-գյուղացիական հեղափոխությունը:

Դեռ մինչեվ այժմ շարունակում են վրեժ լուծել հեղափոխական ժողովրդից: Դաշնակների հակա-հեղափոխության սարսափների առաջ նսեմանում են Հունգարիայի յեվ Ֆինլանդիայի սպիտակ գվարդիական գազանությունները: Հարյուրավոր գնդակահարված հեղափոխական մարտիկները, հարյուրավոր ու հազարավոր բանտերում տառապող ընկերները, հազարավոր քայքայված ընտանիքներ, տասնյակ այրված ու ավերված գյուղեր, վրտեղ ապրում եյին ռուսներ, թյուրքեր ու հայեր,

բռնաբարված կանայք- ապստամբված բանվորների ու գյուղացիների կանայք, քույրերն ու աղջիկները,- այս բոլորը պահանջում են վրեժ առնել ստոր բռնակալներից յեվ շարունակել կռիվը մինչեվ դաշնակցական գարշանքի վերջնական վոչնչացումը:

Համաժողովրդական ապստամբության առաջին փորձը ճնշված է, խեղդված է աշխատավորների արյան մեջ, բարձրանում է բանվորա-գյուղացիական հեղափոխության նոր ու հզոր ալիքը: Նրան չեն կարող դիմադրել բռնակալ դաշնակցականները:

Հայաստանի ծայրագավառներում արդեն սկսվել են հեղափոխականների առաջին ընդհարումները „մաուզերիստների,, հետ: Նրանք խոստանում են աճել ու դառնալ հսկայական քաղաքացիական կռիվ, վորի ժամանակ աշխատավորները թույլ չեն տա, նորից իրենց հաղթելու: Առաջին պարտության դասը չափազանց խրատական է: Ապստամբների հեղափոխական զգացմունքին կմիանա անհագ վրեժխնդրության զգացմունքը: Տանջված զոհերի արյունը ամուր կապել է նոր հեղափոխական շարքերը, վորոնք յեկել են հներին փոխարինելու:

Այսպիսի պայմաններում չի կարող յեվ չպետք է հաշտություն կայանա Խորհրդային Ռուսաստանի յեվ այժմյան դաշնակցական իշխանության մեջ: Ռուս. Խոր. Ֆեդ. սոցիալ-հանրապետության հաշտության պայմանագիրը Հայաստանի հետ այժմ կարող է ծանր հարված հասցնել Հայաստանի հեղափոխական շարժմանը: Պետք է վերջ դնել դաշնակների իշխանությանը: Իսկ դրա համար մի բան է պահանջվում. Ջճանաչել նրա տիրապետության իրավունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Դաշնակցությունը վերջ է դրել իր պատմական զարգացման ամենակեղտոտ յեվ արյունալի հանցագործությամբ, վորին նա միայն ընդունակ է յեղել: Նրա դերը կատարված է: Պետք է միայն ոգնել Հայաստանի բանվորներին յեվ գյուղացիներին, վորպեսզի նա դաշնակների վերջին գաղտնությունները դարձնի այդ կուսակցության կյանքի վերջին արտահայտությունը:

— — — — —
„ԿՈՄՄՈՒՆԻՍՏ,, Նո. 25.
17-ին հունիսի 1920թ.

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.4, գ.68, թ.13-14; մեքենագիր

Doc.III-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ
ՇՏԱԲԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Մոլոկաններով բնակեցված գյուղերը գործակալներ են ուղարկվում
հակապետական շարժում կազմակերպելու համար
(հունիս-հուլիս, 1920թ.)

По агентурнымъ свѣдѣніямъ, молокане селеній ДЖЕЛАЛЬ-ОГЛЫ, НОВО-ПОКРОВКА, НИКОЛАЕВКА и ГЕРГЕРЫ во время нашихъ больше витскихъ событій, готовы были перейти на сторону большевиковъ Настроеніе у этихъ молочанъ анти-правительственное многимъ распоряженіямъ не подчиняются. Вообще всячески саботируютъ дѣйствія властей и враждебно относятся къ Правительству. Имѣютъ постоянную связь съ Нейтральной Зоной. Ни власть ни пограничная стража не способны бороться съ этимъ Въ этотъ районъ присылаются агенты съ большими деньгами для организациі движенія. По свѣдѣніямъ, сейчасъ провѣряю... вѣ сел. ВОРОНЦОВКА и НОВО-ПЕТРОВКА организовываются регулярные войска, имѣется готовый отрядъ изъ 1500 солдатъ отъ этихъ двухъ сель. Постоянно идуть занятія, ученіе и т. д. Лозунгъ такой: “Ни Грузія, ни Арменія”.

Върно: Помощникъ Нач-ка Развѣдны-вательнаго От-нія Штаба
Командующаго Войсками,
ПОДПОРУЧИКЪ *подпись Назарбеков*
Ձեռագրով *секретно*
Въ Министерство Внутреннихъ Дѣлъ.
Для свѣдѣнія препровождается

Врид. Начальника Развѣдывательнаго Отдѣленія Штаба
Командующаго Войсками, Поручикъ по адм. *подпись Овакимян*
Помощникъ, подпоручикъ */подпись/ Назарбеков*

ՀԱՍ, Ֆ-Պ. 201, ց.1, գ.26, թ.244; անթիվագիր

Doc.III-20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Տեղեկացվում է, որպեսզի վերջինս իր կողմից իրեն հուզող հարցերի
վերաբերյալ առաջարկներ ներկայացնի՝ կայանալիք հայ-ադրբեջանական
կոնֆերանսում քննարկելու համար
(5 հուլիսի, 1920թ.)

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ

Երեւան, „5,, Յուլիսի 1920թ.
No. 4023

ՇՏԱՊ

Շրջաբերական
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ.

Մօտիկ օրերն տեղի է ունենալու Հայ-Ադրբեջանեան Կոնֆերանս
ուր պիտի լուծի երկու երկիրների միջեւ գոյութիւն ունեցող տերրիտօ-
րեալ, քաղաքական, տնտեսական եւ այլ հարցերը:

Պ. Մինիստրը խնդրում է շտապ պատրաստել գրաւոր զեկուցումը
Ձեր Մինիստրութեան հետ կապ ունեցող այն հարցերի մասին որոնք
կարելի է Կոնֆերանս դնել: Ձեկուցումի մէջ պետք է մտցնել նաև այն
առաջարկները որոնց իրականացումը Կոնֆերանսի միջոցով ցանկալի
է համարում Մինիստրութեանդ կողմից:

Ձեկուցումը պիտի ներկայցի Ձեր ներկայիչի միջոցով Հինգշաբթի
/Յուլիսի/ Արտաքին Գործերի Մինիստրութեան մէջ ժամի 5-ին կայա-
նալիք ժողովին:

ԸՆԴ ՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Տէր-Յակովբեան
(ստորագրություն)

ԴԻԻԱՆԱՊԵՏ Վ. Սարպէյեան
(ստորագրություն)

(Փաստաթղթում առկա են անընթեռնելի ձեռագրով լրացումներ)

ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց. 1, գ. 23, թ. 28; մէքենսագիր

Doc.III-21

ՔԱՂՎԱԾՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԻՍԻԱՅԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ

Տեղի բոլոր հայկական գյուղերում հայտարարված է մոբիլիզացիա՝
Հայաստանի դեմ պայքարող զորամիավորումներ ստեղծելու համար
(5 հուլիսի, 1920թ.)

Ք Ա Ղ Ի Ա Ծ Ք

Բագրի Դիվանագիտական Միսսիայի
զեկուցումից Աղըրբեյջանի ներքին կացութեան եւ Միսսիայի դրութեան
մասին: 5 յուլիսի 1920.

5. Բոլոր հայ գիւղերում, ինչպէս եւ Բագում յայտարարած է
մօբիլիզացիա, գլխաւորապէս Հայաստանի դէմ շարժելու նպատակով:
Ձինւորները մտնում են շարքերը մեծ մասամբ վախից /սաստիկ
տերրօր է/, միւսներն էլ տնտեսական միջոցներից զուրկ լինելու
պատճառով, շատերն էլ ցանկանալով այդ ձեւով անցնել Հայաստան:

6. Բոլոր կարմիր զօրքերից հետ են կանչում հայ զինւորներին
Նարիմանովի պահանջմամբ, որ իբր թէ հայերը պրօվակացիա են
սարքում եւ լարում ոռու զինւորներին թիւրքերի դէմ:

Բագում հայ զինւորական խմբերի կազմակերպումը յանձնւած է ուսանող
Յոլակ Ամատունուն:

Իսկականի հետ ճիշտ է

Գ Ո Ր Ծ Ա Վ Ա Ր ստորագրություն

ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց. 1, գ. 23, թ. 30; մէքենագիր

Doc.III-22

ՔԱՂՎԱԾՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԻՍԻԱՅԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ

Հայ բոլշևիկները մեծ ուշադրություն են դարձնում Ղարաբաղի և
Զանգեզուրի վրա և մասնավորապես, ըստ Բունիաթ Ջադեյի հեռագրի,
Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի բնակչությունը խնդրում է այդ
տարածքները միացնել Խորհրդային Ադրբեյջանին
(5 հուլիսի, 1920թ.)

Ք Ա Ղ Ի Ա Ծ Ք

Բագրի Դիվանագիտական Միսսիայի
զեկուցումից Ադրբեյջանի ներքին կացության եւ Միսսիայի դրության
մասին: 5 յուլիսի 1920.

9. Հայ բոլշևիկները մեծ ուշադրութիւն են դարձնում Ղարաբաղի եւ
Զանգեզուրի վրայ: Այնտեղ ուղարկած են մեծ քանակութեամբ
պրօպօզանդիստներ: Վերջերս իբրեւ Կօմիսսար Շուշի է ուղարկած
Քիմիկոս Յակովբ Յովհաննիսեան, որը գաղափարական կօմունիստ է:
Ամսոյս 23-24 ին Բունիաթ Ջադեյն հեռագրել էր Շուշուց, որ Ղարաբաղի,
Զանգեզուրի եւ Նախիջեանի ժողովուրդները ընդունել են Սովետական
իշխանութիւնը եւ խնդրում են միացնել Ադրբեյջանին:

Իսկականի հետ ճիշտ է

Գ Ո Ր Ծ Ա Վ Ա Ր ստորագրություն

ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց. 1, գ. 23, թ. 31; մեքենագիր

Doc.III-23

ՔԱՂՎԱԾՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԻՍԻԱՅԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԻՑ

Աղբրեջանում խորհրդայնացումից դժգոհ են, և մասնավորապես, թուրքերի
ու կարմիրների կոիվների ժամանակ վերջիններիս օգնել են հայերը
(5 հուլիսի, 1920թ.)

Ք Ա Ղ Ի Ա Ծ Ք

Բագի Դիվանագիտական Միսսիայի
զեկուցումից Աղբրեջանի ներքին կացության եւ Միսսիայի դրության
մասին: 5 յուլիսի 1920.

11. Մեծ դժգոհություն կայ բոլորի մէջ, նամանաւանդ թիւրքերի: Դժգոհ է
եւ թուրք բանուորը: Բագում եւ Գաւառում բոլոր Մուսավատիսները
բանտարկւած են: Յակասովետական ոյժերը կենտրոնացած են
Սամուխում /Արեշի գաւառ/ որտեղ կազմակերպւում են ոյժեր մօտ 20.000
Շախմային բեգերի կողմից: Կարեագինի գաւառում յակասովետական
ոյժ է կազմակերպւում Նուրի Փաշան, որը ջարդել է փախել է Շուշուց,
այդտեղ եղել են մեծ կռիւներ թիւրքերի եւ կարմիրների միջեւ:
Վերջիններին օգնել են հայերը:

Իսկականի հետ ճիշտ է

Գ Ո Ր Ծ Ա Վ Ա Ր ստորագրություն

ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց. 1, գ. 23, թ. 32; մէքենագիր

Doc.III-24

ՕՐՁՈՆԻԿԻՉԵՒ ԵՎ ԼԵԳՐԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՌԱԳԻՐ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄ ՉԻՉԵՐԻՆԻՆ
Ղարաբաղը Ադրբեջանին անվերապահ միացնելը մասամբ կրավարարի
Խորհրդային Ադրբեջանին, Զանգեզուրը հայտարարվում է վիճելի
տարածք, իսկ Նախիջևանը մնում է Հայաստանին
(14 հուլիսի, 1920թ.)

ТЕЛЕГРАММА.

ВОЕННАЯ.
ВНЕ ОЧЕРЕДИ.

Москва Наркоминдел ЧИЧЕРИНУ.

Баку 14-го июля 20г.

Считаем необходимым такое разрешение вопроса, которое отчасти может удовлетворить Азербейджан двуеточие Карабах целиком и безоговорочно присоединяется Азербейджану Зангезур объявляется спорным запятая остальные области скоба Нахичевань Шарурдар Алагез Ордубад скоба остаются за Арменией точка НР...4/37

Подпись: Орджоникидзе, Легран

Փաստաթղթի վրա առկա են տեխնիկական բնույթի ձեռագիր նշումներ

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 5, գ. 361, թ. 15ա; մեքենագիր

Doc.III-25

ԾԱԾԿԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՎ
ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Տեղեկացվում է Խորհրդային Ադրբեջանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում կարմիր գորքերի քանակի և տեղաշարժերի մասին, ինչպես նաև Դիլիջանի շրջանում հակապետական գործակալական ցանցը ղեկավարվում է Ղազախում գտնվող բոլշևիկ Շավարշ Ամիրխանյանի կողմից

(ամառ, 1920թ.՝ մայիսյան ապստամբությունից հետո)

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՊԱՏՃԵՆԸ Պ.ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ
ԴԻԼԻՋԱՆԻՑ ԾԱԾԿԱԳԻՐ

15.16.1?

Տեսնվեցի Ադրբեջանի սահմանները ուղարկվածներին հետ նորա հաջողվել է ուղարկել հայեր բերել տալ այնտեղից ազդեցիկ թուրքեր կետ դեռեվա մեր սահմանի վրա է 10711 բացի պոլկը 32-րդ դիվիզիայից յեկած է մի եշալոն 30 վագոնից լրացնելու 170-ի 3-րդ գունդը կետ.մեր սահմանների մոտիկ Թեկուզ կայարանում կա 30 հոգի Թաղսալայում 50 հոգի Թաղկա 4 Ղազախում 3 հոգի գորքի կեսը հիվանդ է կետ Հայաստանի ագիտության ղեկավարվում է Ղազախում նստած Շավարշ Ամիրխանյանը, վորը ունի 4 ազենտ մեր շրջանում վորոնց անունները մեզ հայտնի է յեվ միջոցներ ենք ձեռք առել նրանց բռնելու կետ թուրքերի մեջ հայտարարված զորակոչը հակասություն չունենալով կետ. Բագվից յեկածները հայտնում են այդ արժե սեվը 230 ռուբլի սպիտակը 700 մյուսը 380 այսոր ինտենդանտը ինձ հայտնել է վոր շրջանումն կա (... բաց) այդ թիվը շատ մեծ է անկարող ենք կերակրել այսոր կարգադրել է սկսել զինվորների աջակցությամբ Շամշադինի ճանապարհը այնտեղ աշխատելու են մոտ 500 հոգի նրանց հացը կտա ինքնավարությունը կետ մնացած գորքերին հաց մատակարարելու համար ստիպված յեղա շրջանը մարդիկ հանել յեվ պահանջել գյուղացիներից ցորեն շուկայի գներով հրահանգված է նույնպես սպեկուլյանտներից վերցնել նրանց թագցրած ցորենը

ԿՆԻՔ

ՆԱԽԱՐԱՐ ԳՅՈՒԼԻՆԱՆԴԱՆՅԱՆ

Բնագիրի հետ ճիշտ է

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՆԵՐՔ.ԳՈՐԾ.ՄԻՆ ԳՈՐԾ Նո 116 եջ՝ 317

ԹՈՒՐԿԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ ՄՈՒՍԹԱՖԱ
ՔԵՄԱԼԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ ՉԻՉԵՐԻՆԻ՝ 1920թ.
ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ՆԱՄԱԿԻՆ

Խոսվում է համաշխարհային իմպերիալիզմի դեմ Ռուսաստանի և Թուրքիայի փոխհարաբերությունների հիմքը հանդիսացող ընդհանուր պայքարից, և որպես այդ պայքարի կարևոր մի դրվագ՝ շեշտվում իրենց կողմից Կարսի, Արդահանի և Բաթումի գրավման անհրաժեշտությունը (1920թ. հունիսի 3-ից հետո, մինչ Կարսի անկումը)

"Մենք հաճույքով ծանոթացանք Ռուսաստանի խորհրդային հանրապետության արտաքին գործոց ժողովրդական քումիսերիդ 1920 հունիսի 3-ին Թուրքիո ազգային մեծ ժողովի անունով ուղղված նամակի բովանդակության հետ: Ի պատասխան պատիվ ունինք հաղորդել հետևյալը.

1. Թյուրքիո վերաբերյալ գրությունները կկազմեն հիմքը մեր անկեղծ ու լուրջ սկզբունքներուն: Մենք կկռվինք Արևմտյան պետություններու հետ բացառապես անոր համար, վոր անոնք խոչընդոտ կհանդիսանան այդ սկզբունքներուն կիրառման: Յերբ վոր կապահովի անկեղծ և գործնական հող, մենք ամբողջությամբ կգործադրենք գայն կյանքի մեջ:
2. Մենք սիրահոժար կերպով կընդունենք Ռուսաստանի խորհրդային հանրապետության միջնորդությունը Հայաստանի և Պարսկաստանի հետ սահմաններ վորոշելու գործին մեջ և անհրաժեշտ կհամարենք դիվանագիտական բանակցություններու միջոցով լուծել այդ խնդիրը:
3. Մենք կվախանանք հարեվան անվիճելի Թուրքիայի հողամասերու ժողովուրդին կոտորածի յենթարկուելեն ու Արևմտյան եմբերիալիստներեն իրենց հատուկ սիստեմով, արհեստական խմբակցություններ ու մեծամասնություններ են ստեղծած: Այդ դրությունը վերցնելու համար մեզ անհրաժեշտ է շուտափույթ կերպով գրավել այդ յերեք շրջաններու /Կարսի, Պաթումի և Արդահանի/ մեկ քանի կետերը, բայց ձեր նամակի հետեվանքով մենք հետաձգեցինք այդ գործողությունները: Կխնդրեմ դադրեցնել հայերու հարձակումները մեր ժողովուրդի վրա և շուտով ներկայացնել ձեր առաջարկը միջնորդության համար:
4. Խորհրդային Ռուսաստան մեկնող մեր լիազոր ներկայացուցիչները ճամբան են և կսպասեն Երզրում: Անոնք լիազորված են հաստատելու քաղաքական կայուն հարաբերություններ խորհրդային Հանրապետությանդ հետ: Մեր բարեկամական կապը խորհրդային հանրապետության հետ ուշացել է մեր հարեվաններու կողմե հարուցած դժվարություններու պատճառով: Մենք շատ կցանկանանք փութացնել այդ

կապի հաստատումը, կխնդրենք ըստ կարելիովյն աջակցություն՝
Խորհրդային հանրապետության կողմե:

Կսպասենք խորհրդային հանրապետության լիազոր ներկայացուցիչ-
ներու գալուստին, միսսիոնի անդամներով միասին:

Մենք չենք սահմանափակվիր մեր փրկության և անկախության
պաշտպանությամբ, այլ խոչընդոտներ կստեղծենք Արևմտյան եմբեր-
րիալիսներու դեմ, վորպեսզի անոնք թուրք ժողովուրդը խաղալիք չի
դարձնեն իրենց ձեռքը: Մենք հավատացած ենք, վոր այսպիսով մենք
կճառայենք համայն մարդկության: Մենք բաղտավոր ենք այն հույսով,
վոր կարող ենք գործնական հետեվանքներ սպասել միացյալ Ռուս և
Թուրք ժողովուրդներու սերտ բարեկամութենեն:

Արտաքին գործոց Պ. Ժողովրդական քումիսեր. յես բաղտավոր եմ
հաղորդելու, վոր ինչպես Թուրքիո ազգ.ժողովը, այնպես ալ թուրք
ժողովուրդը ուրախությամբ ընդունեց մեր ըրած խոստումը, վոր ե կապ
հաստատել խորհրդային հանրապետության հետ:

Առանձնապես մեծ նշանակություն տալով ատոր, ազգ.ժողովն ու
թուրք ժողովուրդը իր անհուն բերկրոնքը կհայտնեն Ձեր՝ դեպի
Թուրքիան տաճած համակրանքին՝ ներկա պատերազմին մեջ:

Ազգային ժողովի նախագահ՝
ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼ

1. – Թուրքիա կիայտարարվի անկախ:
2. – Թուրքական անվիճելի հողամասերը պիտի կցվին Թուրքիո:
3. – Արաբիա ր Սուրիա անկախ պետություն կհռչակվին:
4. – Թուրքահայաստանը, Քյուրդիստանը, Լազիստանը, Բաթումի
շրջանը և Թրակիան իրենց ժողովուրդին քվելով վճռվելիք
ճակատագրին պիտի թողվին. Հանրաքվեն պիտի կատարվի,
յերբ բոլոր փախստականներն ու գաղթականները վերադառ-
նան իրենց տեղերը:
5. – Ազգային փոքրամասնությանց պաշտպանությունը:
6. – Նեղուցներու հարցին լուծումը պետք ե թողվի Սեվ ծովի
ափունքը գտնվող պետությանց:
7. – Ուտարներու տնտեսական հակակշռին, քաբիթյուկասիոններու, և
տնտեսական ազդեցությանց շրջանակներու ջնջում:
8. – Հայաստանի և Պարսկաստանի հետ սահմանագծած առթիվ
պետք ե հիմ ծառայեն ազգերու ինքնորոշման և մեծամասնու-
թյան սկզբունքները: Խորհրդային Ռուսաստան պատրաստ ե
շահագրգռված կողմերու հրավերով, կատարել միջնորդի դերը,
սահմանագծած առթիվ:

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, g. 3, q. 270, թ. 1-3; մեքենագիր

Doc.III-27

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԱՐՑՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻՆ

Ղազախում բոլշևիկների կողմից ձերբակալված և Բաքու տեղափոխված
Հայաստանի պետական պաշտոնյաների ճակատագրի մասին
(23 հուլիսի, 1920թ.)

No. 1336

23 Июля 1920г.

Комиссару по Иностраннымъ Дѣламъ
Азербайджанской С.С. Республики.

Такъ какъ по настоящее время я не получилъ отъ Васъ отъ ответовъ на запросы мои отъ 21 июня и 5-го июля с/г. за No 918 и 1146 о судьбѣ взятыхъ въ плѣнъ Вашими войсками въ Казахскомъ районѣ 6 чиновъ Республики Арменіи, я еще разъ прошу Васъ сообщить мнѣ свѣдѣнія о мѣстопробываніи и судьбѣ С. Манасяна, Н. Багдасарова, М. Саратикова, Н. Джагетяна, Теръ-Гукасова и Теръ-Исраэляна.

Кромѣ того по имѣющимся у меня свѣдѣніямъ, здѣсь разстрѣляны между прочимъ нѣкоторые изъ арестованныхъ, армянъ, но т.к. имена разстрѣлянныхъ не публикуются, прошу васъ, т. Комиссаръ, сообщить мнѣ-кто именно изъ армянъ и за какія преступелія разстрѣляны.

Подлинное подписали: Дипломат. Предст. М. Арутюнянцъ и за секретаря Теръ-Іоаннесянь.

Съ подлиннымъ вѣрно: Дѣлопроизводитель /подпись/

ՀԱՄ, Ֆ-Պ. 200, ց.1, գ.4, թ.14; անթիվագիր

Doc.III-28

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴԻԲԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴԻԲԵԶԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻՆ

Թույլտվություն է հայցվում ձեռքակալված հայերի հետ տեսակցելու
համար՝ նրանց հետազայում Հայաստանում ձեռքակալված բոլշևիկների
հետ փոխանակելու կապակցությամբ
(28 հուլիսի, 1920թ.)

Копія.

Комиссару по Иностраннымъ Дѣламъ
Азербайджанской С. С. Республики.

№1374

28 Юля 1920г.

Въ виду начавшихся переговоровъ между Арменией и Азербайджаномъ объ обмѣнѣ арестованныхъ большевиковъ въ Арменіи на дашнакцановъ въ Азербайджанѣ, прошу Васъ, съ цѣлью выясненія нѣкоторыхъ вопросовъ, связанныхъ съ обмѣномъ разрѣшить мнѣ свиданіе съ арестованными въ Баку армянами и спеціально съ Генераломъ Багдасаровымъ находящимся въ Баилловской тюрьмѣ.

Подлинное подписали: Дипломат. Предст. М. Арутюнянъ и за секретаря Теръ-Иоаннесянъ.

Съ подлиннымъ вѣрно:
Дѣлопроизводитель /подпись/

ՀԱՍ, Ֆ-Պ. 200, ց.1, գ.4, թ.11; սերիալային

Doc.III-29

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴԻԲԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴԻԲԵԶԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻՆ

Առաջարկվում է Գյանջայում ձերբակալված հայերին, ովքեր մեղադրվում են
Դաշնակցության անդամ լինելու համար, այլևս չհանձնել տրիբունալին,
քանի որ այդ հարցի վերաբերյալ Թիֆլիսում հայկական և ադրբեջանական
կողմերը եկել են համապատասխան համաձայնության
(28 հուլիսի, 1920թ.)

Копія.

Въ Комиссариатъ по Иностраннымъ дѣламъ
Азербайджанской С. С. Республики.

№1375.

28 іюля 1920г.

По имѣющимся у меня свѣдѣніямъ, арестованные въ Ганджѣ
армяне, обвиняемые въ принадлежности къ партіи и “Дашнакцутюнъ”
передаются въ распоряженіе Народного Трибунала.

Принимая во вниманіе, что въ Тифлисѣ установлено
предварительное соглашеніе между Представителемъ Правительства
Арменіи Т. А. Бекзадяномъ и Наркоминдѣломъ М. Д. Гусейновымъ о
томъ, что обѣ стороны прекращаютъ преслѣдованіе и не подвергаютъ
арестованныхъ никакимъ насиліямъ,- прошу сдѣлать распоряженіе объ
оставленіи арестованныхъ въ Ганджѣ въ Чрезвычайной Комиссіи и не
передавать Трибуналу.-

Подленное за подписью М. Арутюнянца и за секретаря Теръ-
Ионнесяна.

Съ подлиннымъ вѣрно:
Дѣлопроизводитель /подпись/

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց.1, գ.4, թ.12; անթիվագիր

Doc.III-30

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱԴԻԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻՆ,
որում նշվում է, որ միանգամայն անօրինակա՛ն է Ադրբեջանի տարածքում
գտնվող Հայաստանի քաղաքացիներին բռնի կերպով զորակոչելը
(8 հուլիսի, 1920թ.)

КОПІЯ

Комиссару по Иностраннымъ Дѣламъ А. С. С. Р.

8 Іюля 1920г.
№1188.

Согласно примѣчанія I- го къ приказу Бакинскаго Уѣзднаго Комиссаріата отъ 27 іюня 1920 г. за № 7, проживающіе нъ предѣлахъ г. Баку и Бакинскаго уѣзда иностранные-подданные не принимаются на учетъ военно-обязанныхъ, если таковыя черезъ свои Консульства удостовѣрятъ о своемъ подданствѣ. Между тѣмъ, при регистраціи гражданъ Республики Арменіи при ввѣренномъ Вамъ Комиссаріатѣ, на предметъ освобожденія отъ призыва, Завѣдывающій регистраціей ихъ, помимо паспортовъ, требуетъ метрическія свидѣтельства и другіе документы.

Считая такое требованіе совершенно неумѣстнымъ и незаконнымъ а въ большинствѣ случаевъ и невыполнимымъ, прошу Васъ, т. Комиссаръ, не отказать распорядиться объ устраненіи такихъ препятствій на регистраціи гражданъ Республики Арменіи.

Секретаря Теръ-Іоаннесянь.-

Съ подлиннымъ вѣрно:

Дѣлопроизводитель /подпись/

ՀԱՍ, Ֆ-Պ. 200, ց.1, գ.4, թ.13; վերնաւագիր

Doc.III-31

ԹԻՖԼԻՍԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Բարվում ձևավորվում է էքսպեդիցիոն բանակ՝ Խալիլ-փաշայի գլխավորությամբ, որի նպատակն է մինչև աշուն ամեն գնով անցնել և միանալ Քենալի գործերին, աշխույժ աշխատանք է տարվում Հայաստանի իշխանությունը տապալելու ուղղությամբ, և Խորհրդային Արրբեջանում բազմաթիվ հայ երիտասարդներ այդ նպատակով զինվորագրվում են Խորհրդային աշխատողների շարքերը (28 հլիսի, 1920թ.)

28/VII-20-№60

АЗЕРБЕЙДЖАНЪ.

Въ Баку формируется экспедиционная армия во главѣ съ Халиль нашой и начальникомъ штаба совѣтскимъ офицеромъ изъ ген. штаба. Зарегистрированные въ эту армию, главнымъ образомъ мусульмане, отправляются въ м. Гусары, гдѣ ихъ сортируютъ, обмундировываютъ и обучаютъ военному дѣлу. Изъ различныхъ центровъ Россіи прибываютъ партіями мусульмане /крымскіе, уфимскіе, казанскіе/ и зачисляются въ экспедиционную армию. Инструктора русскіе /команда на русскомъ яз/. Дисциплина жестокая.

Предположено сформировать три кавалерійскія бригады Конную артиллерію и конно-пулеметные команды. Въ составъ этого отряда предположено ввести туземную кавал. дивизию, которую предположено сформировать въ самый вратчайшій срокъ.

Цѣль экспедиціоннаго корпуса- пройти и соединиться съ войсками Кемаля паши до наступленія осени несмотря ни на какія препятствія.

Всеобщее вниманіе сейчасъ обращено на Арменію въ которой рѣшено организовать ячейки съ цѣлью низверженія дашнакцакановъ. Чрезвычайно энергичную работу въ этой области ведутъ “красные азербейджанцы” во главѣ съ Гусейновымъ.

Очень много молодыхъ людей армянъ въ возрастѣ отъ 16-23 лѣтъ поступаютъ въ ряды совѣтскихъ работниковъ по “совѣтизаціи Арменіи.”

АДЖАРІЯ. Настроеніе тревожное. Ведется сильная пропганда агентами большевиковъ и Кемаля-паши. Усилена охрана на мостахъ отъ потамели до Батума.

КАЗАХСКІЙ РАЙОНЪ. Совѣтскія части, расположенныя въ Казахскомъ районѣ отянуты вглубь Елизаветпольской губ. для обученія и приведенія въ порядокъ вооруженія.

4/VIII 1920թ.
№4599

Ներքին Գործերի Մինիստրութիւն
Ուղարկվում է սոյն գրութիւնը, որի իսկականը
ստացվել է Թիֆլիսից:

Արտաքին Գործերի Նախարարության
Դիւանապետ՝ /Ստորագրություն/
Գործավար՝ /Ստորագրություն/

ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց.1, գ.26, թ.233; սերենագիր

Doc.III-32

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՔՅԱԶԻՄ ԿԱՐԱԲԵՔԻՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ

Հայկական զորքերը ռազմաճակատի որոշ հաստատվածներում անցել են հարձակման, և եթե այդ թշնամական գործողությունները չդադարեցվեն, ինքը ստիպված կլինի իր ամբողջ բանակով ընդհանուր հարձակման անցնել դաշնակների դեմ, որոնք իմպերիալիստական նպատակներ են հետապնդում և հեղում են համաշխարհային պրոլետարիատի արյունը (29/30 հուլիսի, 1920թ.)

Командованию Красной Армии.

Несмотря на неоднократные дружественные ноты и протесты, как мои, так и нашего Министра Иностранных дел, сейчас наблюдается продолжение начавшегося в июле месяца наступления войсковых частей армянского правительства на разных участках нашего Восточного Фронта. В частности, вот уже два дня они снова ведут атаки на левый фланг Восточного Фронта. Если таковые враждебные действия не прекратятся и начавшаяся в Олгинском районе левого фланга наступление продолжится, заявляю, что принужден буду перейти в общее наступление со всей своей армией против дашнаков, по настоянию их союзников англичан преследующих империалистические цели и проливающих кровь пролетариев мира.

Надеюсь, что Вы вполне согласитесь со справедливостью вынужденного моего решения, заверяю Вас в искреннем моем к Вам уважении.

№ 1199 29/30 июля 1920г. в начале 2 часа

Приведенный выше Командующий Восточным фронтом

Кязим Кара Бекир

Шифр с подлинным верно

Персля

30/7-20

Команд. Турецким Отрядом Вейсаль.

Переводил Башаров, член Миссии РСФСР в Турции

Верно: Наполештабриг Кав. 28 /подпись/

ЦГАКА, Ф. 1328, оп.1, ед. Хр. 555, л.30

Сверено с копией

14 VIII 1948

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.8, գ.96, թ.1: սկրիպտի

Doc.III-33

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՍԻՆ
Խորհրդային Ադրբեջանի Կարմիր Բանակի հետախուզական բաժնի
տրամադրության տակ հայտնված
(ամսա, 1920թ.)

Копия

Дело АКА 7"-832. лист 63-64

Сводка агентурных данных (сведения) поступивших в
оперативно-разведывательное отделение Оперативного Отдела Штаба
Красной Армии Азербайджанской Советской республики.

Сводка № 4
Армения.

Политическая
обстановка

Правительство Араратской
Республики упорно стремится к
намеченной цели- к захвату не
только Зангезурского уезда, но
также и всего Карабаха (по
меньшей мере нагорного).

События последних дней, а также данные, заслуживающий полного
доверия, говорят, что с этой целью армянским Правительством велась и
ведется усиленная агитация, среди армян Азербайджана. Документы,
найденные у убитых армян, свидетельствуют о назначении Правительством
Армении некоторых из Карабахских армян на различные должности
по командованию партизанским отрядом и управлению краем.

Организация войск. Вооруженные силы Армении состоят из:

1/4-х отдельных пехотных бригад

Дела АКА 74-832 листы 63-64

2/ 1-й конной бригады

3/ 5-ти отдельных полевых и одного мортирного артиллерийского
дивизиона

4/ Саперного батальона

5/ 3-х бронепоездов

6/ 5-ти бронированных автомобилей

7/ Одной лодки на озере Гекча

8/ 3-х милиционных полков в Зангезуре

9/ 3-х караульных батальонов

10/ 3-х отдельных батальонов

11/ 4-х отдельных хумбапетских рот

12/ Хумбапетского конного дивизиона

- 13/ Отдельной конно-горной батареи
- 14/ Отдельной учебной батареи (учебная команда)
- 15/ Особого отдела пограничной стражи (проектируется иметь 2 бригады, т.е. 4 отдела)

Пехота Отдельные бригады состоят из 2-х полков трех батальонного состава: батальон 4-х ротного состава, полки стрелкового типа. Каждый полк имеет около 20 пулеметов (есть стремление иметь 24) штатные состав стрелковых полков по образцу русских стрелковых полков, бат. 1000 штыков. Наличный же состав полков 700-800 штыков.

Конница. Конница состоит из одной бригады (из 2-х полков 4-х сотенного состава (из-за отсутствия лошадей и плохого конского состава оба полка в строевом отношении сведены в один 2-х дивизионный полк, но с отдельным полковым хозяйством каждого.

Артиллерия. 1/ В 3-х полевых дивизионах по одной легкой 4-х орудийной батареи и 2 горные батареи.

Дело АКА 74-832 листы 63-64 продолжение-15

2/ В двух дивизионах по 3 горных батарей. Отдельная горно-конная батарея 4-х орудийного состава.

3/ В мортирном дивизионе: две 4-х орудийные батареи.

4/ Нумерация дивизионов соответствует номеру отдельной пехотной бригады, в которой дивизион придан: батареи же носят номер по порядку формирования.

Инженерные войска- Саперный батальон включает – 2 саперных и 1 телеграфную роты и военно-техническое отделение. Штатный состав рот- 250 чел. Наличный- 50 чел.

Бронепоезда. Действующих 2, третий заканчивается постройкой в Карсе (броня). Вооружены 2-мя горными орудиями (сзади и впереди 4-мя пулеметами Максима и 12-Люиса).

Бронированные автомобили. 2 совершенно исправных и 3 заканчивается в Карсе. Вооружены одной 57 м/м пушкой и 2-мя пулеметами.

Геокчинская озерная флотилия- 1 деревянная, однопалубная лодка "Ашут Еркаг" вооруженная двумя 57 м/м орудиями и 4-мя пулеметами. Была неудачная попытка бронировать, орудия защищены 1/2 дюймовыми стальными щитами. Строится вторая лодка того же типа. Стоянка в с. Еленовка

Воздушный флот. Состоит из двух неисправных и одного исправного аэроплана системы Ваузен. Погос Нубаром на частные пожертвования приобретено во Франции 2 новейшего типа аэроплана, которые в Поти задержаны грузинами.

Дело АКА 74-832 продолж. листов 63-64

Вооружение и уход за ним- Артиллерия вооружена 3-х дюймовыми полевыми орудиями образцов 900 и 902 годов: горными образца 1914 г. И гаубицами образца 1910 года.

Пехота и кавалерия вооружены русскими 3-х линейными винтовками. Оружие не чистится и не смазывается.

Военно-учебные заведения.- В Эривани открыта Академия генерального штаба. Курс обучения ускоренный 9-ти месячный. Из 30-ти командированных принято 16 человек. Начальником академии генерал-майор Фисенко профессора: 1/ Полковник Стрелецкий, 2/ Генерал-Лейтенант Ахвердов, 3/ Полковник Зданович, 4/ Профессор Тотомианц (политическая экономия), 5/ Генерал-майор Гамазов (тактика артиллерии и артиллерия).

Предметы преподавания: 1/ Уставы, 2/ Тактика, 3/ В. История, 4/ Геодезия, 5/ Стратегия, 6/ В. Администрация, 7/ Политическая экономия, 8/ В. Статистика.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.8, գ.176, թ.1-4; անթիվագիր

Doc.III-34
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Կըրված Հայաստանի Հանրապետության և ՌԽՖՍՀ միջև
(10 օգոստոսի, 1920թ.)

СОГЛАШЕНИЕ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И РСФСР О
МИРЕ

10 августа 1920г.

1920г. августа 10-го дня РСФСР в лице полномоченного представителя Б.В. Леграна, с одной стороны, и представителей Республики Армения А. Джамаляна и А. Бабаляна, с другой стороны, исходя из признания независимости и полной самостоятельности Республики Армения, заключили настоящее соглашение в следующем:

1. С 12 час. дня 10 августа 1920 года военные действия между войсками РСФСР и Республики Армения считаются прекращенными.
2. Войска Республики Армения занимают следующую линию: Шахтаты-Хок-Азнабюрт-Султанбек и далее линию севернее Куки и западнее Базарчая (Базаркенд). В Казахском же уезде-линию, занимаемую ими 30 июля с.г.
Войсками РСФСР занимаются спорные области: Карабах, Зангезур и Нахичевань, за исключением полосы, определенной настоящим соглашением для расположения войск Республики Армения.
3. Занятие советскими войсками спорных территорий не предрешает вопрос о правах на эти территории Республики Армения или Азербайджанской Социалистической Советской Республики. Этим временным занятием РСФСР имеет в виду создать благоприятные условия для мирного разрешения территориальных споров между Арменией и Азербайджаном на тех основах, которые будут установлены мирным договором, имеющим быть заключенным между РСФСР и Республикой Армения в скорейшем будущем.
4. С прекращением военных действий договаривающиеся стороны прекращают концентрацию военных сил как в спорных, так и пограничных территориях.
5. Впредь до заключения договора между РСФСР и Республикой Армения эксплуатация железной дороги на участке Шахтаты-Джульфа предствояется управлению железных дорог Армении, с тем, однако, что она не может быть использована для военных целей.
6. РСФСР гарантирует свободный пропуск (с оружием и снаряжением) в Армению всех войсковых частей правительства Армении, оказавшихся за линией, занимаемой советскими войсками.

Настоящее соглашение подписывается в двух экземплярах, из коих один вручается представителям Республики Армения, другой-полномочному представителю РСФСР.

Полномочный представитель РСФСР в Армении Б. В. ЛЕГРАН
Делгаты Республики Армения А. БАБАЛЯН, А. ДЖАМАЛЯН
ЦГИАРА, ф. 200, оп. 1, д.581, л.262. Заверенная копия. Машинопись.
Опубл. в Вестнике архивов Армении, 1967, № 3, док.17, с.46.

«Армянский Вестник» www.hayastan.ru №1-2 2002г.

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐ
ԶԻԶԵՐԻՆԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂԻՂ ԳԾՈՎ՝ ՏԵՐ-

ԳԱՐԻԵԼՅԱՆԻ ԿԱՄ ԼԵԳՐԱՆԻ ՀԵՏ

Չնայած օգոստոսի 10-ին ստորագրված համաձայնությամբ Շահթաղթին թողնված է Հայաստանին, նպատակահարմար է, որպեսզի խախտելով այդ համաձայնությունը, խորհրդային կամ քեմալական ուժերը գրավեն Շահթաղթին ու Սարիղամիշը, Հայաստանի իշխանությունների կողմից փաստեր են ներկայացվում Ջանգեզուրում և Ղարաբաղում կարմիր զորքերի և խորհրդային իշխանությունների կողմից իրականացվող զանգվածային կոտորածների մասին, ընդհուպ մինչև 12-13 տարեկան դպրոցականների գնդակահարության մասին (օգոստոս, 1920թ., ոչ շուտ, քան օգոստոսի 10-ը)

ПЕРЕГОВОРЫ

По прямому проводу.

Кто у аппарата Тер-Габриэлян или ЛЕГРАН

То что Вы говорите совершенная путганица. Самый факт этой путаницы доказывает необходимость периодических разговоров нами по прямому проводу из Владикавказа точка Дело обстоит как раз наоборот никогда мы ни единого слова не говорили о том чтобы мы заняли теперь сами Шазтахты точка Перед нами был поставлен вопрос о том как мы отнесемся если турки, независимо от нас сами собственными силами без всякой связи с нами возьмут Шахтасты и Сарыкамыш точка Это именно с некоторыми фактическими дополнениями было сообщено Серго точка Он ответил шифровкой которая до нас не дошла мы просили повторения но не получили его точка Из его открытой телеграммы видно, что он считает такой оборот дела нежелательным и предпочитает чтобы мы сами заняли эти города и так это его предложение а вовсе не наше предложение Главком и Реввоенсовет Республики безусловно противятся всякому дальнейшему продвижению наших войск точка Сообщите Серго последнее а также что мы до сих пор не получили его шифровку нам необходимо получить ее скорее точка Как от носитесь Вы к возможности занятия указанных мест турками

Считаете ли необходимым чтобы мы пустили в ход все наше влияние чтобы этому помешать по мере возможности точка Дело в том, что договор 10 августа отдает Армении Шахтасты т.е. связующий пункт с Турцией от которой мы и Азербайджан результате абсолютно отрезаны, кроме того дашнакам отдаются жел. Дороги так что пути в Турцию и Персию и Макинское ханство в руках дашнаков необозримые запасы провианта Макинского ханства место нас пойдут руки дашнаков и грузинских меньшевиков а мы их лишимся неужели это было неизбежно

точка Мирный договор конечно необходим абзац Оганджян прислал трагическое радио, где кроме убийства Хорена и Тугрянана перечисляются многочисленные армянские комиссары и другие должностные лица расстрелянные нашими войсками говорится о массовых расстрелах пулеметами в Зангесуре и Карабахе нашими войсками разграблены многочисленные армянские деревни Зангезура остатки спасшегося крестьянства живет под открытым небом наши части расстреливали из пулеметов массовые даже мальчиков девочек двенадцати тринадцати лет, население доведено до отчаяния другие нашими войсками увезены в Азербайджан где многие расстреляны в самом баку были массовые расстрелы армян. Эриванское Правительство видело русские приказы о расстрелах Абзац Здем от Вас объяснений ибо такие эксцессы заставят армянские массы нас ненавидеть перспективы введения советского строя в Армении в будущем Абзац Не можете ли столкнуться Кировым Гусейновым и Серго чтобы не реже одного раза в неделю ктонибудь разговаривал с нами из Владикавказа по делам всех трех таможенных центров абзац Почему Гусейнов не посылает Литвинову инструкций и материалов для переговоров об обмене английских пленных я об этом посылал несколько Нариманову безрезультатно Абзац Ничего не знаю о том как Киров реагировал на недопустимое преступление нарушения нашей курьерской тайны точка С другой стороны надо безусловно воспретить под страхом стражайшего наказания перевозку под нашими официальными печатями чего либо кроме официальных писем точка

ЧИЧЕРИН.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 8, գ. 117, թ. 1-2; անթիվազիմ

Doc.III-36
ՏԵՂԵԿԱՆՔ

Առ այն, որ 1920-ի օգոստոսին բոլշևիկ Վ.Կիկնաձեն Հայաստանի Կոմկուսի արտասահմանյան բյուրոյի կողմից գործուղված է եղել Կարսի մարզ՝ Արևելքի Ժողովուրդների Համագումարին մասնակցելու, տեղից պատվիրակներ ուղարկելու համար, և որ այդ հարցում այնտեղ ակտիվ աշխատանքներ է տարել տեղի բոլշևիկ Վոյկինը
(Աստիճակագրական գոյություն օրոք)

КОПИЯ

С П Р А В К А .

В начале августа 1920 года я из Баку ЦЕКАЗАГБЮРО КОМПАРТИИ Армении был командирован в Карсскую область для организации посылки делегатов на съезд Народов Востока. Прибыв 7-12 августа в Карс я вместе с коммунистом тов. ДАВТЯНОМ отправились к тов. Войкину Ефиму смотрителю школы сел. Владикарс/к каковому у меня была явка/.

Тов Войкин будучи преследован дашнаками и несмотря на то, что находился в нелегальном положении после Майских восстаний в Карсе, в присутствии нашем провел собрание трудовых крестьян села где были намечены делегаты на съезд. Затем мы поручили тов. Войкину организовать посылку делегатов из других сел.

Уже в сентябре 1920 года на съезде мы увидели прибывшего тов. Войкина и с ним 3-х чел.делегатов.

Настоящее подписью своею удостоверяю. (ծեռագիր լրացում. Партбилет 0853564 с 1917г.июня мес.В.Кикнадзе начальник департамента ЗКВ ж/д ЗСФСР)

Подпись тов. Кикнадзе члена КП/Б/Грузии удостоверчем. (ծեռագիր լրացում)

Зав.общим ответ из Ленрайкома

ТККП/Б/Грузии

/печатать, подпись/

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 5, գ. 175, թ. 1; մերկնագիր

ԿԱՐՄԻՐ ԳՎԱՐԴԻԱԿԱՆ, 1918 թ. ՀԿ(Բ)Կ ԱՆԴԱՄ ԵՖԻՄ ՎՈՅԿԻՆԻ
ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅՎՈՄԿՈՒՄԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Կարսի մարզի ներկայացուցիչների Արևելքի ժողովուրդների
համագումարին մասնակցելու վերաբերյալ
(նշ շուտ, քան 1926թ.)

ПРИЕЗД В СЕЛО т.т. КИРАКОЗОВА-КИКНАДЗЕ и ДАВТЯНА,
ПОСЫЛКА ДЕЛЕГАТОВ НА съезд Народов ВОСТОКА.

...Пробыв нелегально в селе с месяц вдруг 12 августа на фазтоне ко мне приезжает т.т. Кикнадзе/-Каракозов и Давтян с предложением от имени Загбюро ЦК партии Армении послать делегатов на съезд. С ними я провел одно собрание бедняков крестьян. Наметили делегатов, а затем они мне поручили завербовать с других сел и не позже 15 августа и самому выехать на съезд в Баку. Заручившись подложным документами в с группой делегатов выехал по железной дороге в Баку. По дороге в Тифлисе мы зашли к тов. Мравьяну от которого получили часть средств а также сообщение о том, что съезд начнет 20 августа. Получив соответствующие документы мы выехали в Баку для участия на съезде Народов Востока.

СЪЕЗД НАРОДОВ ВОСТОКА. СОВЕЩАНИЕ ДЕЛЕГАТОВ ИЗ
АРМЕНИИ.

Как известно съезд открылся лишь 1-го сентября. На съезде я принимал участие как делегат и как член коммунистической фракции съезд ибо у меня был цел билет выданный Георгиевской организацией. После съезда числа 10/-12 состоялось совещание или конференция при Загбюро ЦК Армении, а затем я с группой т.т: человек до 15 через Акстафу выехали из Баку.

ЧЕРЕЗ АКСТАФУ, КАЗАХ, АЙРУНИ в Карс.

С Акстафы наши вещи на машине отвезли до Казаха, а на другой день с Казаха мы пешком пошли с проводниками через границу держа направление на Садохло-Айрум. Каждый из нас нес винтовку и патроны предназначенные для сдачи в сел” Айрум. С большими опасностями со стороны местных пастухов засевших в горах у угрожавших нам из винтовок, а такие пастухов уже при переходе границы., пасших скот и т.д. Кроме того надо отметить проходя ночью лесом под дождем мы каждую минуту опасаясь попасть в руки маузеристов ночью вышли к Садохло, а затем вынуждены были изменить направление и по берегу Реки Дебидочай или как называю Бамбак все измокшие усталые с винтовками и богажом за плечами пришли на развете в сел: Айрум Здесь под навесом развели кастер высушились распрошались и пошли я с одним из

товарищей фамилию на помню отправились к разъезду Айрум ожидая подхода поезда. Другие куда пошли мне было неизвестно. В нашем отряде были 2 женщины. Одну из них я видел на XII съезде партии в Москве.

Надув Начальника станции при приходе поезда, что мы отстали от предыдущего поезда вследствие избытости вещей поэтому остались ждать вещи дав телеграмму в Тифлис. А следующим поездом мы отправились в Александрополь.

На ст. Александрополь к моему великому изумлению ко мне подошел Начальник Карсского округа Арменак Касоян поздаровался, надо сказать, что он меня знал и уважал тем не менее он дашнак-учитель. Опасаясь его, я увельнул от него и сел в отходящий в Карс товарный поезд. Не доезжая Карс еще до семафора я соскачил с поезда и спрятался в подвале кузнеца молоканина Богданова, который предупредил меня о том, что знают о моем приезде и ждет особый отряд, затем многое рассказали о репрессиях в отношении семьи и т.д.

Дали знать в село оттуда пришли тов. Жуковы братья /один из них член партии/ и ночью переодетым увели меня в село.

Оказывается, как узнал после, выезжая из Александрополя пассажирским поездом Касоян дал телеграмму в Карс о том, что я прибыл из Баку и меня усиленно искажали по поездкам. В селе я был спрятан в подвале в котором просидел 37 дней.

Эти 37 дней моего сиденья в подвалах были для меня кошмарными. Ежедневно приезжали маузеристские отряды. Ежедневно семья подвергалась оскорблению и насилиям в результате чего на 7 день после занятия Турецкими войсками Карса жена умерла.

Но тут к моему горю надо сказать, что заняв село Владикарс Турки вывели меня на разстрел и только активное участие сельчан спасло меня. Они меня вывели по подозрению, что я армянин. Ибо 37 дневное пребывание настолько обезобразило меня оброщого волосами, что вообще я потерял человеческий облик.

Ֆ.-Պ. 1022, ց.5, գ.172, թ. 3,4; ւերիւնիզիր

ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑՈՂ ՇԱՄՇԱԴԻՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԿՈՉԸ

Իրենք այդ համագումարի որոշումներին են սպասում, որպեսզի գենքը
ձեռքին Արևելքի մյուս ժողովուրդների հետ միասին կռվի դուրս գան
դաշնակների և իմպերիալիզմի դեմ
(սեպտեմբեր, 1920թ.)

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՊՍԱՄԲ ԳՅՈՎՂԵՐԻ ԴՐՈՎԹՅՈՎՆԸ.

Դաժնակցական կառավարությունը դեռ շարունակում է անվերջ թա-
լանն ու բռնությունները Շամշադնի ապստամբ գյուղերում: Ղրզի, Նորա-
շեն, Չորաթան, Մովսես, Թավուզ, Վեր. Կարմիր-Աղբյուր, Թաթլու յեվ
Հախում գյուղերը դարձել են դաշնակցականների թալանի ու վտոնձգու-
թյունների վայրեր: Այս գյուղերի ժողովուրդը չկարողացավ տանել դաշ-
նակցական կառավարության ծանր լուծը յեվ իրանց վերա գործ դրած
կեղեքումներն ու հալածանքը յեվ լսելով, վոր Ռուսական Կոմ. Կուսակցու-
թյան կարմիր աստղը, կարմիր դրոշակով մտել է Կովկաս, ինքն ել ուժե-
րը կազմակերպեց, զինվեց յեվ մայիսի 14-ին պարզեց 111 ինտերնացիո-
նալի դրոշակ: Դաշնակ կառավարությունը այդ կարմիր դրոշակը տեսնե-
լուն պես-հավաքեց իրա զորքերի 7-րդ, 8-րդ զորագնդերը ու հարձակվեց
ապստամբ գյուղերի վրա ապստամբությունը ճնշելու համար: Իսկ ապս-
տամբաձները զինված դուրս յեկան դիմադրելու դաշնակներին, իրենց
արդար դատը յեվ իրավունքը պաշտպանելու համար: Այդ որվանից
սկսվեց կատաղի կռիվ ապստամբների յեվ դաշնակ-խմբապետական
կառավարության միջեվ: Կռիվը շարունակվեց մինչեվ հունիսի 25-ը փո-
փոխակի հաջողությամբ: Բայց երբ գեն. Բեկ-Մամիկոնյանի հրամանով
մաուզերիստների հետ միացած հակահեղափոխականներ զուլալեցի Մ.
Բեյլանցը, Ռ. Շալակյանցը, Ս. Ներսիսյանցը ու բաշքենդցի փիր Վահանը
իրանց 600-ի չափ ավազակախմբով կատաղի հարձակում գործեցին
ապստամբների վրա շրջապատելով յերկու կողմից, ապստամբները
չկարողացան դիմանալ այդ գերազանց ուժերին ու ստիպված յեղան
տուն-տեղ ապրանք յեվ ամեն ինչ թողնել յեվ հետ նահանջել խորի. Ադր-
բեջանի սահմանները: Հուլիսի 1-ին գեն. Բեկ-Մամիկոնյանի հրամանով
մաուզերիստները, հակահեղափոխական խմբապետները ներս խուժե-
ցին ապստամբ գյուղերը ու յերեք որ իրավունք ունեյին թալանուլու յեվ այն
անել, ինչ վոր իրանք են ցանկանում: Սկսվեց թալանը ու կանանց բռնա-
բարումը. Յերեք որվա ընթացքում գյուղերը այնպես թալանեցին, վոր
տեսնողը չէր կարծի, վոր այդտեղ ընտանիք է ապրել: Ավերակ դարձրե-

ցին այդ շեն գյուղերը յեվ մինչեւ այսոր գյուղերի կուակները միացած մաուզերիստների հետ ապստամբների լծկան յեզները, կովերը անխնամորթոտում, քեֆ են անում բռնի կերպով խլելով գյուղացիների հացերը:

Իսկ կոմ. Կուսակցական աշխատանք կատարողների տները կրակել, վոչնչացրել են, իսկ տավարը, արտերն ու ամեն ինչ հարքունիս գրավել:

Յերիտասարդներն անտառներում թագնված, զենքը ձեռքներին բռնած ոգնության են ապաստում: Ձինակոչի յենթարկվածները չեն ներկայանում դաշնակներին, չնայած նրան, վոր դաշնակները ծեծում, բանտարկում են նրանց ծնողներին ու բարեկամներին:

Իսկ կիսապրոլետար յեվ կիսաքաղցած գյուղացիությունը ատամները կրճտացնելով դաշնակցության դեմ որեր են համրում, որ յերբ իրենց կհաջողվի տապալելու խմբապետական կառավարությունը յեվ հաստատելու բանվորա-գյուղացիական իշխանություն:

Բաժակը արդեն լցված է, խորը քնից զարթնել է Շամշադնի գյուղացիությունը յեվ Արեվելյան համագումարի վորոշումներին ե սպասում, որ զենքը ձեռքին Արեվելյան ժողովուրդների հետ միասին կովի դաշնակների յեվ իմպերիալիզմի դեմ:

Արեվելյան ժողովրդի համագ.
Շամշադնից յեկած պատգամավորներ.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 4, գ. 68, թ. 34-35; մեքենագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ
ՆԱԽԱՐԱՐԻՆ

Տեղեկացնում է Բաքվից եկած հայ բուլշևիկ Դովլաթովի և նրա քարտուղարի հետ իր հանդիպման մասին, որի ընթացքում քննարկվել է Խորհրդային Ադրբեյջանի դիվանագիտական միսիայի գործունեությունը վերսկսելու հարցը Հայաստանում
(24 օգոստոսի, 1920թ.)

24/VIII, 1920թ

Արտաքին Գործերի Պ. Նախարարին

Այսօր Օգոստոս 20-ին Ա.Գ.Ն. այցելեցին Բաքվից եկած բուլշևիկները՝ Դովլաթովը իր քարտուղարի հետ: Վերջինս 19-20 տարեկան մի երիտասարդ է, կրում է մի մեծ արծաթեայ բուլշևիկեան նշան եւ ամբողջ խոսակցութեան ընթացքում չարտասանեց եւ ոչ մի խոսք: Դովլաթովը 25-28 տարեկան երիտասարդ է խոսում է մեծ ապլոմբով եւ շաբլոն խոսքերով:

Դովլաթով խնդրեց ինձ տալ վերջնական պատասխան իրեն տրած հարցերին, Ձեր յանձնարարութեամբ ես նրան յայտնեցի որ այն հարցն, որի համար նոքա պաշտոնապես եկել են նախկին Ադրբեյջանեան Միսիայի գործերի քննութեան եւ Միսիայի գործունեութեննը վերսկսելու առթիւ Հայաստանի Հանրապետութիւնը տալիս է դրական պատասխան, ոչինչ դեմ չունինք Ադրբեյջանի Դեպլոպատիական յարաբերութիւն վերսկսել ունենալով համապատասխան ներկայացուցիչներ, բայց նոքա պիտի լուծեն հետեւեալ հարցերը.

1. Պարզեն մեր ներկայացուցիչ Յուրութեանեանի իրաական դրութիւնը, տալով նրան համապատասխան արտոնութիւններ, իբրեւ դիպլոմատիական ներկայացուցիչ:
2. Լիկվիդացիայի ենթարկեն այն բոլոր առկախ մնացած հարցերը, որոնք կապ ունին Յարութիւնեանի բանտարկութեան հետ, օր. Վերադարձնեն արխիւը, խլած ապրանքները եւ այլնք:
3. Ստեղծեն մեր եւ Ադրբեյջանի միջեւ Ռադիոյի եւ հեռագրական կանոնաւոր հաղերդակցութիւն:
4. Թոյլ տալ ազատ օգտիլ շիֆրով ու կուրրերներով:

Այդ բոլորոց յետոյ յայտնեցի, որ նոցա ներկայացուցիչը կը օգտի մեզ մոտ նոյն իրաւունքներով, ինչպիսին արւին Բազում մեր ներկայացուցիչի:

Դովլաթովը խոստացաւ այդ բոլոր հարցերը շատ շուտ կարգաւորել:

Ապա Դովլաթովը հետաքրքրուեց թե ինչ պատասխան է տալիս կառավարութիւնը կօնֆերանցիա գումարելու առաջարկին: Ես ... աներից նոքա լիազօրուած չեն մեզ հետ բանակցելու այդ հարցի առթիւ, մանաւանդ որ մենք ստացել ենք նոյն առաջարկը անմիջապէս Բագրից եւ արդէն տւել ենք պատճառաբանուած բացասական պատասխանը: Բայց նրանց հետ կարող եմ խոսել այդ հարցի շուրջը ոչ պաշտոնապէս: Իմ կարծիքն է որ բացի մեր պատասխանի հիմունքներից կա եւ մի ուրիշ հանգամանք, որը անօգուտ է դարձնում այդպիսի կօնֆերանցիաները: Մուսաֆատիսների հետ մի քանի անգամ փորձեր արինք այդպիսի կօնֆերանսներ ունենալ, բայց միշտ անօգուտ, քանի որ նրանց կողմից չկար անկեղծ ցանկութիւն համաձայնութիւն գալ մեզ հետ: Վախում եմ որ նոյնը կարող է կրկնուիլ եւ այժմ: Դովլաթովը մի քիչ նեղացած յայտնեց, որ չի կարելի մուսաֆատական Կառավարութիւնը համեմատել իրենցի հետ: Ես նկատեցի որ ի հարկէ դա ճիշտ է, բայց պետք է աչքի առաջ ունենալ եւ այն հանգամանքը, որ իրենց նարկոմինդել Հիւսէյնովը պայման կապեց Բէգզադեանի հետ կօնֆերանցիա գումարելու մասին, մենք աշխատեցինք այդ կօնֆերանսը գլուխ բերել, բայց մինչ այդ սկսեց Սովետական զօրքերի առաջխաղացումը Ղարաբաղում եւ Զանգեզուրում, այնպէս որ այնքան էլ հաւատ չունինք: Մենք կարծում ենք որ կօնկրետ հարցերը օրինակ գաղթականների, բանտարկեալների տրանզիտի, նաւթի եւ այլ հարցերը կարելի է լուծել մեր դիւանագիտական ներկայացուցիչների միջոցով: Դովլաթովը համաձայնեց, որ իսկապէս դա հնարաւոր է, հարկաւոր է միայն շուտով նշանակել պատասխանատու ներկայացուցիչ: Առ Այժմ սահմանափակ իրաւունքներով նա թողնում է Միսսիայի նախկին քարտուղար Միրիսուֆ Միրբաբանին:

Այդտեղ ես նրա ուշադրութիւնը հրաւիրեցի այն հանգամանքի վրայ, որ մուսաֆատական դիպլոմատները կրկին գործի են կանչում, օր. Մակինսկին հիւպատոս Թիֆլիսում, Տիկինսկին Բագում եւ այլն:

[...]

Ես նրան բացատրեցի աֆսոսօքիլի գրաւելու պայմանների հետ եւ նա կարծես գոհացում ստացաւ: Այդտեղ ես մատնանշեցի որ դժբախտաբար Մուսաֆատի դիպլոմատները փոխանակ իրենց անմիջական գործերով զբաղւելու ապստամբութիւններ էին կազմակերպում մեր դէմ ու դրամներ շոյլո՛ւէմ բայց նոքա ստացան իրեն արժանի յատուցումը /այնպիսի ձեւով եւ տօնով էր ասուած որ նոքա հասկացան, որ դա վերաբերում է ու նոցա ապագայ գործունէութեանը/:

Խոսակցութեան ընթացքում Դովլաթովը մի յայտարարութիւն արաւ, որը կարելի էր եւ համարում արձանագրել. 'Ինչպէս կերելի Դուք թիրիմացութեան մեջ էք: Դուք կարծում եք որ Աղըրբէյջանը ինքնուրոյն Հան-

րապետություն է, Ամենեփն ոչ: Դա Ռուսաստանի անբաժան մասն է եւ բոլոր դիրիկտիւնները ստանում է Մոսկվայից, նամանաւանդ Արտաքին քաղաքականութեան հարցերում եւ Սովետական Հանրապետութիւնների մէջ Ձեր ենթադրելիք ինքնուրոյնութիւնը չի էլ կարող լինել: Այն Դուք թիրիմացութեան մէջ էք: Ես պատասխանեցի որ այո ինչպես երեւում է, մենք սխալած ենք եղել, նամանաւանդ երբ կարդացել ենք Բագի թերթերը եւ լսել ենք բօլշեփկներին: Այժմ մեզ համար պարզ է որ այդպէս է:

Ապա ես հարց տի, ինչ կարիք կայ այդ դէպքում ունենալ երկու ներկայացուցչութիւն Լըզրանի եւ իրնեց: Դովլաթովը խուսափեց պատասխանից:

Վերջում Դովլաթովը յայտնեց որ նա բաւարարած է մեր պատասխաններով եւ վաղը 2 ին մեկնում է դէպի Դիլիջան բայց խնդրում տալ յանձնարարական գլխաւորապէս Սեպուհի անունով, որից երեւի Դովլաթովը շատ էր վախենում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ /Սպորազրոյթուն/
/Ալ. Տեր-Յակովբեան/.

ՀԱԱ, Ֆ-Պ. 200, ց.1, գ.4, թ.36; մէքենսագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ՝ ԲԱՔՎՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ
ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՐԸ

Կոչ է արվում Արևելքի մյուս եղբայրական ժողովուրդների հետ միասին պայքարել համաշխարհային իմպերիալիզմի դեմ և Հայաստանում տապալել դաշնակցականների իշխանությունը (28 օգոստոսի, 1920թ.)

Պրովետարներ բոլոր յերկիրների միացեք.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.

Կարմիր Կոմունիստական Ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն 1920թ սեպտեմբերի 1-ին Բազվում հրավիրում է Արեվելյան ժողովուրդների, Պարսկաստանի, Հայաստանի յեվ Տաճկաստանի բանվորների ու գյուղացիների համագումար:

Կոմունիստական Ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն, վորպես անգլիական, ֆրանսիական, ամերիկական, գերմանական, իտալական յեվ մյուս բոլոր յերկիրների հեղափոխական աշխատավոր մասսաների կամքի անկաշառ արտահայտիչը, իր սրբազան պարտքն է համարում խորհրդակցել Արեվելքի ժողովրդների պատգամավորների հետ բանվորա-գյուղացիական խավերի ընդհանուր թշնամու, համաշխարհային իմպերիալիզմի դեմ կռվելու վեհ գործի համար:

Հանուն աշխարհի հեղափոխական բանվորների արյան գնով ստեղծված 3-րդ ինտերնացիոնալը, բոլոր հալածված ժողովրդների այդ զինվորական ու հեղափոխական շտաբը, դիմում է համաշխարհային կապիտալի լծի տակ ճնշվող բոլոր ժողովրդներին, միանալ պայքարող աշխատավորների շարքերին յեվ միահամուռ ուժով կորեզլուխ տապալել համաշխարհային կապիտալի թագավորության մնացորդները: Արեվելքի աշխատավորների արթնանալը կըփութացնե տիեզերական կապիտալի անկումն ու կը ապահովե բանվորների ու գյուղացիների ազատագրությունն ամբողջ աշխարհում:

Հայաստանի բանվորներ ու գյուղացիներ. յերկար տարիների ընթացքում դուք յեվս ոտար կապիտալի զոհերն եք յեղել: Ձեր վորդիների ու յեղբայրների թափած արյունն յեվս ծառայել է գիշատիչ ու ավազակաբարո կապիտալիստների վոսկիների բազմացման:

Թերյեվս վոչ մի ժողովուրդ ժամանակակից մեծ պատերազմների ընթացքում այնքան մեծ հարվածներ չի կրել, վորպես հայ ժողովուրդը յուր հակա-հեղափոխական ու նեղ նացիոնալիստ ղեկավարների շնորհիվ, նա միշտ յենթարկվել է իմպերիալիստական յեվրոպայի ազենտների կորստաբեր ազդեցության:

Խաբված հայ գյուղացին ու բանվորը յերկար տարիների ընթացքում սպասավորել է յեվրոպական իմպերիալիստներին ու նրանցից սպասել իր կյանքի ապահովությունն ու ազատագրումը:

Թալանելով յերկրագունդը, իմպերիալիստները միշտ ձգտել են միյեվ-նույնը անել Տաճկաստանում: Այդ իսկ նպատակով քաղաքակիրթ գազանները ոգտագործել են քրիստոնյա ազգությունների անբավականությունը տաճկական ռեժիմից: Շնորհիվ իմպերիալիստների այդպիսի պոռնիկ քաղաքականության, քրիստոնյաները միշտ քննվել են-հարեվան թյուրք, -պարսիկ ու քուրդ տարերի կողմից-վորպես ոտար ավազակ-բռնակալների ազենտներ. վորպես իմպերիալիստական կառավարությանը իլու սպասավորներ: Ահա թե ինչու յեվրոպական իմպերիալիզմի դեմ պայքարող մասսաները անհրաժեշտաբար իրենց տարրերային շարժումների ընթացքում նետվել են ամենից առաջ բուն յերկրում ապրող իմպերիալիստական փոքրիկ զոր-ազգերի-մանր ազգությունների վրա:

Յեվ այդ բոլորը արվել է շնորհիվ հայ քաղքենի ինտելիգենտների հայ նացիոնալիստների, հայ վարժապետների ու տիրացուների, մի խումբ այլաստոված հոգիների-դաշնակցություն կոչված վոհմակի նենգ ու հանցավոր քաղաքականության հետեվանքով:

Այժմ ավելի քան յերբ յեվե հայ գյուղացին ու բանվորը հավատացած ենք, վոր այսոր բոլոր այն դառն որերից ու փորձառություններից հետո, վոր անցել են հայ ժողովրդի գլխով: Հայաստանի աշխատավոր տարրերը տարրերային կերպով, իրենց կաշվի վրա զգացած օրինակների հիման վրա, ընթնել են հայկական ներկա կառավարությունը ու նրա մեղսակից 'դաշնակցության' կուսակցությունը, թալանչի խմբապետների, ավազակաբարո մաուզերիստների ու թերուս վարժապետների այդ առանձնահատուկ կոնգլոմերատը, վոչ միայն ամենեվին ընդունակ չե բարելավելու բարոյապես ընկճված, տնտեսապես քայքայված, հավլած ու մաշված Հայաստանի աշխատավորության վիճակը, այլ ընդհակառակը, որեցոր այդ սնանկացած կուսակցությունը կորցնում է իր հավասարակշռությունը, հայ քաղցած բանվորին ու ընչազուրկ գյուղացիության տանում է դեպի անհուն անդունդը:

Ամեն մի հայ գյուղացու ու բանվորի համար փաստ է, վոր դաշնակցականները ժողովրդի թշնամիներն են, վորովիետեվ նրանք առաջնորդվում են գիշատիչ ու բռնակալ իմպերիալիստների, անգլիական լորդերի,

Ֆրանսիական բանկիրների ու ամերիկական ֆաբրիկանտների թելադրանքով դաշնակցականները ժողովրդի դավաճաններն, վորովիետեվ հայոց հարցը նրանք ուզում են վճռել իմպերիալիստների վտոքերը լիզելով ու անվերջ ու անմիտ ազգամիջյան կոտորածներ ստեղծելով դաշնակցականները ժողովրդի դահիճներն են, վորովիետեվ գազանաբար գնդակահարում են ժողովրդի իսկական բարեկամներին, Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին-կոմունիստ ընկերներին:

Պարզ ե, վոր նրանք այսոր յեվս աշխատում են հայ ժողովուրդը տանել հին ուղիով, վարակել հայ բանվորին ու գյուղացուն հին թոյնով, վորպեսզի իմպերիալիստներից ստացած վոսկիների փոխարեն հատուցեն նրանք:

Սակայն այդ չի հաջողվի, քանի վոր իմպերիալիզմի շնորհիվ զոհված հայ ժողովուրդը չի կարող չզգալ, ամենամեծ ճշմարտությունների ճշմարտությունը, վոր միմիայն Արեվելքի բոլոր ժողովրդների համագործակցության ու միջազգային քաղաքականության մեջ ե նրա փրկությունը, վոր միմիայն սերտ ընկերական ու յեղբայրական կապերով կապվելով իր հարեվան-թուրք, պարսիկ ու քուրդ ժողովուրդների հետ ու կովելով Արեվելքի բռնակալների իմպերիալիստների դեմ, կարող ե նա ապահով կացություն ստեղծել իր համար:

Այլ յելք չկա: Դա յե միակ ճշմարիտ ուղին, միակ նպատակահարմար ու միյեվնույն ժամանակ ազատարար միջոցը: Վոչ միայն իրապես կազատագրե հայ աշխատավորներին, այլ յեվ հնարավորություն կտա նրանց խաղաղ շինարարական գործ ձեռնարկելու:

Ընկերներ.

Միակ կուսակցությունը, վոր ընդունակ ե այդ միջոցը կիրառելու, միակ կուսակցությունը, վոր ընդունակ ե ազատագրելու Արեվելքի ստրկացած ժողովուրդներին ու դրա հետ ամբողջ աշխարհի տառապող աշխատավորությունը, վոր գործով ապացուցել ե իր անկեղծ բարեկամությունը դեպի ճնշված ու հալածված մասսաները- դա կոմունիստական կուսակցությունն ե-արեվելյան ազգերի համագումարի հեղինակը:

Մեր կուսակցությունը չեր կարող բավականանալ միայն Ռուսաստանի ժողովուրդների ազատագրմամբ, նա կոչված է ամեն կերպ ոգնելու բոլոր շահագործված ժողովուրդներին տապալելու իմպերիալիստների անարգ լուծը: Այսոր կոմունիստական կուսակցությունը կոչ ե անում Արեվելքի բոլոր ժողովուրդներին ի մի համախմբվել ու համերաշխ գործունեությամբ, միահամուռ ուժերով գրոհ տալու դեպի յեվրոպական իմպերիալիզմը, ջախջախելու այն դարավոր կապանքները, վոր ստրկացնում են բաժան-բաժան յեղած ժողովուրդներին:

Վոչ անգլիական լորդերն, վոչ ֆրանսկան բանկիրները, վոչ ամերիկական ֆաբրիկանտներն ու լեհական պաները, վոչ դաշնակներն ու մենշեվիկները յեվ վոչ բեկերն, աղալարն ու խաները, վոչ վոք չի կարող դիմադրել միլիոնավոր աշխատավորության կամքին-նա ձեռք կբերե այդ ազատությունը:

Հեռու չե այն որը յերբ համերաշխ ու միության գործակցությամբ Արեվ-յեթի բոլոր շահագործված ու ճնշված ժողովուրդները կազատագրվեն իմպերիալիզմի անարգ լծից ու իրենց բազուկներով վեր կբարձրացնեն կոմունիստական կարմիր ինտերնացիոնալի փառավոր դրոշակը:

1. Կեցցե Արեվելյան ժողովուրդների համերաշխության յեվ ազատագրման զավակները-արեվելյան ժողովուրդների առաջին համագումարը:
2. Կեցցե Արեվելյան ժողովուրդների համագումարի հեղինակը, Կոմ. Ինտերնացիոնալը:
3. Կեցցե բոլոր յերկրների աշխատավորների միությունը:
4. Կեցցե բանվոր-գյուղացիական հեղափոխությունը:
5. Թող կորչի իմպերիալիզմը.-
6. Թող կորչեն մեծ յեվ փոքր իմպերիալիստները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄ.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՅՈՒՐՈ:

‘ԿՈՄՄՈՒՆԻՍՏ’ Նո.77
28-ին ոգոստոսի 1920թ.

ՀԱԱ, ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 274, թ. 6-7; մեքենագիր

Doc.III-41

ՀԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ
ՀԿԿ Կենտկոմի և արտասահմանյան բյուրոյի կազմերի մասին
(օգոստոս, 1920թ.)

Ձեռագիր

Протокол заседания Кавбюро
(бакинская тройка)

Присутствовали: т.т.Зиновьев, Радек, Бэла Кун, Киров, Стасова,
Элиава, Легран

Порядок дня:

1. Армения
2. Грузия
3. Азербайджан
4. Персия
5. Совет действия

1.О составе Ц.К. Коммунистической Партии Армении и о заграничном бюро Армении.

Утвердить Ц.К.Коммунистической Партии Армении в составе: т.т. Довлатова, Ависа, Костаняна, Тер Габриеляна, Агаси и местного товарища из состава товарищей работающих в Армении (и с ведома Эриванской группы). Кандидатами:Амирханов, Шахгалдян В. Все дела касающиеся зарубежной работы в Армении решаются совместно Кавбюро с т.т. Довлатовым, Костаняном, Ависом.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 258, թ. 1-2; ձեռագիր, լրիսիսիսիսիսիս

Doc.III-42

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ
1920-ի ամռանը Խորհրդային Զանգեզուրի վրա դաշնակցական
կառավարության հարձակման պատճառով օգոստոսի 2-ի գիշերը տեղի
«Չե-կա»-ի կողմից գնդակահարվել են չորս դաշնակցական գործիչներ
(2 օգոստոսի, 1920թ.)

“Товарищи и Граждане,
Вследствие вероломного нападения Дашнакского Правительства на
Советский Зангезурь, въ ночь на 2-ое августа разстреляны дашнаки:
Аршакъ ШИРИНЯНЪ, Ваганъ ХОРЕНИ, Захар ТЕР-ГАЗАРОВ и
Михаил АГАМЯНЪ.

Չե-կա.”

Յիրո: Ի.օ. Դիլոպրոизводителя Миссармен /подпись/

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.2, գ.160, թ.1; սերննագիր

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՑՈՒՑԻԶ

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԶԵՎՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի մանրամասների, այնտեղ էնվեր փաշայի մասնակցության, հայ բոլշևիկների հակահայաստանյան դիրքորոշման և այն մասին, որ այդ համագումարը ‘սրբազան պատերազմ’ հայտարարեց արևմտյան կապիտալին, որի սպասավորն է համարվում Հայաստանը, որն Անգլիայի աջակցությամբ ամրանում է իբրև սեպ, և իրարից բաժանում կարմիր Ռուսաստանը հեղափոխական Թուրքիայից (10 սեպտեմբերի, 1920թ.)

Պատճեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻՆ

No.1303

‘10’ Սեպտեմբերի 1920թ.

Ամսույս 1-ին Բազվում բացվեց Արևելյան ժողովուրդների ներկայացուցիչների համագումարը, վորին մասնակցելու յեկել են ամեն կողմից պատվիրակներ-թե Յեվրոպայի յեվ թե Ասիայի ժողովուրդների կողմից: Հատկապես այդ համագումարին մասնակցելու համար Սովետական Ռուսաստանի կենտրոնից ոգոստոսի 31-ին Բագու յեկան Չինովյեվ, Բելա-Կուն, Ռադեկ յեվ ուրիշները: Համագումարին մասնակցելու համար Բագու ե յեկել նայեվ Ենվեր Փաշան:

Հյուսիսից յեկող հյուրերը իրանց ուղեկիցներով կայարանից ուղղակի գնացին Բազվի բանվորների, նավաստիների ու զինվորների խորհրդի արտակարգ նիստը, վորտեղ յեվ բանախոսեցին , արտասանելով որվա պատշաճ վողջույն ու ծրագրային ճառեր /տես “Коммунист” N. 102/, Խորհրդի նիստը տեվեց մինչեվ գիշերվա ժամը 4-ը:

Ամսույս 1-ին կայացած համագումարի առաջին պաշտոնական նիստում Չինովյեվ մի ծրագրային ճառ ե արտասանել, վորով ի միջի այլոց հրավեր ե կարդում համագումարի պատգամավորներին ‘սրբազան պատերազմ’ հայտարարել արեվմուտքի գիշատիչների դեմ /տես “Коммунист” N. 103 յեվ 104/: Համագումարի այդ նիստին ներկա յեղող հանդիսականների պատմելով՝ Չինովյեվի այդ մարտահրավերին անմիջապես

արձագանք ե տալիս բեմի վրայից Ադրբեջանի Չեկայի-նախագահ Ալի-յեվլը սուրը մերկացած առաջ գալով դեպի հասարակությունը, վորին ան-միջապես հետեվում են թատրոնի դայիճում համախմբված խայտաբղետ մահմեդական պատգամավորները, վորոնք սրերը մերկացնելով յեվ ստրճանակները բարձրացնելով սկսում են ողի մեջ ճոճել ու յերգվել զեն-քերի վրա բոլոր միջոցներով առաջ տանել սրբազան պատերազմը: Ներ-կա յեղող վոչ մահմեդական պատգամավորների ու հանդիսականների վրա այդ վայրենի տեսարանը շատ ծանր տպավորություն ե թողնում:

Չինովյեվ յոր ճառի մեջ ի միջի այլոց մանրագնին քննության ե յեն-թարկում նայել պանիսլամիստական շարժումը յեվ դատապետում նորա դեկավարներին, համարելով այդ շարժումը կոմունիզմի տեսակետից վնասակար յեվ հեղափոխական գաղափարը մթացնող մի ձեռնարկ: Բայց ի նկատի առնելով կոմունիզմի ապագա հաջողությունն ու հեղափոխության նվաճումները արեվելքում, մենք հպատակահարմար ենք համարում ժամանակավորապես պաշտպանել արեվելյան ժողովուրդների ազգային շարժումներն, իբրեվ ժողովրդի հեղափոխական տրամադրության արտա-հայտություն, ուղղված Անտանտի դեմ: Պետք ե աշխատել ոգտագործել ազգային շարժման ղեկավարներին ու կողմնակիցներին ու կոմունիստա-կան ուղղություն տալով այդ շարժման՝ մոել արեվմտյան գիշատիչների դեմ ու այդպիսով ստեղծել արեվելքի աշխատավորության դիկտատուրա:

Չինովյեվի ճառը դուր չի գալիս համագումարի այդ նիստում իբր հյուր ներկա յեկող Ենվեր փաշային, վորին ոթյակում նստած ժամանակ ամեն մի ադրբեջանցի թուրք յեվ մահմեդական պատգամավոր սրբազան պար-տականություն ե համարում ականածությամբ մոտենալ նրան յեվ ձեռքը համբուրել: Ենվեր փաշան ցանկություն ե հատյնում համագումարի նա-խագահության մի զեկուցումն անել համագումարին յեվ պարզել յուր տե-սակետը: Ենվերի այդ առաջարկը խորհրդակցության առարկայ ե դառ-նում վոչ միայն նախագահության մեջ, այլ յեվ կոմունիստական կենտրո-նական կոմիտեյում յեվ համագումարի պատգամավորների մեջ, վորտեղ հրապարակ են գալիս թեր յեվ դեմ խոսող հռետորներ: Ամսույս 4-ին այդ առաջարկը քննվում եր նայել տեխնիքական դպրոցի շենքում, վորտեղ հյուրընկալված են մեծ մասամբ Թուրքմենստանի, Պարսկաստանի, Դաղստանի յեվ Ադրբեջանի զանազան վայրերից յեկած մահմեդական պատգամավորներ: Այդ ժողովում ռուս յեվ լեռնցի մահմեդականներից վո-մանք /Կոռխմազով Դաղստանցի/ խիստ քննադատության յենթարկեցին Ենվիր փաշայի անձնավորությունը յեվ անցյալ ու ներկա գործունեությու-նը, անվանելով նրան արյունարբու, մարդասպան բախտախնդիր քաղա-քական գործիչ յեվ այլն, այնդելով վոր վոչ մի դեպքում չպիտի թույլատրել

մի այդպիսի անձնավորության հրապարակ գալ համագումարում, վորը կարող է արատավորել մեզ մեր անվտյան ընկերների աչքում:

Նույն որը Նարիմանովի ու Ենվերի ցանկությամբ քաղաքիս Թազափիր մեջիդում գումարվել է մահմեդականների մի մեծ ժողով, վորտեղ բանախոսել են թե Նարիմանով յեվ թե Ենվեր. Կոչ անելով ոգտագործել մեծամասնականների հայտարարած սրբազան պատերազմը, հարյուր հազարանոց մի բանակ կազմել, վորի գլուխ անցած ինքը մի ամիս հետո կարող է արշավել դեպի Անատոլիա Տաճկաստանն ազատելու: Անգլիայի գերությունից: Այս բոլորը նախապատրաստական աշխատանքներ են, ագիտացիոն բնություն կրող, վորով աշխատում են տգետ, խավար, վոչ միայն ‘Կոմունիզմի’, այլ յեվ սոցիալիզմի տարերքի մասին հասկացողություն չունեցող զանազան վայրերց, ‘պատգամավոր’ անվան տակ հավաքված անլեզու, լուռ հանդիսատեսների բազմության տրամադրությունը շահելու, վորպեսզի պաշտոնական նիստում տապալել կարողական Ենվեր փաշայի հրապարակ գալու խնդիրը: Բայց թե վորքան է հաջողվելու այդ նրանց, բավական կասկածելի է, քանի վոր արեվելյան ժողովուրդների համագումարի պատգամավորների մեծագույն մասը մահմեդականներ են, իսկ մահմեդականները Ենվեր փաշային սրբացնում են յեվ իրանց զգացմունքները նորա ձեռքերն ու քղանցքները համբուրելով արտահայտում: Արեվմտյան կապիտալի ու Անտանտի դեմ հայտարարած սրբազան պատերազմը հարմար ադիթ է կոմունիզմի տակ պանիսլամիստական ծրագիրն առաջ տանելու յեվ վաղուց յերազած համատարած մահմեդական տիրապետության ծրագիրն իրագործելու: Մեծամասնականների քաղաքական հասունության ու իմաստության արտահայտությունն է, վոր արեվելյան ժողովուրդների համագումարում ցուցադրվում է:

Ենվեր փաշան Բերլինում է յեղել յեվ հատկապես այս համագումարի համար բերել են տվել Յեվրոպայի վրա ճնշում գործ դնելու համար: Ենվեր փաշան այստեղ մահմեդականների հետաքրքրության առարկա է դարձել. Բազմաթիվ դելեգացիաներ են գնում նորա մոտ բարի գալուստ մաղթելու յեվ միյեվնույն ժամանակ նրանից ուղեցույց խնդրում իրանց անելիքի համար, վորոնց պատասխանում է, թե համբերեցեք:

Համագումարը յերկու ֆրակցիա ունի-կոմունիստական յեվ անկուսակցական, աշխատանքներն ընթանում են կոմունիզմի դրոշակի տակ: Հատկապես Ենվերի անձնավորության վերաբերությամբ կոմունիստական ֆրակցիայում հարց է յեղել դրված զրկել նրան համագումարի անդամակցությունից յեվ թոյլ չտալ վոր նա հրապարակ դուրս գա խոսելու: Շատ կոմունիստներ խիստ ճառեր են արտասանել նրա դեմ, համարելով նորա մասնակցությունը իրանց համար անպատվաբեր, վոր նա պատճառ է յեղել Տաճկաստանի կործանման յեվ հարյուր հազարավոր մարդկանց

կորուստի: Այդ ժողովում այնպիսի տրամադրություն է ստեղծվել, վոր Ենվերին թույլ չտան խոսելու, բայց վերջում Զինովելը առաջարկում է ժողովականներին հնարավորություն տալ նրան խոսելու յեվ ապա հրապարակով քննության յենթարկել նորա արտահայտած մտքերը յեվ ժողովականների աջքերը բանալ: Ամենից ուժեղ յեվ խիստ հարձակումն է գործում Ենվերի վրա տաճկական կոմունիստ Սուքիի. Համագումարի սեպտեմբերի 4-ի յերեկոյան նիստում Ենվերը ձայն է ստանում յեվ, փոխանակ խոսելու, գրավոր դեկլարացիա է ներկայացնում, վորի բովանդակությունը հետեվյալն է մոտավորապես, վոր Թյուրքիան միայն պաշտպանողական պատերազմ է մղել, վոր Ենվերն ու յուր կողմնակիցները համակրողներ են կոմունիստական ծրագրի, խնդրում են վոր իրանց ել վստահեն յեվ մասնակից դարձնեն ընդհանուր հեղափոխական շարժման: Համագումարի պատասխանը յեղել է մի բանաձև, վորով պահանջում է Ենվերից ու նորա համախոհներից գործով ապացուցել յեվ վստահություն ձեռք բերել:

Համագումարում մի ակներեվ խաղ է կատարվում: Արեվելյան ժողովուրդների ու կարմիր կոմունիզմի քողի տակ կողմերից յուրաքանչյուրը պանիսլամիստներն ու կոմունիստները աշխատում են իրար խաբել յեվ գործիք դարձնել: Դժվար թե այս պարագաներում մի այլ տեղ հնարավոր լիներ այսպես հեշտությամբ յեվ այսպես ազատ կերպով հավաքել պանիսլամիստ մահմեդականներ աշխարհի բոլոր ծայրերից յեվ նրանց հնարավորություն տալ իրանց առաջիկա գործունեության մասին ծրագիր մշակել: Վորքան ել կոմունիստները աշխատում են առաջիկա կռիվն յերկյակ բնավորություն տալու-այսինքն ընդդեմ Անգլիայի ու արեվելքի տիրապետող դասակարգի-սակայն ժողովականների հսկա մեծամասնության համար այն սրբազան պատերազմը, վոր համագումարը հայտարարեց արեվմտյան կապիտալի դեմ, վոչ այլ ինչ է, յեթե վոչ մահմեդականության կռիվ քրիստոնեության դեմ, այսինքն մի սովորական ‘ղազավատ’, Ենվերը պահանջում է, վոր Անգլիայի դեմ արեվելքում մղվելիք առաջիկա պատերազմի մեջ հրամանատարությունն իրան հանձնվի, վոր յուր հեղինակությամբ ու զինվորական մասնագիտական պատրաստությամբ կարողանա վտրքի հանել Թուրքեստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը յեվ մյուս մահմեդական յերկրները:

Վերջին որերս այստեղ մամուլը շարունակ զբաղված է Վրաստանի յեվ Հայաստանի հարցով: Առասպելական բաներ են գրում մանավանդ Հայաստանի մասին, վորը իբր թե հսկայական ոգնություն է ստանում Անգլիայից զենքով, ռազմամթերքով յեվ պարենով ու պատրաստվում է դաշն կանքելով Հունաստանի հետ՝ կռիվ սկսել հեղափոխական Տաճկաստանի դեմ: Աստիճանաբար հասունանում է այն միտքը, վոր պետք է Սովետական դարձնել Վրաստանն ու Հայաստանը: Ինչ ճանապարհով այդ անել,

այստեղ յեվս յերկու հոսանքները տարբերվում են: Կոմունիստ ռազմագետները կարծում են, վոր Թիֆլիսի գրավումով այդ յերկու հանրապետությունների հարցը միանգամից կը լուծվի Հայաստանը առանց արյուն թափելու անձնատուր կլինի, իսկ թուրք յեվ տաճիկ չակերտավոր կոմունիստները կարծում են, վոր գրավումը պետք է սկսել Հայաստանից, նրանց մեջ իշխող կարծիք է , վոր Հայաստանը բավական խոշոր դիմադրական ուժ ունի, հետեվաբար յեվ նրա վրա պետք է գնալ լավ պատրաստությամբ:

Ի տես այս համագումարի բնույթի յեվ ենվեր փաշայի մասնակցության, կարծել թե հայ կոմունիստների մեջ սթափումն է առաջ գալիս: Դրանից չափավոր մտածող տարրը, վոր առաջ մի տեսակ ահաբեկված Ավիս Միկոյանի ընկերությունից, չէր համարձակվում վոչ միայն դրսի մարդկանց մոտ, այլ յեվ իրանց ընկերների շրջանում բողոքել ու պնդել յուր տեսակետների վրա, այժմ աստիճանաբար ծայնը բարձրացնում է, իսկ մյուսներից վրմանց մեջ կարծես զղջման նշաններ են յերեվում: Անշուշտ այս նոր տրամադրությունը ռեալ արժեք չունի, քանի որ սեվ գործն արդեն կատարված է: Արեվելյան համագումարը ‘սրբազան պատերազմ’ հայտարարեց արեվմտյան կապիտալին, վորի սպասավորն է համարվում նայեվ Հայաստանը. Այլ յեվս դաշնակցությունը չէ, վորի վրա հարձակումներ են տեղի ունենում, այլ Հայաստանը, վորին հիմա այստեղ անվանում են մի նոր Լեհաստան, վորը Անգլիայի աջակցությամբ ամրանում է իբրեվ սեպ յեվ իրարից բաժանում կարմիր Ռուսաստանը հեղափոխական Տաճկաստանից ու Պարսկաստանից:

Լեգրանը յուր խորհրդական Սիլինի հետ այստեղ եր համագումարի բացման որից: Ամսույս 6-ին յերեկոյան նա մեկնեց Թիֆլիս, ըստ մեր տեղեկությունների, մի կարեվոր խորհրդակցության մասնակցելու համար, վորպեսզի նորից վերադառնա այստեղ. Ասում են նույնպես, վոր այստեղ խորհրդակցություն են ունեցել Զինովեվ, Ռադեկ, Կիրով յեվ Լեգրան յեվ հատուկ սուրհանդակ են ուղարկել Մոսկվա Անդրկովկասի առաջիկա գործունեության մասին հարցումներով: Անսպասելի կերպով համագումարի աշխատանքներն արագացրին յեվ աշխատում են ամսույս 9-ին վերջացնել:

Ամսույս 7-ին տեղեկություն ստացանք, վոր Մոսկվայից այստեղ հեռագիր է ստացվել, վոր եթե Հայաստանը պնդի Ղարաբաղի վրա յեվ ուզենա պատերազմական գործողություններ սկսել, այն դեպքում զիջել Ղարաբաղը Հայաստանին ու պատերազմի չհասցնել:

Տեղեկություն ստացանք, վոր Պարսկաստանը վերջնականապես մաքրում են մեծամասնականները յեվ բոլոր հաստատությունները փոխադրել են Բագու: Այնտեղից նոր վերադարձած մի հայ կոմունիստի պատմելով Սովետական Ռուսաստանի արեվելյան քաղաքականությունը

անուղղելի կերպով տապալվեց յեվ այնպիսի ատելություն առաջ բերեց պարսկական ժողովրդի մեջ վոր այսուհետեվ հազիվ թե մի ուս կարողանա վուտք կոխել Պարսկաստան:

ԴԻՎ. ՆԵՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՔԱՐՏ.՝ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Պետ.Կենտ.Արխիվ, 'Հ.Հ. Դիվանագիտության
Ներկայացուցչություն Ադրբեջանում քաղաքական
Գրությունների մասին', գործ 805, էջ 30

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց. 3, գ. 274, թ. 8-13; մեքենագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ ԲԱՔՎՈՒՄ
ԿԱՅԱՑԱԾ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Կոչ է արվում Արևելքի եղբայր ժողովուրդներին օգնել հայ աշխատավորությանը տապալել դաշնակցության իշխանությունը Հայաստանում, որը վերջիններին կողմից հանդիսանում է միջազգային իմպերիալիզմի հակահեղափոխական բազա ընդդեմ Արևելքի հեղափոխական կարմիր լուսատու աստղ Բաքվի (սեպտեմբեր, 1920թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ 1 ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Դարերի ընթացքում Հայաստանի աշխատավոր զանգվածները գտնվել են ցարերի ու սուլթանների բռնակալ իշխանության տակ: Անչափ ծանր չնշման ու ստրկության տակ հեծելով, տիրող ազգությունների տիրապետող դասակարգերի անկուշտ ազահությունը կշտացնելու համար քրտինք թափելով՝ Հայաստանի աշխատավոր մասսաները քիչ չեն շահագործվել հայ արևտրա-արդյունաբերական բուրժուազիայի նացիոնալիստական ֆրազեոլոգիայի թմրեցնելու խոսքերի տակ:

Անչափ բռնակալ իշխանությունը իր արյունարբու ներկայացուցիչներով, նույնպես և տրիպետող ու չնշված ազգությունների ունևոր դասակարգերը՝ ոգտվելով ժողովրդական լայն մասսաների տգիտությունից ու անգիտակցությունից, միշտ և անդադար ազգային թշնամություն ու ատելություն էյին սերմանում ըստ իրենց դրության յեղբայրների մեջ, վորպեսզի ավելի հեշտ լինի անցկացնել ու պաշտպանել իր ինքնասիրական ու դասակարգային շահերը և վորպեսզի այս ժողովուրդների աշխատավոր մասսաները չկարողանան միանալ ընդհանուր վամպիրների ու ճնշողների դեմ: Արևմուտքի իմպերիալիստները իրենց ավերիչ քաղաքականությունը գլուխ բերելու համար ևս ավելի շահագործեցին այս մշտական փոխադարձ թշնամությունն ու ատելությունը: Ձգտելով Տաճկաստանի վրա իշխել՝ համաշխարհային գիշատիչները մի կողմից զարկ էյին տալիս ազգային թշնամությանը առաջ բերելով արյունալի ընդհարումների և աջակցելով ճնշված ազգությունների ժողովրդական շարժումներին, իսկ մյուս կողմից ամուր էյին պահում արևելյան բռնակալի գահը: Տաճկաստանը զաղրութի վերածելու ձգտող, մրցակից գիշատիչներից վոմանց յեթե հաջողվում էր սուլթանի իշխանությունը կաշառել, այն ժամանակ մյուսները կպչում էյին ճնշված ազգություններին, վորպեսզի նրանց ազգային

շահերը պաշտպանելու պատրվակով շահագործեն նրանց իրենց համար ազդեցության շրջան ստեղծելու նպատակով:

Ոգտվելով այն հանգամանքից, վոր գերման իմպերիալիստների ձեռքով կաշառված Տաճկաստանին տիրապետող դասակարգերը, վոր այդ յերկրում ապրող ժողովրդական մասսաների անմիջական թշնամին էյին, Տաճկաստանն իմպերիալիստական սպանդանոցի փոխեցին, իմպերիալիստ Անտանտը փոքր ազգությունների ազատության գեղեցիկ խոսքերի տակ Տաճկաստանը իրենց մեջ բաժանբաժան արին՝ Տաճկա-Հայաստանը իրոք հանձնվում է Անգլիական ֆինանսական կապիտալի ագենտների ձեռքով, վոր հաջողել է արդեն իր համար տիրապետության մի վայր ստեղծել Ռուսա-Հայաստանում: Հեղափոխության ուղին մտած Արևելքի ուղիղ սրտում՝ Անտանտը ստեղծեց հակահեղափոխական մի բազա, վոր մաքառե արևմտյան իմպերիալիզմի թշնամի՝ հեղափոխական Արևելքի, արևելյան հեղափոխության լուսատու կարմիր Բազվի դեմ, նպատակ ունենալով նախ և առաջ գրկել Ադրբեջանի աշխատավոր մասսաներին սոցիալիստական նվաճումներից:

Արևելքի հարստահարված ժողովուրդների ցածր խավերի հեղափոխական տրամադրությունը վորքան լայնանում է, այնքան ավելի առատ՝ Անտանտն իր նպատակին հասնելու համար դատարկ խոստումներ է շռայլում և ավելի ու ավելի է գերազանցում հայ բուրժուազիային և բուրժուանացիոնալիստական ինտելիգենցիային: Այս վերջինս հանձին՝ դաշնակցություն՝ պատերազմասեր ու արյունարբու կուսակցության՝ իմպերիալիստական Անտանտի ու հայ բուրժուազիայի ձգտումների իրագործման դեմ դարձավ: Ծնունդ առնելով հայ կապիտալից, պաշտպան լինելով նրա շահերի՝ դաշնակցություն՝ կառավարությունը տասնյակ տարիների ընթացքում կռիվ է մղել բռնապետական Տաճկաստանի դեմ դիմելով բռնապետական Ռուսաստանի ոգնությանը այն նպատակով, վոր տաճկական Հայաստանից՝ Հայկական Տաճկաստան՝ ստեղծվի, վորտեղ նույնպես տիրապետի հայ բուրժուա կապիտալը յերկգլխյան արծվի պաշտպանությամբ, ինչպես այդ լինում է Անդրկովկասում: Այս պատերազմների զոհ հանդիսացավ Տաճկաստանի աշխատավոր գյուղացիությունը:

Մաուզերիստ բանդիտների ոգնությամբ նա վրոջ-վրոջ թաղեց տաճկական Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը և միևնույն բանդիտների ոգնությամբ նոր գողգոթա յե բաց անում Անդրկովկասյան Հայաստանի բանվորա-գյուղացիական զանգվածների համար:

Հանգուցյալ՝ Մուսավաթի՝ և վրացական՝ դժբախտաբար դեռ բարեկեցիկ մենշկիկության հետ՝ Ադրբեջանի ու Վրաստանի յեղբայր մասսաներից և գլխավորապես խորհրդային Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատից ու գյուղացիությունից բռնությամբ մեզ բաժանեցին, և Ռուսաց

Հայաստանի հողում ստեղծվեցին բուրժուա նացիոնալիստական իշխանություն միայն այն ոբյեկտիվ նպատակով, վոր պաշտպան լինի Արևմուտքի ֆինանսական կապիտալի շահագործմանը և հայ կապիտալիստների քաղձածներին: Այդ կուսակցությունն ու նրա ստեղծած կառավարությունը իրենց հակահեղափոխական քաղաքականությունը վարում են հրով ու սրով, արյամբ ու յերկաթով: Զանգեզուրը, Ղարաբաղը, Աբուլիսը, Աղբաբան, Զանգիբասարը Դաշնակցության և նրա ցեղակից 'Մուսավաթի' արյունաներկ իմպերիալիստ քաղաքականության կենդանի վկաներ են:

Այդ կառավարությունը հենց սկզբից ի շահ Անտանտի ու հայ բուրժուազիայի, իր իշխանությունը պահելու ու հաստատելու համար Հայաստանի ժողովուրդների շատ ծաղիկ կյանքեր ե զոհաբերում թե Հայաստանից դուրս կոիվներում և թե նույնիսկ Հայաստանում կոշմարային ազգամիջյան արյունալի ընդհարումների մեջ: Տաճիկ իմպերիալիստների արշավանքներից քայքայված յերկիրը իմպերիալիստ դաշնակների իշխանության տակ իսպառ ավերվեց:

Հայաստանը բոլորովին թուլացավ թե տնտեսապես և թե բարոյապես, նա հսկա քայլերով դեպի մահվան անդունդն ե դիմում: Մաուզերիստ բանդիտների իշխանության տակ Հայաստանի բանվորագյուղացիական մասսաները վերջապես ահաբեկված են:

Արյունարբու վայրենիների իշխանության տակ անխնահ կերպով ավերված ու վոչնչացած են մուսուլման մասսաները հանուն անկախ ու միացյալ Հայաստանի: Տաճիկ սուլթանների Տաճկաստանը հայերից մաքրելու քաղաքականությունը հիմա գործադրվում է դաշնակների ձեռքում Հայաստանի մուսուլմանների վերաբերությամբ: Այդ դահիճների իշխանության տակ գնդակահարված են ու գնդակահարվումեն Հայաստանի ապստամբ բանվորա-գյուղացիները: Բայց հեղափոխության առաջին վորոտը այս մայիս ամսում արդեն խախտել ե քրեական հանցավորների կառավարության ատելի ռեժիմը: Հայաստանի աշխատավորների բազմահազար մասսաները շարժվել են, վորոնք զարթնելով վճռել են անձնատուր ու գերի ջլինել բռնության ու ճնշումների կառավարությանը: Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները՝ նացիոնալիստական անվերջ կոիվներ, Անտանտի ու նրա վարձկան դաշնակների արյունածարավ քաղաքակա-նության պատճառով մայիս ամսին միահամուռ ապստամբությամբ պատասխանեցին, կոմունիստների կուսակցության առաջնորդությամբ Հայաստանը խորհրդային հրատարակելով: Սակայն մաուզերիստների ու դենիկինյան ապանների միացյալ ուժերը նորից ծնունդ տվին սև Հայաստանին, վոր այժմ գերեզման ե դարձել հարյուրավոր ու հազարավոր կարմիր ապստամբների ու նրանց կոմունիստ առաջնորդների, վոր գնդակահարված են Հայաստանի դաշտերում կամ բանտերում են տառապում:

Հայաստանի աշխատավոր հեղափոխական մասսաները Ադրբեջանի աշխատավորության հետ իրենց արյունով դաշինքը վավերացրին այն կովում, վոր դաշնակների ու մուսավթների դեմ եր: Ներկա Հայաստանում տեղի ունեցող սպիտակ տերրորը, վոր նրա լավագույն վորդիներին խմբերով հնձում ու ստիպում ե մեզ դիմել ձեզ, հեղափոխական Արևելքի յեղբայր բանվոր-գյուղացիներ ձեզ, խորհրդային հանրապետությունների բանվոր գյուղացիներ, կոչ անելով, վոր միանգամ ընդմիշտ վերջ տաք հայ բուրժուազիայի հակահեղափոխական վրտնձգություններին: Հայաստանը պետք ե փրկվի միջազգային գիշակերների դարավոր լծից, նա պետք ե ազատվի վարձկան մաուզերիստների իշխանությունից: Նա պետք ե սոցիալիստական սիրելի հայրենիք դառնա նրա մեջ ապրող ժողովրդական մասսաների, առանց նայելու նրանց ազգային ծագումը: Հայաստանի ժողովուրդները խորապես համոզված են, վոր այս բոլորը իրականանալ կարող են միայն այն դեպքում, յերբ Անտանտի ու հայ բուրժուազիայի ագենտների՝ դաշնակների իշխանությունը կտապալվի և կհաստատվի աշխատավորների իշխանությունը բանվոր ու գյուղացիների դիկտատուրությամբ, յեթե Հայաստանում խորհրդային իշխանությունը կհաստատվի: Մենք հասնում ենք և պետք ե հասնենք դրան: Հեղափոխական ծանր պայքարի մեջ մենք բոլոր հոգսը դնում ենք ինչպես խորհրդային յերկրների, նույնպես և Արևելքի ժողովուրդների ոգնության ու աջակցության վրա: Իսկ մենք մեր կողմից ոգնության կգանք Պարսկաստանի ու Տաճկաստանի հարստահարվող ու իրենց ազատության համար պայքարող հեղափոխական մասսաներին: Մենք չենք կարող թույլ տալ, վոր Հայաստանը բազա դառնա իմպերիալիստական Արևմուտքի՝ խորհրդային Ադրբեջանի ու հեղափոխական Արևելքի վրա հարձակվելուն և դրանով տարեցտարի անարգել իրեն հեղափոխական ամբողջ աշխարհի առաջ:

Մենք չենք կարող թույլ տալ, վոր մեր ընհանուր թշնամին՝ իմպերիալիստ Անտանտը մեր միջոցով ու մեր մեջքին հաղթական ընթանա Արևելքի հեղափոխական մասսաների դեմ:

Մենք մեր ուժերը կմիացնենք մեր դրացի ժողովուրդների ուժի հետ, վորպեսզի վերջնապես հաղթահարենք մեր ընդհանուր թշնամուն ու տապալենք համաշխարհային իմպերիալիզմի տիրապետությունը և վոր վրոջ աշխարհում կոմունիստական ինտերնացիոնալի դրոշի տակ սոցիալական հեղափոխությունը վերջնականապես հաղթանակի:

Կեցցե Արևելքի հեղափոխական մասսաների միությունը Արևմուտքի բանվորների հետ:

Կեցցե 3-րդ կոմունիստական ինտերնացիոնալը:

Ֆ-Պ. 1022, ց.3, գ.274, թ.1-5; մեքենագիր

Doc.III-45

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Տ.ԲԵԿԶԱԴՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ

Հուսեյնովի հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք
բերվել Հայաստանում ձերբակալված բոլշևիկներին Ադրբեջանում
ձերբակալված դաշակցականների հետ փոխանակելու պայմանների
վերաբերյալ, և իր բողոքներին, թե ինչ իրավունքով են զինակոչվում
հայերը, Հուսեյնովը պատասխանել է, որ հայերը զինակոչվում են
Ղարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանում, որոնք հանդիսանում են
վիճելի տարածքներ
(11 սեպտեմբերի 1920թ.)

Изъ Тифлиса
No 224
11/IX-22-25

Секретно

Эривань Мининдѣлу

Сегодня имѣль двухчасовое свиданіе съ Гусейновымъ выразиль протестъ
по поводу призыва въ войска нашихъ гражданъ, относительно положенія
нашей миссії и объ ихъ насиліяхъ точка По первому вопросу онъ заявилъ,
что призываются лишь жители Зангезура, Карабаха и Нахичевана, какъ
спорныхъ областей точка Жители Арменіи не призываются точка Начатіе
экономической связи онъ считаетъ невозможнымъ точка Сожалѣеть что
мы не соглашаемся на созывъ конференціи; это означаетъ что мы не
желаемъ говорить съ ними точка Согласень освободить арестованныхъ по
списку и приостановить репресіи Взаимно точка Я согласился принять это
условіе но не по отношенію къ осужденнымъ которые безусловно должны
быть высланы точка Пришли къ соглашенію, что въ теченіи семи дней обѣ
стороны обязаны представить списки, а потомъ начнется обмѣнъ точка
Прошу распорядиться немедленно выслать мнѣ списки арестованныхъ
большевиковъ: отдѣльно уже осужденныхъ и отдѣльно лишь обвиняе-
мыхъ, сообщивъ мнѣ также Ваши инструкціи.
Шантъ выѣзжаетъ Въ понедѣльникъ No 414 Сентября 11 (1920г.)
Предстармень Бекзадянъ

С подлиннымъ вѣрно:
Дѣлопроизводитель /подпись/

Ձեռագրով արված են մի քանի մակագրություններ՝ թվագրված 1920-ի
սեպտեմբերի 12-13-ով:

ՀԱՍ, Զ-Պ. 200, գ.1, գ.4, թ.41; մերձնսագիր

ԶԵՎՈՒՑՈՒՄ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆՆ
Շարադրված են Երևանի վրա հարձակումն իրականացնելու հետ
կապված խնդիրները
(24 օգոստոսի, 1920թ.)

ДОКЛАД
по вопросу о наступлении на Эривань.

КОМАНДАРМУ XI.

Изучая карту Зангезурского, Нахичеванского, Шаруро-Даралегезского и Эриванского уездов /предполагаемый театр военных действий/ приходится констатировать следующее: Почти весь предполагаемый театр военных действий представляет горные массивы до 5-7 тысяч футов, пересеченные многочисленными горными речками, лощинами и оврагами.

Дороги на Эривань за малым исключением, горные с трудом доступные для пехоты и только вьючного обоза. Осенью и зимой некоторые перевалы заносятся снегом и в течении 2.5-3 месяцев совершенно прекращается всякое движение. В продовольственном и транспортном отношении район беден и слишком далеко находится от железной дороги. Жители настроены враждебно.

Таким образом предполагаемый театр военных действий не позволяет производить операции демонстративного характера с целью отвлечения сил Армении от главного и наиболее благоприятного и уязвимого для Армении направления. В указанном направлении могут быть развиты только партизанские набеги небольших конных партий, которые могут базироваться на Нахичевань и Ангеляюрт.

В случае же необходимости, несмотря на естественные переграды, наступления всей 28 дивизии с целью как демонстрации так нанесения ударов и разгрома сил Армении и выхода на линию Эривани, привожу нижеследующее соображения:

1/ Дивизия имея исходным положением ныне занимаемый район, при переходе в наступление на Эривань, сразу-же.....

.....Дальнейшее снабжение частей, идущих в сторону Эривани, должно лечь на отделы Бригадного снабжения, для чего последние нужно пополнить в"ьючным и колесным транспортом и, независимо от того, каждому из действующих полков придать минимум по 100 ишаков, независимо от возможности привлечения к работе местных обывательских подвод и ишаков. Таким образом дивизия, ни в коем случае, без помощи со стороны Армии, не в силах обслужить себя собственными транспортными средствами, имеющимися в данное время на лицо и считая даже полное использо-

вание обывательского транспорта в данных районах. Кроме того нельзя обойти молчанием вопрос о эвакуации больных товарищей. Независимо от того, что будут использованы для этой цели возвращающиеся порожняком подводы и ишаки, все же необходимо выполнение санучреждений подводами и ишаками в пределах надобности, независимо от условий операций и заболеваемости.

10/ В отношении связи, участок Баку-Шуша- исправлен; далее на Герусы и Нахичевань- нуждается в срочном исправлении телеграфной линии для прямой работы с Баку. Дальнейшая связь в сторону Эривани, впредь до восстановления телеграфной линии, идущей вдоль железной дороги Нахичевань Эривань, может быть поддерживаема исключительно постами летучей почты и телефонами. Со стороны правого фланга где нет никаких технических средств связи, в виде постоянных линий, связь может поддерживаться только конными постами.

По вопросу о Персии, ввиду трудности освещения местности со стороны Карабаха без активных для сей цели действий /район Катарских заводов/ никаких данных частями Дивизии по сему вопросу не представляется возможным дабыть, в силу чего вопрос этот остается открытым до полной ликвидации контрреволюционных банд в Катарском заводском районе и в Нагорном Карабахе до р. Аракса.

	Начдив 28	Нестеровский
	Военком	Бережно
24 августа 1920г.	Наштадив	Крупенников
№ 1234/оп.		
Пр. Турк.		

Верно: Врид Ст. Ком. Наштадив по Отр.
/подпись/
ЦГАКА, Ф. 1328, оп.1, ед. хр. 555, л. 105-108.
Сверено с копией
14 VIII 1948.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.8, գ.123, թ.1,8,9; սխրհիւսդիր

Doc.III-47

ՀԵՌԱԳԻՐ ՇՈՒՇԻՒՑ

Տարածաշրջանում տեղակայված կարմիր զորքերի տարրեր աստիճանի հրամանատարներին՝ հրահանգվում է պահպանել օգոստոսի 10-ին Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված համաձայնագրի կետերը (28 օգոստոսի, 1920թ.)

Телеграмма.

Из Штадива 28 Гор. Шуша 28 августа 1920г. "2" час. "30" мин. Комбригам 83, 84? Кавалерийской 28, Начартдиву 28, Начподиву 28, Начособотдела №2 и Предревттрибунала при 28 Дивизии.

Тк. Комбригу 34 и Кавалерийской.

Передаю для сведения и руководства копию соглашения между РСФСР и Арменией. "Баку 27 августа 1920г. По приказанию РВС XI передаю копию соглашения между РСФСР и Арменией для сведения и руководства: "1920г. Августа II дня РСФСР в лице полномочного представителя Б. В. Легван с одной стороны и Представителя Республики Армении ДЖАМАЛЯНА и БАБАЛЯНА с другой стороны исходя из признания независимости и полной самостоятельности Республики Армении заключили настоящее соглашение в следующем: 1. С 12 часов дня 10 августа 1920 года военные действия между войсками РСФСР и Республики Армении считаются прекращенными. Примечание: Военные действия могущие произойти после указанного срока вследствие отсутствия связи или других технических препятствий не должны повлечь за собой никаких последствий противоречащих какому либо пункту сего договора. 2. Войска Республики Армении занимают следующую линию: Шахтагты, Азан-Бюрт, Султан-бек и далее линию севернее Кюки и западнее Базар-Чай, Бахар-кенд. В Казахском же уезде линию занимавшуюся ими 30/7 с.г. Войсками РСФСР занимают спорные области Карабаха, Зангезур и Нахичевань за исключением полосы определенной настоящим соглашением для расположения войск Республики Армении. 3. Занятием Советскими войсками спорных территорий не предпрещается вопрос о правах на эти территории Республики Армении и Азербайджана Соц.Сов. Респ. этим временным занятием РСФСР имеет ввиду создать благоприятные условия для мирного разрешения территориальных споров между Арменией и Азербайджаном и тех оснований которые будут установлены мирным договором имеющим быть заключенным между АССР и Республикой Армении в скорейшем будущем 4. С прекращением военных действий договаривающиеся стороны прекращают концентрацию военных сил как в спорных так и пограничных территориях 5. Впредь до заключе-

ния договоров между РСФСР и Республикой Армении эксплуатация желдороги на участке Шахгадты, Джульфа предоставляется Управлению желдорог Армении с тем однако, чтобы она не может быть использована для военных целей. 6. РСФСР гарантирует свободный пропуск /в 4 мериию/, всех войсковых частей Правительства Армении оказавшийся линией занимаемой Советскими войсками. Настоящее соглашение подписывается в 2-х экземплярах из коих один вручается Представителям Армении, другой полномоченному Представителю РСФСР. НР. 248/г. начперодарм Х1 В. Воронков.

НР 1293/оп.

Врид. НАШТАДИВА 28 /подпись/
Военком /подпись/
ЦГАКА, Ф. 1328, оп.1, ед. хр. 555, л.104.

Сверено с копией
14 VIII 1948

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.8, գ.126, թ.1-2; ստորագրեր

* * *

Մայիսյան ապստամբությանն հաջորդած երկու-երեք ամիսներին հայ բոլշևիկների գաղափարական աճն ու հեղափոխական հասունացումն ակնհայտ են: Մի կողմ են դրված պրիմիտիվ ու հնամաշ կարգախոսները: Դաշնակցությունն այլևս ոչ միայն հայ բուրժուազիայի շահերը պաշտպանողն է, այլ Անտանտի ուղղակի գործակալը: Իսկ ինքը՝ Հայաստանը, հակահեղափոխության սև մի որջ, իմպերիալիզմի հենակետ Կովկասում, և ամբողջ հեղափոխական Արևելքում, ուղղակի վտանգ ու խոչընդոտ համաշխարհային հեղափոխության համար: Իսկ թուրքից էլ հային վտանգ արդեն չկա: Հայ բոլշևիկները էնվերի հետ նույն դահլիճում նիստերի են մասնակցում, մշակում ու հաստատում Հայաստանի կործանման պլաններ: Գործի համար առավել հուսալի ու կայուն հայ ընկերներին էլ ընտրում և նշանակում են, բնականաբար, Բաքվում: Դե դիմացիր, «իմպերիալիստական» Հայաստան: Ի՞նչ բանակցություն, ի՞նչ համաձայնագիր ու պայմանագիր: Կարթագենը պետք է կործանվի:

ԲԱԺԻՆ IV

Հայ-թուրքական պատերազմ:

Հայաստանի առաջին Հանրապետության կործանումը և այդ գործում հայ բոլշևիկների իրականացրած քայլերը

Սեպտեմբեր, 1920թ. – մայիս, 1921թ.

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՐ. ԹՈՒՐԲ ԱՍՔՅԱՐԸ՝ ՀԱՅ ԱՇԽԱՍԱՎՈՐԻ ԵՂԲԱՅՐ ՈՒ ԱԶԱՏԱՐԱՐ

«Հայկական կծիկի» հանգուցալուծման պահն արդեն հասունանում էր: Անդրկովկասում բրիտանական զինվորական ներկայացուցիչը դեռևս 1920-ի ապրիլի 30-ին հեռագրում էր Լոնդոն. «Համարեղ թուրք-բոլշևիկյան հարձակումը Հայաստանի վրա թվում է հավանական, եթե դաշնակները չկարողանան համաձայնության գալ բոլշևիկների հետ, ինչը մինչ օրս շատ կասկածելի մի ձեռնարկ է թվում»:²² Ինչ համաձայնության գալու մասին կարող է խոսք լինել, եթե օգոստոսի 10-ին ռուսները Հայաստանի հետ համաձայնագիր են ստորագրում, իսկ ընդամենը օրեր անց արդեն համաձայնություն են տալիս, որ թուրքերը, իբր պատահաբար, առանց ռուսական կողմի գիտության, գրավեն Սարիղամիշն ու Շահթաղթին,²³ կամ էլ հենց իրենք՝ ռուսները, «սխալմամբ» նորից գրավեն Շահթաղթին:²⁴ Որևիցե ռեալ հայ-ռուսական համաձայնություն չէր կարող կայանալ, որովհետև այն չէր կարող կայանալ սկզբունքորեն, քանզի Հայաստանի համար նախատեսված էր լրիվ այլ դերակատարում: Նրա տարածքների մի մասով պետք է ռուսական կողմը փոխհատուցեր իր հանդեպ Թուրքիայի կողմից դրսևորվող բարեկամական դիրքորոշման դիմաց, իսկ մյուս մասով էլ պետք է փակեր դեռևս 1920-ի ապրիլի 28-ից իր վզից կախված պարտքը՝ Թուրքիայի կողմից Ադրբեջանի անարյուն ու ակնթարթային խորհրդայնացմանն աջակցելու համար: Դե ոսկին ու զենքն էլ արդեն տեղ հասել են, և քեմալական զորքն արդեն ի վիճակի է պատերազմելու: Այնպես որ, Հայաստանի նույնիսկ անվերապահ կապիտուլյացիան անգամ ռուսական կողմի համար երևի թե ընդունելի չլիներ: Թուրքիան, Ադրբեջանը պետք է մտնեին, գրավեին իրենց խոստացված տարածքները, թալանեին ու կոտորեին, որ ռուսական կողմի պարտքը համարվեր փակված: Դե, Հայաստանի Հանրապետու-

²² Ю.Г. Барсегов, նշված աշխատությունը, էջ 53

²³ Ю.Г. Барсегов, նշված աշխատությունը, էջ 133, 135

²⁴ Ю.Г. Барсегов, նշված աշխատությունը, էջ 137-139

թյունից մնացած հողակտորի վրա էլ խորհրդայնացումն իրականացնելն ու ռուսական իշխանություն հաստատելն արդեն խնդիր չէր:

Այս բաժնի փաստաթղթերը վերաբերում են 1920թ. սեպտեմբեր – 1921թ. մայիս ժամանակահատվածին: Դրանցից մենք տեսնում ենք, թե ինչ հերոսական ջանքեր թափեցին հայ բոլշևիկները Հայաստանի առաջին Հանրապետության կործանման գործընթացի վերջին՝ ամենավճուղական փուլում և ինչ վերաբերմունքի արժանացան դրանից հետո հենց իրենց եղբայր ու գաղափարակից թուրք և ադրբեջանական հեղափոխականների կողմից:

Doc.IV-1

ՕՐՋՈՆԻԿԻՉԵԻ ՈՒՂԻՂ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՉԵՐԻՆԻ ՀԵՏ
Նա հերքում է տեղեկությունները կարմիր զորքերի կողմից Զանգեզուրում
դաժանություններ իրականացնելու մասին և միաժամանակ նշում, որ
օգոստոսի 10-ին Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված
համաձայնության պահպանումը անհնար է իրականացնել
(29 սեպտեմբերի, 1920թ.)

Из Баку по пр. проводу 29/IX-1920г.

Тов. Чичерину.-Заявление о зверствах наших войск расстрелов детей и так далее абсолютнейшая лож и я не знаю какое тут произвести расследование. Категорически утверждаю отношение наших войск было самое лучшее и остается таковым Реввоенсовет одиннадцатой армии получил нагоняй от Главкома по поводу железнодорожного участка Шахтамы Нахичевань и Джульфа район этот занят турками и всевозможным бродячим элементом мусульманами беженцами и так далее Мы занимаем только Нахичевань движение армянских поездов в этом районе возможно только при охране нашими или армянскими войсками первое мы не можем сделать а второе политически неприемлемо и фактически неосуществимо так как сейчас же начнутся столкновения между турецкими войсками беженцами с одной стороны и армянскими войсками с другой стороны. Легран этого положения не понимает и поднимает крик о нежелании со стороны армии соблюдения договора чего конечно нет и быть не может Положение таково что этот пункт предварительного договора фактически неосуществим при настоящей обстановке. Прошу указаний За вскрытие дипломатического пакета председатель ЧЕКА отстранен. ОРЖАНИКИДЗЕ

ՀԱՍ, Զ-Պ. 1022, ց. 5, գ. 361, թ.17; անթիվագիր

Doc.IV-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԼԵԳՐԱՆԻ ՀԵՌԱԳԻԵՐԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄ ՉԻՉԵՐԻՆԻՆ ԵՎ ԿՈՎԿԱՍՅԱՆ
ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՌԱԶՄՀԵՂԿՈՄԻ ԱՆԴԱՄ ՕՐԶՈՆԻԿԻՉԵՒՆ
Հայաստանի կառավարությանը, Սևրի պայմանագրի համաձայն,
Արևմտյան Հայաստանի տարածքը ռազմական եղանակով
վերանվաճելու մտադրությունից հրաժարվելու առաջարկ անելու,
թուրքական ներխուժման պարագայում՝ Հայաստանի խորհրդայնացումն
իրականացնելու աննպատակահարմարության վերաբերյալ
(7 հոկտեմբերի, 1920թ.)

КОПИЯ.

ТОВ.ЭЛИАВА (написано карандашом)

ТЕЛЕГРАММА

МОСКВА НАРКОМИНОДЕЛ ЧИЧЕРИНУ

КОПИЯ БАКУ ЧЛЕНУ РВС КАВФРОНТА ОРДЖОНИКИДЗЕ

Тифлис 7-Х-20 ЛИЛИ

Предполагаю обратиться Армянскому Правительству предложением официально изъять отказ всяких стремлений вооруженного захвата областей Турецкой Армении на основании Севрского договора, дать согласие посредничеству Советроссии территориальном размежевании с Турцией, предоставить Советроссии право военного транзита по желдорогам Армении.

Согласие армян эти условия считаю выходом из положения. Это дало бы нам полное основание настойчиво требовать приостановления военных операций турок и очищения ими армянской территории.

НР 26/169 ЛЕГРАН.

Верно: Секретарь Полномочного Представителя

ПОДПИСЬ /Л.Шифферс/

КОПИЯ.

ТЕЛЕГРАММА

МОСКВА НАРКОМИНОДЕЛ ЧИЧЕРИНУ

КОПИЯ БАКУ ЧЛЕНУ РВС КАВФРОНТА ОРДЖОНИКИЗЕ

Тифлис 7-Х-20 ЛИЛИ

Что касается советизации, момент вторжения турок она не может рассчитывать на сочувствие масс, приведет необходимости ожесточенной борьбы дашнакскими бандами которые партизанской войне смогут оказать серьезное сопротивление. При отсутствии у нас достаточных сил

трудно будет избежать использования этой целью турецких сил что даст определенно скандальный характер всей операции. Прошу дать мне полномочие имени Советправительства, случае согласия армян изложенные условия, предъявить турецкому командованию требование немедленного приостановления военных действий и очищения территории Армении. Новых сведений с фронта пока нет.

ХР 27/171 ЛЕГРАН.

Верно: Секретарь Полномочного Представителя
ПОДПИСЬ /Л.Ш./

ЦПА ИМЛ Ф. No.85. Оп. No.14. Ед.Хр. No.17. л.3.

Верно /подпись/
19/IV-57

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, գ. 5, գ. 361, թ. 17ա-բ; սկրիպտի

Doc.IV-3

11-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ 28-ՐԴ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ
ՕՊԵՐԱՏԻՎ ԳԱՂՏՆԻ ՀՐԱՄԱՆԸ

Հրահանգավորվում է կարճ ժամկետում ճնշել Զանգեզուրում բռնկված ապստամբությունը, վերացնել Նժդեհի գործախուժքը, ապստամբության մասնակիցներին գնդակահարել՝ ի ցույց մյուսների, որպեսզի, այդ դաժանությունները տեսնելով, բնակչությունն այլևս չմտածի խորհրդային կարգերի դեմ ապստամբելու մասին
(2 հոկտեմբերի, 1920թ.)

Копия.

Секретно-Оперативный.

П Р И К А З .

по войскам 28-й стрелковой дивизии No. 28/оп

Штаб дивизии

г.Шуша

2 октября 1920 года

23 часа 50 м.

/карта 10 верст в дюйме/.

Банды Нждея-при содействии провокационной агитации агентов его сагитировав местное населения селений всего Катарского района подняли контрреволюционное восстание. Восстанием охвачены селения: Зойва-Арциваник-Барабатум-Гаварт-Катар-Кямихана-Бых-Барабудж-Вячекан и видимо распространил и на другие ближайшие селения этого района. В Ордубатском районе банды Нждея оказывают упорное сопротивление. В целях окончательной ликвидации банд и восставшего населения в Катарском районе и оказывающих сопротивление банд Нждея в Ордубатском районе, на части вверенной мне дивизии Командармом XI возложена задача-окончательно подавить восставшее население и решительными мерами в наикратчайший срок ликвидировать банду Нждея.

ВО ИСПОЛНЕНИИ СЕГО ПРИКАЗЫВАЮ:

Комбригу 83 тов. Литвиненко.

С рассветом 12 сего октября двинуть 247 п. из Шуши через Дыг на Зойва, куда прибыть на 4 день и занять Зойва, 17 октября занять Арцеваник и затем далее координируя свои действия с 250 полком наступающим со стороны Герусов на Катар, самым решительными мерами подавить восстание во всем районе, прибегая к самым беспощадным мерам, дабы этими мерами раз и навсегда отучить банды а также и население от всяких попыток к восстанию. Наиболее виновных при наличии улики винов-

ности-расстреливать. 248 и 249 полкам оставаться на прежнем месте и исполнять прежде поставленные задачи.

Комбригу 84 тов. СЕМЕНОВУ.

С следующим из Энгеляюрта через Герусы на Катар 250 полком при совместных действиях 247 полка ликвидировать контрреволюционное восстание местного населения и банд Нждея районе Катара и прилегающих району селений стараясь зажать восставших в стальные тиски и беспощадно уничтожать все восставшие банды. При чем, при наступлении серьезно относится к выбору пунктов наступления используя выгодные естественные позиции, дабы при наименьших потерях нанести большее поражение противнику. При подходе к селениям охваченным восстанием Комполка 247 тщательно разведывать какие селения и подступы-позиции занимают восставшие банды и какой численностью, затем дружно сокрушающим ударом раздавить и уничтожить. По окончании операции 250 полку продолжать движение на Ньюади, Во исполнение приказа No. 27/оп на присоединение к восточной группе для ликвидации банд Нждея в Ордубатском районе.

Комполка 247.

По окончании ликвидации восставших банд, оставаться в районе Катара и произвести самую тщательную чистку района от контрреволюционного элемента. Всем остальным частям, действующим в районе Ньюади-Ордубат, исполнять прежде поставленную задачу.

Нач-особого отделения 2 тов. ФРЕЙМАНУ выслать несколько агентов в районе Катара для вылавливания контрреволюционеров..... самой беспощадной расправой. Начсвязи т. ГРОСМАНУ во чтобы то ни стало выслать вместе с наступающими частями работников связи со средствами связи восстановить разрушенную техническую связь и принять все меры к безотказному поддержанию таковой.

Всем остальным руководствоваться прежде изданным приказом No. 27/оп.

Мои-заместители: прежние/приказ No. 27/оп./.

О получении и сделанных распоряжений донести.

Начдив 28 Нестеровский За Военкома САРАЕВ Наштадив 28 ФРОЛОВ зашифровал 2/Х в 2 часа 15 минут ЮРКОВ.

Расшифровал АЛЬБИЦКИЙ.

С подлинным в е р н о:

Пом. Наштабрига

По Оперативн. части /подпись/

ЦГАКА, ф.1328, оп.1, ед.оп.422, л.59.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 8, գ. 135, թ. 1-3; ւերկրային

Doc.IV-4

11-ԲԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ 28-ԲԴ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ
ՕՊԵՐԱՏԻՎ ԳԱՂՏՆԻ ՀՐԱՄԱՆԸ

Հրահանգավորվում է միջոցներ ձեռնարկել և կարճ ժամկետում
լիկվիդացնել Նժդեհի զորախումբը, որը ոչ միայն հաջող պաշտպանվում
է, այլ նաև հաճախակի անցնում է հակահարձակման
(7 հոկտեմբերի, 1920թ.)

Копия.

Секретно No. спортивный.

ПРИКАЗ

Войскам 28-й Стрелковой дивизии XI-й Красной Армии

Гор. Шуша

Штаб дивизии

№.27

/карта 10 верст в дюйме/

7 октября 1920г.
22 часа 20 минут.

Подполковник Нждей мобилизовав армянское население в бассейне реки Мигри-чай и районе сел. Астазур, при поддержке горной батареи, а также пользуясь полукольцом гор. окаймляющих этот район не только оказывает упорное сопротивление, но и частично переходит в частичное наступление.

Командарм XI приказал наикратчайший срок ликвидировать банды Нждея, окружить и уничтожить и тем освободить тракт вдоль Аракса.

ПРИКАЗЫВАЮ:

1/ Восточная группа Комбриг 8 т. Семенов. 250, 251, 252 стр. полки и 2 кавполк с приданным взводом горной батареи.

Сосредоточить всю бригаду со 2 кавполком к 16 октября в районе Ньювади Привести части в боеспособность и 17 октября решительно перейти в наступление с восточной и северо-восточной сторон на Астазур-Мигри, окружая и беспощадно расправляясь с восставшими бандами Нждея.

Всякая нерешительность и неуверенность с нашей стороны поднимает дух противника и дают ему возможность увеличить банды за счет восставших, а потому смело и храбро вперед.

2/ Западный отряд Комбрига 28 Кав. т. Студнев, 1 кавполк.

Сосредоточить весь кавполк к 16 октября в Ордубате, привести в боеспособность и 17 октября повести решительное наступление с целью занятия населенных пунктов западнее реки Мигри-чай и соединения с группой, наступающей с восточной стороны.

Широко использовать Турецкие части, местные караульные таборы, как для охраны границы с Арменией, так и для наступления совместно с 1-м кавполком.

3/ Комбригу 83 т. Литвиненко_. Оставаясь всей бригадой прежнем районе, подготовить 247-й полк на случай его движения вперед.

4/ Начарту 28 т. Гусакову. Оставаясь на месте руководствоваться прежде изданными приказами и деятельно продолжать проводить артчасти путем решительных мер в боевой вид.

5/ Начсвязи 28 т. Гросману. В следствии затяжки операции и возрастающей борьбы с бандами, самыми решительными мерами, проявив максимум самоотверженности и боевой инициативы для поддержания безотказной, непрерывной и действительно, связи, как технической, так и конной. В случае их повреждения принимать быстрые меры к немедленном исправлению и восстановлению связи. Никакие мотивировки о неимении средств и недостатке людей не должны иметь места.

6/ Опродкомдиву 28. Усилить производительность в заготовке продовольствия и фуража, развивая таковую до максимума.

7/ Начснабдиву 28т. Коркину. Самыми решительными действиями и боевым управлением органов Снабжения поставить дело продовольствия частей как продовольствием, продфуражем так и огнеприпасами, на высшую ступень боевой готовности,- дабы не одного дня части не голодали и не терпели нужды в огнеприпасах, ибо этот враг-голод и нужда в огнеприпасах наносит большее поражение чем огонь банд Нждея.

8/ Начсандиву 28т. Миловидову. Организовать самую быструю и правильную эвакуацию раненых и больных тов. краснойармейцев, снабдить части нужным количеством медикаментов и перевязочными средствами, поставить на должную высоту скорую помощь раненым и больным в передовых лазаретах и перевязочных отрядах.

9/ Мои заместители Комбриг 83 т. СЕМЕНОВ и Комбриг 83 т. ЛИТВИНЕНКО.

10/ Получение сего и отданных распоряжениях донести.

Подлинный подписали:

Начдив 28 НЕСТЕРОВСКИЙ, Врид.Военкома САРАЕВ,

Начальник Штаба ФРОЛОВ.

С подлинным в е р н о:

Ст. Помнаштадив 28 по Оперчасти/подпись

ЦГАКА, ф. 1328, оп. 1, ед.хр.434, л. 37

печать

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 8, գ. 134, թ. 1-3; ւնքիւնիւղիր

Doc.IV-5

11-ԲԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ 28-ԲԴ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ
ՕՊԵՐԱՏԻՎ ԳԱՂՏՆԻ ՀՐԱՄԱՆԸ

Հրահանգավորվում է Ջանգեզուրում բռնկված և տարածվելու միտում
ունեցող հակաբոլշևիկյան ապստամբության կապակցությամբ՝
Նախիջևանի, Ջանգեզուրի և Շուշիի գավառներում հայտարարել
ուսման կարգի հրահանգներ, ապստամբության կոչեր տարածողներին
գնդակահարել տեղում՝ առանց դատի և հետաքննության, քննարկել
Նժդեհի և նրան օժանդակող սպաների հանդեպ ահաբեկչություն
իրականացնելու հնարավորությունները
(14 հոկտեմբերի, 1920թ.)

Комбригам 84-83 и Кав. 28.

Секретно оперативный приказ по войскам 28 Стрелковой Дивизии XI
Красной Армии.

№.30/оп.

14 октября 1920г.

12 часов-мин.

Штаб Дивизии

Г. Шуша.

/Карта 10 верст и дюйме/.

В дополнение к приказу № 29/оп. В виду вспыхнувшего и с каждым
днем распространяющегося восстания в Зангезуре и возможности
переброски такового в Армянскую часть Нагорного Карабаха,
объявляю НАХИЧЕВАНСКИЙ, ЗАНГЕЗУРСКИЙ и ШУШИНСКИЙ
уезды на военном положении.

Всех лиц уличенных в пропанде и подстрекательства к восстаниям,
расстреливать на месте преступления без суда и следствия.

С 20 часов запрещается всякое хождение по улицам без пропусков.

НАЧГАРНИЗОНОВ/а где таковых нет, ПРЕДРЕВКОМОВ/

Провести этот приказ в жизнь.

НАЧОСОБОГО ОТДЕЛЕНИЯ №. 2.

Усилить свою агентурную деятельность в Зангезурском уезде, для
вылавливания пропандистов-дашнаков и подстрекателей к восстаниям,
не давая никакой пощады, уничтожать без суда и следствия.

НАЧРЕГИСТРОТУ 28

Установить кем занимается Энгеляюрт, не принимают ли участия в
восстании регулярные части Армении и не направлены ли Арменией
организованные банды Нждея для поднятия восстания и мобилизации
местного населения. Усилив агентуру, выяснить численность бандитов

и пулеметов полковника Нждея. Применить террор по отношению к Нждею и его приспешников-офицеров.

Подлинный подписали
Начдив 28 Нестеровский,
Зам. Военкома Сараев,
Наштадив 28 Фролов.

ЦГАКА, ф. 1328, оп. 1, ед.хр.422, л.64.

(Печать)

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 8, գ. 138, թ. 1-2; սկրիպտի

ՁԵԿՈՒՑՈՒՄ

Ղազախ Շամշադինի կուսակցական գործողության սոցիալական յեվ քաղաքական կյանքի մասին:

Ղազախ Շամշադինում ինչպես յեվ Հայաստանի մյուս մասերում Կոմունիստական կուսակցական աշխատանքը տարվում է վորոշ դժվարություններով, հանձինս դաշնակ կառավարության տարածած ահ ու սարսափի գյուղացիության նկատմամբ, բայց միյեվնոյն ժամանակ հնարավոր է անընդհատ աշխատել:

Ղազախ Շամշադինի շրջաններում յաչեյկաներ հետեվյալ գյուղերում.

Ղազախի շրջան. 1) Աչաջուր, 2) Սեվ քար, 3) Ուզուն Բալա, 4) Լալազյուղ,

Շամշադինի շրջան. 1) Բերթ, 2) Թովուզ, 3) Կարմիր աղբյուր, 4) Մոսես գյուղ, 5) Ղրղի, 6) Բաթլու:

Այն յաչեյկաների ցուցակի մեջ գրված ընկերների մոտ կես մասը գտնվում են Ադրբեժանի սահմաններում, իսկ կես մասը գյուղերում (տեղերում) ուստի հնարավոր չէ բոլորին մեկտեղ ժողովի հրավիրել, այդ արվում է միայն Ադրբեժանի սահմաններում ապրողների նկատմամբ, իսկ Հայաստանում գտնվող ընկերներին տրվում է համապատասխան հրահանգներ հարկավոր աշխատանք կատարելու ազիտացիական յեվ կազմակերպչական ուղղությամբ:

Յերթե վոչ ամեն որ, յերկու որը մի անգամ սահմաններից անց է կացվում գրականություն, լրագիրներ, գյուղերում գտնվող ընկերների տարածելու համար: Ընկերների հետ փոխադարձաբար տեղեկություններ է տրվում յեվ ստացվում: Շամշադինում, Ադրբեջանի սահմաններում գտնվող յաչեյկաների մեջ գտնվող ընկերների կողմից ընտրված է յաչեյկաների նախագահություն:

Ներկա մոմենտում ժողովրդի կացության մասին:

Հայաստանի յեվ քեմալականների մեջ սկսված պատերազմների պատճառով, գյուղացիներին քշում են դեպի զորահավաք, նոյնիսկ մինչեվ 50 տարեկանների անկախ նորանից թե ինչ թվերի զորահավաք է պաշտոնապես հայտարարված: Չներկայացողների կայքը իբր թե ի հարքունիս է գրավվում այդ անվան տակ թալանում է ավագակ պոլիցականների ձեռքով, չնայած դորան հավաքածների մեծ մասը ճանապարհներից փախչում են դեպի իրենց շրջանի անտառները թագնվելու: Գյուղերը համարյա դատարկված է մարդկանցից: Դաշնակների անսահման ճնշում-

ները ստեղծել են աննկարագրելի դրություն: Ամեն տեղ տիրում է մեռելային դրություն, կարծես յեռացող կյանքը ել գոյություն չունի դադարել ե շարժվելուց: Հայաստանի հորիզոններում կուտակվում են սեվ ամպեր, ամեն որ ստացվում են պատերազմի դաշտից բոթաբեր լուրեր, այտեղ հոսող արյան գետերի յեվ մեծ զոհերի մասին:

Գլուխը կորցրած աշխատավոր մասսաներին ուժով հարկադրում են դուրս գալ հակառակ իրեն կամքին կովելու սրիկա բուրժուանների ստեղծած ճակատում յեվ հայ ժողովրդի վողորմելի մնացորդները այդպիսով ի սպառ բնաջնջվում ե: Չնայած վոր կովողները հույս չեն դնում իրենց ինքնապաշտպանության վրա:

Բազմիցս խոստացվել ե թե հայ աշխատավորությունը զինվորը, չի կովել Կարմիր զորքերի դեմ, իբրեվ փաստացի ապացույց դորան բերում ենք հետեվյալը:

Սույն 1920թ. հոկտեմբերի վերջերում, Ղազախ Շամշադինի սահմանագծի սահմանապահ միլիցիական զորքերի պետ լեվոն Բեգ մելիք Ավայանը Աքսիբարի շրջանի սահմանագծի վեճի առթիվ ծագած փոքր ընդհարման ժամանակ հրաման ե տալիս իրեն յենթակա հարյուր մարդոց բաղկացած հեծելազորի հարձակում գործել բայց վերջիններս դրականապես պատասխանում են վոր վոչ մի դեպքում դրանք չեն կովի ուս Կարմիր Ձորքերի դեմ:

Լեվոն Բեգը լավ հասկանալով թե բանն ինչումն ե սուս ու փուս ճանապարհվում ե 5 ձիավորներով դեպի Քարվանսարա:

Միլիցիական վաշտերից մեկ վզվողնի կոմանդիր (Շամշադինի շրջանից) իր 20 զինվորների հետ միասին իրեն զենքերով քաշվել են դեպի անտառները թագ կենալու համար:

Պատերազմից ահաբեկված աշխատավորությունը իրենց փրկությունը տեսնում են Կարմիր Ռուս զորքերի մոտենալու մեջ, նրանք սրտատրոփորեն են հաշվում թե յերբ կստացվի այն լուրը թե Հայաստանը հայտարարվում ե Խորհրդային յեվ իրենց կոչ պիտի անել նորա շուրջը հավաքվելու, վորին պատրաստ են արձականգ տալու, վորքան շուտ կատարվի այն այնքան շուտ վերջ կը տրվի թշվառ հայ ժողովրդի կոտորածին:

Տ. Ղալթախյան
13 հոկտեմբեր 1920թ.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց. 2, գ. 146, թ. 3-4; մեքենագիր

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԶԵԿՈՒԹՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ

Լեգրանի հետ տեղի ունեցած գրույցի բովանդակության մասին, որտեղ
Լեգրանը հստակ արտահայտվել է, որ Թուրքիան այժմ գտնվում է
Ռուսաստանի բոլշևիկյան դրոշի տակ, և ճիշտ կլինի, որ նրա տակ անցնի
նաև Հայաստանը, ինչին ի պատասխան հայկական կողմը շեշտել է, որ
փոխադարձ բարեկամության դիմաց Ռուսաստանը Հայաստանի դեմ
դնում է ոչ թե անընդունելի, այլ անիրականաճալի պայմաններ և
աջակցում է թուրքական կողմին՝ հայերի պետականությունն ու
ֆիզիկական գոյությունը վտանգելու նրանց ձգտումներին
(14 հոկտեմբերի, 1920թ.)

Եջ 123.

Պատճենը պատճենից.

"14" Հոկտեմբերի 1920թ.
Նո. 456.

Զեկուցումներ.

Արտաքին գործերի պ. նախարարին.

Հոկտեմբերի 9-ին, յես տեղեկություն ստացա, վոր Լեգրանը
վերջապես վորոշել է ուղեվորվել Յերեվան: Նույն որը յերեկոյան,
Ժամը 11-ին, յես այցելեցի նրան կայարանում իր սալոն-վագոնում:
Լեգրանի ասածները պարզեց, վոր նրա միսսիայի Թիֆլիսում
ուշանալը բացատրվում եր տեխնիկական հանգամանքներով,
գլխավորապես վրացիների շոգեկառք չը տալու պատճառով:

Գուցե այս պատճառը միակ չի յեղել նրա ուշանալուն, հավանական ե
նույն իսկ, վոր նրա գնալը գիտակցորեն ձգձգվել ե մինչեվ կը պարզվեյին
տաճկական առաջխաղացման հեռանկարները, սակայն այս
յենթադրություն հմտորեն քողարկված ե, վորովհետեվ իրոք, վոր վերեվ
հիշում տեխնիկական խոչընդոտները վրացիների կողմից տեղի յեն
ունեցել: Ապա մեր խոսակցությունը անցավ ընդհանուր խնդիրների:

Լեգրանը կրկին հայտնեց այն միտքը՝ վոր յեթե գիտակցորեն դնել
հարցը, պիտի ընդունել այժմս միայն յերկու իրար հետ մահու յեվ կյանքի
իմաստով կռվող քաղաքականություն: Դա մի կողմից Անտանտայի քաղա-
քականությունն ե յեվ մյուս կողմից Սովետական Ռուսաստանի հեղափո-
խական քաղաքականությունըն ե: Յես չը գիտեմ, ավելացրեց նա, արդյոք
գիտակցորեն ե կատարվում, կիսագիտակցորեն, թե անգիտակցորեն,

բայց, համենայն դեպս՝ տաճիկները այժմն մեր հեղափոխական դրոշակի տակ են գնում, վրոդվիետեվ անտանտայի քաղաքականությունը, յեթե հաջողությամբ պսակվի, մահացու հարված պիտի հասցնի նրանց: Մենք կարծում եյինք, վոր հայկական կառավարությունըն ել մեզ հետ կը լինի, սակայն Սեվրի պայմաններից հետո՝ նա ավելի շատ թեքվում է դեպի անտանտայի իմպերիալիստական քաղաքականությունը, քան թե վոր դեպի մեզ: Համենայն դեպս մեր կառավարությունը դեռ մինչեվ որս ել տատանվում ե այս հարցում, մինչդեռ նրան ամենայն տեսակետից անհրաժեշտ կարելոյն չափ շուտով վորոշել վերջապես յուր դիրքը:

Յես հերքեցի նրա ասածները, հայտնեցի, վոր այն պահանջները, վորոնք դրվում են մեր կառավարության առաջ՝ գրեթե անհնար ե բավարար կերպով վորոշել մեր իրականության պայմաններում: Մեր կառավարությունը, բացատրեցի յես, վորը ցանկանում ե, կամ ստիպված ե լինում յուր դիրքն ու քաղաքական գիծը վորոշել, միշտ հանդիպում ե յուր գործունեության ասպարեզում, այժմ ձեր դրոշակի տակ գտնվող տաճկական պանիսլամիստներին, վորոնք յեվ անգամ մեր ժողովրդի առաջ դնում են նրա լինել կամ չը լինելու խնդիրը: Այս պարագաներում պարզ ե, վոր մեր կառավարությունը հնարավորություն չի ունենում իր պետական կյանքի ստեղծագործությամբ զբաղվել յեվ այդ անիմաստ ու չարամիտ պայմանները մեր ժողովրդի համար այսոր ստեղծում են ձեր աջակցությամբ: Մենք մեր ամենադաժան պայմաններում իսկ կարող ենք ապավինել միայն մեր ժողովրդի վրա, վորի անկեղծ յեվ հավատարիմ որիենտացիան դեպի Ռուսաստանը վոչ միայն չը փրկեց նրան անակնկալներից, այսոր նոյն իսկ չի գնահատվում: Միաժամանակ մենք յերբեք չեյինք ցանկանա խաղալիք դառնալ անտանտայի ձեռքում, նրա ձեր դեմ մղվող քաղաքականության մեջ:

Այս իմաստով, մեր կառավարության քաղաքականությունը պիտի համարվի գերազանցապես խաղաղասեր յեվ ինքնապաշտպանողական նրանց դեմ՝ ով սպառնում ե մեր ժողովրդին ու մեր անկախությանը:

Լեզրանը խոսակցության ընթացքում մեծ հետաքրքրություն եր ցույց տալիս դեպի մեր ճակատում տեղի ունեցող զինվորական անցքերը: Նա մեծ գովասանքով արտահայտվեց մեր բանակի ու նրա զորավարների հասցեյով, վորոնք, ինչպես նա արտահայտվեց, ամենադաժան պայմաններում կարծես թե կարողացել են արդեն տաճկական առաջխաղացման առաջն առնել:

Դիվանագիտական ներկայացուցիչ՝

Արխ. Ֆոնդ Նո. 66, գործ Նո. 766-44, 1920թ.

ՀԱՍ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.272, թ.5-6; մեքենագիր

Doc.IV-8

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂԱՂ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՆԹԻՆ
Թորքիայի հետ խաղաղ գոյակցելու համար Հայաստանը պետք է
հրաժարվի Սևրի պայմանագրից
(հոկտեմբեր, 1920թ.)

...октября 1920

ПРЕДСЕДАТЕЛЮ МИРНОЙ ДЕЛЕГАЦИИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ г. ШАНТУ.

Советское Правительство Рабоче-Крестьянской России ставит себе целью содействовать всеми мерами установлению мирного дружественного согласия среди народов Закавказья и соседних стран Востока.

В интересах мира и дружбы Советское Правительство считает необходимым, чтобы все споры, унаследованные этими народами от времен темного прошлого, решались путем мирных, дружественных сношений и чтобы была исключена всякая возможность враждебных и агрессивных замыслов одного народа против другого.

С этой целью, еще в июне текущего года, народный комиссар иностранных дел Российской Социалистической Федеративной Советской Республики обратился к Правительству Великого Национального Собрания Турции с предложением посредничества Советского Правительства в установлении границ Турции и Армении на основе свободного самоопределения народов.

Аналогичное предложение было сделано Советским Правительством Мирной Делегации Республики Армении, находившейся в Москве.

В то время, как Великое Национальное Собрание тотчас же уведомило о своем согласии на предложение Советского Правительства, - последнему до сих пор неизвестно, какое положение в этом вопросе занимает Правительство Армении.

Такое неопределенное положение, в связи с благожелательным отношением, проявленным Правительством Армении к насильническому договору, навязанному Антантой безвластному правительству Султана, - питало недоверие Революционной Турции к намерениям Республики Армении и укрепляло в ней убеждение в том, что Армения приняла решение осуществить свои территориальные притязания, опираясь на Антантовский договор и не считаясь с фактическим правительством Турции-Великим Национальным Собранием.

Такое положение было бы чревато неисчислимыми гибельными последствиями для армянского народа.

Не через голову народов Турции, в союзе с султанским правительством, оккупированным империалистическими державами Антанты,- не в братском союзе с народами Турции и остального Востока, пробудившимися ныне к самостоятельной жизни, найдет народ Армении осуществление своих стародавних стремлений к независимости и самостоятельности.

В настоящее время, когда, не взирая на мирные предложения Советского Правительства, народы Армении и Турции оказались снова втянутыми в вооруженную борьбу,- Советское Правительство считает неотложным открытое заявление Правительства Республики Армении об отсутствии у него каких-либо намерений насильственного осуществления своих притязаний в Турецкой Армении на основе Антантовского договора и об искреннем желании Республики Армении разрешить вопрос о территориальном разграничении с Турцией путем мирных, дружественных сношений с Правительством Великого Национального Собрания.

Другим существенным пунктом восстановления мира и согласия между Арменией и соседними с нею странами Советское Правительство считает предоставление ему права свободного транзита по желдорогам Армении и связи с Турцией, при условии, разумеется, полнейшей гарантии от возможности какой-либо военной опасности для Армении со стороны Турции.

Советское Правительство надеется, что Республика Армении без колебания вступит на путь согласия и дружбы и обеспечит народу Армении возможность мирного развития в сотрудничестве с народами Востока, которые также, как и Армения, отстаивают свою независимость и борются за свою свободу.

ПОЛНОМОЧНЫЙ ПРЕДСТАВИТЕЛЬ Р.С.Ф.С.Р.

ՀԱՍ, Ֆ-Պ. 200, ց. 2, գ. 96, թ. 1-2; և՛րհիւսիւզիր

Doc.IV-9
ԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ներքին գործերի նախարարությունը տեղեկացնում է երկրի արտգործնախարարությանը, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև սպասվելիք պայմանագրում կճանաչվի Հայաստանի անկախությունը, և նրա դեմ խարհրդայնացման պահանջ չի դրվի, ինչպես նաև, որ դաշնակիցները պնդում են, որ Հայաստանն իրենցից այժմ ոչ մի օգնություն չի ստանա (հոկտեմբեր, 1920թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ.
Մինիստրություն Ներքին
Գործերի
N°9221
"Հոկտեմբերի 1920թ."
Յերեվան

ԱՐՏԱՔԻՆ ԳՐԹՈՑ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.

Լեզրան գնացել է այս գիշեր, նրան չտեսա, բայց իմացա վոր նա ասել է թե մենք միշտ ուշանում ենք ժամանակին ընդունելու նպաստավոր առաջարկը, իսկ հետո ստիպված ընդունում ենք ավելի աննպաստը, Քյազիմ րեյը դժգոհում է տեսակցությունից ինձ հետ, յերեվում է չի ուղում շնորհիվ (հաջողության) Точка յերթե կարելի լինի Սեվրի դաշնագրից հրաժարվելու խնդիրը մեղմացնել պատգամավորությունը, կարծում են պետք է ընդունել ռուսների առաջարկը մանավանդ վոր անմիջական բանակցությունները չեն հաջողվում Точка Լեզրանը ինձ հավաստիացրեց վոր անկախության ձեռք չեն տալ յեվ սովետիզացիայի չեն յենթարկի ու հետ կը քշեն մինչեվ պետական սահմանները Точка դա իհարկե պետք է գրավոր ձեվակերպել Точка Ստոքքը ու դաշնակիցները խուսափում են տեսակցությունից նորից պնդում են վոր նրանցից այժմս վոչ մի ոգնություն չենք ստանա Точка այստեղ տարածվել է իբր կառավարության մեջ փոփոխություններ են յեղել վորովհետեվ առանց այդ անհնար են բանակցությունները թե ռուսների յեվ թե տաճիկների հետ, ճիշտ է այդ արդյոք Точка

(Փաստաթղթում արված կնիքի պատճառով վերծանումը դժվար է):

ՀԱԱ, Զ-Պ. 1022, ց.3, գ.272, թ.7; մեքենագիր

Doc.IV-10
ԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ներքին գործերի նախարարը երկրի արտգործնախարարությանը տեղեկացնում է, որ Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանի Երևան մեկնած գնացքի կոմենդանտը գնացքի շարժվելու ամբողջ երթուղով իրականացրել է հակապետական ազդեցության (հոկտեմբեր, 1920թ.)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ.
Մինիստրություն Ներքին Գործերի
№9221

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

"Հոկտեմբերի 1920թ."
Յերեվան

Մեր գործակալության հաղորդած տեղեկությունների համաձայն՝ մեծամասնական միսսիայի գնացքի պ. կոմենդանտը, վրոով մեկնել է Յերեվան պ. ԼԵԳՐԱՆ, թույլ ե տվել ամբողջ Հայաստանի սահմաններին միանգամայն անթույլատրելի յեվ միջազգային որենքները խախտող մի շարք գործողություններ՝ որինակ՝ Սանահին, Ալեքսանդրապոլ յեվ Եջմիածին կայարաններում նա յեվ նրա մարդիկը փորձեր են արել ճառեր արտասանելու, անել բոլշեվիկյան պրոպագանդ յեվ միայն ժողովրդի սառն ու հեզնական վերաբերմունքը կասեցրել ե այդ փորձերը: Իսկ՝ Սարդարաբադ կայարանում, պ. կոմենդանտը թույլ ե տվել իրեն ասելու հանդիսավոր կերպով՝ վոր այժմ Հայաստանում իշխանությունը գտնվում ե մի խումբ ուզուրբայտորների ձեռքին, բայց այդ դրությունը յերկար չի տեվի յեվ շուտով կփոխարինվի Բանվոր-գյուղացիական իշխանությամբ:

Տեղեկացնելով Ձեզ այս մասին, խնդրում ենք ձեռք առնել հարկավոր միջոցներ՝ Հայաստան ժամանած միսսիայի նմանորինակ գործողությունները կասեցնելու, Հայտնելով միաժամանակ, վոր այդպիսի գործողությունների կրկնման դեպքում մենք հարկադրված պիտի լինենք նախարարության կողմից դիմելու ամենակտրուկ միջոցների:

Ներքին Գործերի Նախարար՝

Վարչական դեպարտամենտի տնորեն՝ (Սկորրագրություն)

Գործավար՝ (Սկորրագրություն)

ՀԱԱ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.272, թ.8; մեքենագիր

Doc.IV-11

ՕՐՋՈՆԻԿԻՉԵՒԻ ԵԼՈՒՅԹԸ ԱԴԻԲԵՋԱՆԻ ԿՈՄՎՈՒՍԻ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Կոչ է արվում, որպեսզի պատերազմող հայկական և թուրքական կողմերը ընդունեն Խորհրդային Ռուսաստանի հաշտարար միջնորդությունը, դադարեցնեն պատերազմը, և հայ ու թուրք աշխատավորները միավորվեն ու կազմեն միասնական կարմիր հակափմալերիալիստական ճակատ (16 հոկտեմբերի, 1920թ.)

ВЫСТУПЛЕНИЕ ТОВАРИЩА ОРДЖОНИКИТЗЕ НА ЭТОМ ЖЕ
ЗАСЕДАНИИ.

Товарищи, перед нами выступали с приветствием представители армянской и турецкой коммунистической партии. Это тот момент, когда между несчастным армянским и турецким народом происходит смертельная борьба, в которую измученный армянский народ вовлечен преступным правительством дашнаков, агентами Антанты. Съезд не может обойти молчанием этого и должен отметить свое отношение. Предлагается следующая резолюция.

Второй съезд АКП клеймит позором палачей армянских коммунистов дашнакцаканское правительство Армении, вовлекшее в борьбу армянских рабочих и крестьян против Анатолийского народного правительства, ведущего смертельную борьбу против мирового империализма Англии и Франции.

Съезд обращается к Совет Народных Комиссаров России и Азербайджана взять на себя посредничество между армянским народом и поднявшимся против мирового империалистического гнета Турецким правительством Мустафы Кемаля для скорейшего прекращения кровавых столкновений между армянскими и турецкими трудящимися массами и объединения их в единый красный фронт.

Да здравствует единый красный фронт, против мировых хищников Англии, Франции Америки (аплодисменты).

Стр. 27-28

Оригинал Ед. Партарх. дело № 1 ов.1.
Стенограф, отчет 1-го заседания II-го
Съезда АКП (б) от 16 октября 1920г.

Верно:

ՀԱՄ, Ֆ-Պ. 1022, ց.5, գ.361, թ.1; մերենագիր

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
(հոկտեմբեր, 1920թ.)

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային
Հանրապետության

Յեվ Հայաստանի Հանրապետության միջեվ.

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը մի կողմից յեվ Հայաստանի Հանրապետությունը մյուս կողմից ղեկավարվելով յերկու յերկիրներում ապրող ժողովուրդների համար հաշտ համակեցության պայմաններ ստեղծելու հաստատուն ցանկությամբ. Վորոշեցին կնքել սույն պայմանագիրը յեվ դրա համար նշանակեցին իրենց լիազորները.

Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության
Կառավարության

յեվ

Հայաստանի Հանրապետության Կառավարության

Հիշյալ լիազորները փոխադարձաբար ներկայացնելով իրենց լիազորությունները, ընդունելով, վոր կազմված են համապատասխան ձեվով յեվ իսկական կարգով համաձայնության յեկան հետեվյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Յելնելով Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ազդարարությունից, վոր բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատ ինքնորոշման մինչեվ լիակատար անջատումն այն պետությունից, վորի կազմի մեջ մտնում ե նա: Ռուսաստանն առանց այլ յեվ այլության ընդունում ե Հայաստանի Պետության ինքնուրույնությունն ու անկախությունը յեվ կամովին հրաժարվում ե այն բոլոր... իրավունքներից, վոր ուներ Ռուսաստանը Հայաստանի ժողովրդի յեվ յերկրամասի վրա:

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.- նույն սկզբունքից յելնելով Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. արդարացի ե համարում Հայաստանի Հանրապետությանը միացնել Տաճկական Հայաստանի շրջանները յեվ պատրաստ ե բարեկամական աջակցություն ցույց տալ յեվ ազդել դաշնակից Պետությունների վրա՝ հիշյալ շրջանները կամ մասերը փաստորեն Հայաստանին միացնելու նպատակին:

ՀՈԴՎԱԾ 2.

Յեղնելով սույն պայմանագրի 1-ին հատվածում ազդարարված սկզբունքներից, Ռուսաստանը պատրաստվում է հրաժարվել վոյեվե միջամտությունից Հայաստանի ներքին գործերին:

ՀՈԴՎԱԾ 3.

Հայաստանի յեվ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերացիայի կազմի մեջ մտնող Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային Հանրապետության պետական սահմանները կվորոշեն Հայաստանի Հանրապետության յեվ Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ներկայացուցիչների կոնֆերանսում Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. ներկայացուցչի մասնակցությամբ:

Կոնֆերենցիան հրավիրվում է սույն պայմանագրի ստորագրությունից հետո-անհապաղ:

Յերթե կոնֆերենցիայում համաձայնության չգան –հարցը վորոշվում է ռիֆիրինդումով:

ՀՈԴՎԱԾ 4.

Ռուսաստանն ընդունում է, վոր Հայաստանի պետության կազմի մեջ են մտնում անպայման կերպով նախկին Ռուսական կայսրության ստորեվ հիշված նահանգներն ու շրջանները. Յերեվանի, Կարսի-համապատասխան բոլոր գավառներով ու շրջաններով, բացի Նախիջեվանի գավառից, այլ յեվ Գանձակի նահանգի հարավային մասը՝ Քարվանսարա յեվ Դիլիջան քաղաքների հետ:

Հայաստանի յեվ Ադրբեջանի միջեվ վիճելի յեղող շրջանների- այն և այսպես կոչված Ղարաբաղի, Չանգեզուրի յեվ Նախիջեվան գավառների- պետական պատկանելիությունը, քանի վոր անմիջական համաձայնություն չկա, վորոշվում է ռեֆերենդումով:

Յերթե հետզհետե կպարզվեն Հայաստանի յեվ ուրիշների հետ սահմանային խնդիրներ կլինի, քան այն, վոր սույն պայմանագրի հիման վրա, Ռուսաստանը պատրաստակամություն է հայտնում ընդունել Հայաստանի կազմի մեջ նախկին կովկասյան փոխարքայության այս կամ այն մասերը, վոր կանցնեն նրան այդ կազմավորումների հետ կնքած պայմանագրերի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 5.

Պայմանավորվող յերկու կողմերն ել պարտավորվում են 1 /թույլ չտալ, վոր իրենց յերկրում/ կազմվեն յեվ պահանջ դնեն այն կառավարությունները. Կազմակերպություններն ու խմբերը, վորոնք իրենց նպատակ են դնում զինյալ պայքար մյուս պայմանավորվող կողմի դեմ:

Բացի դրանից Հայաստանը պարտավորվում է արգելել իր կազմի մեջ մտնել կամավորական կամ այլ բանակների /վորոնք մասնակցում են

Խարհրդային Ռուսաստանի դեմ յեկող քաղաքացիական կռիվներին/ հրամանատարական անձանց, յեթե նրանց հայկական ծագում չունեն: Արգելել մտնել վոչ մի ձեվով, նույն իսկ իբրեվ կամար: Իսկ այդ մարդկանցից նրանց, վորոնք սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու մոմենտին բանակի շարքերում կգտնվեն, Հայաստանը պարտավորվում ե անհապաղ հեռացնել բանակի շարքերից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սույն վորոշման ուժը տարածվում ե կամավորական կամ այլ խորհրդային Ռուսաստանի դեմ մղվող քաղաքացիական կռիվներին մասնակցող, բանակների հրամանատարական անձանց վրա, վորոնց թեյեվ հայ ազգին են պատկանում, սակայն մինչեվ 1920թ. Մարտի 1-ը Հայաստանի հանրապետության բանակի կազմի մեջ չեն յեղել:

2/ արգելվում ե իր տիրիտորիայի վրա թողնել վորյեվե տեսակ գորք, բացի կառավարության գորքից կամ այն բարեկամ պետությունների գորքից, վորոնց հետ պայմանավորվող կողմերից մեկը ռազմական կոնվենցիա յե կնքել, բայց փաստորեն պատերազմական վիճակում չի գտնվում պայմանավորվող մյուս կողմի հետ, արգելել նմանապես անձնական կազմի անհատական կոչն ու գորահավաքը այդպիսի պետությունների բանակի շարքերը:

3/ Արգելել այն պետություններին, վորոնք փաստորեն ռազմական վիճակում են գտնվում պայմանավորվող կողմի հետ, այլ յեվ այն կազմակերպություններին ու խմբերին, վորոնք իրենց նպատակ են դնում զինված պայքար պայմանավորվող մյուս կողմի դեմ- ներմուծել իրենց նավահանգիստները կամ անցկացնել իրենց յերկրամասի միջոցով այն ամենը, վոր կարող ե օգտագործվել պայմանավորվող մյուս կողմի դեմ.- ինչպես զինված ոյժ, ռազմական պարագաներ, ռազմա-տեխնիկական պարագաներ յեվ նյութեր:

ՀՈՂՎԱԾ 6.

....1. 13 տարեկանի հասակի հասած, հայկական ծագումն ունեցող այն անձինք, վորոնք ապրում են Ռուսաստանի տերիտորիայում, իրավունք ունեն հրաժարվելու հայկական քաղաքացիությունից: Այնպես ել ռուսական ծագումն ունեցող անձինք, վորոնք ապրում են Հայաստանի տերիտորիայում յեվ հասել են նշված հասակին, իրավունք ունեն հրաժարվելու ռուսական քաղաքցիությունից:

Պայմանավորող կողմերից մեկում քաղաքացիությունից հրաժարվողները, պահպանում են իրենց իրավունք իրենց ունեցվածքի նկատմամբ, այն պետության որենքների համաձայն, ուր ապրում են նրանք, բայց պարտավոր են յերկու տարվա ընթացքում- դիմում տալու որից սկսած-

թողնել նրա /այդ յերկրի/ սահմանները, ըստ վորում իրավունք ունեն իրենց բոլոր ունեցվածքը լուծարքի յենթարկել կամ տանել իրենց հետ:

...2. Սույն հոդվածի կատարման մանրամասնություններն ու կարգը կհաստատվեն պայմանավորվող յերկու կողմերի միջեվ կնքվելիք հատուկ համաձայնությամբ:

...3. Պայմանավորվող յերկու կողմերի քաղաքացիները, վորոնք ցանկանում են օգտվել սույն հոդվածի նախորդ կետում հիշատակված համաձայնությունը ուժի մեջ մտցնելուց մի տարի ժամանակի ընթացքում կատարել իրենցից պահանջվող ձեվականությունները:

ՀՈԴՎԱԾ 7.

Պայմանավորվող յերկու կողմերի գաղթականները, այլ յեվ այն անձինք, վորոնք Ռուսաստանից հարկադրաբար- ստիպմամբ գաղթել են այժմ Հայաստանի Հանրապետության կազմի մեջ մտնող տերրիտորիան- ցարական տապալված կառավարության կարգադրությամբ-յեվ ցանկանում են հայրենիք վերադառնալ-պետք ե վերադառնան հայրենիք, վորքան հնարավոր ե, կարճ ժամանակամիջոցում:

ՀՈԴՎԱԾ 8.

Պայմանավորվող յերկու կողմերը պարտավորվում են, սույն պայմանագրին ուժի մեջ մտցնելուց հետո անմիջապես ազատել բանտարկությունից կամ պատժի ուրիշ ձեվերից յեվ հետագա դատական կամ վարչական հետապնդումից այն անձանց.

1/ վորոնք այդպիսի հետապնդման են յենթարկվել Հայաստանի տերրիտորիայի վրա- այնպիսի գործողությունների համար, վոր կատարել են հոգուտ ՌԱՖԽՀ կամ հոգուտ 3-րդ կոմունիստական ինտերնացիոնալի մեջ մտնող քաղաքական կուսակցությունների:

2/ վորոնք հետապնդման են յենթարկվել Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. յեվ Ա.Ս.Խ.Հ. տերրիտորիաներում այնպիսի գործողությունների համար, վոր կատարել են հոգուտ Հայաստանի Հանրապետության, կամ հոգուտ "դաշնակցության" կուսակցության:

Նշված, բոլոր անձանց, յեթե նրանք ցանկանան, արտասահման գնալու, ազատ իրավունք ե տրվում:

ՀՈԴՎԱԾ 9.

Ռուսաստանի յեվ Հայաստանի միջեվ տնտեսական հարաբերությունը ժամանակավորապես, մինչեվ պայմանավորվող յերկու կողմերի միջեվ առեվտրական պայմանագրի կնքելը, վորոշվում ե ստորեվ բերված դրույթներով.

1. Պայմանավորվող յերկու կողմերը իրենց առեվտրական փոխհարաբերության հիմքում դնում են առավելագույն բարեպատեհության սկզբունքները.

2. Այն ապրանքները, վոր գնում են պայմանավորվող կողմերից մեկից կամ մեկի համար, մյուս կողմը չպետք է վոր յեվ տրանզիտի կամ հարկի յենթարկի:

ՀՈԴՎԱԾ 10.

Սույն պայմանագրի նախորդ հոդվածի 1 յեվ 2 կետերի վորոշումները կարող են դրվել այն առեվտրական պայմանագրի հիմքում, վորը կարող է կնքվել յերկու պայմանավորվող կողմերի միջեվ:

ՀՈԴՎԱԾ 11.

Դիվանագիտական յեվ դեսպանական հարաբերությունները պայմանավորող կողմերի միջեվ սահմանվում են անհապաղ սույն պայմանագիրը կնքելուց հետո: Դեսպանների փոխադարձ դրության մասին, մինչեվ հատուկ համաձայնության կնքերը, դրա իրավունքներն ու պարտականությունները կվորոշվեն, պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրում այդ առթիվ գոյություն ունեցող ցուցմունքներով:

ՀՈԴՎԱԾ 12.

Հասարակական-իրավական յեվ մասնավոր-իրավական բնույթի հարցերի լուծումը, վորն առաջ կգան պայմանավորվող կողմերի քաղաքացիների միջեվ, այլ յեվ վորոշ առանձին հարցերի կարգավորումը յերկու պետությունների միջեվ կամ պետությունների յեվ մյուս կողմի քաղաքացիների միջեվ, կատարվում են հատուկ հանձնաժողովի միջոցով, վորի պարտականությունները սահմանվում են պայմանավորվող յերկու կողմերի համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 13.

1. Ռուսաց կառավարությունը իր հաշվով Հայաստան ե վերադարձնում 1914 մինչեվ 1917 թվերի համաշխարհային պատերազմի ժամանակ Հայաստանից եվկուացիայի յենթարկված բոլոր դավանությունների, յեկեղեցիների ու աղոթատների ունեցվածքները, դրանց թվում յեվ արխիվի արժեքները, փաստաթղթերը յեվ Եջմիածնի վանքին պատկանող իրերը:

2. Ռուսաց կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն ե հանձնում արեվելյան լեզուների Լազարյան ինստիտուտի ունեցվածքը, դրանց թվում գրադարանները, արխիվները, թանգարանները, գեղարվեստական արտադրությունները, ուսումնական պարագաները, փաստաթղթերը յեվ այդ ունեցվածքի մեջ մտնող մյուս իրերը:

Ինչ վերաբերում ե այն արխիվներին, գրադարաններին, թանգարաններին, գեղարվեստական արտադրություններին յեվ փաստաթղթերին, վորոնք Հայաստանի համար եյական նշանակություն ունեն գիտական, գեղարվեստական կամ պատմական տեսակետից, յեվ Հայաստանի

սահմաններից տարվել են Ռուսաստան, Ռուսաց կառավարությունը համաձայնում է այդպիսիները վերադարձնել Հայաստան այն չափով, վոր չափով նրանց հեռացնելը-վերցնել եսկան վնաս չի հասցնիլ Ռուսական այն արխիվներին, գրադարաններին, թանգարաններին, պատկերասրահներին, ուր գտնվում են դրանք:

3. Այն հարցերը, վոր վերաբերում են սույն հոդվածի 1-ին յեվ 2-րդ կետերի հիման վրա ունեցվածքները հանձնելուն յեվ չուտելուն, պետք է կատարվի հատուկ խառը հանձնաժողովի կողմից, վորին մասնակցում են պայմանավորվող յերկու կողմերից հավասար թվով անդամներ:

ՀՈԴՎԱԾ 14.

1. Ռուսաստանը հրաժարվում է վորյեվէ հաշվից, վորոնց բխում են Հայաստանը նախկին Ռուսական Կայսրությանը առաջվա պատկանելիությանից, յեվ ընդունում է, վոր զանազան կոչումների պետական ունեցվածքները, վորոնք գտնվում են Հայաստանի տերիտորիայում, կազմում են վերջինիս անկապտելի սեփականությունը: Իսկ յեթէ այդ ձեվով Հայաստանին պատկանող ունեցվածքը, 1914 թվի օգոստոսի 1-ից հետո, մի յերրորդ պետություն տարել է իր տերիտորիան, ապա այդպիսին պահանջելու իրավունքն անցնում է Հայաստանի Հանրապետությանը:

2. Ռուսաստանը համաձայնում է ուղարկել Հայաստանին պատասխանատվությունից Ռուսաստանի պարտքերի կամ նման պարտավորությունների նկատմամբ, դրանց թվում յեվ թղթադրամ բաց թողնելու, դրամական նիշերի պարտավորությունից, Ռուսական դրամարկղի սերիայից ու վկայությունից Ռուսական պետության ներքին յեվ արտաքին փոխառության, զանազան հիմնարկների ու ձեռնարկությունների յերաշխսավորությունից, յեվ այդպիսիների յերաշխսավորված փոխառությունից յեվ այլն: Ռուսաստանի պարտատերի բոլոր նման պահանջներից, Հայաստանի Հանրապետությանը հասնող բաժինը, պետք է ուղղվեն միայն Ռուսաստանին:

ՀՈԴՎԱԾ 15.

Ռուսական կառավարությունը, ի նկատի առնելով, վոր համաշխարհային պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետությունը ամբողջովին ավերվեց, յեվ վոր հայ աշխատավոր գյուղացիությունը զրկված է իր տնտեսությունը վերականգնելու ամեն մի հնարավորությունից, համաձայնություն է հայտնում.

1. Հանձնել, տալ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը նավթ այն քանակությամբ, վոր Հայաստանի գործուներության տարեկան նորման է կազմում: Այդ քանակի հաշվին Հայաստանի Կառավարությանը բաց է թողնում 500.000 փութ նավթ, սույն պայմանագիրն ստորագրելուց անմիջապես հետո:

2. Հայաստանի Հանրապետության Կառավարությանը տալ, հանձնել գործադրության համար պիտանի ապրանքատար վագոններ այն քանակով յեվ այնքան ժամանակով, վոր կսահմանի պայմանավորվող յերկու կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից կազմված հատուկ խառը հանձնաժողովը:
3. Հայաստանի Հանրապետության Կառավարությանը հանձնել, տալ բամբակի արտադրության համար անհրաժեշտ սարքավորում- դազգյահներ ու տեխնիկական հարմարություններ, այն քանակով յեվ այնքան ժամանակով, վոր կսահմանի պայմանավորվող յերկու կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից կազմված հատուկ խառը հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 16.

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում ե ընդունել յեվ հարգել մյուս կողմի դրոշակն ու պետնիշը /կնիքը/, իբրեվ կարեկամ պետության խորհրդանշան:

Դրոշակի ու պետնիշի նկարները, այլ յեվ դրանց մեջ մտցվող փոփոխությունները, յերբ դրանց տեղի կունենան փոխադարձաբար կհայտնվեն միմյանց դիվանագիտական ճանապարհով:

ՀՈԴՎԱԾ 17.

Սույն պայմանագիրը յենթակա յե վավերացման /...../:

Վավերացման գրությունների փոխանակումը պետք ե տեղի ունենա Մոսկվայում:

Ամեն տեղ, ուր այս պայմանագրում հիշատակվում ե /րատիֆիկացյալի/ վավերացման մոմենտը, դրա տակ հասկացվում ե վավերացված դրությունների փոխադարձ փոխանակումը:

Ի հաստատումն յերկու կողմերի լիազորները անձամբ ստորագրեցին սույն պայմանագիրը յեվ հաստատեցին այն իրենց կնիքով:

Իսկականը յերկու որինակ կազմվել յեվ ստորագրվել ե Յերեվան քաղաքում:

1920թ. Հոկտեմբեր

Պատճենը պատճենի հետ ճիշտ ե՝ Գործավար.

1. ՀԱՎԵԼՈՒՄՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ.
ՎՈՐ ԿՆՔՎԵՑ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՀՈՂՎԱԾ 1.

Յեղնելով այն բարեկամական փոխհարաբերությունից, վոր հաստատվում է Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. յեվ Հայաստանի Հանրապետության միջեվ հաստատված հաշտության պայմանագրով, վերջինի /Հայաստանի/ Կառավարությունը Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարությանն իրավունք է տալիս ամեն տեսակ ռազմական փոխադրումներ ու տրանզիտ /ամեն տեսակի ռազմական իրեր, նյութեր, ռումբեր, մթերքի պաշար յեվ այլն/ կատարել Հայաստանի Հանրապետության յերկաթուղիներով, ըստ վորում Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարությունը յերաշխավորվում է, վոր սույն համաձայնությունը վոչ մի դեպքում չի օգտագործվի ի վնաս Հայաստանի Հանրապետության իրավունքների յեվ անկախության:

ՀՈՂՎԱԾ 2.

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իրավունք է տալիս Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարությանը անցկացնել Հայաստանի յերկաթուղիներով ամեն տեսակի զարամասեր յեվ կոմունիստական համալրումներ: Հիշյալ զորամասերն ու կամանդները Հայաստանի տերիտորիան պետք է հասնեն մաս-մաս, 400 մարդուց վոչ ավելի, ընդ վորում Հայաստանի տերիտորիայի վրա միաժամանակ յեղած զորամասերի յեվ կամանդների մարդկանց ընդհանուր քանակը չպետք է անցնի 1.000 մարդուց:

Չորամասերն ու կամանդները Հայաստանի տերիտորիայով պետք է անցնեն առանց հրաձիգ գեների, բացառության հրամանատարական կազմի, կոմիսարների /զինվորականների/ յեվ պահակների, վորոնց բանակը գնացքների կազմի 3%-ից ավելին չպիտի լինի,վորպիսի անձինք կարող են գեներ ունենալ իրենց հետ:

ՀՈՂՎԱԾ 3.

Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարությունը Հայաստանի Հանրապետությանը տալիս է Հայաստանի միջով տրանզիտով անցկացվող ռազմամթերքի, զենքի, նույն թվում յեվ թնդանոթի ռումբերի 5%-ը:

ՀՈՂՎԱԾ 4.

Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. Կառավարության Հայաստանի միջով տրանզիտով անցկացրած ռազմական իրերը, նյութերը, ռումբերը, մթերքն յեվ այլն, այլ յեվ զորամասերը պետք է ուղղվեն դեպի այն կետերը, վորոնք ավելի մոտ են Տրապիզոն-Երզրում-Մուշ-Բիթլիս գծին, յեվ վոչ մի դեպքում չեն օգտագործվի Հայաստանի Հանրապետության դեմ:

ՀՈՂՎԱԾ 5.

1 յեվ 2 հոդվածներում նշված անցկացման տեխնիկական մանրամասնությունների մշակումն դրվում է այն խառն հանձնաժողովի վրա, վորի կազմի մեջ մտնում են Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. յեվ Հայաստանի Հանրապետության Կառավարությունների նշանակած հավասար թվով անդամներ:

ՀՈԴՎԱԾ 6.

Նախորդ հոդվածով նախատեսված հանձնաժողովը իր գործունեությունը պետք է սկսի սույն պայմանագիրն ուժի մեջ մտցնելուց հետո, վոչ ուշ քան 3 որը:

Մինչ այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության կարգադրությամբ մանրամասն տվյալներ են պատրաստվում, վորոնք անհրաժեշտ են պարզելու յերկաթուղու առավելագույն փոխադրման ունակությունը: Յերկաթուղու կանոնավոր գործելու համար անհրաժեշտ են այս անցկացումները ի կատար ածելու համար, սույն պայմանագրի համաձայն տալիս ե Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. հատուկ համաձայնության հիման վրա: Այն բոլոր նյութական միջոցները, վոր տրվում ե Հայաստանի Հանրապետության կառավարության կարգադրությունը Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարության տրանզիտ անցկացումներին մշտապես սպասարկելու համար, անվճար կերպով հանձնվում ե Հայաստանի Հանրապետությանը:

ՀՈԴՎԱԾ 7.

Ձեզնից արագ կերպով լուծելու համար այն ամեն տեսակ թյուրիմացությունները, վոր կարող են առաջ գալ անցկացումների ժամանակ, այլեվ առաջ շարժվող ռազմագնացքների պարենի ապահովության համար, այլ յեվ հսկելու համար, վոր տրված ե մարշրուտի ... ճշգրիտ ուղղություն ստանան անցկացումները, Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. իր ներկայացուցիչներն և նշանակում այն կետերում, վոր վորոշում ե 5 հոդվածում հիշված հանձնաժողովը: Այդ ներկայացուցիչներն իրավունք չունեն խառնվելու յերկաթգծի այն կայարանի վարչության պարտականությունների կատարմանը, ուր կլինեն այդ ներկայացուցիչները:

ՀՈԴՎԱԾ 8.

Բոլոր վառվածքները, յերկաթգծի ավերակումները շարժական կազմի յեվ կայարանների կահավորության վնասները, վոր կարող են առաջ գալ պատահականությունից կամ խորտակումների հետեվանքով, կարգավորվում, շինվում են անհապաղ Հայաստանի Հանրապետության Կառավարության կարգադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 9.

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը միջոցներ ե ձեռք առնում անհրաժեշտ պաշտպանության համար՝ յերկաթուղին սույն պայմանագրի հիման վրա անարգել ոգտագործելու:

ՀՈԴՎԱԾ 10.

Այն միջոցները, վոր անհրաժեշտ են մարշրուտի համաձայնեցման յեվ սույն պայմանագրի հիման վրա անցկացումների քանակի կատարման համար, այն մանրամասնությամբ, վոր պետք ե Հայաստանի Հանրապետությանը:

պետության կարիքների յերկաթուղային նորմալ շարժման համար, վորոշում ե 5 հող. հիշվածում նշված հանձնաժողովը:

ՀՈԴՎԱԾ 11.

Կատարվող անցկացման կարգն ու միջոցը մշակում ե 5 հող. հիմնված հանձնաժողովը:

ՀՈԴՎԱԾ 12.

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. Կառավարությանն ե հանձնում հատուկ համաձայնությամբ, Շախթախթի-Մակու / ° / նեղագիծ յերկաթուղու այն մասի շահագործումը, վոր գտնվում ե Հայաստանի տերրիտորիայի վրա, այլ յեվ համապատասխան վարձատրությամբ հանձնվում ե յերկաթուղու այն շարժական կազմն ու այլ ունեցվածքը, վոր Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ կլինի:

ՀՈԴՎԱԾ 13.

Այնպիսի համապատասխան յերաշխիք ստեղծելու նպատակով, վոր ապահովի Հայաստանի Հանրապետության ռազմական ապահովությունը Տաճկաստանի կողմից, սահմանվում ե հետեվյալը.

1. Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովի կառավարությունը պարտավորվում ե թույլ չտալ ռազմական ուժերի կենտրոնացում Հայաստանի սահմաններին կից շրջաններում յեվ մասնավորապես Եզրումում, ըստ վորում Եզրումում մշտապես կայազորի քանակը վորոշում ե այն խառն հանձնաժողովը, վորը նշված ե սույն հոդվածի 3-րդ կետում: Յերբ կարիք լինի առաջ շարժել զորքերը,- այդ հարցը յենթարկվում ե նույն հանձնաժողովի վորոշմանը: Վորոշված սահմանափակումները չպետք ե ճնշեն ռազմական գործողությունները Անատոլիայի, Կոստանդնուպոլիսի, Միջագետքի յեվ Սիրիայի ուղղությամբ:
2. Տաճկաստանի Ա.Ս.Ժ.-ի Կառավարությունը պարտավորվում ե սույն պայմանագրի և հողվածում նշված գծից դեպի արեվելք յեղող սահմանային շրջանում միայն այն քանակությամբ զորք պահել, վոր անհրաժեշտ ե յերկրի ներքին կարգը պահպանելու համար յեվ անմիջականորեն սահմանները պաշտպանելու համար: Այդ զորքերի մոտավոր քանակությունը սահմանում ե այն խառն հանձնաժողովը, վոր նշված ե սույն հոդվածի 3-րդ կետում: Հանձնաժողովի վորոշումները պետք ե ի կատար ածվեն ամենաուշը մի ամիս ժամանակաշրջանում:
3. Մանրամասնությունները մշակելու յեվ հերկելու վորպեսզի ճշգրիտ կատարվեն այն պայմանները, վոր նշված են նախորդ կետերում, այլ յեվ ույն պայմանագրի և հողվածում, Տաճկաստանի

տերրիտորիայում, այն կետերում, վոր վրոշվում ե Տաճկաստանի Ա.Մ.Ժ-ի յեվ Հայաստանի Հանրապետության փոխադարձ համաձայնությամբ հիմնվում ե խառը հանձնաժողով, վորի կազմի մեջ Տաճկաստանն ու Հայաստանը նշանակում են հավասար թվով անդամներ. Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. ներկայացուցչի նախագահությամբ նշված հանձնաժողովը հաստատվում ե սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 7 որից վոչ ուշ:

ՀՈԴՎԱԾ 14.

Սույն պայմանագիրը հանդիսանում ե Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. յեվ Հայաստանի Հանրապետության միջեվ յեղող հաշտության պայմանագրի անբաժան մասը յեվ ուժի մեջ ե մնում անհապաղ հետեվյալ պայմանները կատարելուց հետո.

1. Յերբ կդադարեն ռազմական գործողությունները Հայաստանի միջեվ, յերբ Տաճկաստանի կհանձնի /կմաքրի/ իր զորքերն իր բռնած գծից, նախկին Ռուսաստանի կայսրության մասերից, վորոնք Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. յեվ Հայաստանի Հանրապետության միջեվ յեղած հաշտության պայմանագրի հիման վրա անցնում են վերջինի /Հայաստանի/ տերրիտորիայի կազմին յեվ յերբ տաճկական զորքերը կանցնեն Ռուսաստանի յեվ Տաճկաստանի 1914 թվի սահմաններից այն կողմը:
2. Յերբ Ա.Ս.Խ.Հ. յեվ Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կընդունեն Հայաստանի Հանրապետության անկատարելի իրավունքը վիճելի տերրիտորիաների-Նախիջեվանի յեվ Ջանգեզուրի գավառների նկատմամբ, յեվ այդ գավառների սահմաններից կհանեն այն բոլոր զորամասերը, վորոնք յենթարկվում են Ա.Ս.Խ.Հ. յեվ Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. հրամանատարությանը: Այսպիսին ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետությունն իր կողմից հրաժարվում ե վորյեվե պահանջից այսպես կոչված լեռնային յեվ հարթավայր Ղարաբաղ շրջանի նկատմամբ:

Ի հաստատումն այսու յերկու կողմերի լիազորներն անձամբ ստորագրեցին սույն հավելումն հաշտության պայմանագրին յեվ հաստատեցին այն իրենց կնիքով:

Իսկականը կազմվել յեվ ստորագրվել ե յերկու որինակ:

Ի քաղաքան Յերեվան 1920թ. Հոկտեմբեր.

Իսկականի հետ ճիշտ ե – Գործավար:

ՀՍՍ, Ֆ-Պ. 1022, ց.3, գ.272, թ.14-29; մեքենագիր

2-ՐԴ ՀԱՎԵԼՈՒՄ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵՐԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

ՀՈՂՎԱԾ 1

Հիմնվելով այն բարեկամական փոխհարաբերությունների վրա, վոր ա-
ռաջ ե յեկել Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. յեվ Հայաստանի Հանրապետության միջեվ նրանց
միջեվ կնքված հաշտության պայմանագրի ուժով, Հայաստանի Հանրապե-
տության կառավարությունը Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. Կառավարությանն իրավունք ե
տալիս կապ հաստատել իրեն դաշնակից կառավարությունների հետ
հեռագրի, ռադիո-հեռագիր, սուրհանդակների յեվ այլ ոգնությամբ:

Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարությունը յերաշխավորում ե, վոր այդ կապով
ոգտվելը չի ծառայել ի վնաս Հայաստանի Հանրապետության շահերի
կամ անկախության:

ՀՈՂՎԱԾ 2

Այդ կապն իրագործելու համար Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. Կառավարությունն ոգտ-
վում ե Հայաստանի Հանրապետության տերրիտորիայի վրա գտնվող
կապի միջոցներից, նոր գեներ /հեռագրի, հեռախոսի/ անցկացնելու
անհրաժեշտության դեպքում, կապի նոր տեսակներ ստեղծելը /սարքելը/,
այլ յեվ գոյություն ունեցողների բարելավելն ու նորոգելը, այս բոլոր
աշխատանքները կատարվում են Հայաստանի Հանրապետության
կառավարության կարգադրությամբ յեվ այն ժամանակամիջոցում, վոր
վորոշում ե հատուկ խառն հանձնաժողով: Անհրաժեշտ տեխնիկական
նյութերը անվճար տալիս ե Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. Լիազոր ներկայացուցչին
իրավունք ե տրվում իր ապարատի յեվ հեռագրային գծի մեջ մտցնել
Հայաստանի Հանրապետությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. լիակատար ներկայացուցչին իրա-
վունք ե տրվում հատուկ համաձայնությամբ, ոգտվելու Հայաստանի
Հանրապետության Յերեվանի ռադիոկայանից, ունենալով իր լսողնե-
րին, այլ յեվ իրավունք ե տրվում իր ռադիո-կայանը հիմնել անմարելի
թրթոտներով / /. Վերջին դեպքում հայաստանի Հանրապետության
Կառավարությունը իրավունք ե տրվում հատուկ համաձայնությամբ,
ոգտվելու Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. կառավարության ռադիո-կայանից, ունենալով
իր լսողները: 5 տարի անցնելուց հետո Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. ռադիո-կայանն
անվճար կերպով անցնում ե Հայաստանի Հանրապետության
կարգադրության տակ:

ՀՈՂՎԱԾ 3

Պայմանավորվող յերկու կողմերը փոխադարձաբար իրավունք են տալիս միմիանց դիվանագիտական սուրհանդակներ /կուրյերներ/ յեվ փոստ ուղարկել /վորոնք համապատասխան վկայաթղթեր կունենան/ իրենց տերրիտորիաների միջով յեվ սուրհանդակներին ու դիվանագիտական փաստը յերաշխավորում են լիակատար ապահովությամբ յեվ անձեռնմխելիությամբ:

ՀՈՂՎԱԾ 4

2 հողվածում նշված կապի իրականացման տեխնիկական միջոցները, այլ յեվ նրան սպասարկելու կարգը սահմանվում է հատուկ, խառը հանձնաժողովի կողմից, վորի կազմի մեջ Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. յեվ Հայաստանի Հանրապետությունը նշանակում են հավասար թվով անդամներ:

ՀՈՂՎԱԾ 5

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռք առնում պաշտպանելու կապի միջոցները պատահական փչացումներից յեվ դիտավորյալ փորձանքներից, շատ վորում այդ ժամանակ առաջ յեկած վնասվածքները անհապաղ շտկում, ուղղվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության միջոցներով յեվ կարգադրությամբ:

ՀՈՂՎԱԾ 6

Սույն համաձայնությունից բխող հաշիվների ձեվն ու կարգը սահմանվում է և հողվածում հիշված հանձնաժողովը:

ՀՈՂՎԱԾ 7

